

Գլուխ XXXV

Հասարակական գիտությունների առարկայական ծրագրեր

1. Ընդհանուր մաս

ա) Ներածություն

Հասարակական գիտությունների առարկայական խմբում միավորված են հարակից առարկաները՝ Պատմությունը, Աշխարհագրությունը, Քաղաքացիական կրթությունը, Քաղաքացիական պաշտպանությունը և անվտանգությունը: Վրաստանի ընդհանուր կրթության համակարգում դրանք հանգուցային տեղ են զբաղեցնում: Դրանք նպաստում են տեղեկացված, գործունյա և պատասխանատվության զգացումով քաղաքացու դաստիարակմանը, աշակերտին տեղեկատվություն են հաղորդում հարազատ միջավայրի մասին, պայմանավորում նրա, որպես հայրենասերի և մարդասերի, ձևավորումը: Նշված առարկաների դասավանդումը վճռորոշ նշանակություն ունի նաև աշակերտի մեջ քաղաքացիական իրազեկություններ մշակելու և հասարակության մեջ քաղաքական կուլտուրա արմատավորելու համար: Ընդհանուր կրթության երեք աստիճանում էլ (տարրական, բազային ու միջնակարգ դպրոց) այս առարկաները դասավանդվում են համաձայնեցված, նախատեսելով աշակերտի տարիքային յուրահատկությունները և կարողությունները: Ուսումնական գործընթացը հիմնված է ժառանգականության և շարունակականության սկզբունքի վրա:

բ) Հասարակական գիտությունների ուսուցման նպատակներն ու խնդիրները

Հասարակական գիտությունների ուսուցման նպատակներն են.

- Աշակերտին զինել պատմության, աշխարհագրության, իրավունքի, տնտեսության, քաղաքականության և հասարակական այլ գիտությունների հիմնավոր գիտելիքներով:
- Օգնել նրան ընկալել աշխարհը, որպես մեկ միասնություն, և որոշել Վրաստանի տեղն ընթացիկ գործընթացներում:
- Նպաստել աշակերտի, որպես հայրենասերի և պատասխանատվության զգացումնաբեր ուժով քաղաքացու ձևավորմանը:
- Օժանդակել նրա, որպես ինքնուրույն անհատականության և հասարակության լիարժեք անդամի ձևավորմանը:
- Օգնել աշակերտին նրա մեջ մարդասիրական աշխարհահայացքի ձևավորման գործում:
- Մշակել նրանց մեջ հաստատուն կամք, զարգացնել արտակարգ իրավիճակներում անսխալ և անվտանգ գործելու ունակություն, որպեսզի նրանք կարողանան, տարբեր արտակարգ իրավիճակներում, փոխադարձաբար օգնել միմյանց, փրկել ինչպես սեփական, այնպես էլ կողքին գտնվողի կյանքը:

Գիտելիք

Հասարակական գիտություններն օգնում են աշակերտին ձեռք բերել այնպիսի գիտելիքներ, որոնք նրան անհրաժեշտ են որպես ինքնուրույն անհատականություն և պատասխանատվության զգացմունքով օժտված քաղաքացի ձևավորելու գործում: Հասարակական տարբեր գիտությունների ուսուցումը աշակերտին հնարավորություն է տալիս համաշխարհային համատեքստում իրագրելվելու իր երկրի պետական, մշակութային, տնտեսական ու քաղաքական շահերին: Միաժամանակ, աշակերտը պետք է գիտակցի, թե բնական ինչ միջավայրում է ապրում և ինչպես պետք է պահպանի այն, թե մարդու այս կամ այն գործունեությունը ինչպես կարող է վնասել բնությանը: Հենց հասարակական գիտությունները սովորելով է, որ դեռահասի մոտ զարգանում են անձնական, ընտանեկան և հասարակական կյանքում ինքնուրույն որոշումներ կայացնելու, իրականացնելու կարողություններ ու հմտություններ: Այսօրվա հարաճուն, էթնիկապես և մշակութային տեսակետից բազմերանգ աշխարհում, հասարակության համագործակցության համար առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում փոխըմբռնողությունը: Հենց հասարակական գիտությունները սովորելով է աշակերտը ստանում այն գիտելիքները, որոնք օգնում են նրան պաշտպանել մարդու իրավունքները և հարգել անհատականությունը, պահպանել, ինչպես իր, այնպես էլ ուրիշի ինքնատիպությունը:

Համապատասխան իր տարիքի, քայլ առ քայլ գիտելիքներ ձեռք բերելով, աշակերտը պետք է գիտակցի, թե ինչ է քաղաքական համակարգը, օրենքը, թե ինչպիսի քաղաքական համակարգեր գոյություն ունեն: Պետք է գիտակցի իր իրավունքներն ու պարտականությունները ժողովրդավարական հասարակության և օրենքի գերակայության նկատմամբ: Պետք է ծանոթանա Վրաստանում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կադապարներին, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներին ու միջոցներին և այլն:

Աշակերտն իրեն պետք է զգա որպես սեփական ընտանիքի, հասարակության, դպրոցական համայնքի ու դասարանի, հարևանականության, ռեֆերենտային խմբի (լինի դա էթնիկական թե կրոնական փոքրամասնություն ու տիտղոսային ազգ և այլն), վրաց հասարակության անդամ: Պետք է իմանա սեփական երկրի, հասարակության և ռեֆերենտային համայնքի մշակույթը, Վրաստանում և աշխարհում ապրող այլ հասարակությունների մշակույթը, գիտակցի, թե ինչ է նշանակում հոգատարության էթիկա, ինչու է այն կարևոր:

Աշակերտը քայլ առ քայլ, աստիճանաբար պետք է ծանոթանա իր երկրի տնտեսական վիճակի հիմնական ասպեկտներին. ապրանքին, սպասարկմանը, աշխատանքին և սպառողական շուկային, նվազագույն աշխատավարձին, գնողունակությանը և այլն: Հնարավորի սահմաններում, նա պետք է տեղյակ լինի սպառողի իրավունքներին ու պարտականություններին, պատասխանատվությամբ ու բարոյագիտորեն սպասարկելու սկզբունքներին և դրանց նշանակությանը, թափանցիկության կարևորությանը և այլն:

Աշակերտը պետք է քայլ առ քայլ, աստիճանաբար համատեղի իր գիտելիքները կայուն զարգացող այնպիսի բնագավառների գիտելիքների հետ, ինչպիսիք են շրջակա միջավայրի պահպանությունը, առողջ ապրելակերպը, կյանքի և առողջության համար վտանգավոր իրավիճակների գնահատումը, արտակարգ իրավիճակներում իրեն պահելը, անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցների կիրառումը, տուժածին բժշկի մոտ տանելը, առաջին օգնություն ցուցաբերելը: Աշակերտը պետք է զգա Եվրոպայում և աշխարհում տեղի ունեցող գործընթացների կապը իր երկրի ու տարածաշրջանի հետ: Պետք է գիտակցի բոլոր այդ գործընթացների

փոխկապակցվածությունը, պետք է ճանաչի մարդկության, որպես միասնական հասարակության, առջև ծառայած քաղաքական, տնտեսական, շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական մարտահրավերները:

Նկատի է առնվում, որ այս գործընթացում, տեղեկատվություն ձեռք բերելուն զուգընթաց, աշակերտի մոտ պետք է զարգանան ու ձևավորվեն առանձնահատուկ և ընդհանուր կարողություններ ու հմտություններ, բարոյական բարձր արժանիքներ:

Կոնկրետ թեման/հարցերը/հայեցակետերը վեր են հանվում յուրաքանչյուր դասարանի և առարկայի ծրագրի բովանդակության մեջ: Նշված գիտելիքների ձեռքբերումը նախատեսում է ինչպես առարկայական առանձնահատկությունները և շարունակականությունը, այնպես էլ աշակերտների տարիքային հնարավորությունները:

Հմտություններ և կարողություններ

Հարագատ երկրի և աշխարհի պատմա-աշխարհագրական նշանավոր երևույթներն ուսումնասիրելու գործընթացում՝ աշակերտի մոտ պետք է զարգանան հետևյալ կարողությունները.

- տարածության մեջ կողմնորոշումը
- տեղեկատվության որոնումը և կազմակերպումը
- հաղորդակցությունը
- սովորելու կարողությունը
- հետազոտումը
- ստեղծագործական կարողությունը
- փաստերի և իրադարձությունների մեկնաբանումը
- դիդակտիկ նյութերի կիրառումը և ստեղծումը
- աշխարհագրական իրադարձությունների, գործընթացների և օրինաչափությունների տարածման որոշումը
- համագործակցությունը
- քաղաքացիական դիրքորոշման մշակումը, քննադատությունը և պաշտպանությունը
- հանդուրժողականությունը
- անհատական և հասարակական հիմնախնդրի գիտակցումը և տարբեր հարցերի միջև եղած կապի որոշումը
- անհատական և հասարակական հիմնախնդիրների լուծումը
- հասարակական իրավիճակների և գործընթացների մոդելավորումը
- կյանքի և առողջության համար վտանգավոր իրավիճակների գնահատումը
- արտակարգ իրավիճակում գործելը

Վերաբերմունքներ

Աշակերտը պետք է ձևավորի բարձր արժանիքների վրա հիմնված վերաբերմունքներ.

- հարգանք մարդու կյանքի, արժանապատվության և իրավունքների նկատմամբ
- կարեկցանք և հոգատարություն
- հայրենիքի նկատմամբ սեր
- սկզբունքայնություն և քաղաքացիական արիություն

- բարեխղճություն և աշխատասիրություն
- հավասարություն
- հանդուրժողականություն
- արհեստավարժություն
- արդարություն և օրենքի հարգում
- անվտանգ, առողջ ապրելակերպ
- մարդու կյանքի անձեռնմխելիություն և նրա առողջության նկատմամբ հոգատարություն
- պետության և նրա հերոսների նկատմամբ հարգանք

զ) Հասարակական գիտությունների ուսուցումը տարբեր աստիճաններում

Տարրական աստիճան

Հասարակական գիտությունների անկախ ուսուցումը սկսվում է դպրոցի տարրական աստիճանում՝ V դասարանից: Աշակերտները երկու տարվա ընթացքում սովորում են «Իմ Վրաստանը» դասընթացը: Այս առարկայի համար երաշխավորված ուսումնական ծանրաբեռնվածությունը ամեն տարի սահմանված է շաբաթական 3 ժամ ժամաքանակով:

«Իմ Վրաստանը» երկու տարիանոց դասընթացը օգնում է աշակերտին բազմակողմանիորեն ճանաչել սեփական երկիրը և էլ ավելի ամրապնդել սերը հայրենիքի նկատմամբ:

Այս տարիքում աշակերտները պետք է ըմբռնեն, որ իրենք՝ հասարակության մյուս անդամների նման, Վրաստանի քաղաքացիներ են: Նրանք պետք է գիտակցեն, որ Վրաստանի քաղաքացիներին միավորում են ընդհանուր միջավայրը, անցյալը, ներկան և ապագան և որ այսօրվա Վրաստանը, որպես պետություն, դրանց միասնության վրա է հիմնված:

Դասընթացի սահմաններում, սկսած V դասարանից, երեխան սկսում է սովորել պատմության հարցերը, տիրապետել աշխարհագրության հիմունքներին և հիմնական մեթոդներին, պատմական և աշխարհագրական տարբեր տեղեկատվությունների նկարագրման համար անհրաժեշտ գծանկարային միջոցների (քարտեզ, գլոբուս, աղյուսակ, գծապատկեր, լուսանկար, ուրվապատկերային նկար և այլն) կիրառմանը, ծանոթանում է քաղաքացիական հասարակությանը բնորոշ հիմնական սկզբունքներին:

Ուսումնական դասընթացում կենտրոնական տեղ է զբաղեցնում մարդը, անմիջականորեն նրա շուրջ գոյություն ունեցող աշխարհը: Տարրական աստիճանի այս փուլում աշակերտը ծանոթանում է հայրենի երկրին, նրա երկրամասերին, պատմական այն վայրերին, որոնց հետ կապված են անցյալում տեղի ունեցած տարբեր հետաքրքիր դեպքեր, անհատներ ու մշակույթի կոթողներ: Դա աշակերտի մեջ հետաքրքրություն է առաջացնում անցյալի նկատմամբ և հեշտացնում պատանիների կողմից առանձին-առանձին ստացած տարբեր տեղակատվությունների միասնական ընկալումն ու վերախմաստավորումը: Հիմնվելով տարիքային յուրահատկությունների վրա, սկսվում է անհրաժեշտ հասկացությունների հետազոտությունը, որոնք հաջորդ աստիճանում, որպես «հայրենիք» հասկացություն, ամբողջանում են աշակերտի գիտակցության մեջ: Վերոհիշյալ այս ամենը ուսուցանվում են գավառագիտության սկզբունքների կիրառությամբ:

Հայրենիքի պատմությունն ու աշխարհագրությունը գավառագիտության սկզբունքով սովորելիս՝ աշակերտներին պարզ է դառնում որ Վրաստանին բնորոշ հիմնական

հատկանիշներից մեկը նրա բնական, էթնիկական, կրոնական և մշակութային բազմերանգությունն է:

V-VI դասարաններում աշակերտները ծանոթանում են Վրաստանի պատմության կարևոր իրադարձություններին: Երեխաները, ուսուցչի օգնությամբ, պետք է կարողանան տարբեր տեսանկյուններից՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, միմյանց հետ կապել Վրաստանի անցյալն ու ներկան: Տեղեկատվություններ ստանալու համար՝ նրանց պետք է մատուցել տարբեր տեսակի այնպիսի աղբյուրներ, որոնք նրանց հնարավորություն կընձեռեն հարցի մեջ խորանալ ու դատողություններ անել՝ համապատասխան իրենց տարիքի: Դրա հետևանքով, աշակերտները իրենց համար հայտնագործում են, որ անցյալին կարելի է նայել և հասկանալ տարբեր տեսանկյուններից:

Աշակերտը պետք է իմանա իր բնակավայրը, Վրաստանի տեսարժան վայրերը, նրա բազմերանգ մշակույթը, բնական պայմանները, բնական պաշարները և տնտեսության տարածված ոլորտները:

Աշակերտներն իմանում են, թե ինչպես է ազդում անցյալը ներկայի վրա, բնական պայմանները՝ մարդու կողմից որոշումներ կայացնելու վրա: Իմանում են, թե ինչպես էր ապրում ժողովուրդը անցյալում, ինչպես էին որոշումներ կայացնում, ինչպես էին աշխատում ու պատերազմում, կենցաղային ինչ յուրահատկություններ ունեին նրանք և այլն: Այս տեղեկատվության ձեռքբերման հետ մեկտեղ, պատանիների մոտ զարգանում է ժամանակը զգալու զգացողությունը: Նրանք, հետզհետե, կարողանում են պատմական ու աշխարհագրական նշանակալից իրադարձությունները ժամանակագրական շրջանակի մեջ առնել:

Նրանք ցայտուն կերպով տեսնում են մարդկանց կենսափորձի բազմերանգությունը: Որպես անհատ, քաղաքացի ու հասարակության անդամ, աշակերտներն իրենց փորձով կամ իմանում են նոր բան, կամ՝ վերաիմաստավորում հինը:

Աշակերտները պետք է գիտակցեն, թե ինչ է ազգը, պետությունը: Տարածության և ժամանակի մեջ ինչպես են դրանք ստեղծվում, ինչպես են ներկայացված դրանք դեռահասի անմիջական շրջապատում, նրանց առօրյա կյանքում: Աշակերտները պետք է սովորեն ստորև տրված տերմիններն ու հասկացությունները:

1. **Պատմություն** – առարկա և նպատակ, աղբյուրներ, մեկնաբանություն, անընդհատություն և փոփոխություն:
2. **Աշխարհագրություն** – քարտեզ, տարածություն, սահմաններ, վարչական բաժանում, երկրամաս, տարածաշրջան, բնական միջավայր, ռելիեֆ, հիդրոգրաֆիա (ջրագրություն), կլիմա, ֆլորա (բուսական աշխարհ), ֆաունա (կենդանական աշխարհ), բնական ռեսուրսներ (պաշարներ), բնակչություն, տնտեսության բնագավառներ, կապ բնության և մարդու միջև, շրջակա միջավայրի պահպանություն:
3. **Ժամանակ**¹ - ժամանակագրություն, անցյալ, ներկա, ապագա, օրացույց, ժամանակի միավորներ, առաջներում (հետագայում, ավելի ուշ), պատմական դարաշրջան (ժամանակահատված):
4. **Տարածություն** – բնական միջավայր, տեղանք, տարածություն, բնական և մարդաբանական տեղանք՝ բնակավայրի տեսակներ և գործառույթներ:

¹ Ժամանակի սանդղակը ներմուծվում է VI դասարանից: V դասարանում, պատմական իրադարձությունները ժամանակին վերագրելու համար, օգտագործվում է իրադարձության հետավորությունը արդի ժամանակաշրջանից:

5. **Տնտեսություն** – գյուղական և քաղաքային տնտեսություն, առևտուր, դրամական հարաբերություններ և հաղորդակցություն. ճանապարհներ, փոխադրամիջոց՝ ցամաքային, գետային, ծովային, օդային, բջջային, փոստ, էլ-փոստ:
6. **Գիտություն** – կրթություն, հայտնագործություն, գյուտարարություն, մասնագիտություն, դիտարկում, վերլուծում, հիմնավորում, գիտական մտքի զարգացում:
7. **Մշակույթ** – ճարտարապետություն, մատենագրություն, հագուստ, սնունդ, առողջապահություն, ավանդույթ, սովորույթ, ծես, ժողովրդական բանահյուսություն, գիտություն:
8. **Կրոն** – ծիսակարգ, առասպել, ժամերգություն (ժամասացություն), հավատ:
9. **Ազգ** – անհատ, ընտանիք, նախնի, հասարակություն (խավեր) և հասարակության անդամներ, վարքի կանոններ, ծեսեր, բնակչություն՝ ծնելիություն (մահացություն), բնական աճ, մեծամասնություն (փոքրամասնություն), սեռային-տարիքային կառուցվածք:
10. **Պետություն** – քաղաքացի, կառավարում, կառավարման ձևեր, քաղաքականություն, օրենք, անվտանգություն, բախում (ընդհարում) և համագործակցություն, կարգուկանոն, իրավունք, խորհրդանշան:

«Մեր Վրաստանը» առարկայի համար չափորոշչով նախատեսված արդյունքներին հասնելու համար՝ հասարակագիտության ուսուցիչը պետք է տերապետի ուսուցման բազմազան մոտեցումների, որպեսզի սովորելիս, երեխաները կարողանան արդյունավետորեն յուրացնել կարևոր հասկացությունները, զարգացնեն կարողություններ ու հմտություններ և ավելի պատրաստված լինեն բազային աստիճանի համար:

Հիմնական մոտեցումներ.

Հասկացությունների ուսուցումը

Հասարակական գիտությունների ուսուցումը բազային և միջնակարգ աստիճաններում հնարավոր է միայն աշակերտի համապատասխան պատրաստվածության պայմաններում: Մոցիալական, մշակութային ու քաղաքական իրադարձությունները սովորել ու ըմբռնել անհնար է, եթե աշակերտները չեն տերապետում բազային հիմնական հասկացություններին:

Հասարակական գիտությունների համար կարևոր նշանակություն ունեցող հասկացությունները դասընթացի ընթացքում պետք է մշակվեն գիտակցված ու բազմակողմանիորեն: Նպատակին հասնելու համար այդ հասկացությունները պետք է կապվեն իրական կյանքի, անձնական կենսափորձի և շրջակա միջավայրի հետ: Դրանց բազմակողմանի վերամշակումը կատարվում է աշակերտին Վրաստանի անցյալի տարբեր դրվագների հետ ծանոթացնելու, այնուհետև, դրանք վերաիմաստավորելու և դրանց միջև գոյություն ունեցող տարբեր տեսակի կապերը որոշելու միջոցով: Մանրակրկտորեն ուսումնասիրելով՝ աշակերտները կկարողանան ստացած գիտելիքները կիրառել տարբեր համատեքստերում:

Տարրական աստիճանի այս փուլում երեխաները սովորում են կատարել աշխարհագրական պարզ հետազոտություններ: Ուստի, առաջադրանքները պլանավորելիս, պետք է հաշվի առնվեն հետևյալ կոշմնորոշիչները.

Աշխատանք աղբյուրների և (կամ) դիդակտիկ պարագաների հետ՝ տեղեկատվության որոնում (յուրացում), հաղորդման տարբեր միջոցների կիրառում:

Դասն անցկացնելու համար՝ ուսուցիչը պետք է կիրառի բազմաբնույթ աղբյուրներ և զննապիտույքներ: Դրանք կարող են լինել դասագրքերում եղած տարբեր տեսակի աղբյուրները, թեման ուսումնասիրելու համար ուսուցչի պատրաստած, աշակերտի կազմած կամ հավաքած նյութերը, գեղարվեստական ու վավերագրական ֆիլմը, ընտանեկան լուսանկարները, փաստաթղթերը, նամակագրությունը, հին նյութերը (օրինակ, աշխատանքային գործիքներ, հեռախոսի սարք): Աղբյուրների և զննապիտույքների հետ աշխատանքը կատարվում է ինչպես դասասենյակում, այնպես էլ դասարանից դուրս, օրինակ, թանգարանում, դպրոցում, դպրոցի բակում:

Վերևում մեջբերված տեղեկատվական հիմնական աղբյուրները պետք է ընտրվեն այնպես, որ աշակերտների մոտ աստիճանաբար զարգանան ընթերցանության բազային ունակությունները (բովանդակության վերարտադրում, զուգահեռներ փնտրելիս և եզրակացություններ անելիս՝ հանգուցային հարցերի վերլուծում): Երեխաները պետք է զիտակցեն, որ «ընթերցել» կարելի է ինչպես տեքստը (բնագիրը), այնպես էլ լուսանկարն ու նյութը, որ այդ ամենը ծառայում են մի նպատակի՝ հավաքել տեղեկատվություն:

Հաջորդ փուլում աշակերտը կատարում է ստացած տեղեկատվությունները համեմատելու և դասակարգելու աշխատանք, օրինակ.

- Աղյուսակի կամ երկտողերի միջոցով խմբավորում է համակարգչով կամ ժամանակակից այլ միջոցներով ձեռք բերած հայտնագործությունների աղբյուրները:
- Ըստ Վրաստանի երկրամասերի քարտեզի՝ աղյուսակում խմբավորում է քաղաքները:
- Միմյանց հետ համեմատում է պետական կառավարման տարբեր ձևերը և դրանցից ընտրում, իր կարծիքով, իր համար ամենից ավելի ընդունելի կառավարման ձևը:
- Անվանում է տարբեր տեսակի գործառնություններ կատարելու համար անհրաժեշտ պայմանները, դատողություններ է անում դրանց նշանակության մասին:
- Այս տարիքում աշակերտների մեջ պետք է դրվի այն կարողությունների հիմքը, որոնց միջոցով նրանք իրենք կարողանան վիզուալ տեղեկատվություն արտահայտել (գծագիր, աղյուսակ, նկար): Որպես ուսումնական ռեսուրս, աշակերտների մասնակցությամբ ստեղծված զննական պիտույքների կիրառմամբ, մեծանում է աշակերտների պատճառաբանվածությունը:

Կեղծակերպում

Վերևում նշված բազային հասկացությունները առավել լավ ըմբռնելու համար՝ բավականին հետաքրքիր ու արգասաբեր կլինի կիրառել իրադրական կամ գործընթացային սիմուլյացիայի տեխնիկան:

- Աշակերտը, ուսուցչի օգնությամբ, իր համադասարանցիների հետ, բեմադրում է դասարանական ներկայացում հանրահայտ մի որևէ պետական գործչի մասին: Դատողություններ է անում ներկայացման մեջ արձարձված պատմական փաստերի շուրջ (օրինակ, «Փոքրիկ Կախի»-ն):
- Մասնակցում է կոնկրետ ռեսուրսի ոչ արդյունավետ կիրառման կեղծակերպած խաղերին (օր., Լոր տարվա տոնածառերի կամ Ծաղկազարդին անտառում կտրած շիմշատի առևտուր):
- Նման ակտիվություններն օգնում են երեխաներին դեռ «տարրալուծել» հիմնախնդիրը (հասկացությունը), այնուհետև ընկալել նրա միասնական իմաստը: Սիմուլյացիայի ձևերից մեկը դերային խաղն է: Դերային խաղի ժամանակ երեխաները ներկայացնում են տարբեր իրավիճակներ, որտեղ շահագրգիռ տարբեր կողմերի կամ անձանց տեսանկյուններից նայելով,

նկարագրում են իրադարձությունները, գործընթացները կամ հասկացությունները:

Դտողություն անել (մտածել) – Այս փուլում պլանավորված վարժություններն ու ակտիվությունները պետք է հիմնվեն շատ թե քիչ արդեն յուրացված տեղեկատվությունների վրա, օրինակ.

- Թվարկում և բնութագրում է կառավարմանը մասնակցած պատմական անձանց անցկացրած պետական միջոցառումները, սահմանում դրանց հետևանքները:
- Ժամանակի սանդղակի վրա նշում է հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը ընկած ժամանակաշրջանի, իր կարծիքով, ամենանշանավոր չորս (կամ հինգ) վրաց քաղաքական գործիչների և բնութագրում նրանց:
- Թվարկում է պատերազմները (պաշտպանական, նվաճողական), բնութագրում դրանց հետևանքները:
- Դատողություններ է անում վճռորոշ ճակատամարտերի, հռչակավոր թագավորների և հանրահայտ պատմական այլ դեմքերի գործունեության շուրջ:

Կարեկցանք և յուրացում

Անցյալի սիմուլյացիոն վերակառուցման հետ մեկտեղ, առանձնահատուկ հաճելի ու արդյունավետ է ամենօրյա կենցաղը, ծեսերը նկարագրելիս մտցնել յուրացվելիք վարժություններ, ինչը հնարավորություն կտա աշակերտներին ոչ միայն գիտակցել, այլև զգալ անցյալում ապրող մարդկանց պատճառաբանումները, ցանկությունները, երազանքները, այլև նրանց աչքերով նայել աշխարհին, ծանոթանալ այլ դարաշրջաններում ապրած մարդկանց կենցաղին:

Աշակերտների պատշաճորեն կազմակերպելը սոցիալական և հաղորդակցական ունակությունների ու հմտությունների բազմակողմանի զարգացման պարտադիր տարրն է:

Դասարանը կազմակերպելիս, օրինակ, **խմբային աշխատանք կատարելիս**, հասարակական գիտությունների ուսուցիչները աշակերտներին հնարավորություն են տալիս միասին որոշել նշված խնդիրները, մեկտեղ բաժանել դերերը. աշակերտներից յուրաքանչյուրին տարբեր ժամանակ պետք է հնարավորություն ընձեռվի լիդեր (առաջնորդ) կամ ներկայացնող (վարող) լինելու: Եթե աշակերտներից մեկը շնորհանդեսը լավ է վարում, դա չի նշանակում, որ մշտապես նա պետք է ներկայացնի խմբում անցկացվող բոլոր աշխատանքները:

Արժեքների ձևավորումը

Մարդը և հասարակությունը՝ նշված ուղղության մեջ արդյունքների հասնելու համար, կարևոր է, որ դրանք ուսումնասիրվեն աշակերտի նախկինում ձեռքբերած փորձի վրա հիմնվելով, ընտանիքի ու հարազատ միջավայրի օրինակները քննարկելով: Ուսուցիչը ուսումնական գործընթացը պետք է վարի այնպես, որ աշակերտի մոտ զարգանա մարդու արժանապատվության, ինքնուրույնության և համահավասարության հարգանք: Հիմնվելով այդ արժեքների վրա՝ պետք է նպաստել աշակերտի բարոյական և պատասխանատու վարքի ձևավորմանը: Արժեքները զարգանում են մարդու, քաղաքացու՝ մեր երկրի մշակութային ժառանգության և ավանդույթների վրա հիմնված, իրավունքները և պարտականությունները սովորելու միջոցով: Ուսուցիչը քաղաքացիական արժեքներ ձևավորելով՝ պետք է սեր առաջացնի հայրենիքի

նկատմամբ: Նա պետք է կիրառի այնպիսի աղբյուրներ, որոնք աշակերտներին հնարավորություն կտան խորհել հրատապ հարցերի շուրջ և նրա մոտ կգարգացնեն դրական վերաբերմունք:

Արտադասարանական աշխատանքը կողմնորոշված է տեղեկատվության տարբեր եղանակներ որոնելու կարողության զարգացմանը:

Տարիքային այս խմբում, ելնելով առարկայի յուրահատկություններից, անհրաժեշտ է պլանավորել արտադասարանական աշխատանքներ: Դա հեշտ իրականացնելի է, քանի որ անմիջականորեն վերաբերում է աշակերտի սոցիալական ու բնական միջավայրին (ընտանիքին, փողոցին, դպրոցին, համայնքին): Աշակերտին պետք է առաջադրել դիտարկումներ անցկացնել դպրոցից դուրս (օրինակ, տրանսպորտի երթևեկությունը, ճարտարապետությունը), հարցազրույց վարելով հավաքել անհրաժեշտ տեղեկատվություն: Տեղային պատմությունների հավաքում ազգանվան ծագումնաբանության թե փողոցի, գյուղի, քաղաքի մասին և այլն: Ուրվապատկերը, երթուղին գծելու համար անել չափումներ, կազմել ուրվանկարներ: Նման ակտիվություններն ավելի հաճելի են դարձնում առարկան սովորելը, իսկ գիտելիքներ ստանալու նման եղանակներն առավել արդյունավետ են:

Նշված մեթոդական մոտեցումները կարելի է իրականացնել ոչ միայն բանավոր, այլև գրավոր:

Բազային աստիճան

Բազային աստիճանում Պատմության, Աշխարհագրության և Քաղաքացիական կրթության ուսուցումն աշակերտին պետք է ցույց տա մարդու կենսափորձի բազմերանգությունը, առաջադեմ մարդկության ձեռքբերումների ֆոնի վրա՝ իր երկրի ձեռքբերումների նշանակությունը: Աշակերտին տեղեկատվություններ պետք է հաղորդել ինչպես Վրաստանի, այնպես էլ աշխարհի բնական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային, կրոնական և էթնիկական բազմերանգության մասին: Հիմնվելով այս տեղեկատվությունների վրա՝ նա պետք է կարողանա վերլուծել անցյալի և արդիականության կարևորագույն պատմական թե աշխարհագրական իրադարձությունները, գործընթացները և տեսնել տարբեր դարաշրջանների և հասարակությունների զարգացման նմանություններն ու տարբերությունները:

Պատմություն

Այս աստիճանում աշակերտի մոտ պետք է ձևավորվի պատմական մտածողության կարողություն: Ըստ հնարավորինս նա պետք է կարողանա բացատրել պատմական իրադարձությունների պատճառները և վերլուծել դրանց հետևանքները: Պատմական գործընթացը պետք է կարողանա դիտել տարբեր տեսանկյուններից (քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային, կրոնական): Պետք է կարողանա որոշել իրադարձությունների և անհատների մասին գոյություն ունեցող տարբեր մեկնաբանությունների պատճառները և համեմատել ու գնահատել գոյություն ունեցող այդ տարբեր բացատրություններն ու պարզաբանումները: Պետք է կարողանա

հայթայթել² պատմական աղբյուրներ, պատմական փաստերը (պատմական գրավոր աղբյուրներ, հնագիտական ու ազգագրական նյութ, պատմական թեմայով գեղարվեստական ստեղծագործություններ, լուսանկարներ և այլն) համեմատել և վերլուծել, գրել պատմական թեմա,³ մասնակցել պատմական թեմաներով քննարկումների:

Աշխարհագրություն

Բազային աստիճանն ավարտելիս՝ աշակերտը պետք է իմանա աշխարհագրական ընդհանուր հասկացություններ. տեղային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակով ընթացող բնական, տնտեսական, սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների տարածական հայեցակետեր, տարածքները բաժանելու սկզբունքները, բնակչության, արտադրական և ոչ արտադրական բնագավառների տարածական բաժանումը: Նա պետք է կարողանա նաև համեմատել Վրաստանի (բնական պայմանների, ռեսուրսների, բնակտարածքների, տնտեսության բնագավառների, սոցիալական ոլորտի, բնապահպանական իրավիճակի, տարածաշրջանային միավորների) և այլ երկրների աշխարհագրական բնութագրիչները և դրա հիման վրա որոշել նմանություններն ու տարբերությունները, դրանց միջև կապը, քարտեզներից և աշխարհագրական այլ միջոցներից ստացած տեղեկատվությունը համեմատել և վերլուծել, թեմատիկ պարզ քարտեզներ կազմել, աշխարհագրական թեմա գրել, աշխարհագրական հիմնախնդիրների հետ կապված քննարկումների մասնակցել: Վերևում նշված այս ամենը պետք է օժանդակի աշակերտի բնապահպանական կուլտուրայի ձևավորմանը:

Քաղաքացիական կրթություն

Մարդասիրական արժեքների վրա հիմնված քաղաքացիական կրթությունը պետք է օգնի աշակերտին ոչ միայն գիտակցել իրավունքներն ու պարտականությունները հասարակության ու պետության նկատմամբ, այլև իր ստացած այդ տեսական գիտելիքները՝ մարդու իրավունքների, կառավարման և տնտեսական զարգացման մասին, համապատասխանաբար կիրառել առօրյա կյանքում:

Առարկան սովորելիս նրա մոտ պետք է զարգանան քաղաքացիական կարևոր հմտություններ և կարողություններ. սեփական դիրքորոշման ձևավորում և պաշտպանում, սեփական վարքի քննադատական գնահատում, հարգանք տարբեր կարծիք, այլ ազգություն, հավատ և մշակույթ ունեցող մարդկանց նկատմամբ, հասարակական օգտավետ աշխատանքներին մասնակցություն և օրենքի հարգում:

² Յանկայի է, որ պատմական թե աշխարհագրական նյութը որոնելիս և մշակելիս՝ աշակերտը կիրառի տեղեկատվական տեխնոլոգիաները (ինտերնետի և ՄՐ-ՂԻ-ՆՈՄ-ի միջոցով տեղեկատվության որոնում, համակարգչային ծրագրերի օժանդակությամբ նյութի մշակում և էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկատվության փոխանակում):

³ Այս աստիճանում աշակերտին պետք է սովորեցնենք իր կատարած հետազոտությունների հիման վրա գրել փաստարկված թեմա, որը նկատի ունի. թեմայի գլխավոր հիմնախնդրի համառոտ տեսությունը ներածականում և այդ հիմնախնդրի նկատմամբ սեփական դիրքորոշման արտահայտումը, հիմնական մասում սեփական դիրքորոշումը ապացուցելու համար փաստարկների ու օրինակների բերումը, իսկ եզրակացությունում՝ թեմայի հիմնական մասում արտահայտված փաստարկների և կարծիքների ամփոփում:

Քաղաքացիական կրթությունը պետք է օգնի աշակերտին զարգացնել իր նույնականությունը, ինքնորոշվել: Այս ամենը սովորելով՝ չափահասը պետք է իրեն և ուրիշներին ընդունի որպես տարբեր համատեքստերի անդամներ և անհատներ: Նա պետք է գիտակցի ազատությունը ոչ միայն որպես իրավունք, այլ նաև՝ որպես պարտականություն: Պետք է կարողանա հասարակությունն ընկալել որպես տարբեր հետաքրքրություններ, արժեքներ, պահանջներ ունեցող սուբյեկտների համակարգային բարդ ամբողջականություն: Եվ որ ամենակարևորն է, քաղաքացիական կրթություն ստանալով, աշակերտը պետք է կարողանա սահմանել կրթական և աշխատանքային իր հետագա ուղին:

Քաղաքացիական կրթություն ստանալով՝ աշակերտը գիտակցում է շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտությունը և հասարակության կայուն զարգացման հետ իր կապը, կայուն զարգացման դերը ժամանակակից աշխարհի գոյատևման համար: Աշակերտը պետք է կարողանա սովորել գործուն մասնակցություն ցուցաբերել այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ բարի կամքի դրսևորելը, մարդկային արժանապատվությունը հարգելը, միմյանց փոխադարձաբար օգնելն ու սատարելը ապրելակերպ է:

Քաղաքացիական կրթության գործընթացում աշակերտը պետք է Վրաստանն ընկալի որպես պետություն և իրեն գիտակցի որպես նրա քաղաքացի, սովորի հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին մասնակցելու ձևերն ու միջոցները, ըմբռնի ժողովրդավարության, սահմանադրության և միջազգային օրենսդրության, որպես պետության իրավական հիմքի, կարևորությունը, գիտակցի իր և ուրիշների իրավունքների միջև գոյություն ունեցող կապը և կոնկրետ քայլեր անի ուրիշի իրավունքները պաշտպանելու համար, մարդու (երեխաների) իրավունքների կարևորությունը և դրանք պաշտպանելու կոնկրետ գործողություններ իրականացնի, գիտակցի մարդկանց յուրահատուկ խմբերի իրավունքների պաշտպանության կարևորությունը և դրանք պաշտպանելու կոնկրետ քայլեր անի:

Միջնակարգ աստիճան

Ընդհանուր կրթության երրորդ աստիճանում Պատմության, Աշխարհագրության և Քաղաքացիական կրթության ուսուցումը հիմնվում է դպրոցի բազային աստիճանում աշակերտների ստացած գիտելիքների վրա և դեռահասին հնարավորություն է տալիս առավել խորը սովորել պարտադիր և կամրնտրական առարկաները, տիրապետել գիտական հետազոտության ընդհանուր յուրահատկություններին:

Պատմություն

Վրաստանի պատմությունն ու Աշխարհի պատմությունն իմանալը հայրենասեր և քաղաքականապես կիրթ քաղաքացու ձևավորման նախապայմանն է: Պատմության ուսուցումը աշակերտին պետք է ցույց տա, որ պատմությունը անընդհատ գործընթաց է,

և որ ժամանակակից հասարակության համար ամենանշանակալից քաղաքական, սոցիալական և բարոյական հիմնախնդիրները, մեծ մասամբ, պայմանավորված են դարերի և հազարամյակների ընթացքում տեղի ունեցած փոփոխություններով:

Այդ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է, որ աշակերտն ունենա պատմությունն ըմբռնելու կարողություն. նա պետք է կարողանա ընկալել պատմական դարաշրջանը (պատմական դարաշրջանը նկարագրելիս՝ իրադարձություններին նայել այն ժամանակներում ապրող մարդկանց աչքերով, անցյալում տեղի ունեցած իրադարձությունները գնահատել ոչ միայն էլնելով այսօրվա տեսանկյունից, այլ նաև գիտակցել այն դարաշրջանի արժեքները, մարդկանց մտածելակերպը),⁴ որոշել և վերլուծել պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապը,⁵ հիմնավորել օրինաչափության մասին սեփական կարծիքը,⁶ անցկացնել պատմական ինքնուրույն հետազոտություն (սահմանել և որոշել պատմական հետազոտության-որոնման նպատակը, որոնել գրավոր, վիզուալ, գրականագիտական աղբյուրներ, ինքնուրույն վերլուծել պատմական փաստաթուղթը, համեմատել պատմաբանների տարբերակված կարծիքները, անցկացված հետազոտությունների հիման վրա, գրել պատմական շարադրություն):

Աշխարհագրություն

Այս աստիճանում աշակերտը պետք է սովորի աշխարհի երկրների հիմնական բնութագրիչները, այնտեղ կատարվող տարբեր գործընթացներն ու իրադարձությունները: Պետք է ուսումնասիրի և վերլուծի բնության պահպանության և, ընդհանրապես, կայուն զարգացման հիմնախնդիրները, այդ հարցերի նկատմամբ այլընտրանքային մոտեցումները, դրանք լուծելու հնարավոր ուղիները, գլոբալ հիմնախնդիրների աշխարհագրական առանձնահատկությունները, պետք է գիտակցի, թե գիտելիքներով ու կենսափորձով զինված յուրաքանչյուր ոք ինչպիսի խոշոր ներդրում կարող է ունենալ հասարակության ու շրջակա միջավայրի առողջացման, նրա կայունության պահպանման գործում:

Միջնակարգ աստիճանն ավարտելուց հետո, աշակերտը պետք է կարողանա, շրջակա միջավայրում տեղի ունեցող իրադարձություններն ուսումնասիրելու հիման վրա, սահմանել բնակչության հիմնական պահանջներն ու հիմնախնդիրները, հետազոտել և անել հիմնախնդիրները լուծելու ուղիների մասին ենթադրություններ: Պետք է կարողանա պլանավորել, անցկացնել աշխարհագրական հետազոտություն և ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ներկայացնել հետազոտության արդյունքը, պետք է կարողանա ստեղծել գործընթացը ներկայացնող նյութ (քարտեզ և աշխարհագրական այլ պիտույքներ):

Քաղաքացիական կրթություն

⁴ Պարտադիր է, որ պատմական դարաշրջանը ընկալել կարողանալու ունակության հիմքը դրվի տարրական և բազային աստիճանում:

⁵ Այս նպատակին հասնելու համար պարտադիր է, որ բացի դասագրքերից, աշակերտը կարողանա ձեռք բերել նաև պատմական այլ նյութեր:

⁶ Աշակերտը պետք է հասկանա, որ անհատն ունի ազատ կամք և ընտրություն կատարելու կարողություն: Նա պետք է գիտակցի, որ, հնարավոր է, պատմությունն այլ ճանապարհով էլ զարգանար: Այդ դեպքում, չի ստեղծվի նրա մոտ այնպիսի տպավորություն, որ իբրև թե, ապագան նախապես սահմանված է, և որ անհատի գործողությունները և նրա ընտրությունները նշանակություն չունեն:

Այս աստիճանում Քաղաքացիական կրթության ուսուցանումը աշակերտին հնարավորություն կտա տիրապետել քաղաքական, իրավաբանական և տնտեսական գիտությունների հիմունքներին, կօգնի նրան զարգացնել հասարակական կյանքին մասնակցելու համար անհրաժեշտ իրազեկությունները:

Քաղաքացիական կրթության պարտադիր և կամընտրական առարկաները կօգնեն աշակերտին անհատական զարգացման և նույնականության այնպիսի նոր հայեցակետերի գիտակցման հարցում, ինչպիսիք են. իր և ուրիշի անհատական հատկանիշների վերլուծությունը, իր և ուրիշների արժանիքների ու թերությունների վերլուծությունը, հասարակության մեջ իր տեղի ու դերի սահմանումը, սեփական ապագայի պլանավորումը, հաշվի առնելով «ես»-ի ու «մենք» -ի շահերը, ինքնուրույն վճիռներ կայացնելը, կոնկրետ քայլեր անել մասնագիտության, որպես նույնականության ձեռքբերման կարևոր աստիճաններից մեկի, ընտրության համար, մրցունակությունը, ինքնուրույնությունը, որոշումներ կայացնելը, ընտրության ազատությունը, որպես արժեք, և հոգաձությունը նրա զարգացման մասին:

Քաղաքացիական կրթությունը կօգնի աշակերտին ժամանակակից աշխարհի կայուն զարգացման գործընթացում տեսնել իր դերը և համապատասխան քայլեր կատարել, մտածել տնտեսապես և զարգացման անփոփոխ համատեքստում գիտակցել իր դերը ինտերմշակութային գրագիտության և հարաբերությունների մեջ, հասարակական անվտանգության կարևորության և նրանում իր դերի գիտակցման մեջ, գիտակցել հասարակական գործունեության իրականացման կարևորությունը, գիտակցել անհատական և հասարակական մակարդակով առողջ ապրելակերպը, համապատասխան քայլեր անել այն պահպանելու համար, որոշել արհեստավարժության կարևորությունը, որպես կայուն զարգացման արժեք, զարգացնել համագործակցելու կուլտուրա, գիտակցել տնտեսական, քաղաքական և սոցիալական շահերի բախումները և հասկանալ դրանց կարգավորման մեխանիզմների հիմունքները:

Միջնակարգ աստիճանում Քաղաքացիական կրթության նշանակությունը հետևյալն է. օգնել աշակերտին Վրաստանը գիտակցել որպես բազմերանգ երկիր, գիտակցել իրեն որպես Վրաստանի քաղաքացի, քաղաքացիությամբ պայմանավորված իրավունքների, պարտականությունների և պատասխանատվությունների պահպանման/կատարման համար կոնկրետ գործողություններ կատարել, գիտակցել քաղաքացիական հասարակության համար իր և ուրիշի իրավունքների կարևորությունը և պաշտպանել դրանք:

դ) Առարկաների ուսուցման կազմակերպումը

Տարրական աստիճան

I, II, III և IV դասարաններում Վրաստանի պատմության, Աշխարհագրության և Քաղաքացիական կրթության տարրերը մտնում են ուսումնական այլ առարկաների մեջ (Վրաց լեզու և գրականություն, Բնագիտություն, Գեղագիտական և աշխատանքային դաստիարակություն, Մաթեմատիկա):

V-VI դասարաններում Վրաստանի պատմությունը, Աշխարհագրությունը և Քաղաքացիական կրթությունը ինտեգրված դասավանդվում են «Մեր Վրաստանը» առարկայում:

I - IV դասարաններում Քաղաքացիական պաշտպանության և անվտանգության հարցերն ընդգրկված են Բնագիտության և Ֆիզիկական կրթության (Սպորտի) (այսուհետև՝ Սպորտ) ուսումնական ծրագրերի մեջ, թեպետ, IV դասարանում մեկ կիսամյակի ընթացքում, ընդհանուր առմամբ՝ 12 ժամ, հատուկ հատկացված է «Երթևեկության անվտանգություն» առարկային (երաշխավորված է ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար): V-VI դասարաններում նշված հարցերը մտցված են Բնագիտության, Հասարակական գիտությունների և Սպորտի ուսումնական ծրագրերի մեջ):

Քաղաքացիական աստիճան

VII դասարանից Պատմությունը և Աշխարհագրությունը ուսուցանվում են որպես ինքնուրույն առարկա: Քաղաքացիական կրթության ուսուցումը VII-VIII դասարաններում ընթանում է Պատմության հետ ինտեգրված:

IX դասարանում երեք առարկաներն էլ՝ Պատմությունը, Աշխարհագրությունը և Քաղաքացիական կրթությունը, ուսուցանվում են առանձին-առանձին:

VII - IX դասարաններում Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգություն առարկայի մեջ մտնող թեմատիկան ընդգրկված է Կենսաբանության, Ֆիզիկայի, Քիմիայի, Պատմության, Աշխարհագրության, Քաղաքացիական կրթության և Սպորտի ուսումնական ծրագրերի մեջ:

VIII դասարանում մեկ կիսամյակի ընթացքում, ընդհանուր առմամբ՝ 12 ժամ, հատուկ հատկացված է «Անվտանգությունը արտակարգ իրավիճակներում» առարկային (երաշխավորված է ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար):

Միջնակարգ աստիճան

Այս աստիճանի (X-XII) երեք դասարաններում էլ Պատմությունը մնում է որպես պարտադիր առարկա:

X-XI դասարաններում Աշխարհագրությունը պարտադիր է, իսկ X-XII դասարաններում աշակերտներին լրացուցիչ կամընտրական առարկաներ ընտրելու հնարավորություն է ընձեռվում, օրինակ՝ Աշխարհագրական հետազոտություն:

Պատմության, Աշխարհագրության և Հասարակական գիտությունների առարկայական խումբը X դասարանում աշակերտին առաջարկում է Քաղաքացիական կրթության պարտադիր դասընթաց, իսկ X-XII դասարաններում՝ կամընտրական առարկաներ, օրինակ՝ Պետություն, Քաղաքացիություն, Ձեռներեցության հիմունքներ, Գործնական իրավունք և այլն:

X դասարանում Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգություն առարկայի որոշ հարցերի ուսուցումը ինտեգրված է Քաղաքացիական կրթության, Կենսաբանության և Սպորտի ուսումնական ծրագրերում: XI դասարանի առարկայում մտնող թեմատիկան ինտեգրված է Ֆիզիկայի և Քիմիայի ուսումնական ծրագրերում: XII դասարանում լրացուցիչ դասավանդվում է առանձին առարկա՝ «Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգություն»: Նրան պետք է հատկացվի 14 ժամ (ուսումնական տարվա առաջին կիսամյակում):

Չափորոշում նշված դասիչները.

Չափորոշի արդյունքներն ունեն դասիչներ: Դասիչը տեղեկություն է տալիս առարկայի, դասարանի և արդյունքի մասին: Օրինակ՝

Հաս.գիտ. V-VI. 7՝

Հասարակական գիտություն - առարկա

V-VI. – դասարան

7. – արդյունքի համարը

Հասարակական գիտությունների առարկաների համառոտագրությունները դասիչներում.

Պատմ. - Պատմություն

Աշխարհ. - Աշխարհագրություն

Քաղ. - Քաղաքացիական կրթություն

Անվտ. – Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգություն

ե) Առարկաների ուսուցման ուղղությունների նկարագրությունը

Յուրաքանչյուր դասարանի կամ աստիճանի վերջում Ազգային ուսումնական պլանով սահմանված են ուսումնական գործընթացի արդյունքները և աշակերտի կողմից դրանց նվաճման ստուգիչները: Արդյունքները խմբավորված են ըստ ուղղությունների: Յուրաքանչյուր ուղղություն նկարագրում է առարկայի ուսուցման հիմնական նշանակությունը և հիմնվում է մեկ կամ մի քանի բնագավառի իրագրության վրա: X դասարանի Պատմության և XII դասարանի Աշխարհագրության չափորոշիչ ուղղությունները սահմանված են ըստ հետազոտական և հաղորդակցական կարողությունների ու հմտությունների:

Ուսուցման ուղղություններն՝ ըստ առարկաների և դասարանների

Ուղղությունները	Մեր Վրաստանը	Պատմություն	Աշխարհագրություն	Քաղաքացիական կրթություն	Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգություն
Ժամանակ և տարածություն	5-6	7, 8, 9,10	7-11	7-8	
Միջավայր և էկոնոմիկա	5-6	7, 8, 11, 12	7-11	7-8	
Պետական կառավարում և քաղաքականություն	5-6	7-9, 11-12		7-8	
Մշակույթ և կրոն	5-6	7-9, 11-12		7-8	
Մարդը և հասարակությունը	5-6	7-9, 11,12		7-8	
Միջավայրը և սոցիալական հասարակարգերը			7- 11		
Անհատի զարգացումը				9-10	
Կայուն զարգացում				9-10	
Բնքնակառավարում և կառավարում				9-10	
Պատմական մեկնաբանություն և հետազոտում		10			
Հաղորդակցություն		10	12		
Աշխարհագրական հետազոտում			12		
Անձնական անվտանգության ապահովում					4, 8, 12
Արտակարգ իրավիճակներում անվտանգ վարքագծի					4, 8, 12

հիմունքները					
Անհետաձգելի օգնություն մինչև բժշկին դիմելը					12

Ժամանակը և տարածությունը

Հասարակական գիտությունների «Ժամանակ և տարածություն» ուղղության մեջ միավորված արդյունքներն աշակերտին, նախ՝ ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու կարողություն ձեռք բերելու հնարավորություն են ընձեռում:

Այս ուղղությունը աշխարհագրության մեջ մշտապես առկա է: Այն միավորում է աշխարհագրության համար կարևոր այնպիսի թեմաներ, կարողություններ և հմտություններ, ինչպիսին են քարտեզի ընթերցումը, գնական պարագաների վերլուծությունը, մեկնաբանումն ու ստեղծումը. ինչպես նաև տեղանքի աշխարհագրական դիրքի որոշումը, աշխարհագրական միջավայրի, երկրաբանական ժամանակի, աշխարհագրական երևույթների, գործընթացների և օրինաչափությունների տարածման գիտելիքները:

Պատմություն առարկան սովորելիս՝ աշակերտը տիրապետում է այնպիսի հիմնավոր հասկացությունների, ինչպիսին են. ժամանակի միավորները, ժամանակահատվածները՝ նախկինում/առավել ուշ, անցյալում, ներկայումս, ապագան, ժամանակագրությունը (այդ թվում, երկրաբանական թվարկությունը), թվարկությունը, շրջանաբաժանումը, դարը, հազարամյակը, օրացույցը, պատմական դարաշրջանները (ժամանակաշրջաններ), դարաշրջանը և տարածաշրջանը:

Շրջակա միջավայրը և էկոնոմիկան

«Շրջակա միջավայրը և էկոնոմիկան» ուղղությունը նպատակ ունի աշակերտին ցույց տալ, թե հասարակության համար ինչ նշանակություն ունի շրջակա միջավայրը և տնտեսությունը: Այս ուղղությունը միավորում է բնական միջավայրը, բնական պաշարները, բնակչության, տնտեսության ոլորտների գիտակցմանն ու ուսումնասիրությանն ուղղված արդյունքները: Աշակերտին հնարավորություն է ընձեռվում գիտակցել աշխարհագրական գործոնների փոխադարձ կապն ու փոխկախվածությունը: Այս նույն ուղղության մեջ մշտապես ներկայացված են բնապահպանական գիտակցության ձևավորմանը միտված արդյունքները:

Այստեղ միավորված արդյունքներն աշակերտին հնարավորություն են տալիս ընկալել տնտեսության և բնական միջավայրի գործոնների փոխազդեցությունը, գիտակցել այդ կապերի փոփոխականությունը և օրինաչափությունները տարածության և ժամանակի մեջ:

Պետական կառավարումը և քաղաքականությունը

Այս ուղղությունը նպատակ ունի աշակերտին հնարավորություն տալ ըմբռնել պետության էությունը և գործառույթները, ընկալել քաղաքական գործընթացների նշանակությունը և ընդհանուր օրինաչափությունները, օգնել աշակերտին պատմական փաստերի ընդհանրացման հարցում:

Մշակույթը և կրոնը

Այս ուղղությունը նպատակ ունի աշակերտին ցույց տալ Երկրագնդի վրա մարդու ստեղծած մշակութային ժառանգության բազմազանությունը և օգնել նրան դրանց դասակարգման գործում, օգնել աշակերտին տարբերել պատմական դարաշրջաններն ու երկրամասերը՝ ելնելով ազգային կենցաղի բնութագրիչներից ու մշակութային նվաճումներից, օգնել աշակերտին սահմանել կրոնի էությունն ու նշանակությունը, պատկերացում կազմել աշխարհում գոյություն ունեցող կրոնական բազմազանությունների մասին:

Մարդը և հասարակությունը

Այս ուղղությունը նպատակ ունի աշակերտներին ցույց տալ, որ պատմության գլխավոր կերտողը մարդն է, որն ունի իր իրավունքները և որոշակի պարտավորություններ հասարակության նկատմամբ: Հասարակությունը կազմված է տարբեր սոցիալական շերտերից: Աշակերտը պետք է իմանա, թե տարբեր դարաշրջաններում ինչպիսին էր սոցիալական տարբեր խավերի մարդկանց իրավական վիճակը և հասարակական կյանքին նրանց մասնակցության աստիճանը:

Շրջակա միջավայրը և սոցիալական հասարակարգերը

«Շրջակա միջավայրը և սոցիալական հասարակարգը» ուղղության մեջ միավորված են հասարակության մասին արդյունքները, որոնք ուղղված են բնակչության, բնակեցման, քաղաքական և սոցիալական աշխարհագրության ուսումնասիրմանը: Այս ուղղության արդյունքներն ամրապնդում են կապը հասարակության և շրջակա միջավայրի միջև:

Պատմական մեկնաբանություն ու հետազոտություն

Այս ուղղության նպատակն է աշակերտի մեջ մշակել պատմական հետազոտություն կատարելու կարողություն, տեղեկատվություն տալ նրանց պատմական աղբյուրների և հետազոտության մեթոդների բազմազանության մասին, սովորեցնել պատմական թեմա գրել, որտեղ նա կկարողանա ձևակերպել իր կարծիքները և փաստարկած պաշտպանել այն:

Հաղորդակցություն

Այս ուղղության նպատակն այն է, որ աշակերտը կարողանա վերլուծել աշխարհագրական միջոցները և ստեղծել դրանց նմանօրինակները. ձեռք բերել աշխարհագրական հետազոտության անհատական կամ խմբային (աշխատանքի բաժանում, խմբային հետազոտում և այլն) աշխատանքի կարողություններ ու հմտություններ, անհատական աշխատանքի գործընթացում ներկայացված հիմնախնդիրները հաղթահարելու համար, դիմել իր հասակակիցներին, հետազոտության գործընթացում համագործակցել այն անձանց և կազմակերպությունների հետ, որոնցից կարելի է ստանալ ցանկալի տեղեկատվություններ, կարողանա կազմակերպել շնորհանդես տարբեր լսարանների համար:

Անհատական զարգացում

Անհատական մակարդակով անձնական զարգացումը ինքնազարգացման և ուրիշներին զարգացնելու գործընթաց է: Այն իր մեջ ներառում է այնպիսի նպատակներ, պլաններ ու գործողություններ, որոնք ուղղված են հետևյալ խնդիրների իրականացմանը.

- ինքնավերլուծության զարգացում
- ինքակրթության զարգացում
- նույնականության որոնում, հայտնաբերում և նորացում
- հնարավորությունների կամ տաղանդի զարգացում
- ներուժի սահմանում և զարգացում
- մարդկային կապիտալի զարգացում
- կյանքի մակարդակի բարձրացում
- անհատական զարգացման պլանի սահմանում և կատարում:

Կայուն զարգացում

Առավել հաճախ «կայուն զարգացումը» պարզաբանում են այնպես. «Զարգացում, որը ժամանակակից կարիքները բավարարում է այնպես, որ ապագա սերունդներին չի զրկում իրենց կարիքները բավարարելու հնարավորությունից»:⁷

Այն փոփոխական գործընթաց է: Նրանում բնական պաշարների սպառումը, ներդրումները, գիտատեխնիկական զարգացումը, անհատի զարգացումը և ինստիտուցիոնալ փոփոխությունները փոխհամաձայնեցված են և ամրապնդում են մարդու կարիքներն ու ձգտումները բավարարելու համար անհրաժեշտ ներկա և ապագա ներուժը: Հիմնականում, խոսքը մարդկանց համար բարեկեցիկ կյանք ապահովելու մասին է:

Ինքնակառավարում և կառավարում

Ինքնակառավարումը և կառավարումը կապված են այն որոշումների հետ (անհատական, ընտանեկան, համայնքային, երկրի մակարդակով), որոնք սահմանում են սպասելիքները, իշխանության շնորհումը կամ գործունեության հսկումը: Այն իր մեջ ներառում է անհատական կամ խմբային թե՛ հասարակական գործունեության գործընթացների և լիդերության յուրահատուկ մասը:

Աշխարհագրական հետազոտություն

Այս ուղղության հիմնական նպատակը այն է, որ դեռահասը գիտակցի մարդու աշխատանքային տարբեր բնագավառներում աշխարհագրության և աշխարհագրական գիտելիքների նշանակությունը, ծանոթանա աշխարհագրական հետազոտության ավանդական (նկարագրական, համեմատական-աշխարհագրական, քարտարանային) և նոր (մաթեմատիկական, հեռակառավարվող, երկրատեղեկատվական) մեթոդներին, սովորի աշխարհագրական կանխատեսման և մոդելավորման հարցերը, կարողանա,

⁷ *United Nations. 1987. "Report of the World Commission on Environment and Development." General Assembly Resolution 42/187, 11 December 1987. Retrieved: 2007-04-12; Smith, Charles; Rees, Gareth (1998). Economic Development, 2nd edition. Basingstoke: Macmillan. ISBN 0333722280*

համապատասխան հիմնախնդրի հետ կապված, տեսական նյութեր ու աղբյուրներ որոնել, դաշտային պայմաններում հավաքել տեղեկատվություն, կազմակերպել նյութ, վերլուծել և վերամշակել աշխարհագրական թեմայի կառուցվածքը:

Քաղաքացիական պաշտպանության և անվտանգության ուսանում-ուսուցումն ընթանում է երեք հիմնական ուղղությամբ.

- առօրյա կյանքում անձնական անվտանգության ապահովում,
- արտակարգ իրավիճակում անվտանգ վարքի հիմունքներ,
- անհապաղ օգնություն՝ մինչև բժշկին դիմելը:

Մարդու կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգները, ըստ իրենց ծագման (պատճառների), տարածման, ներգործող գործոնների, հետևանքների և անվտանգության համապատասխան կանխարգելիչ միջոցների, տարբեր են: Մինևույն ժամանակ, երեխայի աճին զուգընթաց, փոխվում են ինչպես նրա հետ կապված վտանգների տեսակները, այնպես էլ անվտանգության միջոցների պահպանման հնարավորությունները:

Բնական է, որ աշակերտին և ուսման արդյունքին կողմնորոշված հանրակրթական գործընթացը, պետք է նկատի առնի ինչպես վտանգների և դրանց դիմակայման, այնպես էլ երեխաների տարիքային առանձնահատկությունները:

Կարևոր է, որ Քաղաքացիական պաշտպանության և անվտանգության հանրակրթական ծրագիրը նախատեսի բազմապիսի հնարավորություններ տարբեր պատճառաբանություն և կարողություններ ունեցող աշակերտների համար:

զ) Հասարակական գիտությունների գնահատումը

Հասարակական գիտությունների գնահատման բաղադրամասերը

1. Դասարանական աշխատանք
2. Տնային առաջադրանք
3. Անփոփիչ առաջադրանք

1. Դասարանական աշխատանք

Գնահատվում են հետևյալ գիտելիքները⁸ և կարողությունները.

- Հիմնախնդրի ըմբռնում
- Հաղորդակցություն
- Ուսուցում
- Համագործակցություն
- Հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն

⁸ Գիտելիքը գնահատվում է ըստ յուրաքանչյուր առարկայի և դասարանի ծրագրային բովանդակության

- Ստեղծագործականություն
- Ժամանակի պատմական ընկալում
- Պատասխանատվություն և հոգածություն շրջակա միջավայրի մասին
- Պատմական հետազոտություն
- Աշխարհագրական հետազոտություն
- Կողմնորոշում տարածության մեջ
- Պատմական դարաշրջանի վերապրում
- Դիդակտիկ պարագաների օգտագործում և ստեղծում

Կարողությունները գնահատվում են ըստ հետևյալ ակտիվությունների.

- Թեմայի հետ կապված առաջադրված հարցերով
- Առաջադրված հարցին տրված պատասխանով
- Քննարկվելիք հարցի հետ կապված դատողությամբ և վերլուծությամբ
- Քննարկված երևույթների և գործընթացների նկատմամբ սեփական վերաբերմունքի արտահայտմամբ
- Առաջադրված հիմնախնդրի լուծման ուղու առաջարկմամբ
- Խմբային աշխատանքին ներդրումով
- Բանավեճին մասնակցելու հաճախականությամբ
- Բացատրված հասկացությունների և տերմինների պարզաբանմամբ ու կիրառությամբ
- Երևույթների ու գործընթացների քննարկման ժամանակ սեփական տեսակետի հիմնավորմամբ
- Դիդակտիկ նյութերի կիրառմամբ և պատրաստմամբ
- Շնորհանդեսով
- Սահմանված ժամկետի պահպանմամբ
- Բանավեճում արտահայտված տեսակետներով և փաստարկներով

2. Տնային առաջադրանք

Գնահատվում են հետևյալ գիտելիքները և կարողությունները.

- Հիմնախնդրի ըմբռնում
- Տեղեկատվության ձեռքբերում և կազմակերպում
- Կապերի և հարաբերությունների որոշում
- Հաղորդակցություն
- Ուսուցում
- Համագործակցություն
- Հիմնախնդրի լուծում
- Ստեղծագործականություն
- Պատմական ժամանակը հասկանալ
- Շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվություն և հոգատարություն
- Պատմա-աշխարհագրական հետազոտություն
- Կողմնորոշում տարածության մեջ
- Պատմական դարաշրջանի վերապրում
- Դիդակտիկ նյութերի օգտագործում և պատրաստում
- Քննադատական մտածողություն

Կարողությունները գնահատվում են ըստ հետևյալ ակտիվությունների.

- Հասկացությունների և տերմինների բացատրությամբ ու կիրառությամբ
- Երևույթների և գործընթացների քննարկման ժամանակ տեսակետների փաստարկմամբ
- Առաջադրված հարցին տրված պատասխանով
- Քննարկվելիք հարցի հետ կապված դատողությամբ և վերլուծությամբ
- Առաջադրված հիմնախնդրի լուծման ուղու առաջարկմամբ
- Դիդակտիկ նյութերի կիրառմամբ և ստեղծմամբ
- Շնորհանդեսով
- Բանավեճում արտահայտված տեսակետներով և փաստարկներով
- Գրավոր աշխատանքի կատարումով

3. Ամփոփիչ գնահատում⁹

Գնահատվում են հետևյալ կարողությունները.

- Արտակարգ պայմաններում (թեստ, ստուգողական և այլն) գիտելիքների, կարողությունների և հմտությունների ցուցաբերում
- Հիմնախնդրի ըմբռնում
- Տեղեկատվության ձեռքբերում և կազմակերպում
- Կապերի և հարաբերությունների որոշում
- Հաղորդակցություն
- Պատմա-աշխարհագրական հետազոտում
- Հիմնախնդրի լուծում
- Ստեղծագործականություն
- Տարածության մեջ կողմնորոշում
- Պատմական դարաշրջանի վերապրում
- Դիտակտիկ նյութերի կիրառում և պատրաստում
- Պատասխանատվություն շրջակա միջավայրի նկատմամբ և հոգատարություն նրա մասին
- Քննադատական մտածողություն

Ամփոփիչ առաջադրանքների տեսակները.

- Ստուգողական գրավոր աշխատանք
- Թեստավորում
- Հարց ու պատասխան
- Շարադրություն/ակնարկ
- *Շնորհանդես*
- *Նախագիծ*
- *Ռեֆերատ*

⁹ Ամփոփիչ աշխատանքները կատարվում են ինչպես բանավոր (բանավեճ, բեմադրություն) և գրավոր (թեստ, աշխատություն, պատմա-աշխարհագրական թեմա), այնպես էլ խառը (շնորհանդեսի կամ նախագծի ներկայացում) ձևով, ուսումնական թեմայի, թեմաների շարքի ու ուսումնական գործընթացի որոշակի փուլի ավարտից հետո:

Նախագծի գնահատման ընդհանրացված աղյուսակ

Առավելագույն գումարային միավորը բաժանելով երեքի, կատարվում է հավաքված միավորների տեղափոխում տասը միավորանոց գնահատման

	Տարրական 1 միավոր	Շնորհների 2 միավոր	Վարպետորեն 3 միավոր
1. Նպատակը	Լավ չի պարզաբանված, անորոշ է:	Կատարվում է ուշադրության կենտրոնացում մի նպատակի վրա:	Պարզորոշ նպատակներ, հեշտ ընկալելի:
2. Կազմակերպվածություն	Թույլ է կազմակերպված, մտքների միջև չկա տրամաբանական կապ, դա շփոթեցնում է ընթերցողին / ունկնդրին:	Գիտակցված է հաջորդականությունը, կազմակերպման նշաններով, մտքից միտք որոշ անցումներ պարզ են, որոշ անցումներ ` անհասկանալի:	Լավ է կազմակերպված ձևաչափը, տրամաբանական անցում մի գաղափարից մյուսին, կազմակերպվածությունն ավելի արդյունավետ է դարձնում նախագիծը:
3. Բովանդակության կոռեկտություն	Հաճախ ենք հանդիպում ոչ տեղին օգտագործված, սխալ տեղեկությունների:	Որոշ անհամապատասխան կամ սխալ տեղեկատվությամբ հանդերձ, հիմնականում կոռեկտ է:	Ամբողջությամբ կոռեկտ է, փաստերը ճշգրիտ են և հստակ:
4. Լեզվական կազմակերպվածություն	Լեզվական տեսակետից անկազմակերպ է, հաճախակի սխալներով:	Լեզվական տեսակետից կազմակերպված է, աննշան սխալներով:	Լեզվական տեսակետից կազմակերպված է, պահպանված են կետադրական նշանները:
5. Հետազոտում	Հետազոտությունը արդյունավետ չի պլանավորված, օգտագործված աղբյուրը հավաստի չէ, վերլուծությունը մակերեսային է:	Հետազոտությունը պլանավորված է, սակայն խմբի ներուժն ամբողջությամբ օգտագործված չէ, կիրառվել են սահմանափակ քանակությամբ աղբյուրներ, վերլուծությունն ընդունելի է:	Հետազոտությունը ճիշտ է պլանավորված, օգտագործված են բազմաթիվ աղբյուրներ (հեղինակավոր հետազոտություններ դաշտային հետազոտությունից)

			վերլուծությունը խորքային է:
6. Դիդակտիկ նյութեր	Դիդակտիկ նյութերը հաճախ չեն համապատասխանում բովանդակությանը կամ խմբի կողմից չեն ստեղծված:	Դիդակտիկ նյութերի կապը բովանդակության հետ հստակ է, սակայն միապաղաղ է:	Բազմապիսի, բովանդակությանը համապատասխան, բարեխղճորեն կատարված:
7. Ստեղծագործականություն	Աննշան ստեղծագործական էներգիա է ծախսված խմբի կողմից:	Երբեմն երևում են խմբի ինքնատիպ մտքերը, որոնք օգնում են նախագծի առավել լավ ներկայացմանը:	Երևում է խմբի ինքնատիպությունը և յուրովի մոտեցումը, ինչը նախագիծը հետաքրքիր է դարձնում:
8. Կապը առարկաների հետ	Չի երևում խմբի իրազեկությունը առարկաներից, հանդիպում ենք փաստերի ոչ ճիշտ մեկնաբանման:	Տեսակետները կապված են մեկ կամ երկու առարկայից ստացած գիտելիքների հետ:	Գլխավոր տեսակետները կապվում են տարբեր առարկաներից ստացած գիտելիքների հետ, ինչը մատնանշում է խմբի իրազեկությունների բազմազանության մասին:
9. Եզրակացություններ	Եզրակացությունները ձևակերպված չեն:	Եզրակացությունները ձևակերպված են հետազոտմանը համապատասխան, սակայն հստակ չեն:	Եզրակացություններում կա նորություն (ինքնատիպություն), զգացվում է տրամաբանական կապ հետազոտության հետ, դրանք ձևակերպված են հստակ:
10. Շնորհանդես	Արդյունավետ չի ներկայացված նախագծի էությունը, դժվարանում է ձևակերպել մտքերը և պատասխաններ տալ, դիդակտիկ նյութերը նպատակաուղղված չեն	Անորոշ է ներկայացված նախագծի էությունը, օգտագործում է դիդակտիկ նյութերը, պատասխանում է հարցերի մեծ մասին:	Հստակ է ներկայացված նախագծի էությունը, խոսքը հստակ է, հաշվարկված լսարանի վրա, բացահայտված են հիմնական գաղափարները, կիրառում է դիդակտիկ նյութեր և

	օգտագործված:		պատասխանում բոլոր հարցերին:
--	--------------	--	-----------------------------

Ռեֆերատի գնահատման աղյուսակ

Այս դեպքում 3-րդ և 5-րդ չափանիշները գնահատվում են 0-2 միավորով, իսկ մնացածները՝ 0 կամ 1 միավորով: Առավելագույն գումարը տասը միավոր է:

	Աշակերտի անունը, ազգանունը				
	Ի				
1. Նպատակը/թեզիսը – հետազոտման հետևանքով արտահայտված հիմնական գաղափարը	1				
2. Ռեֆերատի կազմակերպումը	1				
3. Բովանդակության կոռեկտությունը, փաստական հուսալիությունը	2				
4. Լեզվական կազմակերպումը	0				
5. Հետազոտությունը	2				
6. Պատկերազարդումները/ դիդակտիկ նյութերը ¹⁰	1				
7. Առաջարկված տեսակետների ամրապնդումը փաստարկներով և օրինակներով	1				
8. Եզրակացությունները	1				
Գումարը	9				

Բանավեճի գնահատման աղյուսակ

Կոնկրետ աշակերտի յուրաքանչյուր չափանիշից նշանակվում է համապատասխան միավոր: Բոլոր չափանիշներից ստացած միավորները գումարվում են և բաժանվում վեցի (հաշվվում է նրանց միջին թվաբանականը):

	III մակարդակ (8-10 միավոր)	II մակարդակ (5-7 միավոր)	I մակարդակ (1-4 միավոր)
Լսել	Մշտապես լսում և հետևում է ելույթ ունեցողին:	Հաճախ է լսում և նայում ելույթ ունեցողին:	Հազվադեպ է լսում և նայում ելույթ ունեցողին :
Խոսել	Խոսում է հստակ և լսում է ունկնդիրներին:	Հիմնականում հասկանալի է խոսում և նայում է ունկնդիրներին:	Խոսքը հստակ չէ, ունկնդիրները դժվարանում են հասկանալ:
Ոչ բանավոր հարդարակցություն	Կարող է արդյունավետ ընկալել և կիրառել ոչ	Հաճախ կարող է հաստատել ոչ	Հազվադեպ է կիրառում ոչ բանավոր

¹⁰ Թերևս, պատմության համար հնարավոր է, որ չնախատեսենք 6-րդ բաղադրամասը, համապատասխանաբար, 7-րդ չափանիշը կգնահատվի առավելագույն 2 միավորով:

	բանավոր հաղորդակցության տեսակները (աչքերով, ձեռնածությամբ, արտահայտչականությամբ, ձայնով):	բանավոր կապ:	հաղորդակցության տեսակները:
Մասնակցություն	Անհրաժեշտ մեկնաբանություններ և կարծիքներ արտահայտելով՝ հետաքրքրություն է ցուցաբերում բանավեճի թեմայի նկատմամբ:	Հիմնականում արտահայտում է հետաքրքրություն: Մեկնաբանությունները և կարծիքները միշտ չեն համապատասխանում թեմային:	Աննշան հետաքրքրություն ունի: Չի արտահայտում կամ չի կարողանում իր տեսակետները կապել բանավեճային թեմայի հետ:
Համագործակցություն	Համագործակցում է համադասարանցիների հետ, լսում է ուրիշների կարծիքը և պահպանում բանավեճի կանոնները:	Մեծ մասամբ համագործակցում է համադասարանցիների հետ, երբեմն միջամտում է ուրիշի գրույցին, հիմնականում պահպանում է բանավեճի կանոնները:	Հազվադեպ է համագործակցում և պահպանում բանավեճի կանոնները:
Տեսակետի փաստարկում	Տեսակետը ինքնատիպ է և հաստատված է փաստերով, հասկացություններով: Տրամաբանական կապ կա հարցի հետ:	Տեսակետը հաստատելու համար օգտագործված են վիճահարույց փաստեր և հասկացություններ:	Տեսակետը հարցի հետ տրամաբանական կապ չունի և հաստատված չէ փաստերով:

Ամփոփիչ առաջադրանքի կոնկրետ օրինակ պատմությունից.

Գրի՛ր շարադրություն՝ «Առաջին խաչակրաց արշավանքը»:

- ա) Ձևակերպեցե՛ք հետազոտության հիմնական գաղափարը, թեզիսները:
- բ) Պահպանեցե՛ք ռեֆերատի կառուցվածքը (ներածություն, հիմնական մաս, եզրակացություն) և կցե՛ք օգտագործված գրականության ցանկը:
- գ) Համապատասխան փաստագրական նյութը վերամշակեցե՛ք այնպես, որ հնարավորություն ունենաք դատողություններ անելու հետևյալ հարցերի շուրջ.

- Ինչո՞ւ և ինչպե՞ս զարգացավ եվրոպական գավթողագործությունը Մերձավոր Արևելքում:
- Ի՞նչով էր պայմանավորված:
- Ի՞նչ հետևանքներ ունեցավ այդ արշավանքը:

դ) Դատողություններ անելիս քննարկեցե՛ք նաև տարբերվող դիրքորոշումները, համեմատեցե՛ք դրանք, ձևակերպեցե՛ք ձեր դիրքորոշումը և հիմնավորեցե՛ք այն:

ե) Ռեֆերատի լիարժեք վերամշակման համար. ծանոթացե՛ք և վերամշակեցե՛ք հարցի մասին գոյություն ունեցող առաջնային ու երկրորդային աղբյուրները:

Ռեֆերատի գնահատման աղյուսակ

<p>1. Նպատակը/թիզիս` հետազոտության հիմնական գաղափարի ձևակերպումը</p>	<p>0-1</p>	<p>0 միավոր – հետազոտության նպատակը սահմանված չէ (հետազոտության նպատակը պարզորոշ չի սահմանված):</p>	<p>–</p>	<p>1 միավոր - ընտրած թեմայի հետ կապված հստակորեն են ներկայացված այն հարցերը, որոնց ռեֆերատում պատասխան է տրված:</p>
<p>2. Ռեֆերատի կազմակերպումը (ռեֆերատի կառուցվածքը, ներածություն, հիմնական մաս, եզրակացություն) և օգտագործված այն ռեսուրսը, որի հիման վրա ստեղծվել է ռեֆերատը</p>	<p>0-1</p>	<p>0 միավոր – ընդգծված չեն ռեսուրսները, որի հիման վրա կատարվել է ռեֆերատը, աշխատությունը չունի կառուցվածք, ռեֆերատը չունի համապատասխան մատենագրություն:</p>	<p>–</p>	<p>1 միավոր - պարզ է, թե ինչ բազայի վրա է աշակերտը կատարել ռեֆերատը, ներկայացված մատենագրությունը համալրված է գիտական աշխատություններով:</p>
<p>3. Բովանդակության կոռեկտությունը, փաստագրական հուսալիություն</p>	<p>0-2</p>	<p>0 միավոր – փնտրվող նյութը անչափ անմշակ է, ծանոթ չէ նախնական աղբյուրներին, երկրորդային</p>	<p>1 միավոր - փնտրվող նյութը պարունակում է առաջնային ու երկրորդային աղբյուրները, թեև ներկայացված աղբյուրները մշակված են</p>	<p>2 միավոր – գիտի առաջնային ու երկրորդական աղբյուրները, վավերացված հարցերը վստահելի են, քանի որ ճշտորեն է կարդացվում աղբյուրը: Առաջնային և երկրորդական աղբյուրները</p>

		աղբյուրներն էլ անմշակ են:	մակերեսայնորեն, այսինքն՝ աշակերտը մասամբ է ըմբռնել նյութը:	մշակված են պատշաճորեն, աշակերտն աղբյուրների նկատմամբ ցուցաբերում է քննադատական մոտեցում:
4. Լեզվական կազմակերպումը	0-1	0 միավոր – լեզուն անհարթ է, մտքերը հետևողականորեն չեն հաղորդված:	–	1 միավոր – լեզուն պարզ է ու հասկանալի, քննարկումը կատարվում է հետևողականորեն:
5. Հետազոտություն (սեփական վարկածի մշակում՝ աղբյուրները միմյանց հետ համեմատելու ու հակադրելու հիման վրա)	0-2	0 միավոր – թեմայի հետ կապված աշակերտը չունի դիրքորոշում: Նրա ռեֆերատը ինքնատիպ աշխատության տպավորություն չի թողնում: Աշակերտը չի տերապետում աղբյուրները վերլուծելու ունակությանը: Նկատվում է գրագողություն:	1 միավոր - աշակերտը կիրառում է աղբյուրները վերլուծելու կարողություն, թեև դժվարանում է փաստերը տարբերել ենթադրություններից, հետևաբար, նրա արած որոշ ենթադրություններ անհիմն են:	2 միավոր – աշակերտը համոզիչ կերպով տարբերում է փաստը ենթադրությունից, համապատասխանաբար մշակում է առաջնային ու երկրորդային աղբյուրները, նրանց վերլուծության հիման վրա անում է համապատասխան ենթադրություններ, հերթականությամբ դասավորված նյութի հիման վրա կարող է պատասխանել իրեն հետաքրքրող հարցերին:

6. Պատկերավոր ապացույց (դիդակտիկ նյութեր) ¹¹	0-1	–	–	–
7. Ներկայացված տեսակետի ամրապնդումը փաստարկներով և օրինակներով	0-2	0 միավոր - չունի սեփական դիրքորոշում:	1 միավոր – ձգտում է արտահայտել իր կարծիքը, կապված հարցի հետ, թեև դժվարանում է հիմնավորել սեփական դիրքորոշումը:	2 միավոր – լավ է տիրապետում առարկայական գիտելիքներին, մշակված նյութի միջոցով ձևակերպում է սեփական դիրքորոշումը և այն հաստատում փաստարկներով: Դատում է համոզված, հաշվի է առնում, բայց կուրորեն չի վստահում հեղինակություններին:
8. Եզրակացություններ	0-1	0 միավոր – ռեֆերատում բերված եզրակացությունները փաստարկված չեն ու սխալ են:		1 միավոր – ամփոփում է հետազոտության արդյունքները, կարող է այն հասցնել ընթերցողին:
	Գումարային միավոր			

¹¹ Թերևս, հնարավոր է, որ 6-րդ չափանիշը Պատմության համար նկատի չառնենք: Նման դեպքում, 7-րդ չափանիշը կգահատվի 2 առավելագույն միավորով:

Համապատասխանություն չափորոշչին՝ օրինակը համապատասխանում է X դասարանի Պատմության չափորոշչի *պատմական մեկնաբանություն* և *հետազոտություն* ուղղությունների 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ արդյունքներին ու *հաղորդակցություն* ուղղության 8-րդ արդյունքին, ինչպես նաև XI դասարանի Պատմության չափորոշչի *պետական կառավարում* և *քաղաքականություն* ուղղության 5-րդ արդյունքին:

Ամփոփիչ առաջադրանքի կոնկրետ օրինակ Աշխարհագրությունից.

Ներկայացրե՛ք թե՛մա՝ «Գերմանիայի համակողմանի բնութագիրը»

ա) Քննարկեցե՛ք հետևյալ հարցերը. 1) Գերմանիայի ֆիզիկական-աշխարհագրական դիրքը: 2) Բնական պաշարներ: 3) Բնակչությունը (սեռային-տարիքային կազմը, գաղթ, տնտեսապես ակտիվ բնակչություն): 4) Տնտեսական դրությունը (տնտեսության բնագավառները, տրանսպորտը): 5) Քաղաքական դրությունը (քաղաքական կառուցվածքը):

բ) Քննարկեցե՛ք և արե՛ք եզրակացություններ (երկրի տեղը աշխարհի քաղաքական քարտեզի վրա և նրա զարգացման ապագա հեռանկարները):

Գնահատման չափանիշներ

Քննարկում է առաջին հինգ հարցը	0-1-2	0 միավոր – մակերեսորեն քննարկում է միայն մեկ կամ երկու հարց:	1 միավոր – քննարկում է առաջադրանքում տրված հարցերի կեսից ավելին:	2 միավոր – քննարկում է հինգ հարցը:
Պահպանում է բովանդակության հաջորդականությունը	0-1	0 միավոր – հերթականությամբ չի անցնում մի հարցից մյուսը:	-----	1 միավոր – հաջորդաբար քննարկում է հարցերը:
Դրսևորում է վերլուծության և քննադատաբար մտածելու	0-2	0 միավոր - Ուշադրությունը կենտրոնացնում է միայն փաստերին, չի դրսևորում	1 միավոր - վերլուծում է մեկ-երկու հարց և դրանց նկատմամբ արտահայտում է իր	2 միավոր աշակերտը վերլուծում է նյութում տրված հարցերը, արտահայտում է դրանց հետ կապված սեփական

կարողություն		քննադատաբար մտածելու կարողություն:	վերաբերմունքը:	դիրքորոշումը:
Կիրառում է դիդակտիկ նյութեր	0-1	0 միավոր – դիդակտիկ նյութեր չկան կամ աննշան են:	-----	1 միավոր – գեկուցմանը կցված են բազմազան դիդակտիկ նյութեր:
Խոսում է պարզ ու հասկանալի	0-1	0 միավոր – գրուցում է անհասկանալի, դժվարանում է արտահայտել միտքը:		1 միավոր - գրուցում է պարզ, արտահայտվում հասկանալի:
Պատասխանում է տրված հարցերին, դրսևորում է սովորած հարցերի իմացություն	0-1	0 միավոր – ընդհանրապես չի կարող պատասխանել լսարանի տրված հարցերին:		1 միավոր – համապատասխանաբար է պատասխանում հարցերին, ցուցաբերում է գիտելիքներ և վերլուծման կարողություն:
Պահպանում է սահմանված ժամը	0-1	0 միավոր – չի պահպանում տրված ժամաչափը		1 միավոր – ժամաչափը պահպանված է:
Անում է եզրակացություններ	0-1-2	0 միավոր - չի կարողանում եզրակացություն անել (անում է ոչ ճիշտ եզրահանգումներ):	1 միավոր - անում է որոշ եզրակացություններ, բայց չի հիմնավորում դրանք:	2 միավոր – անում է հետաքրքիր եզրակացություններ, պարզաբանում է դրանք սոցիալ-տնտեսական համատեքստի և կարևոր գործոնների վերլուծման հիման վրա, քննարկումը հետաքրքիր է և համոզիչ:

Չափորոշչին համապատասխանություն՝ ամփոփիչ առաջադրանքը համապատասխանում է XI դասարանի աշխարհագրության չափորոշչի երկրորդ արդյունքին.

Աշխ. XI.2. Աշակերտը կարող է վերլուծել սոցիալ-տնտեսական բնույթի գլոբալ հիմնախնդիրներ:

Գլուխ 0 XXXVI

Առարկայական իրազեկություններ տարրական աստիճանում

IV դասարան

Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգություն (երթնեկության անվտանգություն)

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Անձնական անվտանգության ապահովում	Արտակարգ իրավիճակում անվտանգ վարքի հիմունքները
<p>Անվտ. IV. 1. Աշակերտը կարող է կիրառել անվտանգ երթնեկության կանոնները:</p> <p>Անվտ IV. 2. Աշակերտը կարող է մարդաշատ տեղերում և դաշտային պայմաններում կիրառել անվտանգ վարքի կանոնները:</p>	<p>Անվտ IV. 3. Աշակերտը կարող է նկարագրել ոչ սովորական պայմաններում անվտանգ վարքի հիմունքները:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և ստուգիչները

Ուղղություն. Անձնական անվտանգության ապահովում

Անվտ IV. 1. Աշակերտը կարող է կիրառել անվտանգ երթնեկության կանոնները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է ճանապարհային երթնեկության կանոնները:
- Կոնկրետ իրավիճակին համապատասխանեցնում է ճանապարհային երթնեկության կանոնները:

Անվտ IV. 2. Աշակերտը կարող է մարդաշատ վայրերում և դաշտային պայմաններում կիրառել անվտանգ վարքի կանոնները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է անվտանգ երթնեկության կանոնները տարբեր ոչ կայուն մակերևույթների վրա (*օրինակ, ջրում, սառույցի վրա և այլն*):
- Անվանում է հասարակական տրանսպորտում կամ մարդաշատ այլ վայրերում անվտանգ վարքի կանոնները:
- Անվանում է դաշտային պայմաններում տեղափոխվելու համար անհրաժեշտ իրերը, դրանց նշանակությունը և կիրառման կանոնները:

Ուղղություն. Արտակարգ իրավիճակում անվտանգ վարքի հիմունքները

Անվտ. IV. 3. Աշակերտը կարող է նկարագրել անսովոր իրադրությունում անվտանգ վարքի հիմունքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է անձանոթ միջավայրում տեղափոխվելու կամ բնակվելու հնարավոր վտանգները:
- Ըստ կոնկրետ միջավայրի, նկարագրում է անվտանգ վարքի կանոնները:

Ծրագրի բովանդակությունը

IV դասարանի համար պարտադիր բովանդակությամբ հարցերի թվարկումը

(Ստորև ներկայացված հարցերը այս դասարանի համար նախատեսված ծրագրի բովանդակության 60%-ն են կազմում):

Անվտանգությունը հասարակական տրանսպորտում, ատրակցիոններում և ոչ սովորական իրավիճակներում: Անվտանգության կանոնները. մետրոյում, ավտոբուսում, կողմնորոշում քաղաքում, հաղորդակցություն անձանոթ մարդկանց հետ, վարքագիծը ոչ սովորական (ինքնատիպ) իրավիճակում և այլն:

Անվտանգությունը ճանապարհներին. Ճանապարհային երթևեկության կանոնները և նշանները, երթևեկության կանոնները ըստ լուսանշանի և ճանապարհը կարգավորող ցուցումների: Հեծանվով երթևեկության անվտանգությունը: Մանուկների խմբերը տեղափոխելու կանոնները և այլն:

Անվտանգությունը ոչ կայուն մակերևույթների վրա (ջրում, ճահճում, սառույցի վրա և այլն). անվտանգության կանոնները լողի ժամանակ, ջրում հանգստանալու եղանակները, գործողություններ, երբ մարդը խեղդվում է: Սառույցի դիմացկունության ցուցանիշը: Սառույցի վրա տեղափոխվելու կանոնները, սառչելուց պաշտպանվելը և այլն:

Զբոսաշրջության ունակություններն ու հմտությունները. խմբի կազմավորումը: Պատրաստությունը շարային երթին, երթուղու անվանումը, զբոսաշրջիկի հանդերձանք, ուսապարկ և վրան, ճամբարի կազմակերպում, անվտանգության կանոնները արշավի ժամանակ, կոշմնորոշման էությունը, հորիզոնի որոշման տեսակները, կողմնացույց, կողմնորոշում տեղանքում, արշավախմբի երթևեկումը, ապահովագրությունը և ինքնապահովագրությունը խոչընդոտներ հաղթահարելիս, մթերքներ և սպասք, խարույկ, կերակրի պատրաստումը արշավի ժամանակ:

V-VI դասարան
Մեր Վրաստանը

Չափորոշիչ

Երկու տարվա վերջում նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Ժամանակ և տարածություն	Պետական կառավարում և քաղաքականություն	Շրջակա միջավայր և տնտեսություն	Մարդը և հասարակությունը	Մշակույթ և կրոն
<p>Հաս. գիտ.V-VI. 1. Աշակերտը կարող է ընթերցել և օգտագործել քարտեզները:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.6. Աշակերտը կարող է բնութագրել պատմական տարբեր դարաշրջաններում Վրաստանում գոյություն ունեցած կառավարման ձևերը:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.10. Աշակերտը կարող է թվարկել Վրաստանի բնակչության բնութագրիչները:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.15. Աշակերտը կարող է ճանաչել տարբեր նշաններ ու պայմաններ, ըստ որոնց մարդիկ իրենց այս կամ այն հասարակության անդամ են համարում:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.20. Աշակերտը կարող է նկարագրել Վրաստանում գոյություն ունեցող կրոնները:</p>
<p>Հաս. գիտ.V-VI. 2. Աշակերտը կարող է կիրառել և ստեղծել տեղեկատվության հաղորդման տարբեր միջոցներ (աղյուսակ, գծագիր, լուսանկար, ուրվագիծ, ուրվանկար):</p>	<p>Հաս. գիտ.V-VI.7. Աշակերտը կարող է բնութագրել Վրաստանի պատմության անվանի անձանց, որոնք մասնակցել են երկրի կառավարմանը:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.11. Աշակերտը կարող է Վրաստանի աշխարհագրական օբյեկտները կապել բնակավայրերի տեսակների հետ:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.16. Աշակերտը կարող է, ըստ նրանց բնութագրիչ նշանների ու կանոնների, համեմատել տարբեր հասարակությունները:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.21. Աշակերտը կարող է տարբերել մշակույթի տարբեր բաղադրամասերը և ցույց տալ դրանց փոխադարձ կապը:</p>
<p>Հաս. գիտ.V-VI. 3. Աշակերտը կարող է կազմել ուրվագծային քարտեզներ:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.8. Աշակերտը կարող է դատողություններ անել Վրաստանի պատմության մեջ անհատների և սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների դերի մասին:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.12. Աշակերտը կարող է ըստ բնական պաշարների բնութագրել երկրամասը և դատողություններ անել դրանց նշանակության մասին:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.17. Աշակերտը կարող է նկարագրել մարդու արժանապատվության, ազատության և համահավասարության պաշտպանութ յունը տարբեր պատմական դարաշրջաններում:</p>	<p>Հաս. գիտ.V-VI.22. Աշակերտը կարող է նկարագրել Վրաստանի բնակչության մշակույթների նմանությունների ու տարբերությունների արտահայտությունները և քննարկել համապատասխան պատճառները:</p>
<p>Հաս. գիտ.V-VI.4. Աշակերտը կարող է պարզաբանել ու կիրառել</p>	<p>Հաս. գիտ.V-VI.9. Աշակերտը կարող է համեմատել Վրաստանի պատմության տարբեր</p>	<p>Հաս. գիտ.V-VI.13. Աշակերտը կարող է դատողություններ</p>	<p>Հաս. գիտ.V-VI.18. Աշակերտը կարող է տարբերել երեխաների իրավունքներն ու</p>	<p>Հաս. գիտ.V-VI.23. Աշակերտը կարող է դատողություններ անել ճանապարհորդ</p>

Ժամանակագրական միավորները (տարի, դար, հազարամյակ) և թվագրության համակարգը (հին և նոր):	Ժամանակաշրջաններում տեղի ունեցած պատերազմների ու խաղաղ ժամանակների հետևանքները:	անել բնական պաշարների արդյունավետ ու բազմակողմանի օգտագործման մասին:	պարտականությունները տարբեր հասարակություններում:	դրությունների առևտրի նշանակության մասին:
Հաս. գիտ.V-VI.5. Աշակերտը կարող է պատմական փաստերը կապել համապատասխան դարաշրջանի հետ:		Հաս. գիտ.V-VI.14. Աշակերտը կարող է դատողություններ անել հին ժամանակներից մինչև մեր օրերը հասած հաղորդակցության միջոցների մասին:	Հաս. գիտ.V-VI.19. Աշակերտը կարող է կապել իրար օրինականությունն ու խաղաղ գոյակցությունը:	

Երկու տարվա վերջում նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ժամանակ և տարածություն

Հաս. գիտ.V-VI. 1. Աշակերտը կարող է ընթերցել քարտեզը և այն օգտագործել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դրսևորում է քարտեզի լեգենդի իմացություն:
- Գիտի Վրաստանին սահմանակից պետությունները և աշխարհագրական խոշոր օբյեկտները:
- Օգտվում է քաղաքական քարտեզից (քարտեզագրքից) և ճանաչում Վրաստանի երկրամասերն ու մարզային կենտրոնները:
- Քարտեզների օգնությամբ քննարկում է Վրաստանի սահմանների փոփոխությունը պատմական տարբեր դարաշրջաններում:
- Ցույց է տալիս այն ճանապարհները, որոնցով Վրաստանը հաղորդակցվում է արտաքին աշխարհի հետ (*օր., Սև ծովի միջոցով*):
- Քարտեզի վրա, կոորդինատների միջոցով, սահմանում և գտնում է աշխարհագրական օբյեկտը:
- Թեմատիկ քարտեզից ընտրում և կիրառում է անհրաժեշտ տեղեկատվությունը:

Հաս. գիտ.V-VI. 2. Աշակերտը կարող է կիրառել և ստեղծել տեղեկատվության հաղորդման տարբեր միջոցներ (աղյուսակ, գծագիր, լուսանկար, ուրվագիծ, ուրվանկար):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կարդում և կիրառում է գծագրերում և աղյուսակներում տրված տեղեկատվությունները:

- Որևէ նշանով համեմատում է հաղորդակցության տարբեր միջոցներով հաղորդված տեղեկատվությունները (*օրինակ, ըստ տարիների կամ մակերեսի*):
- Դասակարգում է հաղորդակցության տարբեր միջոցներով ստացած տեղեկատվությունները:
- Հաղորդակցության մի միջոցով ստացած տեղեկատվությունը խմբավորում է ըստ մեկ կամ մի քանի նշանի:
- Տարբեր միջոցներով ներկայացնում է պատմական կամ աշխարհագրական տեղեկատվությունը:

Հաս. գիտ.V-VI. 3. Աշակերտը կարող է կազմել ուրվագծային քարտեզներ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Լրացնում է Վրաստանի ուրվագծային քարտեզները (*ռելիեֆի ձևերը, հիդրոգրաֆիկ օբյեկտներ, երկրամասեր և բնակավայրեր, ճարտարապետական կոթողներ*):
- Տեղանքում անցկացնում է պարզ չափումներ և պլանի վրա նշում օբյեկտների տեղը:
- Հայրենի երկրամասի քարտեզը կազմելիս՝ նրա վրա նշում է անհրաժեշտ տարրերը՝ վերնագիրը, լեգենդը, խորհրդանշանները, հորիզոնի կողմերը:

Հաս. գիտ.V-VI.4. Աշակերտը կարող է պարզաբանել ու կիրառել ժամանակագրական միավորները (տարի, դար, հազարամյակ) և թվագրության համակարգը (հին և նոր):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համապատասխանեցնում է ժամանակի միավորները (*օրինակ, հազարամյակ – 10 դար, դար – 100 տարի և այլն*):
- Կիրառում է տերմինները՝ հին դարաշրջան (նոր դարաշրջան), մեր թվարկությունից առաջ (մեր թվարկության), մինչև Քրիստոսի ծնունդը (Քրիստոսի ծննդից):
- Ժամանակային գծի վրա (սանդղակի վրա) նշում է պատմական կոնկրետ ժամանակը կամ պատմական ժամանակաշրջանը:

Հաս. գիտ.V-VI.5. Աշակերտը կարող է պատմական փաստերը կապել համապատասխան դարաշրջանի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է նշանավոր պատմական փաստերը:
- Անվանում է դարը և հազարամյակը, որին պատկանում է կոնկրետ ժամանակը:
- Պատմական կոնկրետ իրադարձությունները տարբերում է «առաջներում և ավելի ուշ» սկզբունքով, օր.

Հաս. գիտ.V-VI.9. Աշակերտը կարող է համեմատել Վրաստանի պատմության տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած պատերազմների ու խաղաղ ժամանակների հետևանքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է պատերազմների տեսակները (պաշտպանական, նվաճողական), բնութագրում դրանց հետևանքները:
- Անվանում է Վրաստանի պատմության ընթացքում խաղաղ եղանակներով ընդունած որոշումները, նշում դրանց դրական և բացասական հետևանքները:
- Ուրվագծային քարտեզի վրա նշում է Վրաստանի պատմության տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած ճակատամարտերի տեղերը (*օրինակ, Դիդգորիի, Բասիանիի, Գարնիսիի, Կրծանիսիի և այլն*):
- Համեմատում է Վրաստանի պատմության տարբեր դարաշրջաններում տեղի ունեցած պատերազմների կանոնները (*գերիների, վիրավորների և զոհվածների նկատմամբ վերաբերմունքը: Դատողություններ է անում պատերազմի ժամանակ օրենքներն ու կանոնները, պարտադիր կերպով, պահպանելու մասին*):
- Հավաքում է տեղեկություններ պատերազմի հետևանքով բնության մեջ կատարված բնապահպանական փոփոխությունների մասին (*ջուրը, օդը, ընդերքը, անտառը*): Աղյուսակի կամ պաստառի միջոցով ներկայացնում է փոփոխությունների հետևանքները:

Ուղղություն. Շրջակա միջավայր և տնտեսություն

Հաս. գիտ.V-VI.10. Աշակերտը կարող է թվարկել Վրաստանի բնակչության բնութագրիչները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Որոշում է բնական աճի, ծնելիության և մահացության միջև կապը:
- Ըստ դասարանի կամ շրջակա միջավայրի տվյալների, բնութագրում է բնակչության սեռային և տարիքային կառուցվածքը:
- Անվանում է Վրաստանում բնակվող էթնիկական ու կրոնական փոքրամասնությունները:
- Քարտեզի միջոցով նկարագրում է Վրաստանի բնակչության էթնիկական ու կրոնական բազմերանգությունը:
- Արտահայտում է իր կարծիքը գաղթի հնարավոր պատճառների մասին և բերում համապատասխան օրինակներ (*օրինակ, բնական պայմանները, բնապահպանությունը, պատերազմները*):
- Թվարկում է Վրաստանի տարբեր տարածաշրջաններում զարգացած տնտեսության տեսակները:

Հաս. գիտ.V-VI.11. Աշակերտը կարող է Վրաստանի աշխարհագրական օբյեկտները կապել բնակավայրերի տեսակների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառելով լուսանկար կամ քարտեզ, նկարագրում է տարբեր տարածաշրջաններին բնորոշ բնապատկերը (*օրինակ, լեռներ, անտառներ և այլն*):

- Տարբերում է Վրաստանում տարածված բնակավայրերի տեսակները:
- Տների ճարտարապետությունը կապում է աշխարհագրական միջավայրի հետ:
- Նկարագրում է տարբեր տիպի բնակավայրերը և դատողություններ անում աշխարհագրական կոնկրետ միջավայրում դրանց հայտնվելու պատճառների մասին *(օրինակ, գետերի ափերին ինչու գոյություն ունեն քաղաքներ, անմատչելի վայրերում ինչու են հանդիպում բնակատեղիներ):*
- Վրաստանի ուրվագծային քարտեզի վրա պատկերում է տարբեր տիպի բնակավայրեր *(քաղաք, ավան, գյուղ):*
- Անվանում է տարբեր բնակավայրերի գործունեության համար պարտադիր պայմանները, դատողություններ անում դրանց նշանակության մասին:
- Համեմատում է իր բնակավայրի և բնակեցված այլ տեղանքների բնական պայմանները:

Հաս. գիտ.V-VI.12. Աշակերտը կարող է ըստ բնական պաշարների բնութագրել երկրամասը և դատողություններ անել դրանց նշանակության մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համեմատում է աշխարհագրական տարբեր միջավայրում գոյություն ունեցող երկու բնակավայր և վերհանում նրանց միջև գոյություն ունեցող տարբերությունը *(նյութը, ճարտարապետությունը):*
- Կազմում է Վրաստանի տարբեր տարածաշրջաններում ձեռք բերած բնական պաշարների ցուցակը:
- Կազմում է այն բնական պաշարների ցուցակը, որոնք կիրառվում են նրա քաղաքում կամ գյուղում և դրանք տեղադրում է ուրվագծային քարտեզի վրա:
- Ընտրում է մի որևէ բնական պաշար և դատողություններ անում տարածաշրջանի զարգացման գործում դրա նշանակության մասին:
- Բնական պաշարները կապում է երկրի (տարածաշրջանի) տնտեսական գործունեության հետ:

Հաս. գիտ.V-VI.13. Աշակերտը կարող է դատողություններ անել բնական պաշարների արդյունավետ ու բազմակողմանի օգտագործման մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խմբավորում է միևնույն նյութից պատրաստված առարկաները (օրինակ, կավից և պատրաստվում և կճուճը, և աղյուսը):
- Անվանում է, թե ինչպես է փոխվում բնական պաշարը արդյունահանումից մինչև սպառողին հասնելը *(օրինակ, ցորեն-այլուր-հաց-հացաբուլկեղեն):*
- Դատողություններ է անում Վրաստանի (նրա որևէ տարածաշրջանի) մակերևութային ջրերի բազմազանության, դրանց նշանակության մասին: Դատողությունների արդյունքները ներկայացնում է իր ցանկացած ձևով:
- Դատողություններ է անում ջրի արդյունավետ օգտագործման և նրա աղտոտումը նախապես կանխելու եղանակների մասին:
- Անվանում է անտառն օգտագործելու տարբեր եղանակները:
- Անվանում է սպառման այն առարկաները, որոնք հնարավոր է երկրորդային վերամշակման ենթարկել:

Հաս. գիտ.V-VI.14. Աշակերտը կարող է դատողություններ անել հին ժամանակներից մինչև մեր օրերը հասած հաղորդակցության միջոցների մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է, թե մարդկության համար ինչ դրական ազդեցություն է ունեցել գրի ստեղծումը:
- Խմբավորում է տպագրության, համակարգչի կամ ժամանակակից հաղորդակցության միջոցների կիրառման արդյունքները:
- Ժամանակի սանդղակի վրա նշում է փոխադրամիջոցների տարբեր տեսակների հայտնագործումն ու զարգացումը:
- Թվարկում է փոխադրամիջոցները: Դատողություններ է անում տարբեր միջավայրերում դրանց նշանակության մասին, բերում օրինակներ:

Գլուխ XXXVII

Առարկայական իրազեկություններ բազային աստիճանում

**VII դասարան
Պատմություն**

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Ժամանակ և տարածություն	Պետական կառավարումը և քաղաքականությունը	Շրջակա միջավայրը և տնտեսությունը	Մարդը և հասարակությունը	Մշակույթ և կրոն
Պատմ. VII.1. Աշակերտը կարող է կապել փաստերը և իրադարձությունները համապատասխան դարաշրջանի հետ:	Պատմ. VII.3. Աշակերտը կարող է բնութագրել և համեմատել պատմական տարբեր դարաշրջաններում գոյություն ունեցած կառավարման ձևերը:	Պատմ. VII.5. Աշակերտը կարող է բացատրել, թե ինչ ազդեցություն ունեն բնական պայմանները բնակավայրերի տեսակների, հասարակության ավանդույթների և տնտեսության զարգացման վրա:	Պատմ. VII.7. Աշակերտը կարող է բնութագրել և համեմատել սոցիալական տարբեր խավերի կազմը և այդ խավերի ներկայացուցիչներին:	Պատմ. VII.9. Աշակերտը կարող է գիտակցել կրոնի դերը հասարակության կյանքում և համաշխարհային պատմական գործընթացում:
Պատմ. VII. 2. Աշակերտը կարող է քարտեզի վրա	Պատմ. VII 4. Աշակերտը կարող է դատողություններ	Պատմ. VII.6. Աշակերտը, համաշխարհային	Պատմ. VII.8. Աշակերտը կարող է, ըստ պատմական	Պատմ. VII.10. Աշակերտը կարող է

սահմանել տարբեր երկրների, պատմա-ազգագրական երկրամասերի և աշխարհագրական օբյեկտների տեղը:	անել երկրի պատմության մեջ քաղաքական որևէ գործչի դերի մասին:	պատմական գործընթացների մասին դատողություններ անելիս, կարող է գիտակցել տնտեսական գործոնի դերը:	դարաշրջանին պատկանելության, տարբերել կանոնները, սահմանված կարգը, օրենքն ու ավանդությունը:	դատողություններ անել մշակույթի բաղկացուցիչ տարրերի մասին:
---	---	---	---	---

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ժամանակ և տարածություն

Պատմ.VII.1. Աշակերտը կարող է կապել փաստերը և իրադարձությունները համապատասխան դարաշրջանի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատմական իրադարձություններն արտահայտում է ժամանակագրական հաջորդականությամբ, պատմական փաստերը կապում է հին և նոր թվարկության համակարգերի հետ:
- Անհատականորեն կամ դասարանում խմբային աշխատանք կատարելիս ժամանակի գծի վրա (սանդղակի) նշում է պատմական տարեթվերը կամ պատմական ժամանակաշրջանները:
- Անվանում է այն դարն ու հազարամյակը, որին պատկանում է կոնկրետ տարեթիվը:
- Կազմում է աղյուսակ, որտեղ ժամանակագրական հաջորդականությամբ դասավորում է դասագրքի թեմաների հետ կապված կարևոր տարեթվերը և ցույց է տալիս դրանց պատկանելությունը համապատասխան պատմական դարաշրջանին և այլն: Օր.՝

<i>Թեմա Դարաշրջան</i>	<i>Թեմա I (Աշխատանք և տեխնոլոգիաներ)</i>	<i>Թեմա II (կենցաղ և բնակավայրի տեսակներ)</i>	<i>Թեմա III (սոցիալական պարզ խմբերից մինչև ժամանակակից պետությունը)</i>
<i>Մինչև հողագործությունը</i>	<i>Պալեոլիթի (հին քարեդարյան)՝ օգտագործեց կրակը</i>	<i>Վերին պալեոլիթի՝ մարդն ապրում է քարանձավում</i>	<i>Տոհմական համայնքի կազմավորումը</i>
<i>Հողագործական</i>	<i>Նեոլիթի (նոր քարեդարյան)՝ առաջացավ երկրագործությունը,</i>	<i>Մ.թ.ա IV հազարամյակ՝ հիմնադրվեց առաջին քաղաքը</i>	<i>Մ.թ.ա III դ. սկիզբ՝ Քարթլիի թագավորությունը</i>

	<i>անասնապահությ յունը</i>		
<i>Արդյունաբերական</i>			
<i>Ետարդյունաբերա կան</i>			

Պատմ.VII. 2. Աշակերտը կարող է քարտեզի վրա սահմանել տարբեր երկրների, պատմա-ազգագրական երկրամասերի և աշխարհագրական օբյեկտների տեղերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համապատասխան դարաշրջանի պատմական քարտեզի վրա շրջագծում է առանձին պետությունների սահմանները և ցույց տալիս դրանց մշակութային-քաղաքական կարևորագույն կենտրոնները:
- Օգտվում է քաղաքական քարտեզից, և պարզաբանում պայմանական այն նշանները, որոնցով նշվում են տարածությունները և քաղաքական-մշակութային կենտրոնները:
- Քարտեզի օգնությամբ դատողություններ է անում աշխարհի պատմության հիմնական իրադարձությունների շուրջ:
- Ուրվագծային քարտեզի վրա նշում է տեղեկություններ տարբեր դարաշրջանների քաղաքական-մշակութային պատմությունների մասին:

Ուղղություն. Պետական կառավարումը և քաղաքականությունը

Պատմ.VII.3. Աշակերտը կարող է բնութագրել և համեմատել պատմական տարբեր դարաշրջաններում գոյություն ունեցած կառավարման ձևերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հիմնվելով պատմական տարբեր դարաշրջանների օրինակների վրա՝ բնութագրում է պետական կառավարման ձևերը:
- Համեմատում է մի դարաշրջանի պետական կառավարման տարբեր ձևերն ու դատողություններ անում դրանց դրական և բացասական կողմերի մասին:

Պատմ. VII 4. Աշակերտը կարող է դատողություններ անել երկրի պատմության մեջ քաղաքական որևէ գործչի դերի մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անհատականորեն կամ դասարանում խմբային աշխատանք կատարելիս ժամանակի սանդղակի վրա նշում է պատմության համար, իր կարծիքով, ամենանշանավոր չորս կամ հինգ քաղաքական գործիչների և դասարանի առջև գրուցում իր այդ ընտրությունը կատարելու պատճառների մասին:
- Տեղեկատվություն է որոնում (դասագրքի կամ լրացուցիչ տպագիր նյութի (էլեկտրոնային) միջոցով) քաղաքական մի որևէ գործչի մասին և գրում թե՛մա, որտեղ խոսում է վերջինիս գործունեության, ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական կողմերի մասին:

- Աղյուսակի միջոցով խմբավորում է երկու արմատապես տարբեր քաղաքական գործիչների շարժառիթներն ու պատճառները:
- Համեմատում է երկու աղբյուրներ, որոնք տարբեր կերպ են բնութագրում պատմական միևնույն անձի գործունեությունը: Այդ տարբեր մեկնաբանությունների առթիվ, արտահայտում է իր կարծիքները:
- Ուսուցչի օգնությամբ, համադասարանցիների հետ, ընդգրկվում է դերերով խաղի մեջ և դատողություններ անում դասարանական բեմադրության միջոցով հաղորդված պատմական փաստերի մասին:

Ուղղություն. Շրջակա միջավայրը և տնտեսությունը

Պատմ.VII.5. Աշակերտը կարող է բացատրել, թե ինչ ազդեցություն ունեն բնական պայմանները բնակավայրերի տեսակների, հասարակության ավանդույթների և տնտեսության զարգացման վրա:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ջննում է հնագիտական և ազգագրական (դասագրքում տրված կամ համացանցով գտած) նյութերը և պատասխանում հետևյալ հարցին՝ «ինչո՞վ էին զբաղվում այն մարդիկ, որոնց պատկանում են այս իրերը (բնակավայրը)»:
- Սահմանում է բնակավայրերի տեսակները և դատողություններ անում պատմա-աշխարհագրական կոնկրետ միջավայրում դրանց առաջացման պատճառների մասին: Դատողություններ է անում տարբեր միջավայրերում բնակչության բնակեցման մշակութային և տնտեսական յուրահատկությունների մասին:
- Դասարանում խմբային աշխատանք կատարելիս՝ լուսանկարների կամ տեսանյութի միջոցով, համեմատում է պատմա-աշխարհագրական տարբեր միջավայրերի երկու բնակավայրերը և վերհանում դրանց նմանություններն ու տարբերությունները (*շինանյութ, ճարտարապետություն*):

Պատմ.VII.6. Աշակերտը, համաշխարհային պատմական գործընթացների մասին դատողություններ անելիս, կարող է գիտակցել տնտեսական գործոնի դերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դասարանում խմբային կամ անհատական աշխատանք կատարելիս, ընտրում է երկու սոցիալական տարբեր կառուցվածք ունեցող հասարակություն: Համեմատում է նրանց բարքերն ու սովորույթները, ավանդույթները (*օր.՝ քոչվոր և հողագործական հասարակություն, հարթավայրում և լեռներում ապրող բնակչություն*):
- Աղբյուրների և գրականության օգնությամբ, որոնում է տեղեկատվություն այս կամ այն երկրում ապրողների կենցաղի ու ավանդույթների մասին, դրանք համեմատում իրար:
- Գրում է փոքրիկ թեմա, որտեղ համեմատում է երկու տարբեր դարաշրջաններում ապրած, սակայն միևնույն սոցիալական խավին պատկանող ներկայացուցիչների (*օր.՝ Անտիկ շրջանի և Միջնադարի հողագործ*):
- Անհատականորեն կամ դասարանում, խմբային աշխատանք կատարելիս, ժամանակի սանդղակի վրա նշում է երեք կամ չորս գաղափար (հայտնագործություն), որոնք ըստ նրա, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը ամենանշանակալից

փոփոխություններն են առաջացրել տնտեսության մեջ և դասարանի առջև փաստարկում է խմբի կամ իր այդ ընտրությունը:

Ուղղություն. Մարդը և հասարակությունը

Պատմ.VII.7. Աշակերտը կարող է բնութագրել և համեմատել սոցիալական տարբեր խավերի կազմը և այդ խավերի ներկայացուցիչներին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Այս կամ այն դարաշրջանի նյութական մշակույթն արտահայտող նյութի (դասագրքում տրված կամ լրացուցիչ հայթայթած) հիման վրա, առանձնացնում է իրերը, որոնք վկայում են համապատասխան դարաշրջանի սոցիալական տարբերակվածությունը: Իր կարծիքները հիմնավորում է:
- Անհատականորեն կամ դասարանում խմբային աշխատանք կատարելիս՝ աղյուսակի միջոցով խմբավորում է տարբեր քաղաքակրթությունների պատկանող հասարակությունները և այդ հասարակություններում հարկադիր աշխատանքի տարբեր ձևերը: Դատողություններ է անում ինչպես անցյալում, այնպես էլ ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող հարկադիր աշխատանքի պատճառների մասին:
- Ընտրում է տարբեր դարաշրջանների մեկական սոցիալական խավ և գրավոր նկարագրում այդ խավի ներկայացուցչի առօրյան (*օր.՝ Եվրոպայի գյուղացին միջնադարում, ստրուկը Հռոմի հանրապետությունում, քատրիան Հին Հնդկաստանում*):
- Ուսուցչի առաջադրած դարաշրջանից անվանում է հաջողակ պատմական անձանց, սահմանում նրանց սոցիալական կարգավիճակները (*օր.՝ թագավոր, վաճառական, որսորդ, բանկատեր, նախագահ, գիտնական և այլն*) և ձևակերպում նրանց հաջողության պատճառները:
- Որևէ երկրի օրինակով համեմատում է երկու տարբեր դարաշրջանների աշակերտների կյանքը:

Պատմ.VII.8. Աշակերտը կարող է, ըստ պատմական դարաշրջանին պատկանելության, տարբերել կանոնները, սահմանված կարգը, օրենքն ու ավանդությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դասարանում, խմբային աշխատանք կատարելիս, միմյանց է համեմատում տարբեր դարաշրջանների առանձին երկրների օրենսդրությունները (*օր.՝ Համմուրաբիի օրենքները և հռոմեական օրենսդրությունը, շարյաթը և քրիստոնեական դավանական իրավունքը*):
- Կարող է տարբերել տարբեր դարաշրջաններին և մշակույթներին յուրահատուկ վարվելաձևն ու վարքագիծը:
- Համեմատում է ժամանակակից Վրաստանի և իր ընտրած մի որևէ երկրի երեխաների օրինական իրավունքները:
- Իր դիտարկումներից ելնելով՝ դատողություններ է անում այն մասին, թե անպատժելիությունն ինչպիսի վտանգ է սպառնում հասարակությանը և անձին:

- Հաշվի առնելով բարձրդասարանցիների փորձը՝ համադասարանցիների հետ, մշակում է իր դասարանի սահմանադրությունը: Այն համեմատում է պատմական մի որևէ դարաշրջանի ուսումնական հաստատության կանոնների հետ:

Ուղղություն. Մշակույթ և կրոն

Պատմ.VII.9. Աշակերտը կարող է գիտակցել կրոնի դերը հասարակության կյանքում և համաշխարհային պատմական գործընթացում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դասագրքի, լրացուցիչ գրականության ու տեսանյութի հիման վրա զրուցում է տարբեր դարաշրջանների հասարակությունների մասին:
- Խմբային աշխատանք կատարելիս, մի որևէ երկրի օրինակով, դատողություններ է անում հանդուրժողականության մասին (ինչպես անցյալում, այնպես էլ այսօր):
- Դասարանում, բանավեճի ժամանակ, դատողություններ է անում այն մասին, թե ինչպես էր ազդում կրոնը ընտանեկան կենցաղի վրա, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր:
- Քարտեզի վրա ցույց է տալիս իրեն հայտնի, կրոնների ծագման վայրերը, ներկայիս տարածման ոլորտները և թվարկում դրանց հետ կապված պաշտամունքային կոթողները, խորհրդանշաններն ու ավանդույթները:
- Մի որևէ երկրի կրոնի և մշակույթի մասին ձեռք բերած տեղեկատվության հիման վրա, դատողություններ է անում այն մասին, թե ինչպես էր նրան օգնում այդ տեղեկատվությունը այդ երկրում ճանապարհորդելիս:

Պատմ.VII.10. Աշակերտը կարող է դատողություններ անել մշակույթի բաղկացուցիչ տարրերի մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է քաղաքակրթության հիմնական բնութագրիչները:
- Անվանում և համեմատում է տարբեր մշակույթների պաշտամունքային կառույցները:
- Դասագրքում եղած ու լրացուցիչ ձեռք բերված նյութի միջոցով համեմատում է ճարտարապետության, նկարչության և գրականության ամենաեական նմուշները:
- Կարող է դատողություններ անել պատմական տարբեր դարաշրջաններում գիտության ու տեխնիկայի զարգացման մասին:

Ծրագրի բովանդակությունը

VII դասարանի համար նախատեսված պարտադիր բովանդակության հարցերի ցանկը (Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանին հատկացված ամբողջ բովանդակության 80%-ը)

Ի՞նչ է պատմությունը:

1. Ինչպե՞ս իմանանք մեր անցյալի մասին (ժամանակը և տարածությունը):
2. Մարդու ծագումը:

3. Նախնադարյան աշխարհ. տնտեսության ձևերը՝ որսորդություն և հավաքչություն: Հողագործություն (հողագործական հնագույն մշակույթը Վրաստանում), անասնապահություն, արհեստավորություն: Նախնադարյան կրոնները, ռազմական և աշխատանքային գործիքներ, նախնադարյան մարդու բնակավայրեր:

Հին Արևելքի քաղաքակրթությունները՝ պետականության սկիզբը

4. Նեղոսի ավազանը՝ Հին Եգիպտոս
5. Միջագետք. ա) Շումեր (Բաբելոն) բ) Ասորեստան
6. Խուանիլեի ավազանը՝ Հին Չինաստան
7. Ինդոսի ավազանը՝ Հին Հնդկաստան

Առաջավոր Ասիայի տարածաշրջանը.

8. Խեթական թագավորություն
9. Փյունիկիա (փյունիկական գաղութատերություն) (Հուդա և Իսրայել)
10. Պարսկաստան

Հունական քաղաքակրթությունը.

11. Կրետ-Միկեն (արգոնավորդների արշավանքը, Տրոյական պատերազմը)
12. Մպարտա – Անպարիսպ պոլիս - (Աթենք ժողովրդավարության հայրենիքը):
13. Ալեքսանդր Մակեդոնացի

Հռոմեական քաղաքակրթություն.

14. Էտրուսկներ, Հռոմը թագավորների և հանրապետության ժամանակաշրջանում (Հռոմեական պետական հասարակարգ):
15. Հռոմի կայսրությունը. Օկտավիանեսի բարեփոխումները և հռոմեական մշակույթի «Ոսկե դարը», Տրայանես, Մարկուս Ավրելիոս: Դիոկղետիանեսի բարեփոխումները:

Հնագույն շրջանից մինչև Միջնադար.

16. Հռոմի կայսրության պահպանման համար անցկացված Կոնստանտին Մեծի բարեփոխումները (կրոնի ինքնուրույնության համար):
17. Ժողովուրդների մեծ վերաբնակեցումը (Հռոմի կայսրության անկումը և բարբարոսական թագավորությունները Եվրոպայի տարածքում):
18. Մասանյան Պարսկաստանը:
19. Բյուզանդիայի «Ոսկե դարը»՝ Հռոմը վերականգնելու փորձը, շինարարություն, Պրոկոֆի Կեսարացու երկու պատմությունները:

Ֆրանկները.

20. Մերովինգների ֆրանկյան թագավորությունը, «Սալիկյան իրավունք», Կարլոս Մարտելը և նրա բարեփոխումները:
21. Կարոլինգների ֆրանկների թագավորությունը, «Կարոլինգյան Վերածնունդը»:

Իսլամական աշխարհը.

22. Մուհամմեդը և իսլամը, Արաբական պետության կազմավորումը: Երուսաղեմը որպես երեք կրոնների Սուրբ քաղաք:

Սլավոնները և նորմանները

23. Նորմանները և Սկանդինավյան էպոսը, նորմանները Արևմտյան Եվրոպայում և Ատլանտյան օվկիանոսում:
24. Սլավոնները, վարյագները և Կիևյան Ռուսիան (Վարյագները և Վրաստանը):

Եվրոպան Վերդենի պայմանագրից հետո.

25. Աստվածային Հռոմի կայսրությունը:
26. «Իլ-դե-ֆրանս», կապետինգները Ֆրանսիայում:
27. Արաբական Իսպանիան, Ռեկոնկիստա:
28. Ուիլյամ Զավթիչն Անգլիայում, «Ահեղ դատաստան» գիրքը:

Բյուզանդիա՝ իսաչակիրները, Բյուզանդիան և Արևելյան երկրները.

29. Բյուզանդիան և սելջուկները:
30. Խաչակրաց արշավանքները (Եվրոպական պիլիգրիմները, իսաչակրաց արշավանքները ժամանակակիցների աչքերով):
31. Մոնղոլները. մոնղոլական արշավանքները, Մոնղոլական կայսրությունը Եվրոպայի ճանապարհորդների աչքերով:
32. Օսմանները Մերձավոր Արևելքում:
33. Բյուզանդիայի վերականգնումից մինչև Կոնստանդնուպոլսի անկումը (պալեոլոգոսների դարաշրջանի մշակույթը):

34. Իտալիայի քաղաք-պետությունները XII-XV դդ. (Վրաստանի հետ կապը):

35. «Հարյուրամյա պատերազմը»:

36.«Վարդերի պատերազմը»:

Աբսոլյուտիզմի դարաշրջանը

37. «Կաթոլիկ թագավորները»՝ Ֆերդինանդը և Իզաբելան:
38. Հռոմի աստվածային կայսրությունը:
39. Օտոմանների կայսրությունը:
40. Թյուրքները և Ստյուարտները:
41. Ռիշելյե, Լուի XIV
42. Պետրոս I-ի Ռուսաստանը: Ռուսաստանը և Կովկասը:

Ամերիկայի քաղաքակրթությունները մինչև Կոլումբոսը:

43. Մայան, ացտեկները և ինկերը:

Պետական աշխատակազմը և ներկայացուցչական մարմինները.

44. Արքունիք, պալատ, վարվելաձև:
45. Դասային-ներկայացուցչական մարմինները:

Մարդը և հասարակությունը.

46. Կաստայական կարգը Հնդկաստանում:
47. Աթենքցի քաղաքացիները և ստրուկները:
48. Գաղութատիրությունը Հռոմում:

49. Ֆեոդալական հասարակություն (ֆեոդալական հիերարխիա, ասպետական շքանշաններ, մրցաշարեր, տրուբադուրներ, քաղաքային կենցաղ), ֆեոդալական հասարակությունը Վրաստանում:

50. Վարվելաձև և վարքի կանոններ:

51. Կառավարումներ և ինքնակառավարումներ:

52. Երեխաների իրավունքները և սոցիալական կարգավիճակները:

53. Երեխաների իրավունքների պաշտպանությունը Վրաստանում:

54. Ուսումնական հաստատություններում արմատավորված կանոնները:

Մշակույթ և կրոն.

55. Գիլգամեշի էպոսը (առասպել ջրհեղեղի մասին):

56. Հոմերոս և Տրոյա (Շլիման):

57. Աշխարհի յոթ հրաշալիքները:

58. Միջնադարյան էպոսը՝ ասքեր ու ավանդույթներ (օր.՝ Ասք Արթուր թագավորի և կլոր սեղանի մասին, Ասք Բոեվուֆի մասին, Նիբելունգների էպոսը):

59. Բազմաստվածությունից մինչև միաստվածություն. Կրոններ և դավանանքներ:

60. Տաճարային քաղաքները և պաշտամունքային շինությունները:

61. Վերածնունդ (գյուտարարություն, նկարչություն, ճարտարապետություն, գրականություն):

62. Լուսավորչություն:

Անհրաժեշտ գննական դիտանյութեր. թեմատիկ պատմական քարտեզներ

**VII դասարան
Աշխարհագրություն**

Չափորոշիչ

Աշակերտի տարեվերջին նվաճվելիք արդյունքները ըստ ուղղությունների

Ժամանակ և տարածություն	Շրջակա միջավայր և տնտեսություն	Շրջակա միջավայր և սոցիալական հասարակարգ
<p>Աշխ.VII.1. Աշակերտը կարող է գիտակցել երկրաբանական թվարկության համակարգը:</p> <p>Աշխ.VII.2. Աշակերտը կարող է երկրաբանական տեղեկատվություն որոնելու համար կարդալ տարբեր գնական դիտանյութեր:</p> <p>Աշխ.VII.3. Աշակերտը կարող է կողմնորոշվել տարածության մեջ:</p>	<p>Աշխ.VII.4. Աշակերտը կարող է արդյունավետ և բազմակողմանիորեն օգտագործել բնական պաշարները:</p> <p>Աշխ.VII.5. Աշակերտը կարող է դատողություններ անել երկրագնդի ներքին կառուցվածքի մասին:</p> <p>Աշխ.VII.6. Աշակերտը կարող է կապել ռելիեֆի ձևերը ռելիեֆի կազմավորման գործընթացների հետ:</p> <p>Աշխ.VII.7. Աշակերտը կարող է դատողություններ անել մթնոլորտում տեղի ունեցող գործընթացների մասին:</p> <p>Աշխ.VII.8. Աշակերտը կարող է դատողություններ անել ջրոլորտի մասին:</p> <p>Աշխ.VII.9. Աշակերտը կարող է նկարագրել գոտիների (զոնաների) առաջացման պատճառները:</p> <p>Աշխ.VII.10. Աշակերտը կարող է բացատրել շրջակա միջավայրի պահպանման միջոցառումների անհրաժեշտությունը:</p>	<p>Աշխ.VII.11. Աշակերտը կարող է բացատրել աշխարհագրության, որպես գիտության, դերը:</p> <p>Աշխ.VII.12. Աշակերտը կարող է ուսումնասիրել բնակչության ժողովրդագրական բնութագրիչները և բնութագրել բնակեցման յուրահատկությունները:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն . Ժամանակ և տարածություն

Աշխ.VII.1. Աշակերտը կարող է գիտակցել երկրաբանական թվարկության համակարգը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երկրի զարգացման ընթացքում տեղի ունեցած նշանակալից երևույթների հաջորդականության մասին ենթադրություն է անում (օր.՝ ջրոլորտի, մթնոլորտի, և կյանքի առաջացում) և դրանք համեմատում աշխարհագրական սանդղակի վրա:
- Աշխարհագրական սանդղակի միջոցով խմբավորում է երկրաբանական դարաշրջանները և նրանց բնորոշ օրգանական աշխարհը:

Աշխ.VII.2. Աշակերտը կարող է երկրաբանական տեղեկատվություն որոնելու համար կարդալ տարբեր զննական դիտանյութեր:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառելով լուսանկարներ, աղյուսակներ, գծագրեր և քարտեզներ՝ մեկնաբանում է աշխարհագրական տեղեկատվությունը (*օրինակ, վերլուծում է սեռային, տարիքային բուրգը*):
- Օգտվելով լեգենդից՝ տեղեկատվություն է մտցնում ուրվագծային քարտեզում և օժանդակ այլ դիտանյութերում:
- Օգտագործում է աշխարհի գոտիների քարտեզը և իր երկրի ժամը համեմատում այլ երկրների ժամի հետ:
- Մտովի ճամփորդում է երկրագնդի շուրջ արևելքից դեպի արևմուտք, կամ արևմուտքից դեպի արևելք: Դատողություններ է անում տարեթվերի փոփոխության սանդղակի նշանակության ու դասավորության սկզբունքի մասին, ինչպես նաև, ճանապարհորդության ժամանակ ստեղծված անհարմարությունների ու դրանց հաղթահարման միջոցների մասին:
- Դիդակտիկ նյութում աշխարհագրական մի տեսակով տրված տեղեկատվությունը արտահայտում է մի այլ տեսակով (*օր.՝ աշխարհի քարտեզի վրա գտնում է նշանավոր գետերը և խմբավորում դրանք աղյուսակում՝ ըստ աշխարհամասերի: Ըստ բնագրում տրված տեղեկատվության, կազմում է օվկիանոսների մակերեսների շրջանաձև գծապատկեր*):

Աշխ.VII.3. Աշակերտը կարող է կողմնորոշվել տարածության մեջ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Քարտեզի վրա սահմանում է կոորդինատային ցանցի հիմնական տարրերը:
- Օգտվելով քարտեզից՝ սահմանում է նշանավոր աշխարհագրական օբյեկտների կոորդինատները (օր.՝ մայրաքաղաքները, կղզիները, գագաթները և այլն):
- *Անվանում է միևնույն լայնության կամ երկայնության վրա գտնվող քաղաքները:*
- Օգտվելով քարտեզագրքի որոնման համակարգից՝ սահմանում է աշխարհագրական օբյեկտի տեղը:
- Օգտվում է տեղագրական քարտեզից և գտնում է երթուղիները: Հորիզոնագծերի միջոցով սահմանում է բացարձակ ու հարաբերական բարձրությունները, լեռնալանջերի թեքությունները:
- Մասշտաբը կիրառելով՝ սահմանում է աշխարհագրական օբյեկտների միջև եղած հեռավորությունը:

- Կիրառելով պայմանական նշանները՝ կազմում է տեղանքի պարզ պլան:
- Օգտվելով զբոսաշրջային քարտեզներից՝ օտար քաղաքում, կազմում է երթուղիները:
- Համադասարանցիների հետ պլանավորում է արշավի երթուղիները, սահմանում է արշավի տևողությունը տարբեր միջոցներով տեղափոխվելու ժամանակ և կազմում ճանապարհի հետազոտությունը:
- Կողմնացույցի, տեղանքային նշանների, երկնային մարմինների դիրքով և ազիմուտի միջոցով որոնում է ուղղությունները:

Ուղղություն . Շրջակա միջավայրը և տնտեսությունը

Աշխ.VII.4. Աշակերտը կարող է դատողություններ անել բնական պաշարների արդյունավետ և բազմակողմանի օգտագործման մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խմբավորում է (*կիրառելով գրություններ կամ աղյուսակ*) բնական պաշարները և տնտեսության համապատասխան բնագավառները:
- Կենցաղային օգտագործման առարկաները կապում է բնական պաշարների տեսակների հետ:
- Ուրվապատկերի միջոցով արտահայտում է բնական պաշարների ձևափոխությունը՝ արդյունահանումից մինչև սպառողը (*օրինակ, նավթ, վառելիք, էլեկտրաէներգիա*):
- Դասարանում, խմբային աշխատանք կատարելիս՝ ըստ տարբեր նշանների դասակարգում է թվարկած բնական պաշարները (*օրինակ, ըստ նրանց յուրացման ժամանակի (հնագույն, հին, նոր, հեռանկարային)*):
- Տարբերում է բնական պաշարները, ըստ նրանց բնորոշ հատկանիշների և խմբավորում դրանք աղյուսակում (*սպառվող և անսպառ (վերականգնվող, չվերականգնվող)*):
- Կազմում է այն բնական պաշարների ցուցակը, որոնք օգտագործում է նրա ընտանիքը, քաղաքը (գյուղը), երկիրը: Ուրվագծային քարտեզի վրա, կիրառելով համապատասխան նշանները, նշում է բնական պաշարների արդյունահանման տեղերը:
- Դասարանում, խմբային աշխատանք կատարելիս, դատողություններ է անում թվարկված պաշարները օգտագործելու հետևանքով առաջացած աղտոտվածության մասին (*ջատ է աղտոտում, աղտոտում է, քիչ է աղտոտում*):
- Համեմատում է աստիճանաբար քայքայված և ձևափոխված շրջակա միջավայրը:
- Խմբային աշխատանք կատարելիս՝ դատողություններ է անում տնտեսության տարբեր բնագավառների կողմից որոշ բնական պաշարների ինտենսիվ և պարտադիր օգտագործման մասին և սահմանում դրանց տնտեսման ուղիները:

Աշխ.VII.5. Աշակերտը կարող է դատողություններ անել երկրագնդի ներքին կառուցվածքի մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում երկրակեղևի շերտերի շարժման մասին:
- Բացատրում է երկրաշարժերի ու հրաբուխների տարածման օրինաչափությունը:
- Ուրվագծային քարտեզի վրա շրջագծում է երկրաշարժերի ու հրաբուխների տարածման ոլորտները:

Աշխ.VII.6. Աշակերտը կարող է կապել ռելիեֆի ձևերը ռելիեֆի կազմավորման գործընթացների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բնութագրում է ռելիեֆի հիմնական ձևերը:
- Տարբերում է արտածին (էնդոգեն) և ներածին (էկզոգեն) (*կարստային, գլացիալ և այլն*) գործընթացները:
- Դատողություններ է անում լեռնային մակերևույթի հետ կապված բնական աղետային երևույթների մասին:
- Ենթադրություններ է անում բնական-աղետային երևույթներից պաշտպանվելու հնարավոր միջոցառումների մասին (*օրինակ, սվանական ճարտարապետության համապատասխանությունը շրջակա միջավայրին*):
- Ուրվագծային քարտեզի վրա նշում է աշխարհի և Վրաստանի աշխարհագրական միավորները, մայրցամաքների բարձրագույն գագաթները:

Աշխ.VII.7. Աշակերտը կարող է դատողություններ անել մթնոլորտում տեղի ունեցող գործընթացների մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Շրջանաձև գծապատկերի միջոցով արտահայտում է մթնոլորտի կազմությունը:
- Բնութագրում է մթնոլորտային շերտերը և բերում օրինակներ մթնոլորտի դերի մասին:
- Բնութագրում է բնության տարրերը (*օդի ջերմաստիճանը և խոնավությունը, տեղումները, ճնշումը, քամին*):
- Ջերմաստիճանի միջոցով չափում է օդի ջերմաստիճանը, կազմում է օդի ջերմաստիճանի փոփոխության գծագիրը¹²:
- Պարզաբանում է «կլիմա» հասկացությունը, տարբերում է եղանակն ու կլիման, անվանում է կլիմայի վրա ազդող հիմնական գործոնները:
- Բնութագրում է կլիմայի հիմնական տեսակները և քարտեզի միջոցով բաժանում կլիմայական գոտիները:
- Սահմանում է Վրաստանի տեղը կլիմայական գոտում:
- Անվանում է մթնոլորտի հիմնական աղտոտիչները և դատողություններ անում մթնոլորտի պահպանման մասին:

Աշխ.VII.8. Աշակերտը կարող է դատողություններ անել ջրոլորտի մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկարագրում է ջրի փոքր և մեծ շրջապտույտները, դրանք համեմատում իրար հետ և կազմում համապատասխան գծապատկերները:
- Ընդհանրացնում է բոլորաշրջանայնության (ցիկլայնություն) սկզբունքները (*օրինակ, մուսոններ, սառցագոյացում և հալում, օվկիանոսների տեղատվության-մակընթացության գործընթացները*):
- Ուրվագծային քարտեզի վրա շրջագծում է օվկիանոսները և նրա մասերը, ցամաքային ջրերը:

¹² Ջերմաստիճան ուսումնասիրելը պետք է սկսել մեկ ամիս առաջ:

- Դատողություններ է անում օվկիանոսի ջրի հատկանիշների (*աղիություն, ջրմաստիճան*) և օվկիանոսային հոսքերի մասին:
- Թվարկում է ցամաքային ջրերը:
- Անվանում է ստորերկրյա ջրերի տեսակները (*բնահողի, հանքային ու ջերմային ջրեր, հեյզերներ*) և ենթադրություն է անում դրանց առաջացման մասին:
- Անվանում է գետի մասերը, կապում գետի սնուցումը և ռեժիմը:
- Բացատրում է տնտեսության համար լճերի և ջրամբարների նշանակությունը:
- Դատողություններ է անում մարդու կենցաղում և աշխատանքում օվկիանոսների, ծովերի և ցամաքային ջրերի նշանակության մասին:
- Անվանում է ջրոլորտի հիմնական աղտոտիչները և դատողություններ անում ջրի արդյունավետ օգտագործման մասին:

Աշխ.VII.9. Աշակերտը կարող է նկարագրել գոտիների (զոնաների) առաջացման պատճառները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Քարտեզի միջոցով համակողմանիորեն բնութագրում է բնական գոտիները:
- Կովկասի օրինակով նկարագրում է զոնայական ուղղաձիգ ստորաբաժանումները:
- Լուսանկարների կամ քարտեզի միջոցով նկարագրում է տարբեր տարածություններին բնորոշ գոտիները (*օրինակ, արևադարձային անտառներ, անապատներ, տափաստաններ և այլն*) և կապում դրանք այդ երկրի (տարածաշրջանի) տնտեսական գործունեության հետ:
- Դատողություններ է անում բնական գոտիների յուրացման մասին:

Աշխ.VII.10. Աշակերտը կարող է բացատրել շրջակա միջավայրի պահպանման միջոցառումների անհրաժեշտությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեղային և գլոբալ մակարդակով վերլուծում է աշխարհա-բնապահպանական հիմնախնդիրներ առաջացնող բնական և մարդաբանական գործոնները:
- Նկարագրում է աշխարհա-բնապահպանական հիմնախնդիրների հետևանքները և անում ենթադրություն, թե ինչ տեղի կունենա, եթե դրանք չլուծվեն:
- Թվարկում և հնարավորի սահմանում, իրականացնում է, իր կարծիքով, երկրի կամ իր տարածաշրջանի համար պարտադիր շրջակա միջավայրի պահպանման միջոցառումները:

Ուղղություն . Շրջակա միջավայր և սոցիալական համակարգերը

Աշխ.VII.11. Աշակերտը կարող է բացատրել աշխարհագրության, որպես գիտության, դերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սահմանում է աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտն ու խնդիրները:
- Խմբավորում է աշխարհագրական գիտաճյուղերը և նրանց ուսումնասիրության օբյեկտները:
- Բերում է աշխարհագրական ուսումնասիրության արդյունքների կիրառման օրինակներ:

- Համապատասխանաբար է կիրառում աշխարհագրական տերմինաբանությունը:

Աշխ.VII.12. Աշակերտը կարող է ուսումնասիրել բնակչության ժողովրդագրական բնութագրիչները և բնութագրել բնակեցման յուրահատկությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ըստ վիճակագրական տվյալների, դատողություններ է անում աշխարհի բնակչության շարժունակության մասին և բացատրում փոփոխությունների պատճառները:
- Պարզաբանում է ժողովրդագրական հիմնական ցուցանիշները (*ծնելիությունը, մահացությունը, բնական աճը*), սեռային-տարիքային կազմը և աշխարհում տարածված մարդահամարների տեսակները: Կարողում է համապատասխան գծագրերը և ուրվապատկերները:
- Դատողություններ է անում տարբեր միջավայրերում բնակչության ապրելակերպի յուրահատկությունների մասին (*գետի կիրճերում, ծովի ափին, անապատներում, լեռներում, արդյունաբերական և հողագործական տարածաշրջաններում*):
- Իր բնակավայրը համեմատում է տարբեր բնակավայրերի լուսանկարների ու պլանների հետ:
- Կիրառելով համապատասխան թեմատիկ քարտեզներ՝ վերլուծում է բնակչության խտությունն աշխարհի տարբեր տարածաշրջաններում: Առանձնացնում է ամենախիտ և ամենանոսր բնակեցված տարածաշրջանները և ադյուսակում խմբավորում դրանք:

Ծրագրի բովանդակությունը

VII դասարանի համար նախատեսված բովանդակության հարցերի ցանկը

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանի համար նախատեսված հարցերի բովանդակության 60%-ը):

1. Աշխարհագրության առարկան և խնդիրները:
2. *Աշխարհագրական գիտելիքների զարգացումը (Անտիկ շրջան, աշխարհագրական մեծ հայտնագործություններ, աշխարհագրությունն այսօր)*¹³
3. Երկրագնդի պատմությունը (երկրագնդի առաջացումը, երկրաժամանակագրություն, էվոլյուցիա):
4. Կողմնորոշում տեղանքում:
5. Քարտեզ (աստիճանացանց, կոորդինատներ, մասշտաբ, տեղագրական քարտեզ, զբոսաշրջային քարտեզ, քարտեզագիրք):
6. Երկրագնդի ներքին կառուցվածքը (երկրակեղևի շերտերը, աշխարհամասերի դրեյֆը, հրաբուխներ, երկրաշարժեր):
7. Ռելիեֆ (հիմնական ձևերը, ռելիեֆի ստեղծման գործընթացները, մարդաբանական ռելիեֆ, բնական-աղետային գործընթացներ):
8. Աշխարհագրական թաղանթ:
9. Ջուրը երկրագնդի վրա (օվկիանոսները և նրանց մասերը, օվկիանոսի ջրի հատկությունները, ցամաքի ջրերը):
10. Մթնոլորտ (եղանակի տարրերը, կլիմա):

¹³ Շեղ տառատեսակով տրված բովանդակությունը պարտադիր չէ:

11. Երկրագնդի տարեկան շարժումը:
12. Կլիմայական գոտիներ:
13. Բնական պաշարներ:
14. Բնական պաշարների դասակարգումը:
15. Բնության արդյունավետ օգտագործում:
16. Ֆիզիկա-աշխարհագրական գոտիներ (բնական զոնաներ, բարձրադիր գոտիներ, մարդաբանական լանդշաֆտներ):
17. Շրջակա միջավայրի պահպանություն:
18. Աշխարհի բնակչությունը (քանակը, ծնելիությունը, մահացությունը, բնական աճը, սեռային-տարիքային կազմը, խտությունը):
19. Բնակավայրերի տեսակները

VIII դասարան Պատմություն

Չափորոշիչ

Տարվելերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Ժամանակ և տարածություն	Շրջակա միջավայրը և տնտեսությունը	Պետական կառավարումը և քաղաքականությունը	Մարդը և հասարակությունը	Մշակույթը և կրոնը
<p>Պատմ. VIII.1. Աշակերտը կարող է կապել փաստերն ու իրադարձությունները համապատասխան պատմական դարաշրջանի հետ:</p>	<p>Պատմ. VIII.2. Աշակերտը կարող է բնութագրել հակամարտության հետևանքով առաջացած գաղթի գործընթացը:</p> <p>Պատմ. VIII.3. Աշակերտը կարող է առանձնացնել և բնութագրել նշանակալից ճանապարհորդությունները:</p> <p>Պատմ. VIII.4. Աշակերտը կարող է դատողություններ անել այն</p>	<p>Պատմ. VIII.6. Աշակերտը կարող է ուսումնասիրել հակամարտությունների պատճառները, զարգացումը և հետևանքները:</p> <p>Պատմ. VIII.7. Աշակերտը կարող է բնութագրել Կովկասի տարածաշրջանը:</p> <p>Պատմ. VIII.8. Աշակերտը կարող է բացատրել պետության մեջ կառավարման ձևի ու քաղաքական վարչակարգի փոխադարձ կապը:</p>	<p>Պատմ. VIII.11. Աշակերտը կարող է սահմանել մարդու իրավունքների հիմունքները և դրանց զարգացման պատմական պայմանները:</p> <p>Պատմ. VIII.12. Աշակերտը կարող է բնութագրել հասարակության մեջ խաղաղ համագործակցության պարտադիր պայմանները:</p> <p>Պատմ. VIII.13. Աշակերտը կարող է դատողություններ անել քաղաքական և տնտեսական</p>	<p>Պատմ. VIII.15. Աշակերտը կարող է դասակարգել աշխարհում գոյություն ունեցող կրոնական համակարգերը և գիտակցել նրանց միջև եղած նմանություններն ու տարբերությունները:</p> <p>Պատմ. VIII.16. Աշակերտը կարող է նկարագրել համաշխարհային մշակույթի</p>

	<p>մասին, թե հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը ինչպես է զարգացել հաղորդակցությունը:</p> <p>Պատմ. VIII. 5. Աշակերտը կարող է դատողություններ անել այն մասին, թե մարդու և հասարակության բարեկեցության համար, ինչ նշանակություն ունի առևտուրը:</p>	<p>Պատմ. VIII.9. Աշակերտը կարող է նկարագրել ժողովրդավարական պետության հիմունքները:</p> <p>Պատմ. VIII.10. Աշակերտը կարող է բացատրել պետության համար օրենքի գերակայության նշանակությունը:</p>	<p>գործընթացներով պայմանավորված սոցիալական փոփոխությունների մասին:</p> <p>Պատմ. VIII.14. Աշակերտը կարող է վերլուծել մարդկանց փոխհարաբերությունները հասարակության մեջ:</p>	<p>գլոխգործոցները:</p> <p>Պատմ. VIII.17. Աշակերտը կարող է ուսումնասիրել կրթական համակարգի հիմունքները:</p> <p>Պատմ. VIII.18. Աշակերտը կարող է հետազոտել հասարակության մշակույթի հիմունքները:</p>
--	---	---	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն . Ժամանակ և տարածություն

Պատմ. VIII.1. Աշակերտը կարող է կապել փաստերն ու իրադարձությունները համապատասխան դարաշրջանի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կազմում է աղյուսակ, որտեղ ժամանակագրական հետևողականությամբ, դասավորում է դասագրքում եղած թեմաների հետ կապված նշանավոր փաստերը և դրանք կապում համապատասխան դարաշրջանների հետ, *օրինակ*.

<i>Թեմա Դարաշրջան</i>	<i>Թեմա I (ընդհարումներ)</i>	<i>Թեմա II (ճանապարհորդություն)</i>
<i>Անտիկ շրջան</i>	<i>Հույն-պարսկական պատերազմները</i>	<i>Հին հույն ճանապարհորդները</i>
<i>Միջին դարեր</i>	<i>Խաչակրաց պատերազմերը</i>	<i>Մարկո Պոլո</i>
<i>Նոր</i>	<i>Ֆրանսիայի հեղափոխությունը և Բոնապարտի պատերազմերը</i>	<i>Ջեյմս Կուկ</i>

Նորագույն	Մառը պատերազմը	Գազարին
-----------	----------------	---------

- Զանազանում է պատմական տարբեր դարաշրջանների աշխատանքային և ռազմական գործիքները:

Ուղղություն . Շրջակա միջավայրը և տնտեսությունը

Պատմ.VIII.2. Աշակերտը կարող է բնութագրել հակամարտության հետևանքով առաջացած գաղթի գործընթացը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գտնում է տեղեկատվություն (պատմական քարտեզների, դասագրքերի և լրացուցիչ գրականության միջոցով) պատերազմի հետևանքով սկսված գաղթերի մասին և դասարանում, խմբային աշխատանք կատարելիս, ուրվագծային քարտեզի վրա տեղադրում է այդ գաղթերի երթուղիները:
- Անհատականորեն կամ խմբային աշխատանք կատարելիս, աղյուսակի միջոցով, տարբերում է գաղթի տեսակները: Խմբավորում է տարբեր տեսակի գաղթի պատճառներն ու հետևանքները:
- Գրում է շարադրություն, որտեղ նկարագրում է օտար երկրում նոր բնակիչների գաղթի պատճառները, նոր միջավայրում գաղթականների առօրյան:
- Գրում է շարադրություն, որտեղ նկարագրում է Վրաստանի որևէ գյուղից քաղաք տեղափոխված մի ընտանիքի կյանքը (օրինակ, *Աբխազիայից կամ Մամաչաբլդից Թրիխսի տեղահանված բռնագաղթածների կյանքը*):

Պատմ.VIII.3. Աշակերտը կարող է առանձնացնել և բնութագրել նշանակալից ճանապարհորդությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է որևէ ճանապարհորդի և գրում է շարադրություն, որտեղ բացատրում է ճանապարհորդության պատճառները և գրուցում այդ ճանապարհորդությունների միջոցով ձեռք բերած գիտելիքների մասին:
- Օգտվելով դասագրքից և լրացուցիչ գրականությունից՝ որոշում է այն ճանապարհորդների անունները և հայրենի երկրները, որոնք հայտնաբերել են նոր երկրներ ու աշխարհամասեր: Ձեռք բերած տեղեկատվությունը տեղավորում է ժամանակի սանդղակի վրա:
- Համադասարանցիների հետ մասնակցում է կեղծակերպած խաղին, որը նկարագրում է անցած դարաշրջանի մի որևէ խոշոր ճանապարհորդությանը մասնակցած ծովային կյանքը (նավագնացություն, սնունդ, նավաստիների սնտոխապաշտությունը, նրանց ամենօրյա աշխատանքը, անկարգապահության և հանցագործության համար պատիժը, հիվանդություններ):

Պատմ.VIII.4. Աշակերտը կարող է դատողություններ անել այն մասին, թե հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, ինչպես է զարգացել հաղորդակցությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դասարանում խմբային աշխատանք կատարելիս՝ թվարկում է տարբեր տեսակի գրերը, գրուցում դրանց առաջացման ու գրության մեթոդներում տեղի ունեցած փոփոխությունների մասին:
- Աղյուսակում խմբավորում է մայրենի լեզվում օտար լեզուներից փոխառված բառերը: *Օր.՝*

<i>Արաբերեն</i>	<i>Պարսկերեն</i>	<i>Թուրքերեն</i>	<i>Ռուսերեն</i>	<i>Հունարեն</i>	<i>Լատիներեն</i>	<i>Անգլերեն</i>
<i>ժամ</i>	<i>փանջարա</i>	<i>շուշա</i>	<i>ռոբոտ</i>	<i>խտորիսա</i>	<i>ազենտ</i>	<i>խստեմբլիշմենտ-հրապարակում</i>

- Դասարանում խմբային աշխատանք կատարելիս՝ աղյուսակի կամ գրության միջոցով, խմբավորում է հաղորդակցության տարբեր միջոցների հայտնագործման արդյունքները (*օր.՝* տպագրության, համակարգչի և այլն):
- Անհատականորեն կամ դասարանում խմբային աշխատանք կատարելիս ժամանակի սանդղակի վրա, նշում է փոխադրամիջոցի տարբեր տեսակները և դատողություններ անում դրանց զարգացման մասին:
- Ընտրում է մի որևէ նշանակալից ցամաքային-առևտրական ճանապարհ և գրավոր նկարագրում հաղորդակցական այդ ճանապարհի, ինչպես բարդությունները, այնպես էլ սոցիալ-տնտեսական նշանակությունը:
- Աշակերտը ուրվագծային քարտեզի վրա տեղադրում է այն երթուղիները, որոնցով Վրաստանը ցամաքային ճանապարհներով և Սև ծովով կապվում է հարևան պետությունների հետ:
- Ժամանակի սանդղակի վրա նշում է այն մարդկանց, որոնք նշանակալից ներդրում ունեն փոխադրամիջոցների զարգացման գործում:

Պատմ. VIII. 5. Աշակերտը կարող է դատողություններ անել մարդու և հասարակության բարեկեցության գործում առևտրի նշանակության մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վրաստանի կամ այլ երկրի օրինակով դատողություններ է անում այն մասին, թե ըստ առևտրի զարգացման տարբեր մակարդակների, ինչպես է փոխվում քաղաքի կամ երկրի բարեկեցությունը:
- Հավասարության և ազատության տեսանկյունից գնահատում է մարդու տնտեսական իրավունքների նշանակությունը:
- Որոնվող տեղեկատվության հիման վրա, նկարագրում է այն դեպքերը, երբ մարդիկ իրենց անհրաժեշտ ապրանքը ձեռք բերելու միայն մեկ կամ մի քանի աղբյուր ունեն; Համեմատում է այդ երկու դեպքերը և դատողություններ անում այն մասին, թե ինչու է նախընտրում նրանցից որևէ մեկը:

- Անվանում է իրեն հայտնի մի քանի ընկերություն (ֆիրմա), որոնք արտադրում են միևնույն տեսակի ապրանք, ընտրում է, իր կարծիքով, լավագույն արտադրողին հայտնաբերելու չափանիշները և հիմնավորում իր կարծիքները:
- Իր բնակավայրի օրինակով, անվանում է այն ապրանքն ու ծառայության տեսակը, որի նկատմամբ պահանջարկ կա, բայց չի բավարարվում (օրինակ, *պաշարների պակասությունը, թանկությունը, ենթակառուցվածքի անհամապատասխանությունը և այլն*), համադասարանցիների հետ դատողություններ է անում այն մասին, թե ինչպես շտկել այդ դրությունը:

Ուղղություն . Պետական կառավարումը և քաղաքականությունը

Պատմ.VIII.6. Աշակերտը կարող է ուսումնասիրել հակամարտությունների պատճառները, զարգացումը և հետևանքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անհատականորեն կամ դասարանում խմբային աշխատանք կատարելիս, աղյուսակի միջոցով, ըստ դրանց սկսվելու պատճառների ու շարժառիթների, խմբավորում է պատերազմները (հակամարտությունները): Օրինակ,

<i>Պատերազմ</i>	<i>Պատճառը</i>	<i>Շարժառիթը</i>
<i>VII դարի սկզբում Բյուզանդիայի և Պարսկաստանի պատերազմը</i>	<i>Պարսկաստանի տարածքային հավակնությունները Բյուզանդիայի նկատմամբ</i>	<i>Բյուզանդիայի Մավրիկիոս կայսեր սպանությունը 602 թվականին</i>
<i>Դիդգորիի ճակատամարտը</i>	<i>Դավիթ IV Շինարարի գլխավորությամբ թուրք-սելջուկների արտաքսումը Վրաստանից</i>	<i>Թբիլիսցի առևտրականների բողոքը Սուլթանին՝ Դավիթ Շինարարի կամայականության դեմ</i>
<i>I համաշխարհային պատերազմը</i>	<i>«Անտանտայի» և «Եռյակ Միության» դիմակայությունը</i>	<i>Սպանություն Սարանոյում</i>

- Համեմատում է տարբեր դարաշրջաններում տեղի ունեցած պատերազմների ժամանակ կիրառած զենքը (օր.՝ ըստ արագաշարժության, արդյունավետության, արտադրության):
- Դասարանում խմբային աշխատանք կատարելիս՝ կազմում է իրեն հայտնի պատերազմների ցանկը և, ըստ բնույթի ու մասշտաբի, դրանք խմբավորում աղյուսակում: *Օրինակ,*

<i>Ներքին պատերազմ</i>	<i>Տեղային</i>	<i>Տարածաշրջանային</i>	<i>Համաշխարհային</i>
------------------------	----------------	------------------------	----------------------

<i>Բազայնթիի ճակատամարտը</i>	<i>Պատերազմը Բագրատ IV-ի և Լիպարիտի միջև</i>	<i>Երեսնամյա պատերազմը Եվրոպայում</i>	<i>I համաշխարհային պատերազմը</i>
----------------------------------	--	---	--------------------------------------

- Ընտրում է մի որևէ ճակատամարտ (կամ պատերազմական կամպանիա) և գրավոր դատողություններ անում նրա զորահրամանատարի դերի մասին:
- Դասարանում, կեղծակերպած խաղի ժամանակ, փորձում է երկխոսության միջոցով գտնել մի որևէ հակամարտության կարգավորման ուղիները:
- Դասարանում խմբային աշխատանք կատարելիս՝ համեմատում է միևնույն դարաշրջանի տարբեր երկրների ռազմական մշակույթները (գերիների, վիրավորների, տուժածների նկատմամբ վերաբերմունքը):
- Պատմա-գրական ժառանգության միջոցով որոշում է պատերազմողի վարքականոնը, որով առաջնորդվում էին տարբեր մշակույթների ու տարբեր դարաշրջանների պատկանող պատերազմողները:
- Դատողություններ է անում, թե որքանով պարտադիր է ժամանակակից աշխարհում պատերազմական գործողությունների ժամանակ ընդունած օրենքների ու նորմերի պահպանումը: Դատողություններ է անում դրա ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերի մասին:
- Եվրոպայի ուրվագծային քարտեզի վրա նշում է այն տարածքային փոփոխությունները, որոնք առաջացել են այս կամ այն պատերազմի հետևանքով (օրինակ, Առաջին համաշխարհային պատերազմի):
- Թվարկում է պատերազմի տուժածների կարգերը, համադասարանցիների խմբի հետ քննարկում է մի որևէ կարգի իրավունքների սահմանված նորմերը և դրանց պահպանման մեխանիզմները: Համեմատում է ընտրված կարգի նկատմամբ վերաբերմունքի կոնկրետ օրինակները, որոնք վերցված են ինչպես մինչև Միջազգային մարդասիրական իրավունքի մշակումը, այնպես էլ նրա ընդունմանը հաջորդող շրջանում:
- Որոշում է տեղեկատվություն տեխնոլոգիական աղետների մասին, որոնք առաջացել են պատերազմական գործողությունների տարածման վայրերում և դատողություններ է անում դրանց բացասական հետևանքների մասին:

Պատմ.VIII.7. Աշակերտը կարող է բնութագրել Կովկասի տարածաշրջանը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անհատականորեն կամ դասարանում, խմբային աշխատանք կատարելիս, խմբավորում է Կովկասի ժողովուրդների կենցաղի և սովորույթների նմանություններն ու տարբերությունները (օրինակ, *վրացիների և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների, վրացիների ու հայերի և այլն*):
- Քարտեզի միջոցով վերլուծում է Հարավային Կովկասի սահմանների փոփոխությունները պատմական տարբեր դարաշրջաններում:
- Կազմում է այն խոշոր պետությունների ցանկը, որոնք տիրում էին Հարավային Կովկասում և համեմատում է այդ տիրապետության հետևանքները:

- Աշակերտը աղյուսակում խմբավորում է այն պետությունները, քաղաքական միավորումները (իշխանություն, խանություն), որոնք տարբեր ժամանակաշրջանում մտնում էին Կովկասի տարածաշրջանի կազմի մեջ: *Օրինակ.*

<i>Ժամանակաշրջան</i>	<i>Կովկասի պետություն</i>	<i>Հարևան պետություններ</i>
<i>Մ.թ.ա III-I դարեր</i>	<i>Ալբանիա, Կոլխեթի, Հայաստան, Քարթլի</i>	<i>Պարթևական պետություն, Պոնտոս, Հռոմ, Սելևեկյան Պարսկաստան</i>
<i>Մ.թ IV-VIII դարեր</i>	<i>Ադվանք, էգրիսի, Հայաստան, Քարթլի</i>	<i>Արաբական խալիֆայություն, Բյուզանդիա, Սասանյան Պարսկաստան, Խազարների խանություն</i>
<i>XVIII դար</i>	<i>Իսերեթիի, Կախեթիի և Քարթլիի թագավորությունները, Աբխազիայի, Գուրիայի, Սամեգրելոյի և Սվանեթիի իշխանությունները, Գանջայի խանությունը, Երևանի խանությունը և այլն:</i>	<i>Թուրքիա, Պարսկաստան, Ռուսաստան</i>

Պատմ.VIII.8. Աշակերտը կարող է բացատրել պետության մեջ կառավարման ձևի ու քաղաքական վարչակարգի փոխադարձ կապը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պարզաբանում է «պետություն» հասկացությունը և բնութագրում նրա հիմնական տարրերը (կառավարման ձևը, պետության վարչա-տարածաշրջանային կարգը, քաղաքական վարչակարգը):
- Ընտրում է մի որևէ երկիր և նրա օրինակով թվարկում այն պատճառները, որոնք ներգործում են պետության կառավարումը փոխելու վրա:
- Թվարկում է հասարակության այն շահերը, որոնք պետությունն իրավունք չունի անտեսել: Իր կարծիքը հիմնավորում է պատմական փաստերով:
- Պարզաբանում է, թե ինչ է նշանակում «քաղաքական վարչակարգ» և թվարկում է տարբեր տեսակի (օրինակ, *ժողովրդավարական, ինքնակալական, ամբողջատիրական*) պետությունները:
- Համեմատում է քաղաքական տարբեր վարչակարգերը և դրանցից ընտրում է Վրաստանի համար, իր կարծիքով, ամենաարդյունավետը:
- Վրաստանի Սահմանադրության մեջ գտնում և վերլուծում է այն դրույթները, որոնք կապված են ժողովրդավարության ապահովման հետ (օր.՝ պետության նշանակումը և ընտրովիությունը, բազմակուսակցականությունը, մարդու քաղաքական իրավունքները և այլն), արտահայտում է իր կարծիքները ժողովրդավարության ուժեղացմանն ուղղված փոփոխությունների մասին:

Պատմ.VIII.9. Աշակերտը կարող է նկարագրել ժողովրդավարական պետության հիմունքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանձնացնում և նկարագրում է ժողովրդավարության սկզբնավորման և զարգացման պատմական փուլերը:
- Բնութագրում է ժողովրդավարության հիմնական սկզբունքները և դրանք կապում է մարդու իրավունքների ու պարտականությունների հետ: Իր կարծիքները հիմնավորում է իրեն հայտնի միջազգային փաստաթղթերի դրույթների միջոցով (օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Երեխաների իրավունքների պաշտպանության համաձայնագիր և այլն):
- Դատողություններ է անում այն մասին, թե ինչպես պետք է վարվի իր իրավունքները ոտնահարելու դեպքում և բացատրում, թե ինչպես պետք է նկատի առնի ուրիշի իրավունքները՝ իր իրավունքները պաշտպանելիս:
- Համադասարանցիների հետ խաղում է ինքնակալական և ժողովրդավարական հասարակությանը բնորոշ իրավիճակ: Դատողություններ է անում երկու տարբեր հասարակարգերում անհատի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի մասին:

Պատմ.VIII.10. Աշակերտը կարող է բացատրել օրենքի գերակայության նշանակությունը պետության համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում յուրաքանչյուր քաղաքացու շահերի համար օրենքի գերակայության կարևորության մասին (օրինակ, կարգապահություն, հարգալից փոխհարաբերություն, մարդու իրավունքների պաշտպանություն, արդարացիություն և այլն): Պատմությունից և սեփական դիտարկումներից ելնելով՝ բերում է համապատասխան օրինակներ:
- Դատողություններ է անում պետության համար սահմանադրության գոյության նշանակության և նրա բնորոշ հատկանիշների մասին:
- Համադասարանցիների խմբի հետ, կազմում է հարցերի ցուցակ, որոնք նրա կարծիքով, պետք է արտահայտվեն երկրի հիմնական օրենքում, խմբի կարծիքը ծանոթացնում է մի այլ խմբի, լսում նրանց ներկայացուցչի շնորհանդեսը, մասնակցում բանավեճին և ընդհանուր որոշումների կայացմանը:
- Դատողություններ է անում այն մասին, թե հասարակության մեջ ինչու պետք է գոյություն ունենան տարբեր տեսակի նորմեր ու օրենքներ:
- Թվարկում է հասարակության մեջ գործող «չգրված օրենքները» և կանոնները ու դատողություններ անում այն մասին, թե արդյոք դրանք բարոյական նորմեր են: Փնտրում է նման «չգրված օրենքներ» ու կանոններ տարբեր ժողովուրդների մշակույթներում, դրանք համեմատում իրար և գնահատում, թե որքանով ընդունելի են դրանք իր համար:
- Համադասարանցիների հետ մշակում և դասարանում պահպանում է արդարացի հարաբերությունների վարվելաձևերը:
- Պարզաբանում է, թե ինչ է նշանակում «իրավունք» և անվանում է այն օրենքները, որոնք համապատասխանում են նրա բարոյական արժեքներին:

- Բացատրում է, թե ինչու է անձը պարտավոր պահպանել օրենքը: Անվանում է այն վտանգները, որոնք հետևում են մարդու (հատկապես, անչափահասի) անօրինական գործողություններին:

Ուղղություն . Մարդը և հասարակությունը

Պատմ.VIII.11. Աշակերտը կարող է սահմանել մարդու իրավունքների հիմունքները և դրանց զարգացման պատմական պայմանները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սեփական իրավունքներից առանձնացնում է բնատուր և ձեռքբերովի իրավունքները: Անվանում է այն արժեքները, որոնք հիմք են հանդիսացել նշված իրավունքների համար:
- Համադասարանցիների խմբի հետ, ընտրում է պատմական մի որևէ դարաշրջան ու պետություն և դրա օրինակով նկարագրում ամենից ավելի իրավագուրկ մարդկանց վիճակը, անվանում այն արժեքները (օրինակ, *արժանապատվություն, հավասարություն, ազատություն...*), որոնք անտեսվում էին նշված դեպքերում և այն իրավունքները, որոնք այդ մարդիկ ունեին:
- Պատմությունից և հասարակական այլ առարկաներից ստացած գիտելիքների հիման վրա, համեմատում է մարդու իրավունքների տարբեր կարգերը (օրինակ, անձնական, քաղաքական, տնտեսական և այլն) և դատողություններ անում դրանց նմանությունների և տարբերությունների մասին:
- Վերլուծում է աշխարհում մարդու իրավունքների զարգացման գործընթացը, նախադրյալները, պահանջները և արդյունքները:
- Համադասարանցիների խմբի հետ խաղում է այնպիսի իրավիճակ, որի ժամանակ ոտնահարվում է մարդու արժանապատվությունը կամ ազատությունը, արտահայտում և հիմնավորում է իր կարծիքը այդ արժեքների նշանակության մասին:

Պատմ.VIII.12. Աշակերտը կարող է բնութագրել հասարակության մեջ խաղաղ համագործակցության պարտադիր պայմանները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վրաստանի կամ այլ երկրների պատմությունից բերում է այնպիսի օրինակներ, երբ կոնֆլիկտային իրավիճակը լուծելու համար ուժ չի գործադրվել:
- Թվարկում է բողոքի արտահայտման խաղաղ ձևերը, օրինակներ է բերում հայրենի կամ այլ երկրի պատմությունից և գնահատում բողոքի արդյունքը մի որևէ կոնկրետ դեպքում:
- Թվարկում է այն արժեքները, որոնց հարգելը պարտադիր է մարդկանց խաղաղ համագոյակցության համար: Փաստարկումներ անելիս բերում է մարդկանց (օրինակ, *տարբեր ցեղի, ազգության և դավանանքի*) խաղաղ համագոյակցության, իրեն հայտնի, օրինակներ պատմությունից կամ ժամանակակից կյանքից:
- Հիշում է մի այնպիսի դեպք, որի ժամանակ ինքը կամ իր մի որևէ ծանոթը կոնֆլիկտային իրավիճակում կատարել են միջնորդի (*միջամարդի/հաշտարարի*) դեր: Համադասարանցիների հետ խաղում է այդ իրավիճակը և գնահատում ստեղծված

իրադրությունը (օրինակ, հանգամանքները, վտանգները, կողմերի հնարավորությունները և նպատակները և այլն) և միջնորդի վարմունքը (օրինակ, դրդապատճառը, հատկությունները, գիտելիքները, գործողությունները և այլն):

Պատմ.VIII.13. Աշակերտը կարող է դատողություններ անել քաղաքական և տնտեսական գործընթացներով պայմանավորված սոցիալական փոփոխությունների մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գրավոր համեմատում է տարբեր երկրներում պատերազմի հետևանքով առաջացած սոցիալական փոփոխությունները:
- Աղյուսակում թվարկում է այն պատերազմները, որոնք առաջացրել են պետական կառավարման փոփոխություններ: Օրինակ.

<i>1814-1815 թթ. պատերազմը Ֆրանսիայի ու Եվրոպայի պետությունների միջև</i>	<i>Բուրբոնների վերականգնումը Ֆրանսիայում</i>
<i>I համաշխարհային պատերազմը</i>	<i>Միապետությունների տապալումը Ավստրո-Հունգարիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և Օսմանյան կայսրությունում, Խորհրդային Ռուսաստանի ստեղծումը:</i>
<i>II համաշխարհային պատերազմը</i>	<i>Սոցիալիստական հասարակարգի հաստատումը Արևելյան Եվրոպայի երկրներում:</i>

- Աղյուսակի միջոցով խմբավորում է տարբեր տեսակի հակամարտությունների (քաղաքացիական դիմակայության, հեղափոխության, պատերազմի) առաջացման սոցիալական պատճառները (օրինակ, *Ֆրանսիայի մեծ հեղափոխության և Ռուսաստանի 1917 թ. հեղափոխությունների*):
- Աղյուսակի միջոցով խմբավորում է տարբեր դարաշրջաններում Վրաստանում ու Եվրոպայում քաղաքաշինության հետևանքով առաջացած սոցիալական փոփոխությունները:

Պատմ.VIII.14. Աշակերտը կարող է վերլուծել մարդկանց փոխհարաբերությունները հասարակության մեջ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում մարդու և հասարակության փոխկախվածության մասին, տարբերում է անհատի և հասարակության շահերը:

- Համադասարանցիների խմբի հետ քննարկում է տարբեր կարծիքներ մարդու պահանջմունքների աճի մասին: Համադասարանցիներին ծանոթացնում է խմբի անվանած կամ ըստ նշանակության դասավորված մարդու պահանջմունքների թվարկմանը:
- Համադասարանցիների հետ դատողություններ է անում, թե ինչ է անհրաժեշտ մարդուն իր գոյությունը պահպանելու համար և թվարկված պահանջմունքները համապատասխանեցնում է սեփական ցանկություններին: Թվարկում է մարդու իրավունքները և ցանկությունները բավարարելու ուղիները:

Ուղղություն . Մշակույթ և կրոն

Պատմ.VIII.15. Աշակերտը կարող է դասակարգել աշխարհում գոյություն ունեցող կրոնական համակարգերը և գիտակցել նրանց միջև եղած նմանություններն ու տարաբերությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում միաստվածային ու բազմաստվածային կրոնների միջև եղած տարբերությունների մասին:
- Ձևակերպում է աշխարհում առավել լայնորեն տարածված կրոնների (Քրիստոնեություն, Իսլամ) հիմնական հասկացությունները:
- Դատողություններ է անում աշխարհի կրոնների (քրիստոնեություն, իսլամ, բուդդիստականություն) կազմավորման պատմության մասին:
- Դատողություններ է անում քրիստոնեական եկեղեցու ընդերքում գոյություն ունեցող ուղղությունների (միաստվածություն, կաթոլիկություն, ուղղափառություն, բողոքականություն) մասին: Ջրուցում է դրանց կազմավորման պատճառների մասին:
- Թվարկում է այն մարդկանց, ովքեր առանձնահատուկ ներդրում ունեն իսլամի ու քրիստոնեության կազմավորման գործում:

Պատմ.VIII.16. Աշակերտը կարող է նկարագրել համաշխարհային մշակույթի գլուխգործոցները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է համաշխարհային ճարտարապետության հիշարժան կոթողները: Խմբավորում է դրանք ըստ պատմական դարաշրջանների: Դատողություններ է անում դրանց ստեղծման պատմության մասին:
- Պատկերագրող նյութեր կիրառելով՝ աղյուսակում խմբավորում ու զանազանում է տարբեր ոճով կառուցված ճարտարապետական հուշարձանները:
- Թվարկում է համաշխարհային գրականության գլուխգործոցները: Խմբավորում է դրանք ըստ պատմական դարաշրջանների: Դատողություններ է անում դրանց հեղինակների ով լինելու մասին:
- Ջրուցում է համաշխարհային գրականության գլուխգործոցների բովանդակության ու նշանակության մասին:

Պատմ.VIII.17. Աշակերտը կարող է ուսումնասիրել կրթական համակարգի հիմունքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համեմատում է, թե ինչպես էին սովորում երեխաները տարբեր դարաշրջաններում ու երկրներում (օրինակ, *Եգիպտոսում ու Աթենքում, Բավարիայում ու Չինաստանում, և այլն*):
- Բնութագրում է համալսարանային համակարգը (օրինակ, *միջնադարյան Եվրոպայի համալսարանի կազմը, դասախոսների և ուսանողների կենցաղը, առարկաների ցուցակը և այլն*):
- Դատողություններ է անում տարբեր դարաշրջաններում ու երկրներում կրթություն ստանալու անհավասարության մասին, նշում է այդ անհավասարության պատճառները:
- Գրում է շարադրություն տարբեր դարաշրջանում ու երկրներում աղջիկների և տղաների անհավասար կրթություն ստանալու մասին:
- Ըստ պատմա-գրական ժառանգության, որոշում է աշակերտի վարվեցողության կանոնները տարբեր դարաշրջաններում ու մշակույթներում:

Պատմ.VIII.18. Աշակերտը կարող է հետազոտել հասարակության մշակույթի հիմունքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Իրեն ծանոթ սոցիալական միջավայրի օրինակով (օրինակ, ընտանիք, հարևանություն, դասարան, ընկերություն, բնակավայր և այլն) առանձնացնում է այն գործոնները (օրինակ, ընդհանուր բարոյագիտական արժանիքներ, հանգամանքներ և այլն), որոնք դրանց փոխկապակցված են դարձնում:
- Գիտակցում է տարբեր մշակույթներում արմատավորված բարոյագիտական նորմերի մասին և խմբի անդամների հետ խաղում է կոնկրետ իրավիճակ՝ այդ նորմերը ներկայացնելու համար:
- Համեմատում է հասարակության զարգացման վրա տարբեր կրոնների նորմերի ու օրենքների ազդեցությունը (օրինակ, *Պարսկաստան՝ իսլամ*):
- Կարող է զանազանել տարբեր դարաշրջանների ու երկրների պետական ու դինաստիական խորհրդանշանները:
- Արտահայտում է իր կարծիքը մարդու կուլտուրականությունը որոշող հատկանիշների մասին: Լսում է համադասարանցիների կարծիքները և այնուհետև նրանց հետ ձևակերպում կուլտուրական մարդու և հասարակության մասին իր պատկերացումները:
- Ուսուցչի օգնությամբ, համադասարանցիների հետ, երկրի բնական պայմանները և տեղի բնակչության կյանքի յուրահատկությունները (օրինակ, *քանդակագործություն, ժողովրդական ստեղծագործություն, խաղեր*) ուսումնասիրելու համար, պլանավորում և իրականացնում է ազգագրական պարզ գիտարշավ:
- Համադասարանցիների հետ ընտրում է տարածված մի որևէ մարգաձև (աշխարհում կամ տարածաշրջանում) և ուսումնասիրում դրա զարգացման պայմանները (օրինակ, *առաջացումը,, տարածման շարժունակությունը, արդյունավետություն և այլն*): Ուրվագծային քարտեզի վրա տեղադրում է սպորտի այդ ձևի պատմական զարգացումը և, խմբում ուսումնասիրված արդյունքների հետ, ծանոթացնում է համադասարանցիներին:
- Դատողություններ է անում հասարակության համար միջազգային սպորտային կազմակերպությունների և շարժումների նշականության մասին: Համեմատում է սպորտի

միջազգային և ազգային ձևերը: Դատողություններ է անում դրանց ժողովրդականության պատճառների մասին:

Օրագրի բովանդակությունը

VIII դասարանի համար նախատեսված պարտադիր բովանդակության հարցերի ցանկը:

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանի համար հատկացված բովանդակության 80%-ը):

Հակամարտությունները հին աշխարհում

1. Հակամարտության տեսակները. պատերազմեր երկրների միջև և պետական ներքին հակամարտություններ:
2. Հին եգիպտացիների պատերազմները:
3. Ասորեստանի պատերազմերը (համաշխարհային կայսրության ստեղծման առաջին փորձը):
4. Հույն-պարսկական պատերազմերը, Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը:
5. Հռոմն ու Կարթագենը (Պունիկյան պատերազմերը):

Հակադրությունները Մերձավոր Արևելքում

6. Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի հակադրությունը VI-VII դարերում:
7. Արաբական խալիֆայությունը:
8. Թուրք-սելջուկները և Մերձավոր Արևելքը, Մանասկերտի ճակատամարտը:
9. Խաչակրաց պատերազմները:
10. Օսմանյան կայսրությունը, բյուզանդական կայսրության անկումը և նրա համաշխարհային պատմական նշանակությունը:

Հակամարտությունները Եվրոպայում

11. Քաղաքների պատերազմները ազատության համար միջնադարյան Եվրոպայում:
12. Հակամարտությունները եկեղեցու և պետության միջև (օրինակ, *Հենրի II և Թոմաս Բեկետ, Հայնրիխ IV և Գրիգոր VII. . .*):
13. Պայքար Իսպանիայի և Անգլիայի միջև գերիշխանության համար XVI-XVII դարի սկզբին («Բարթուղումեոսի գիշերը», «Հնագույն նավատորմի կործանումը», Նիդերլանդների պայքարը անկախության համար):
14. Երեսնամյա պատերազմը և Վեստֆալյան պայմանագիրը: Կրոնական և քաղաքական դիմակայությունը:
15. Անգլիա. հեղափոխություն, թե՛ քաղաքացիական պատերազմ:
16. Ֆրանսիա. 1789 թվականի հեղափոխությունը, հանրապետությունից մինչև կայսրություն:
17. Նապոլեոնի պատերազմները:
18. Գերմանիայի միավորումը և հակադրությունները Եվրոպայում XIX դարում:

Հակամարտությունները Ամերիկայի տարածքում

19. Կորտեսի և Պիսարոսի արշավանքները:
20. Պայքար ԱՄՆ-ի անկախության համար:
21. Քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում:

22. Պայքարը Հարավային Ամերիկայի ազատության համար, Միմոն Բոլիվար:

Համաշխարհային պատերազմեր

23. Առաջին համաշխարհային պատերազմ. մասնակից կողմերը, պատերազմի արդյունքները:
24. Հեղափոխությունները և քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում:
25. Երկրորդ համաշխարհային պատերազմ. նախադրյալները, մասնակից կողմերը, պատերազմի հետևանքները:
26. Միջազգային մարդասիրական իրավունքի հիմունքները (զինված հակամարտության տուժածների պաշտպանությունը, պատերազմը վարելու մեթոդների և միջոցների սահմանափակումը):

Քաղաքական հակամարտությունները Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

27. Մառը պատերազմը:
28. Մառը պատերազմի ժամանակվա հակամարտությունները (օրինակ, *Վիետնամի պատերազմը, Աֆղանստանի պատերազմը...*):
29. Իսրայելը և Արաբական աշխարհը:

Ժողովրդավարություն և ամբողջատիրություն

30. Քաղաքական վարչակարգի էությունը/առաջնորդը և քաղաքական վարչակարգերը, քաղաքական վարչակարգերը և քաղաքացիական հասարակությունը:
31. Ֆրանսիայի մեծ հեղափոխությունից մինչև հինգերորդ հանրապետությունը:
32. «Մեիձիի վերականգնումը»:
33. Աթաթուրքի բարեփոխումները Թուրքիայում:
34. Ֆրանկոյի կառավարումը Իսպանիայում:
35. Հիտլերի կառավարումը Գերմանիայում:
36. Մուսոլինիի կառավարումը Իտալիայում:
37. Ստալինի կառավարումը Խորհրդային Միությունում:

Հակամարտությունները և դրանց խաղաղ լուծման օրինակները

38. Առանց բռնության – հակամարտությունները խաղաղ ճանապարհով լուծելու ուղի:
39. Մարտին Լյութեր Քինգը և աֆրո-ամերիկացիների պայքարը հանուն քաղաքացիական հավասարության:
40. XX դարի 90-ական թվականների «թավշե հեղափոխությունները»: Արևելյան Եվրոպայի երկրները:

Կրոն

41. Կրոնների դասակարգումը:
42. Միաստվածային կրոններ (քրիստոնեություն, իսլամ, հրեականություն):

Ռուսաստանը և Կովկասը

43. Կովկաս (պատմա-աշխարհագրական համառոտ տեսություն):
44. Հարավային Կովկասի զավթումը Ռուսաստանի կողմից:
45. Կովկասի պատերազմը և դրա հետևանքները:

Ազգային-քաղաքական հակամարտությունները Խորհրդային Միության փլուզումից հետո

46. Ազգային-քաղաքական հակամարտությունները նախկին Հարավսլավիայում, Հարավսլավիայի կազմալուծումը:

47. Խորհրդային Միության փլուզումը և քաղաքական հակամարտությունները նախկին խորհրդային տարածքում (Ռուսաստանի պատերազմները Չեչնիայում, Մերձդնեստրում):
48. «Տարածաշրջանային հակամարտությունները» Վրաստանում՝ Ռուսաստանի չհայտարարված պատերազմը Վրաստանում:

Մարդու իրավունքները

49. Մարդու հիմնական իրավունքները և ազատությունները (արժանապատվությունից մինչև իրավունքները և ազատությունները):
50. Մարդու իրավունքների սերունդները և դասակարգումը:

Պետությունը և օրենքի գերակայությունը

51. Օրենքի գերակայությունը և Սահմանադրությունը:
52. Վրաստանի Սահմանադրությունը:

Հասարակական հակամարտությունը և նրա տեսակները

53. Հասարակական հակամարտությունը և նրա տեսակները:

Հասարակությունը և մշակույթը

54. Փոխհարաբերությունները և վարվեցողության կուլտուրան հասարակությունում (վարվելաձև):
55. Զինանշանագիտությունը անցյալում և ժամանակակից խորհրդանշանները:

Կրթություն

56. Ուսանում-ուսուցման դերը և նշանակությունը:
57. Բարձրագույն կրթության նշանակալից օջախները միջին դարերում (Եվրոպա-Վրաստան):
58. Ժամանակակից կրթական համակարգը:

Առևտուրը և ճանապարհորդությունը

59. Առևտուրը և փողը (հեռավոր ճանապարհորդությունների սկիզբը):
60. Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և դրանց նշանակությունը:
61. Հին վրացի ճանապարհորդները:
62. Շուկան և բիզնեսը. բիզնեսը և արտադրությունը:

Արվեստը և սպորտը

63. Հերոսական էպոս (*ասպետական էպոս, եվրոպացի ասպետի և սամուրայի բարոյական վարքագիծը, վրացական օրինակ և այլն*):
64. Սպորտի առաջացումը, օլիմպիականներ, հին վրացական խաղեր, սպորտային շարժումներ և կազմակերպություններ:

Հաղորդակցություն

65. Գրի ստեղծումը և նրա հնագույն տեսակները, այբբենական գրություն:
66. Տեղեկատվության փախանցման միջոցները (ձեռագիր գրքեր, գրքի տպագրում, մամուլ, փոստ և հեռագիր):
67. Ժամանակակից հաղորդակցական միջոցներ (էլեկտրոնային հաղորդակցություն և տեղեկատվական միջոցներ):

Անհրաժեշտ զննական դիտանյութեր. թեմատիկ պատմական քարտեզներ:

VIII դասարան
Աշխարհագրություն

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Ժամանակ և տարածություն	Շրջակա միջավայրը և տնտեսությունը	Շրջակա միջավայրը և սոցիալական համակարգերը
<p>Աշխ.VIII.1. Աշակերտը կարող է աշխարհագրական տեղեկատվություն գտնելու համար ընթերցել քարտեզը և վերլուծել այլ դիտողականություններ:</p> <p>Աշխ.VIII.2. Աշակերտը կարող է սահմանել աշխարհագրական օբյեկտների և երկրների դիրքը քարտեզի վրա:</p>	<p>Աշխ.VIII.3. Աշակերտը կարող է բացատրել, թե ինչ ազդեցություն ունեն բնական պայմանները բնակավայրի տեսակների և տնտեսության զարգացման վրա:</p> <p>Աշխ.VIII.4. Աշակերտը կարող է բնութագրել Կովկասի տարածաշրջանը:</p> <p>Աշխ.VIII.5. Աշակերտը կարող է դատողություններ անել տրանսպորտի զարգացման մասին հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:</p> <p>Աշխ.VIII.6. Աշակերտը կարող է դատողություններ անել տնտեսության զարգացման վրա առևտրի ունեցած դերի մասին:</p>	<p>Աշխ.VIII. 7. Աշակերտը կարող է բնութագրել գաղթի գործընթացի առանձնահատկությունները:</p> <p>Աշխ.VIII.8. Աշակերտը կարող է բնութագրել քաղաքաշինության գործընթացը:</p> <p>Աշխ.VIII. 9. Աշակերտը կարող է բացատրել տարածաշրջանների բաժանման սկզբունքը աշխարհում և երկրների դասակարգման նշանավոր չափանիշները:</p>

Տարվա վերջում նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները:

Ուղղություն . Ժամանակ և տարածություն

Աշխ.VIII.1. Աշակերտը կարող է աշխարհագրական տեղեկատվություն գտնելու համար ընթերցել քարտեզը և վերլուծել այլ դիտողականություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բնակչության մարդահամարի նյութերի վրա հիմնվելով՝ կազմում է տարբեր տեսակի գծագրեր ու ուրվապատկերներ:
- Կազմում է նախորդ դարաշրջանի մի որևէ տեղական բնակավայրի (*քիչ բնակեցված տեղանք, գյուղ, թաղամաս և այլն*) մենթալ պլանը և այն համեմատում այդ նույն տեղանքի ժամանակակից պլանի հետ: Դատողություններ է անում այն մասին, թե մարդաբանական ինչ փոփոխությունների է ենթարկվել շրջակա միջավայրը այդ երկու դարաշրջանների ընթացքում:

- Ուրվագծային քարտեզների և այլ օժանդակ նյութերի վրա տեղադրում է տեղեկատվությունները:
- Աշխարհագրական դիտողականության մասին մի տիպի տեղեկատվությունն արտահայտում է մի այլ տեսակով (*օրինակ, ըստ աշխարհի քարտեզի տրված երկրները խմբավորում է ըստ աշխարհամասերի և ներկայացնում աղյուսակի տեսքով*):

Աշխ.VIII.2. Աշակերտը կարող է սահմանել աշխարհագրական օբյեկտների և երկրների դիրքը քարտեզի վրա:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Օգտվելով քաղաքական քարտեզից՝ նկարագրում է այն պայմանական նշանները (գույները, սահմանները), որոնցով կատարվում է տարածքների (պետություններ, առանձին վարչական միավորներ, մայրաքաղաքներ) նշումը քաղաքական քարտեզի վրա:
- Օգտվելով քարտեզից և վիճակագրական տեղեկություններից՝ կազմում է աղյուսակ, որտեղ, ըստ աշխարհամասերի, տեղադրում է երեք ամենախոշոր և երեք ամենափոքր երկրների (ըստ մակերեսի և բնակչության) բնութագրիչները:
- Կոորդինատային ցանցը կիրառելով՝ սահմանում է աշխարհագրական տարբեր օբյեկտների դիրքերը, այդ թվում, տարածքներն ու ուղղությունները (աշխարհի նշանավոր երկրները և մայրաքաղաքները, Վրաստանի տարածաշրջանները և վարչական կենտրոնները):
- Օգտվում է քարտեզից և դատողություններ անում Վրաստանի դիրքի մասին տարածաշրջանային և աշխարհի մասշտաբով, և համեմատում մի որևէ այլ երկրի դիրքի հետ:
- Օգտվում է քարտեզագրից և բնութագրում մի որևէ տարածաշրջան (*դիրքը, սահմանները, ռելիեֆը, ջրագրական ցանցը, վարչական կենտրոնները*):
- Օգտվելով քարտեզից՝ սահմանում է Վրաստանի ընդհանուր աշխարհագրական դիրքը: Համեմատում է նման և տարբեր դիրքով երկրները, դրանք խմբավորում աղյուսակում:

Ուղղություն . Շրջակա միջավայրը և տնտեսությունը

Աշխ.VIII.3. Աշակերտը կարող է բացատրել, թե ինչ ազդեցություն ունեն բնական պայմանները բնակավայրի տեսակների և տնտեսության զարգացման վրա:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուրվագծային քարտեզի վրա նշում է տարբեր տիպի բնակավայրեր և դատողություններ անում այն մասին, թե կոնկրետ աշխարհագրական միջավայրում, ինչ պատճառներով են դրանք հայտնվել (*օրինակ, ինչու են քաղաքները կառուցում գետերի ափերին*):
- Կիրառելով լուսանկար կամ քարտեզ՝ նկարագրում է տարբեր տարածքներին բնորոշ բնապատկերները (*օրինակ, արևադարձային անտառներ, անապատներ, տափաստաններ և այլն*) և դրանք կապում այդ երկրի (տարածաշրջանի) տնտեսական գործունեության հետ:
- Լուսանկարների միջոցով համեմատում է աշխարհագրական տարբեր միջավայրերում գտնվող երկու բնակավայր և վերհանում դրանց միջև եղած տարբերությունները (*շինանյութ, ճարտարապետություն*):
- Ենթադրություն է անում բնական աղետներից պաշտպանվելու հնարավոր միջոցների մասին, դրանք համեմատում է Վրաստանում և այլ երկրներում արմատավորված

պաշտպանական միջոցների հետ (օրինակ, ձնահյուսքերի վտանգը հաշվի առնելով, սվանական ճարտարապետությունը համապատասխանեցված է շրջակա միջավայրին, շենքերի կտուրները ծածկվում են շրջակա միջավայրին համապատասխան և այլն):

- Ուսումնասիրում է գյուղատնտեսական շուկայի տեսականին, խմբավորում դրանք (օրինակ, աղյուսակի միջոցով) ըստ Վրաստանի երկրամասերի, սահմանում գյուղատնտեսական ապրանքների տեսակները և արդյունքները ներկայացնում իր ցանկացած ձևով:
- Համադասարանցիների հետ փնտրում է տեղեկատվություն բնության մեջ պատերազմի հետևանքով առաջացած փոփոխությունների մասին (ջուրը, օդը, հողը, անտառը): Փոփոխությունների արդյունքները ներկայացնում է աղյուսակի կամ նկարի (պլակատի) տեսքով:
- Փնտրում է տեղեկատվություն այն տեխնածին աղետների մասին, որոնք առաջացել են պատերազմական գործողությունների տեղերում (օրինակ, ԱՄՆ-ի և Իրաքի պատերազմի հետևանքով առաջացած աղետը Պարսից ծոցում) և դատողություններ է անում դրանց բացասական հետևանքների մասին:

Աշխ.VIII.4. Աշակերտը կարող է բնութագրել Կովկասի տարածաշրջանը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է համապատասխան թեմատիկ քարտեզը և վերլուծում Եվրոպայի ու Ասիայի միջև սահմանի անցկացման հարցը (ուսումնասիրում և ընդհանրացնում է սահմանի անցկացման այլընտրանքային տարբերակներ, հիմնավորում իր համար ընդունելի տարբերակը) և այն անցկացնում ուրվագծային քարտեզի վրա:
- Կիրառելով քաղաքական և ֆիզիկական քարտեզները՝ երկրները խմբավորում է ըստ դիրքի: Զրուցում է Կովկասի և նրա կազմի մեջ մտնող երկրների դիրքի մասին:
- Կիրառում է քարտեզը և բնութագրում Սև և Կասպից ծովերի ֆիզիկական-աշխարհագրական բնութագրիչները, նշանակալից պաշարները (հանքային, կենսաբանական, ռեկրեացիոն) և շրջակա միջավայրի հիմնախնդիրները: Արտահայտում է իր կարծիքները շրջակա միջավայրի պահպանման դերի և հեռանկարների մասին:
- Կիրառում է համապատասխան թեմատիկ պլաններ, վիճակագրական տեղեկություններ և դատողություններ անում Կովկասի բնակչության մի շարք բնութագրիչների մասին (օրինակ, ժողովրդագրական, էթնիկական, կրոնական բազմերանգություն), լրացնում է համապատասխան ուրվագծային քարտեզը:
- Կիրառելով քարտեզի և բնագրի միջոցով ձեռք բերած տեղեկատվությունը՝ նկարագրում է Կովկասին բնորոշ կարևորագույն բնական պաշարները (նավթ, գազ, հանքային ջրեր, անտառ և այլն), աշխարհագրական օբյեկտները և բնական յուրահատկությունները: Լրացնում է Կովկասի համապատասխան ուրվագծային քարտեզը:
- Թեմատիկ քարտեզի միջոցով Կովկասի բնական պայմանները և պաշարները կապում է բնակչության ավանդական տնտեսական աշխատանքի հետ (օրինակ, զոնայական ստորաբաժանումներ և գյուղատնտեսության մասնագիտացում): Աղյուսակում խմբավորում է Կովկասյան երկրները ըստ վերը նշված բնութագրիչների:
- Հավաքում է տեղեկատվություն, դատողություններ է անում Կովկասի բնական աղետների (երկրաշարժ, ջրհեղեղ, փլուզում, լեռնահեղեղ և այլն), շրջակա միջավայրի հիմնախնդիրների (օրինակ, Սև և Կասպից ծովերի հիմնախնդիրները) և դրանք լուծելու հնարավոր ուղիների մասին:

- Ըստ դիտողականության հատկանիշների (դիրքի, բնական պայմանների, բնակչության և այլն) Կովկասի տարածաշրջանը համեմատում է աշխարհի այլ տարածաշրջանների հետ: Նմանություններն ու տարբերություններն արտահայտում է իր ցանկացած ձևով:

Աշխ.VIII.5. Աշակերտը կարող է դատողություններ անել տրանսպորտի զարգացման մասին հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է իրեն հայտնի փոխադրամիջոցները և դատողություններ անում, տարբեր տեսակի արտադրանք տեղափոխելիս, դրանց կիրառման արդյունավետության մասին *(օրինակ, հեռավորությունը, ծախսերը, ժամանակը)*:
- Դատողություններ է անում, զանազան բնական միջավայրերում, տարբեր տեսակի փոխադրամիջոցների զարգացման և կիրառման հեռանկարների մասին:
- Աղյուսակում խմբավորում է շրջակա միջավայրի պայմանները և համապատասխան արդյունավետ փոխադրամիջոցները:
- Փնտրում է տեղեկատվություններ շրջակա միջավայրի վրա տարբեր տեսակի փոխադրամիջոցների վնասակար ազդեցության վերաբերյալ: Ծանոթ է շրջակա միջավայրի համար ժամանակակից անվտանգ փոխադրամիջոց ստեղծելու գիտնականների նվաճումներին:
- Ուրվագծային քարտեզի վրա անցկացնում է ծովային և ցամաքային այն երթուղիները, որով Վրաստանը կապվում է հարևան պետությունների հետ:
- Դատողություններ է անում, հնում է ժամանակակից դարաշրջանում, Կովկասի, որպես Եվրոպայի և Ասիայի միջև տրանսպորտային կապող միջանցքի, դերի մասին:

Աշխ.VIII.6. Աշակերտը կարող է դատողություններ անել տնտեսության զարգացման վրա առևտրի ունեցած դերի մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուրվագծային քարտեզի վրա նշում է նշանավոր այն ճանապարհորդությունները, որոնց հետևանքով ստեղծվել են առևտրական ճանապարհներ *(օրինակ, Մետաքսե մեծ ճանապարհի երթուղին)*:
- Ընտրում է որևէ կարևոր նմուշ և դատողություններ անում տնտեսության զարգացման գործում դրա միջազգային և տեղական նշանակության մասին: Նշում է դա ուրվագծային քարտեզի վրա:
- Ուսումնասիրում է գյուղատնտեսական շուկայի տեսականին, զանազանում է տեղում արտադրված և ներմուծված արտադրանքը: Արդյունքները ներկայացնում է իր ցանկացած ձևով:
- Ուսումնասիրում է մթերային խանութի տեսականին, ապրանքները խմբավորում հետևյալ հատկանիշներով՝ տեղում արտադրված և ներմուծված: Դատողություններ է անում Վրաստանի սննդամթերքի վրա ներմուծվող ապրանքների ազդեցության մասին և արտահանող երկրները նշում ուրվագծային քարտեզի վրա:
- Ընտրում է արդյունաբերության *(օրինակ, նավթի և բնական վառելանյութի արդյունաբերություն)* և գյուղատնտեսության *(օրինակ, հացահատիկի և սուրճի արտադրություն)* որևէ բնագավառ, ուսումնասիրում համաշխարհային շուկայում այդ ապրանքի պահանջարկը և ուրվագծային քարտեզի վրա նշում է ներմուծող և արտահանող խոշորագույն երկրները:

- Պարզաբանում է «ներմուծում», «արտահանում» հասկացությունները: Վիճակագրական վերլուծության նյութի հիման վրա, խմբավորում է տարբեր տեսակի ապրանքներ ներմուծող և արտահանող երկրները:

Ուղղություն . Շրջակա միջավայրը և սոցիալական համակարգերը

Աշխ.VIII. 7. Աշակերտը կարող է բնութագրել գաղթի գործընթացի առանձնահատկությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ժողովրդագրական հարցերի մասին դատողություններ անելիս՝ օգտագործում է համապատասխան տերմինները:
- Տարբերում է գաղթի տեսակները (արտաքին, ներքին, ճոճանակաձև և այլն):
- Անվանում է գաղթի տեսակներ, որոնց ինքն արդեն ծանոթ է: Դատողություններ է անում գաղթի հնարավոր պատճառների մասին և բերում համապատասխան օրինակներ:
- Ենթադրություններ է անում անհատի (որը ընդգրկված է այդ գործընթացում) և երկրի (որտեղից և ուր ուղղված է կոնկրետ գաղթը) վրա գաղթի ունեցած հնարավոր հետևանքների մասին:
- Անհատականորեն կամ խմբային աշխատանք կատարելիս՝ խմբավորում է տարբեր գաղթերը (կամավոր և հարկադիր՝ ստրկությունից մինչև մարդկանց առևտուր (թրաֆիքինգ) և այդ գաղթերի պատճառներն ու հետևանքները:
- Ծանոթանում է վիճակագրական տվյալներին և դատողություններ անում տնտեսական, քաղաքական և բնապահպանական հիմնախնդիրների պատճառով ներքին և արտաքին գաղթի գործընթացներում կատարված փոփոխությունների մասին:

Աշխ.VIII.8. Աշակերտը կարող է բնութագրել քաղաքաշինության գործընթացը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հավաքում է տվյալներ սեփական բնակավայրի մասին, դրանք համեմատում գյուղական ու քաղաքային բնակավայրերի լուսանկարների հետ: Տարբերակիչ հատկանիշները ներկայացնում է աղյուսակի տեսքով:
- Հավաքում է տեղեկատվություն (գրականություն, լուսանկարներ, քարտեզներ) և նկարագրում ժամանակակից մեգապոլիսը (ագլոմերացիա, կոնուրբացիա և այլն): Նրանց բնորոշ հատկանիշները ներկայացնում է ուրվագծի տեսքով:
- Ծանոթացում է Վրաստանի և այլ երկրների բնակավայրերին կարգավիճակ շնորհելու չափանիշներին: Պայմանական նշանների օգնությամբ քարտեզի վրա նշում է տարբեր բնակավայրերի բազմամարդությունն ու գործառույթները:
- Ըստ ցանկության, տեղեկատվություն է հավաքում (պլան, քարտեզ, լուսանկար, վիճակագրական տեղեկատվություն և այլն) աշխարհամասերի խոշորագույն քաղաքների մասին և դրանք համեմատում ըստ նրանց տարբեր հատկանիշների (նախագծման, շրջանների բաժանման, գործառույթների, ենթակառուցվածքի, բնակչության և այլն): Արդյունքները ներկայացնում է իր ցանկացած ձևով (աղյուսակ, ուրվապատկեր, նկար, գրավոր շարադրություն և այլն):
- Ընտրում է ակնառու չափանիշներ, որոնց միջոցով խմբավորում է Վրաստանում և Եվրոպայում տարբեր դարաշրջաններում քաղաքաշինությամբ պայմանավորված փոփոխությունները: Արդյունքները ներկայացնում է աղյուսակի միջոցով:

- Հետազոտում է սոցիալական այն հիմնախնդիրները, որոնք առաջացել են տնտեսական և քաղաքական փոփոխությունների հետևանքով. քաղաքները ձեռք են բերել որոշ նոր գործառույթներ, իսկ որոշ գործառույթներ՝ կորցրել:

Աշխ. VIII. 9. Աշակերտը կարող է բացատրել տարածաշրջանների բաժանման սկզբունքը աշխարհում և երկրների դասակարգման նշանավոր չափանիշները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Օգտվելով քարտեզից սահմանում է աշխարհում տարածաշրջանները ֆիզիկա-աշխարհագրական, պատմա-մշակութային, տնտեսական և քաղաքական հատկանիշներով բաժանելու յուրահատկությունները:
- Օգտվելով ուսումնական քարտեզից՝ անվանում է ռազմավարական պաշարներով (վառելիքա-էներգիական) հարուստ տարածաշրջանները: Դրանք նշում է կոնկրետ քարտեզի վրա:
- Դիտարկում է երկրի հյուսիս-հարավի բաժանման (տնտեսական զարգացման մակարդակը ցույց տվող) քարտեզը և աղյուսակում խմբավորում երկրները, ըստ նրանց զարգացման մակարդակի:
- Պատկերազարդումների վերլուծման հիման վրա, մշակում է երկրի զարգացման մակարդակը ցույց տվող սեփական չափանիշը (աշխատանքային տեղերը, առևտրի օբյեկտները, միջին աշխատավարձը, տրանսպորտը, բնակավայրը) և արտահայտում իր կարծիքները:
- Համեմատում է զարգացած և զարգացող երկրների կենսակարգն ու կանոնները, թվարկում նմանություններն ու տարբերությունները:
- Կազմում և համեմատում է այն աչքի ընկնող պաշարների ցանկը որոնք օգտագործվում են հարուստ և աղքատ երկրների տնտեսություններում (շինանյութ, ջեռուցման միջոցներ, տրանսպորտ և ճանապարհներ, էլեկտրաէներգիայի արտադրություն-սպառում և այլն): Դատողություններ է անում պաշարների և տնտեսական զարգացման մակարդակների միջև գոյություն ունեցող կապերի մասին:
- Ընտրում է երկու տարածաշրջան և խմբավորում տարբեր և նման հատկանիշները: Դատողություններ է անում նմանություններ ու տարբերություններ առաջացնող պատճառների մասին:

Ծրագրի բովանդակությունը

VIII դասարանի համար նախատեսված պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանին հատկացված բովանդակության 60 %-ը)

1. Աշխարհագրական դիրքը:
2. Աշխարհի բնակչության քանակը:
3. Աշխարհի բնակչության խտությունը:
4. Բնակավայրերի տեսակները:
5. Գաղթ:
6. Քաղաքաշինությունը:
7. Տնտեսության կառուցվածքը:
8. Գյուղատնտեսություն:
9. Արդյունաբերություն:
10. Զբոսաշրջություն:
11. Տրանսպորտ:
12. Կապ:
13. Կայուն զարգացում:
14. Պետության կառավարման ձևերը:
15. Տարածքային-վարչական կազմակերպում:
16. Երկրներն ըստ զարգացման մակարդակի:
17. Տարածաշրջանների բաժանման սկզբունքը:
18. *Հիմնական տարածաշրջանները:*
19. *Աշխարհամասեր:¹⁴*
20. Կովկասի տարածաշրջանը:
21. Սև և Կասպից ծովերը (ըստ պարզ գծագրի. աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և պաշարները, հիմնական նավահանգիստները, բնապահպանական հիմնախնդիրները):
22. Զարգացած և զարգացող երկրներ:

VIII դասարան

Անվտանգությունը արտակարգ իրավիճակներում

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Անձնական անվտանգության ապահովումը	Արտակարգ իրավիճակներում անվտանգ վարքագծի հիմունքները
Անվտ. VIII.1. Աշակերտը կարող է, անձանոթ տեղում անվտանգ տեղաշարժվելու համար, կիրառել տեղում կողմնորոշվելու միջոցները: Անվտ. VIII.2. Աշակերտը կարող է նկարագրել ինքնապաշտպանության գործողությունները և համապատասխան նախազգուշական միջոցառումները:	Անվտ. VIII.3. Աշակերտը կարող է իրար հետ կապել Վրաստանին բնորոշ արտակարգ իրավիճակների էական պատճառներն ու հնարավոր հետևանքները: Անվտ. VIII.4. Աշակերտը կարող է անվտանգ իրավիճակներում գործելիս ի հայտ բերել անվտանգ վարքագծի իր գիտելիքները:

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Անձնական անվտանգության ապահովումը

Անվտ. VIII.1. Աշակերտը կարող է, անձանոթ տեղում անվտանգ տեղաշարժվելու համար, կիրառել տեղում կողմնորոշվելու միջոցները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեղում կողմնորոշվելու համար օգտվում է տեղագրական միջոցներից և նավագնացական պարզ գործիքներից:
- Անձանոթ տեղանքում կողմնորոշվելիս՝ կիրառում է համապատասխան բնական նշանները ու յուրահասկությունները:

Անվտ. VIII.2. Աշակերտը կարող է նկարագրել ինքնապաշտպանության գործողությունները և համապատասխան նախազգուշական միջոցառումները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է մարդու ինքնապաշտպանության համար կոնկրետ իրավիճակում անհրաժեշտ նախազգուշական միջոցառումները:
- Հաջորդականությամբ թվարկում է կոնկրետ իրավիճակում մարդու ինքնապաշտպանական գործողությունները:

Ուղղություն. Արտակարգ իրավիճակներում գործելու անվտանգ վարքագծի հիմունքները

Անվտ. VIII.3. Աշակերտը կարող է իրար հետ կապել Վրաստանին բնորոշ արտակարգ իրավիճակների էական պատճառներն ու հնարավոր հետևանքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկարագրում է Վրաստանին բնորոշ արտակարգ իրավիճակների առաջացնող պատճառները:

- Անվանում է կոնկրետ արտակարգ իրավիճակով պայմանավորված հնարավոր հետևանքները:
- Խմբավորում է արտակարգ իրավիճակները, ըստ նրանց առաջացման պատճառների ու հետևանքների:

Անվտ. VIII.4. Աշակերտը կարող է անվտանգ իրավիճակներում գործելիս ի հայտ բերել անվտանգ վարքագծի իր գիտելիքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկարագրում է կոնկրետ արտակարգ իրավիճակի հնարավոր հետևանքները նախապես կանխելու պարտադիր նախազգուշական միջոցառումները:
- Նկարագրում է կոնկրետ արտակարգ իրավիճակն առաջացնող հետևանքները նվազեցնելու նախազգուշական միջոցառումները:

Ծրագրի բովանդակությունը

Պարտադիր բովանդակության հարցերի ցանկ

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանին հատկացված բովանդակության 60 %-ը):

Արտակարգ իրավիճակները և անվտանգությունը: Արտակարգ իրավիճակների էությունը, դրանք առաջացնող պատճառները, դասակարգումը և դրանց հետ կապված հիմնական հասկացություններն ու չափումները: Արտակարգ իրավիճակները նախապես կանխելու և հնարավոր հետևանքները նվազեցնելու միջոցառումները: Արտակարգ իրավիճակներում գործելու անվտանգ վարքագծի կանոնները:

Բնական և տեխնոլոգիական բնույթի արտակարգ իրավիճակներ, որոնք բնորոշ են Վրաստանին. արտակարգ իրավիճակների բնութագրումը: Դրանց դասակարգումը և հասցրած վնասների գործոնները: Արտակարգ իրավիճակներ, որոնք կապված են բնապահպանական հավասարակշռությունը խախտվելու հետ:

Տեղագրություն և նավագնացություն. տեղագրական քարտեզների նշանակությունը, դասակարգումը ըստ նշանակության և մասշտաբների: Հեռավորության չափումը քարտեզի վրա: Կոորդինատների միջոցով քարտեզի վրա կետերի նշանակումը և կետերի կոորդինատների սահմանումը: Քարտեզի վրա ճանաչել ռելիեֆը և մանրամասները, չափել բարձրությունները և թեքությունները, որոշել տեսանելիությունները: Տրված անկյուններով և տարածություններով շարժվել ազիմուտով և հաղթահարել խոչընդոտները: Գլոբալ դիրքորոշումային համակարգերի (GPS) հիմունքները, ինքնապաշտպանական միջոցառումների և գործողությունների ուսուցումը:

IX դասարան

Պատմություն (Վրաստանի պատմություն)

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները ըստ ուղղությունների

Ժամանակ և տարածություն	Տնտեսությունը և շրջակա միջավայրը	Պետական կառավարում և քաղաքականություն	Մշակույթ և կրոն
<p>Պատմ. IX.1. Աշակերտը կարող է բնութագրել Վրաստանի պատմա-ազգագրական երկրամասերը և վերլուծել այդ երկրամասերի սահմանների պատմական գործընթացներով պայմանավորված փոփոխականությունը:</p>	<p>Պատմ. IX.2. Աշակերտը կարող է վերլուծել Վրաստանի տնտեսական հարաբերությունների զարգացումը պատմական տարբեր դարաշրջաններում:</p>	<p>Պատմ. IX.3. Աշակերտը կարող է բնութագրել վրացական պետության կառավարման կառուցվածքները:</p> <p>Պատմ. IX.4. Աշակերտը կարող է հետազոտել սոցիալական հարաբերությունների պատմությունը Վրաստանում:</p> <p>Պատմ. IX.5. Աշակերտը կարող է վերլուծել վրացական պետության կազմավորման ու զարգացման վրա արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը:</p>	<p>Պատմ. IX.6. Աշակերտը կարող է դատողություններ անել Վրաստանում գոյություն ունեցող կրոնների և դրանց այստեղ տարածվելու պատմական պատճառների մասին:</p> <p>Պատմ. IX.7. Աշակերտը կարող է դատողություններ անել վրաց մշակույթի տարբեր բնագավառների կազմավորման ու զարգացման մասին:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ժամանակ և տարածություն

Պատմ. IX.1. Աշակերտը կարող է բնութագրել Վրաստանի պատմա-ազգագրական երկրամասերը և վերլուծել այդ երկրամասերի սահմանների պատմական գործընթացներով պայմանավորված փոփոխականությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում վրացական պետության և պատմա-աշխարհագրական երկրամասերի փոփոխականության մասին՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Դատողություններ է անում փոփոխություններն առաջացնող պատճառների մասին:
- Ըստ պատմական տարբեր դարաշրջանների, ուրվագծային քարտեզի վրա, նշում է վրացական թագավորական իշխանությունները և պատմա-աշխարհագրական օբյեկտները:

Ուղղություն. Տնտեսությունը և շրջակա միջավայրը

Պատմ. IX.2. Աշակերտը կարող է վերլուծել Վրաստանի տնտեսական հարաբերությունների զարգացումը պատմական տարբեր դարաշրջաններում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Քարտեզի վրա նշում է Վրաստանի տարածքով անցնող տարբեր դարաշրջանների առևտրական ճանապարհները:
- Քարտեզի միջոցով խմբավորում և դատողություններ է անում այն ներքին և արտաքին գործոնների մասին, որոնք տարբեր դարաշրջաններում նպաստել կամ խոչընդոտել են ներքին և արտաքին առևտրի զարգացմանը:
- Դատողություններ է անում վրացական փողի մասին:
- Դատողություններ է անում այն մասին, թե տրանսպորտի զարգացման հետ, ինչպես են փոխվում առևտրական փոխհարաբերությունները Վրաստանում:
- Քարտեզի վրա նշում է Վրաստանի տարածքում գոյություն ունեցող հանածոների արդյունահանման տեղերը և զրուցում արհեստագործության կամ տնտեսության այն բնագավառների մասին, որոնց զարգացմանը նպաստել է դրանց հայտնաբերումը:
- Գրավոր կարող է ձևակերպել իր հայացքներն այն մասին, թե Վրաստանի տնտեսության մեջ դրական ու բացասական ինչ փոփոխություններ է առաջացրել օտար երկրի կառավարումը:
- Դատողություններ է անում այն մասին, թե գյուղատնտեսական տեխնիկայի զարգացման հետ մեկտեղ, ինչպես էր փոխվում գյուղատնտեսությունը Վրաստանում, համեմատում է Վրաստանի տարբեր երկրամասերի գյուղի տնտեսության ավանդական բնագավառների զարգացումը տարբեր դարաշրջաններում:
- Դատողություններ է անում տարբեր դարաշրջաններում՝ այս կամ այն տարածաշրջանի ու տարածքի հետ Վրաստանի տնտեսական փոխհարաբերությունների մասին:

Ուղղություն. Պետական կառավարում և քաղաքականություն

Պատմ. IX.3. Աշակերտը կարող է բնութագրել վրացական պետության կառավարման կառուցվածքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում տարբեր դարաշրջաններում վրացական թագավորությունների պետական կազմավորման մասին: Բացահայտում է դրանց միջև նմանություններն ու տարբերությունները:

- Բնութագրում և համեմատում է տարբեր դարաշրջաններում Վրաստանում պետական կառավարման կառուցվածքներում իրականացված բարեփոխումները:
- Բնութագրում և համեմատում է Միջնադարյան և Ժամանակակից Վրաստանի պետական կառավարման ձևերը և կառուցվածքները, դատողություններ է անում դրանց գործառույթների մասին:
- Համեմատում է Վրաստանի և այլ երկրների կառավարման կառուցվածքները՝ անցյալում և արդի դարաշրջանում:

Պատմ. IX.4. Աշակերտը կարող է հետազոտել սոցիալական հարաբերությունների պատմությունը Վրաստանում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ժամանակագրորեն խմբավորում է տարբեր ժամանակաշրջանների սոցիալական խավերի ներկայացուցիչներին և դատողություններ է անում նրանց փոխհարաբերությունների մասին: Օր.,

<i>Ժամանակաշրջանը</i>	<i>Սոցիալական խավերը</i>
<i>XI - XIII դարեր</i>	<i>Պալատական ազնվուր-ազնվական-գյուղացի-առևտրական-արհեստավոր</i>
<i>XV- XVIII դարեր</i>	<i>Իշխան-ազնվական-գյուղացի-վաճառական-արհեստավոր</i>

- Դատողություններ է անում Վրաստանում քաղաքաշինության և գաղթի տարբեր տեսակներով պայմանավորված փոփոխությունների մասին: Համեմատում է դրանց պատճառներն ու հետևանքները տարբեր դարաշրջաններում:
- Վերլուծում է բարեփոխումներով և հեղափոխության հետևանքով առաջացած փոփոխությունները սոցիալական կառուցվածքներում:
- Զրուցում է տարբեր ժամանակաշրջաններում Վրաստանում ստեղծված կուսակցությունների մասին:

Պատմ. IX.5. Աշակերտը կարող է վերլուծել վրացական պետության կազմավորման ու զարգացման վրա արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Աղյուսակի միջոցով առանձնացնում է արտաքին և ներքին այն գործոնները, որոնք վրացական պետության կամ պետությունների (կամ իշխանությունների) առաջացման պատճառ են դարձել: *Օրինակ,*

<i>Արտաքին գործոն</i>	<i>Պետություն</i>
<i>1. Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության քայքայումը: 2. ա) 1917 թվականի Ռուսաստանի հեղափոխությունները: բ) I համաշխարհային պատերազմը:</i>	<i>1. Քարթլիի թաքավորությունը: 2. Վրաստանի անկախ հանրապետությունը:</i>

- Դատողություններ է անում արտաքին քաղաքականության կոնկրետ փոփոխությունների մասին, որոնք ներգործել են վրացական պետականության վրա:
- Վերլուծում և համեմատում է արտաքին գործոնների ներգործությունը երկրի ներքին կոնֆլիկտների վրա:
- Աղյուսակում, ժամանակագրական հաջորդականությամբ, խմբավորում է այն պետությունները, որոնք կորցրել են իրենց անկախությունը (կամ, ընդհանրապես, չքացել են) և մատնանշում է այդ երևույթն առաջացնող արտաքին և ներքին գործոնները, օր.,

<i>Դարը</i>	<i>Պետությունը</i>	<i>Արտաքին գործոնը</i>	<i>Ներքին գործոնը</i>
<i>VI դար</i>	<i>Վրացական թագավորությունը</i>	<i>Սասանյան Պարսկաստանի ուժեղացումը</i>	<i>Կենտրոնական պետության թուլացումը</i>
<i>XIX դարի սկիզբը</i>	<i>Քարթլի-Կախեթիի թագավորությունը</i>	<i>Ռուսաստանի, Պարսկաստանի, Թուրքիայի քաղաքականությունը Կովկասում</i>	<i>ա) Երկրի տնտեսական թուլացումը բ) Հակադրությունը արքայաորդիների միջև</i>
<i>XX դարի վերջը</i>	<i>Խորհրդային Միությունը</i>	<i>Ժողովրդավարական երկրների հետ հակադրությունը</i>	<i>ա) Ազգային շարժման ուժեղացումը</i>

- Դատողություններ է անում համաշխարհային պատերազմների առաջացրած փոփոխությունների և Վրաստանի համար այդ փոփոխությունների նշանակության մասին:
- Վերլուծում է Միջազգային կազմակերպությունների ներգործությունը ժամանակակից Վրաստանի պետության զարգացման վրա:

Ուղղություն. Մշակույթ և կրոն

Պատմ. IX.6. Աշակերտը կարող է դատողություններ անել Վրաստանում գոյություն ունեցող կրոնների և դրանց այստեղ տարածվելու պատմական պատճառների մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խմբավորում կամ ստորակարգային ուրվագծով արտահայտում է նախաքրիստոնեական ժամանակաշրջանի վրաց աստվածությունները, մատնանշում է նրանց գործառույթները, գտնում է դրանց նմանությունները Հին Արևելքի, Անտիկ շրջանի և այլ հեթանոսական պանթեոններում:

- Վերլուծում է, թե Վրաստանում ինչ փոփոխություններ է կրել հեթանոսությունը Քարթլիի պետության առաջացումից հետո (*օրինակ, ստորակարգության խիստ պաշտպանում, նոր մշակույթի ներմուծում և այլն*):
- Վերլուծում է, թե վրացական պետության արտաքին կողմնորոշման սահմանման վրա ինչ դեր է խաղացել քրիստոնեության պետական կրոն հայտարարումը:
- Խմբավորում է այն գործոնները, որոնք նպաստել և խոչընդոտել են քրիստոնեության պետական կրոն հայտարարմանը, գտնում է դրա զուգորդությունը քրիստոնեական այլ երկրների պատմության մեջ:
- Ընտրում է վրաց եկեղեցու երկու ներկայացուցչի և համեմատում նրանց կրոնական և մշակութային ոլորտի գործունեությունը:
- Կազմում է Վրաստանում տարբեր դարաշրջաններում գոյություն ունեցած կրոնների և դավանանքների ցանկը և դատողություններ անում դրանց փոխհարաբերությունների մասին, ինչպես միմյանց, այնպես էլ պետության հետ:
- Նկարագրում է վրաց եկեղեցու կառուցվածքը տարբեր դարաշրջաններում և բնութագրում նրա ստորակարգությունը:

Պատմ. IX.7. Աշակերտը կարող է դատողություններ անել վրաց մշակույթի տարբեր բնագավառների կազմավորման ու զարգացման մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Քարտեզի վրա նշում է Վրաստանում և նրա սահմաններից դուրս գոյություն ունեցող եկեղեցական և կրթական օջախները և թվարկում գիտության այն ճյուղերը, որոնք այնտեղ ուսուցանվում են:
- Գրավոր նկարագրում և բնութագրում է իր բնակավայրում (քաղաքում, գյուղում, շրջանում) գտնվող մշակութային ժառանգության հուշարձանը (*օրինակ, թբիլիսցի աշակերտը բնութագրում է Անչխախատիի տաճարը կամ Նարիդալայի ամրոցը, գորեցի աշակերտը բնութագրում է Ուփլիսցիխեն կամ Գորիի ամրոցը, քութայիսցի աշակերտը բնութագրում է Բագրատի տաճարը...*):
- Ըստ գործառույթների, խմբավորում և քարտեզի վրա նշում է վրաց ճարտարապետության, իրեն հայտնի, կոթողները (*օրինակ, աշխարհիկ նշանակության՝ ապարանքներ, բաղնիքներ և այլն, պաշտպանական՝ բերդաքաղաքներ, ամրոցներ և այլն, պաշտամունքային նշանակության՝ տաճարներ, եկեղեցիներ ու վանքեր*):
- Թվարկում է վրաց մշակույթի ամենից զարգացած բնագավառները:
- Դատողություններ է անում վրաց գրականության և կերպարվեստի ամենահայտնի կոթողների նշանակության և ստեղծման պատմության մասին:
- Դատողություններ է անում վրաց գրականության և օտար մշակույթի ամենանշանակալից փոխհարաբերությունների և փոխազդեցությունների մասին: Գրում է շարադրություն, որտեղ բերում է կոնկրետ օրինակ (*օրինակ, փոխհարաբերությունները հունական աշխարհի հետ հելլենական դարաշրջանում, միջնադարյան վրաց մշակույթի վրա քրիստոնեական և արևելյան մշակույթների ազդեցությունը և այլն*):

Ծրագրի բովանդակությունը

IX դասարանի պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանի համար նախատեսված ամբողջ բովանդակության 80%-ը):

1. **Պատմա-աշխարհագրական տեսություն:**
2. **Նախնադարյան մարդը Վրաստանում.**
 - ա) Քարե դար, պղնձե-քարե դար
 - բ) Բրոնզե դար (բրոնզե դարի հնագիտական մշակույթները Վրաստանում):
3. **Վրաց ժողովրդի ծագման հարցը.**
 - ա) Օտար և հին վրացական աղբյուրները:
 - բ) Նրա արտացոլումը ժամանակակից պատմագրության մեջ:
4. **Վրացական հնագույն պետությունները.**
 - ա) Հին Էգրիսին (Կոլխա, Կոլխիդա)
 - բ) Դիառխի
 - գ) Մուշքերը
 - դ) Մասպերները
5. **Էգրիսի (Կոլխիդա) և հունական նորաշենները:**
6. **Փարնավազ թագավորը և նրա դարաշրջանը, ամենամերձավոր ժառանգորդները:**
7. **Վրաստան-Հռոմի հարաբերությունները Անտիկ Աշխարհում.**
 - ա) Պոմպեոսի Քարթլի և Կոլխեթի կատարած արշավանքների պատճառները:
 - բ) Փարսման II, Փարսման III
8. **Քրիստոնեությունը պետական կրոն հաստատելը.**
 - ա) Վրաստանը՝ Աստվածամոր ճակատագիր վիճակված երկիր, Առաքյալները և Վրաստանը, Մուրբ Գիորգիի պաշտամունքը:
 - բ) Նիսիբիի զինադադարը և նրա նշանակությունը, Համագասպի, Մասանյանների (նույն Խոսրովյանների) դինաստիան Քարթլիում:
 - գ) Վրացական և օտար աղբյուրները քրիստոնեացման մասին (Քարթլիի դարձը, Գելաս Կեսարացի):
9. **Վախթանգ Գորգասալը և նրա դարաշրջանը:**
10. **Էգրիսիի (Լազիկայի) թագավորությունը IV-VI դարերում:**
 - ա) Լազիկայի թագավորության առաջացումը, Գուրգա (Ղոբագ) I
 - բ) Խոշոր պատերազմական ժամանակներ: Գուրգա II:

11. Անտիկ շրջանի Վրաստանի մշակույթը և հասարակությունը.

- ա) Գիրք. հունա-արամեական, վրացական արձանագրություններ:
- բ) Անտիկ շրջանի քաղաքները (ըստ հնագիտական տվյալների և գրավոր աղբյուրների):
- գ) Վրացական հեթանոսական Պանթեոնը:
- դ) Կրթությունը:
- ե) Սոցիալական կարգը:

12. Քարթլին և Էգրիսին ազգային կառավարությունից մինչև արաբությունը.

- ա) Ազգային կառավարության առաջացումը (Քարթլիի առաջին ազգային կառավարողները Բիվրիտիանների (Բագրատիոնների) ազգատոհմից):
- բ) Եկեղեցական պառակտումը վրացական և հայկական եկեղեցիների միջև:
- գ) Հերակլ Կայսրի արշավանքները:

13. Արաբությունը Վրաստանում.

- ա) Արաբների առաջին հայտնվելը, «Պաշտպանության հրովարտակը» Քարթլիում, արաբները Արևմտյան Վրաստանում:
- բ) Ստեփանոզ III-ը, Արչիլը և Միրը:
- գ) Մուրվան խուլի արշավանքը Վրաստան, ամիրայի իշխանությունը Թբիլիսիում:

14. Վրացական թագավորություն-իշխանությունները.

Վրաստանի միավորման կրոնական, տնտեսական-քաղաքական և մշակութային հիմունքները (Աբխազիայի թագավորությունը, Կախեթիի փոխերեցական, Հերեթիի թագավորությունը, «Վրացիների թագավորությունը» (որպես Քարթլիի թագավորության վերականգնում), «Վրացիների կյուրոպաղատանոցը» (վրաց Բագրատիոնների երկրի գլուխ կանգնելը), Թբիլիսիի ամիրայությունը):

15. Վաղ ֆեոդալական ժամանակաշրջանի վրացական մշակույթը.

- ա) Վանական կյանքը, ասորի հայրերը, Գրիգոլ Խանձթելին, ճարտարապետությունը:
- բ) Նոր քաղաքների ժամանակաշրջանը:
- գ) Ֆեոդալական փոխհարաբերությունների նորմերը:

16. Վրաստանը XI դարում:

- ա) Պայքար Վրաստանի միավորման համար. Դավիթ Կյուրոպաղատ, Իոանե Մարուշիսձե, Բագրատ III կյուրոպաղատ` Վրաստանի միավորման սկիզբը:
- բ) Վրաստանի և Բյուզանդիայի (Գրիգոլ Բակուրիանու որդի, Մարիամ-Մարթա, Գիորգի Մթածմինդելի) փոխհարաբերությունները XI դարում:
- գ) Վրաստանի և սելջուկների փոխհարաբերությունները XI դարում:

17. Դավիթ Շինարար.

- ա) Դավիթ Շինարար:
- բ) Դավիթ Շինարարի պայքարը թուրք-սելջուկների դեմ (Վրաստանի միավորման վերջը):
- գ) Դավիթի ժառանգորդները:

18. Թամարը և նրա ժամանակաշրջանը.

- ա) Ներքին քաղաքական գործընթացները:

- բ) Արտաքին քաղաքականությունը:
- գ) Լաշա-Գիորգի:

19. Վրացական մշակույթը և հասարակությունը XI-XIII դարերում.

- ա) Կառավարում, թագավորի օժան կարգը:
- բ) Քաղաքները:
- գ) Կրթության օջախները երկրի ներսում և դրսում (պատմական, ազգային և հոգևոր գրականությունը):
- դ) Կերպարվեստ, ճարտարապետությունը, երաժշտությունը, սոցիալական խմբերի իրավական վիճակը, տնտեսությունը, վրացական բանակի կազմավորումը, դրոշմերը, մարտական կարգը):

20. Մոնղոլները Վրաստանում.

- ա) Ռուսոլդանի թագավորությունից մինչև երկթագավորություն:
- բ) Մոնղոլների կողմից Վրաստանի մարդահամարի անցկացումը և երկրի միասնության քայքայումը:
- գ) Դեմետրե II, վրացիները մոնղոլական արշավանքներում:
- դ) Պայքար մոնղոլների իշխանության դեմ:

21. Գիորգի Բրձղինվալեն և Վրաստանի միասնության վերականգնումը:

- ա) Ներքին քաղաքականությունը:
- բ) Փոխհարաբերությունները մոնղոլների հետ:
- գ) Փոխհարաբերությունները Եգիպտոսի սուլթանության հետ, փոխհարաբերությունները Հռոմի Պապի հետ, վրացիները Սուրբ հողում:

22. Վրաստանը և Լենկ Թեմուրը:

- ա) Բագրատ V, Գիորգի VII
- բ) Լենկ Թեմուրի արշավանքները (դրանց պատճառները և հետևանքները), պատմաբանների տեղեկությունները Լենկ Թեմուրի Վրաստան կատարած արշավանքների մասին:

23. Վրաստանի բաժանումը թագավորություն-իշխանությունների.

- ա) Ալեքսանդրե I, Ֆերարա-Ֆլորենցիայի եկեղեցական ժողովը:
- բ) Գիորգի VIII՝ բաժանման արտաքին և ներքին պատճառները, վրացիները հակաթուրքական խմբակցության մեջ, 1490 թվականի (արքունական) Խորհուրդը:
- գ) Իշխանական համակարգի ձևավորումը, վրացական մշակույթը և հասարակական կյանքը XIV-XV դ.դ.:

24. Վրացական թագավորություն-իշխանությունները XVI դարի առաջին կեսում.

Լուարսաբ I, Բագրատ III, Ամասիայի զինադադարը և նրա արձագանքները Վրաստանում:

25. Վրացական թագավորություն-իշխանությունները XVI դարի երկրորդ կեսում:

- ա) Միմոն I-ի պայքարը ղզլբաշների և օսմանների դեմ, Իմերեթիի թագավորության միավորման փորձը: բ) Սամցխեն XVI դարում, «Գյուրջիստանի վիլայեթի» մեծ դավթարը: գ) Կախեթիի փոխհարաբերությունները Ռուսաստանի հետ:

26. Վրաստանը XVII դարի 30-70-ական թ.թ.

- ա) Վրաց ժողովրդի պայքարը Շահ-Աբասի դեմ:
- բ) Արևմտյան Վրաստանը XVII դարում:
- գ) Արևելյան Վրաստանը մահմեդական իշխանության դարաշրջանում (Ռոստոմ խան, Շահնավազ, Բախտրիոնիի ապստամբությունը, Հերակլ I, Գիորգի XI)

27. Վրաց մշակույթը XVI-XVII դարերում:

28. Վախտանգ VI:

Մշակութային-կրթական գործունեությունը, դեսպանությունը Եվրոպայում, Վախտանգ VI և Պետրոս I:

29. Իրավունքը և վարվելաձևը Միջնադարյան Վրաստանում:

«Ձեզլիսդերա», Թագավորական արքունիքի գործարքը, Բեքա-Աղբուղայի «Իրավունքը», Վախտանգ VI –ի «Իրավունքը», «Դաստուրլամալին»:

30. Վրաց ժողովրդի պայքարը օտար նվաճողների դեմ XVIII դարի առաջին կեսում՝ «օսմանությունը» և «ղզլբաշությունը»:

31. Առաջնության համար պայքարը Հարավային Կովկասում:

Քարթլիի և Կախեթիի քրիստոնյա թագավորները՝ Թեյմուրազ և Հերակլ:

32. Հերակլ II - Քարթլ-Կախեթիի թագավորը:

Հերակլ II-ի բարեփոխումները, Հերակլ II-ը և ռուս-թուրքական պատերազմը, եվրոպացիների տեղեկությունները Վրաստանի մասին, տեղեկություններ Հերակլ II-ի մասին եվրոպական գրականության մեջ, Գեորգիևսկի տրակտատը:

33. Սոլոմոն I

34. Գեորգիևսկի տրակտատից մինչև անեքսիա.

- ա) Գեորգիևսկի տրակտատը:
- բ) Սոլոմոն I-ի մահը և Վրաստանի միացման ապարդյուն փորձը 1784 թվականին:
- գ) Աղա-Մահմեդ խանի ներխուժումը, Գիորգի XII-ի նոտան (երկրորդ տրակտատը):
- դ) «Իվերիացի թագավորների և կառավարիչների տրակտատը», Սոլոմոն II
- ե) 1801 թվականի Հրովարտակը:

35. Ազգային-ազատագրական շարժումը 1802-1832 թ.թ.

Ռուսական կառավարման հաստատումը, Իմերեթիի նվաճումը, ապստամբությունները Ռուսաստանի դեմ XIX դարի առաջին եռամսյակում, անկախության չեղյալ հայտարարվելը, ապստամբություններ, 1832 թ. դավադրությունը:

36. Վրաստանը ռուս-թուրքական-ռուս-իրանական պատերազմներում և դրա հետևանքները.

Ռուսաստանի կայսրության ժողովրդագրական, սոցիալական և տնտեսական նվաճման հետևանքները Վրաստանում:

37. Փոփոխություններ Ռուսաստանի կայսրության գաղութատիրական կառավարման համակարգում. Միխեիլ Վորոնցով, գլխավոր կառավարումից մինչև թագավորի փոխարքայություն:
38. Թերեքի ջուրը խմածները:
39. Ճորտատիրության չեղյալ հայտարարելը, XIX դ. 60-70-ական թվականների բարեփոխումները:
40. Իշխանությունների չեղյալ հայտարարելը:
41. Հեղափոխական շարժումը Ռուսաստանում և Վրաստանում.
ա) Քաղաքական կուսակցություններ, հեղափոխությունները Ռուսաստանում և Վրաստանը:
բ) Առաջին համաշխարհային պատերազմը և ազգային հարցը:
գ) Վրաստանի անկախության հայտարարումը:
42. Վրացական մշակույթը XIX դարում և XX դարի սկզբներին:
43. Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությունը.
ա) Ներքին քաղաքականությունը և առաջին Սահմանադրությունը:
բ) Պայքար անջատողականության դեմ:
գ) Արտաքին քաղաքականությունը, Վրաստանը և Ազգային լիգան, փոխհարաբերությունները Ռուսաստանի հետ:
44. Վրաց ժողովրդի պայքարը Խորհրդային Ռուսաստանի դեմ 1921-24 թվականներին: Խորհրդային իշխանության առաջին տարիներին:
45. Վրաստանը Խորհրդային կայսրության համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցում:
46. Երկրորդ համաշխարհային պատերազմը և Վրաստանը:
47. Վրաստանը ԽՍՀՄ-ում XX դարի երկրորդ կեսում.
1956 թ. մարտի 9, 1978 թվականի ելույթները Վրաստանում:
48. Ազգային շարժման վերածնունդը:
49. Խորհրդային Միության փլուզումը:
50. Անկախ Վրաստան.
Անկախության հայտարարումը, 1991-92 թվականի պետական հեղաշրջումը, պայքար անջատողականության դեմ, «Վարդերի հեղափոխությունը»:
51. XX դարի վրացական մշակույթը:

52. Վրաստանի ինտեգրումը եվրոպական կառուցվածքներում:

Անհրաժեշտ դիտողականություն. թեմատիկ պատմական քարտեզներ:

IX դասարան

Աշխարհագրություն (Վրաստանի աշխարհագրությունը)

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Ժամանակ և տարածություն	Շրջակա միջավայրը և տնտեսությունը	Շրջակա միջավայրը և սոցիալական համակարգերը
------------------------	----------------------------------	---

<p>Աշխ. IX.1. Աշակերտը կարող է քարտեզի և այլ դիտանյութերի (լուսանկարների, գրաֆիկների, աղյուսակների, ուրվագծերի և այլն) օժանդակությամբ բնութագրել տեղը, իրադարձությունը և գործընթացը, կազմել թեմատիկ քարտեզներ:</p> <p>Աշխ. IX.2. Աշակերտը կարող է ուսումնասիրել Վրաստանի դիրքը և որոշել երկրի համար նրա նշանակությունը:</p>	<p>Աշխ. IX.3. Աշակերտը կարող է բնութագրել և վերլուծել Վրաստանի բնական պայմանները:</p> <p>Աշխ. IX.4. Աշակերտը կարող է կապել Վրաստանի հիմնական բնական և մարդաբանական լանդշաֆտները և դրանց տնտեսական կիրառումը:</p> <p>Աշխ. IX.5. Աշակերտը կարող է վերլուծել երկրաբնապահպանական հիմնախնդիրների առաջացման բնական և մարդաբանական աղբյուրները Վրաստանում:</p> <p>Աշխ. IX.6. Աշակերտը կարող է վերլուծել տնտեսության ռազմավարական բնագավառները և դրանց զարգացման հեռանկարները Վրաստանում:</p> <p>Աշխ. IX.7. Աշակերտը կարող է ըստ սոցիալ-տնտեսական պարամետրերի, սահմանել Վրաստանի տեղն աշխարհում:</p>	<p>Աշխ. IX.8. Աշակերտը կարող է բնակչության ժողովրդագրական ցուցանիշները և գործուն բնութագրիչները կապել երկրի տնտեսական ակտիվության հետ:</p> <p>Աշխ. IX.9. Աշակերտը կարող է սահմանել Վրաստանի բնակչության գաղթը և քաղաքաշինության գործընթացները և անել ապագայի հետ կապված ենթադրություններ:</p> <p>Աշխ. IX.10. Աշակերտը կարող է աշխարհագրական առանձնահատկությունների ուղղությամբ վերլուծել վրացական ավանդույթները:</p>
---	---	---

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և նրանց ստուգիչները:

Ուղղություն. Ժամանակ և տարածություն

Աշխ. IX.1. Աշակերտը կարող է քարտեզի և այլ դիտանյութերի (լուսանկարների, գրաֆիկների, աղյուսակների, ուրվագծերի և այլն) օժանդակությամբ բնութագրել տեղը, իրադարձությունը և գործընթացը, կազմել թեմատիկ քարտեզներ:

- Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.
- Վերլուծում է քարտեզների, ուրվագծերի, գրաֆիկների, աղյուսակների և ուրվապատկերների միջոցով ներկայացված աշխարհագրական տեղեկատվությունը:
 - Ըստ լուսանկարի վերլուծում է Վրաստանի բնապատկերները:
 - Կոորդինատային ցանցի կիրառումով սահմանում է Վրաստանի նշանավոր աշխարհագրական օբյեկտները և վարչական կենտրոնների տեղը:
 - Հաշվի առնելով հետազոտման նպատակը՝ գտնում և ըստ անհրաժեշտության կիրառում է համապատասխան թեմատիկ պլանները:
 - Համեմատելով միևնույն տեղը թեմատիկ տարբեր քարտեզներում անցկացնում է համակողմանի վերլուծություն *(օրինակ, ֆիզ. աշխարհագրական, բնակչության, գյուղատնտեսության մասնագիտացման քարտեզները):*

- Հայթայթված տեղեկատվության հիման վրա, կազմում է Վրաստանի թեմատիկ քարտեզները (երկրամասեր, պատմա-աշխարհագրական գավառներ, բնակչության խտությունը, հիմնական կրոնների տարածումը և այլն):
- Վիճակագրական տեղեկատվության հիման վրա, կազմում է տարբեր բարդության գծագրեր (գրաֆիկ, ուրվագիծ և այլն):
- Խմբային աշխատանք կատարելիս՝ յուրաքանչյուր խումբ, արշավն անցկացնելու համար, ընտրում է պատմա-աշխարհագրական տարբեր գավառներ և դասարանի առջև ներկայացնում նրա իրականացման պարզ պլան (*նպատակը, երթուղին, ժամկետը, տեղաշարժման միջոցները, ընտրված երթուղու առավելությունը մյուսների համեմատ, իր հետ տանելու իրերի ցուցակը և այլն*): Կազմում է արշավի ուրվագծային պլանը:

Աշխ. IX.2. Աշակերտը կարող է ուսումնասիրել Վրաստանի դիրքը և որոշել երկրի համար նրա նշանակությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում սահմաններն անցկացնելու առանձնահատկությունների մասին՝ միջազգային, ազգային և տեղական մակարդակով:
- Դատողություններ է անում Վրաստանի տարածքի ձևավորման մասին: Ուրվագծային քարտեզների վրա նշում է տարբեր դարաշրջանների սահմանները:
- Բացատրում է ֆիզիկա-աշխարհագրական, տնտեսական-աշխարհագրական և աշխարհաքաղաքական դիրքը սահմանող գործոնները տեղային և գլոբալ մակարդակով: Զուգահեռներ է անցկացնում աշխարհի երկրների հետ:
- Գնահատում է Վրաստանի դիրքը, բնական պայմանները և ռազմավարական պաշարները (հանքային պաշարներ): Ենթադրություններ է անում երկրի զարգացման հեռանկարների մասին:
- Հայթայթում է Եվրոպա-Ասիայի սահմանի անցկացման տարբեր տարբերակներ՝ կապված Վրաստանի հետ: Հիմնավորում է իր ընտրած տարբերակի ճշտությունը և այն տեղափոխում ուրվագծային քարտեզի վրա:

Ուղղություն. Շրջակա միջավայրը և տնտեսությունը

Աշխ. IX.3. Աշակերտը կարող է բնութագրել և վերլուծել Վրաստանի բնական պայմանները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերհանում է պատճառա-հետևանքային կապը ֆիզիկա-աշխարհագրական պայմանների միջև և դատողություններ է անում դրանց տարածման մասին (*օրինակ, Վրաստանի ռելիեֆի ձևերը և կլիմայի յուրահատկությունները կապում է ջրագրական ցանցի ձևավորման-տարածման հետ*): Ըստ այդ ցուցանիշների, համեմատում է Արևմտյան և Արևելյան Վրաստանը:
- Քարտեզի և այլ տեղեկատվության հիման վրա բնութագրում է աշխարհագրական նշանավոր օբյեկտները և երևույթները: Դրանցից առանձնացնում է ռեկորդային ցուցանիշներ ունեցողը (նստվածքայնությունը, հողմայնությունը, սողվածք և այլն) և լրացնում է համապատասխան ուրվագծային քարտեզը:

- Քարտեզներ և բնագրային նյութ կիրառելով՝ նկարագրում է Վրաստանում տարածված կարևոր պաշարները (հանքային և վառելիքային պաշարներ և այլն) և կապում է բնակչության տնտեսական գործունեության հետ (*օրինակ, գոնայությունը և գյուղատնտեսության մասնագիտացումը*): Ըստ նշված բնութագրիչի, խմբավորում է Վրաստանի տարածաշրջանները:
- Հավաքում է տեղեկատվություն (դասագիրք, լրատվամիջոցներ և այլն), անում դատողություններ Վրաստանի բնական աղետների (երկրաշարժ, սողանք, լեռնահեղեղ և այլն), շրջակա միջավայրի պահպանման հիմնախնդիրների և դրանք լուծելու ուղիների մասին:
- Հավաքում է տեղեկատվություն (ըստ Վրաստանի քարտեզագրքի և այլ դիտողականության) և ըստ աչքի ընկնող նշանների (դիրքի, ռելիեֆի, կլիմայի, ջրագրական ցանցի և այլն) համեմատում երկու տարբեր տարածաշրջանները: Նմանություններն ու տարբերությունները պատկերում է իր համար ընդունելի ձևով:
- Համեմատում և խմբավորում է Վրաստանի էներգետիկական պաշարները (օրինակ, ավանդական և այլընտրանքային պաշարները), ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի:
- Ծանոթանում է շրջակա միջավայրի պահպանման կայուն զարգացման հիմնախնդիրներին, առանձնացնում է դրանցից Վրաստանի համար հրատապը և դատողություններ է անում դրանք առաջացնող պատճառների և հետևանքների մասին:

Աշխ. IX.4. Աշակերտը կարող է կապել Վրաստանի հիմնական բնական և մարդաբանական լանդշաֆտները և դրանց տնտեսական կիրառումը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ըստ նրանց աչքի ընկնող նշանների, դատողություններ է անում Վրաստանի բնությանը բնորոշ լանդշաֆտների (ծովափնյա, անտառային, լեռնային և հարթավայրային լանդշաֆտներ) առանձնահատկությունների մասին:
- Հավաքում է տեղեկատվություն (ըստ Վրաստանի քարտեզագրքի և այլ դիտողականությունների) և լանդշաֆտի սահմաններում կապում է գոյություն ունեցող բնական գործոնները բնակչության և տնտեսության հետ: Դատողություններ է անում նրա կայուն զարգացման հեռանկարների մասին:
- Քարտեզը կիրառելով՝ բացատրում է Վրաստանի հողագործական և արդյունաբերական, բնական և մարդաբանական լանդշաֆտների տարածման յուրահատկությունները:
- Նկարագրողումների միջոցով համեմատում է Վրաստանի բնական և մարդաբանական լանդշաֆտները (հողագործական և արդյունաբերական) աշխարհի համանման լանդշաֆտների հետ: Նմանություններն ու տարբերությունները նկարագրում է իր ցանկացած ձևով:

Աշխ. IX.5. Աշակերտը կարող է վերլուծել երկրաբնապահպանական հիմնախնդիրների առաջացման բնական և մարդաբանական աղբյուրները Վրաստանում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է Վրաստանի հողի, ջրի, օդի հիմնական աղտոտված աղբյուրները, խմբավորում է դրանք ըստ նրանց առաջացման, և դատողություններ է անում

աղտոտվածության նվազեցման հնարավոր ուղիների մասին: Հետազոտման արդյունքներն արտահայտում է ուրվագծի (աղյուսակի) տեսքով:

- Նկարագրում է Վրաստանում տարածված որոշ բնական տարերային երևույթների աղետալի բնույթը և ենթադրություն է անում դրանք կանխելու հնարավոր միջոցառումների մասին: Դասարանի առջև ներկայացնում է հետազոտման արդյունքները:
- Թվարկում է Վրաստանում աշխատող բնպահպանական կազմակերպությունները և ծանոթանում դրանց աշխատանքի ռազմավարություններին: Անհրաժեշտության դեպքում կարող է դիմել նրանց:
- Համադասարանցիների հետ կազմում և հնարավորության սահմաններ իրականացնում է շրջակա միջավայրի պահպանման պարզ նախագծեր (նպատակ, խնդիրներ, լուծման ուղիներ, սպասվող արդյունքներ):
- Վերլուծում է Վրաստանում պաշտպանված տարածքների տարբեր ձևերի գոյության նշանակությունը (ծանոթանում է աշխարհում գոյություն ունեցող համանմանություններին) և, կիրառելով քարտեզը, դատողություններ է անում դրանց զարգացման հեռանկարների մասին:
- Տարբեր տեսակի աշխարհագրական գրականության և դիտողականության օգնությամբ դատողություններ է անում Վրաստանում պաշտպանված տարածքների դիրքի, ստեղծման պատճառների մասին և կազմում է համապատասխան ուրվագիծ:

Աշխ. IX.6. Աշակերտը կարող է վերլուծել տնտեսության ռազմավարական բնագավառները և դրանց զարգացման հեռանկարները Վրաստանում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է Վրաստանի տնտեսության ռազմավարական բնագավառների (*օրինակ, զբոսաշրջություն, գյուղատնտեսություն, էներգետիկա և այլն*) զարգացման համար անհրաժեշտ գործոնները, որի հիման վրա խմբավորում է բնակավայրերը, շրջանները և տարածաշրջանները:
- Հաշվի առնելով աշխարհի երկրների փորձը՝ դատողություններ է անում Վրաստանի տնտեսության ռազմավարական բնագավառների (*օրինակ, գյուղական բիզնես և այլն*) զարգացման հեռանկարների մասին:
- Օգտվելով Վախուշտի Բագրատիոնիի «Թագավորական Վրաստանի մարդահամարից»՝ բնութագրում է այն ժամանակվա Վրաստանի գյուղատնտեսության զոնալությունը և համեմատում այն ժամանակակից պատկերի հետ:
- Դատողություններ է անում Վրաստանի հաղորդակցության տարբեր միջոցների նշանակության և զարգացման հեռանկարների մասին: Ուրվագծային քարտեզի վրա նշում է նշանավոր տրանսպորտային հանգույցներն ու մայրուղիները:
- Գտնում է տեղեկատվություն տարբեր տիպի զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ բնական շրջակա միջավայրի և ենթակառուցվածքի մասին: Ընտրում է Վրաստանի շրջաններից մեկը և գրում զբոսաշրջության համապատասխան ձևի զարգացման նախագիծ:
- Վիճակագրական նյութի հիման վրա, հետազոտում է Վրաստանի առևտրական հաշվեկշռի փոխակերպումը XX-XXI դարերի ընթացքում և կապում է երկրի տնտեսական զարգացման հետ:

- Ծանոթ է կայուն զարգացման տնտեսական թեմաների, դրանցից առանձնացնում է Վրաստանի համար հրատապը և դատողություններ է անում դրանք առաջացնող պատճառների և հետևանքների մասին:

Աշխ. IX.7. Աշակերտը կարող է ըստ սոցիալ-տնտեսական պարամետրերի սահմանել Վրաստանի տեղն աշխարհում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատկերագրողումների վերլուծության հիման վրա, մշակում է երկրի զարգացման մակարդակը ցույց տվող չափանիշները (աշխատատեղեր, առևտրական օբյեկտներ, միջին աշխատավարձ, տրանսպորտ, բնակավայր) և հիմնավորում է իր կարծիքները:
- Տարբերում է տարբեր երկրները և Վրաստանը մարդասիրական զարգացման ցուցիչի քարտեզի միջոցով: Դատողություններ է անում այդ դասակարգման առանձնահատկությունների մասին: Կազմում է համապատասխան գծագիր (աղյուսակ):
- Դատողություններ է անում տարբեր բնագավառներում Վրաստանի հետ ռազմավարական նպատակով համագործակցող երկրների և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների հեռանկարների մասին և արդյունքն արտահայտում իր ցանկացած ձևով:

Ուղղություն. Շրջակա միջավայրը և սոցիալական համակարգերը

Աշխ. IX.8. Աշակերտը կարող է բնակչության ժողովրդագրական ցուցանիշները և գործուն բնութագրիչները կապել երկրի տնտեսական ակտիվության հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հիմնվելով վիճակագրական տվյալների վրա՝ դատողություններ է անում Վրաստանի բնակչության դինամիկայի, վերաբնակեցման և խտության մասին: Դրանք կապում է սոցիալ-տնտեսական վիճակի հետ:
- Բնութագրում է բնակչության մարդահամարի ավանդույթները Վրաստանում (Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարը, Ռուսաստանի կայսրության մարդահամարները, ԽՍՀՄ-ի բնակչության համընդհանուր մարդահամարները, անկախ Վրաստանի 2002 թ. համընդհանուր մարդահամարը): Համեմատում է դրանք այլ երկրների նման փորձի հետ և դատողություններ է անում դրանց հուսալիության մասին:
- Վերլուծում է Վրաստանի բնակչության ժողովրդագրական հեռանկարը: Վիճակագրական տվյալների հիման վրա, կազմում է սեռային-տարիքային բուրգեր և համեմատում տարբեր տեսակի պատկերներ ունեցող երկրների համանմանություններին:
- Վիճակագրական տեղեկատվության հիման վրա, համեմատում է Վրաստանի երկու հակադրական տարածաշրջաններում գոյություն ունեցող ժողովրդագրական վիճակը: Դատողություններ է անում ստեղծված իրավիճակն առաջացնող պատճառների և իրավիճակի բարելավման ուղիների մասին:
- Գտնում է տեղեկատվություն և դատողություններ է անում տարբեր երկրներում իրականացվող ժողովրդագրական քաղաքականության մասին: Ենթադրություններ է անում Վրաստանում հնարավոր ժողովրդագրական քաղաքականության անցկացման մասին:

Աշխ. IX.9. Աշակերտը կարող է սահմանել Վրաստանի բնակչության գաղթը և քաղաքաշինության գործընթացները և անել ապագայի հետ կապված ենթադրություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում Վրաստանում գաղթի գործընթացներն առաջացնող պատճառների, հոսքերի, հաճախականության մասին և դրանք կապում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի հետ:
- Դասարանում խմբով աշխատելիս՝ մշակված սոցիոլոգիական հարցաթերթիկի հիման վրա, անցկացնում է հարցում (դասարանում, դպրոցում, բարեկամների շրջանում, հարևանության մեջ): Դատողություններ է անում Վրաստանում գաղթի գործընթացների զարգացման մասին և արդյունքները ներկայացնում դասարանին:
- Տեղեկություններ է գտնում մարտական գործողությունների և տարերային աղետների պատճառով հարկադրաբար արտագաղթած անձանց մասին և դատողություններ անում ստեղծված սոցիալ-տնտեսական բարդությունների մասին, հիմնախնդիրը կարգավորելու համար արտահայտում է իր կարծիքները:
- Դատողություններ է անում քաղաքաշինությանը նպաստող և խոչընդոտող գործոնների և դրանց հետ կապված սոցիալական, տնտեսական և բնապահպանական հիմնախնդիրների մասին: Հիմնախնդիրները խմբավորում է աղյուսակում:
- Հետազոտում է տնտեսական և քաղաքական փոփոխությունների հետևանքով Վրաստանում բնակվելու գործառույթը կորցնելու (ձեռք բերելու) հետևանքով ստեղծված սոցիալական հիմնախնդիրները և արդյունքները պատկերում իր համար ցանկալի ձևով (աղյուսակ, ուրվագիծ և այլն...):
- Ընտրում է Վրաստանի որևէ քաղաք և ստեղծում նրա հեռանկարային զարգացման պարզ մոդելը:
- Վերլուծում է Վրաստանի բնակավայրերի տեսակները, մեծությունը, գործառույթը և համեմատում դրանք աշխարհի տարբեր երկրների հակադրական զուգորդությունների հետ: Արդյունքներն արտահայտում է իր համար ցանկալի ձևով (բանավոր, գրավոր, պատկերի տեսքով):
- Արտահայտում է իր վերաբերմունքը Վրաստանի ներքին և արտաքին գաղթի գործընթացների հետևանքով ստեղծված սոցիալական փոփոխությունների մասին և դատողություններ է անում իրավիճակը բարելավելու հնարավոր ուղիների մասին:

Աշխ. IX.10. Աշակերտը կարող է աշխարհագրական առանձնահատկությունների ուղղությամբ վերլուծել վրացական ավանդույթները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կապում է ժողովրդական ճարտարապետության բազմերանգությունը Վրաստանի բնական պայմանների հետ: Համեմատում է պատմա-աշխարհագրական տարբեր գավառների բնակիչներին և նմանություններն ու տարբերությունները պատկերում իր ցանկացած ձևով (նկար, աղյուսակ և այլն):
- Դատողություններ է անում Վրաստանում տարածված ժողովրդական քանդակագործության բազմերանգությունն առաջացնող աշխարհագրական գործոնների մասին: Համեմատում և աղյուսակում խմբավորում է պատմա-աշխարհագրական տարբեր գավառներում գոյություն ունեցող ժողովրդական քանդակագործության ավանդույթները:

- Դատողություններ է անում Վրաստանի երկրամասերում տարածված ավանդական հագնվածքի, խոհանոցի և սեղանի ինքնատիպության մասին, դրանք կապում է շրջակա միջավայրի յուրահատկությունների հետ, համեմատում իրար հետ և նմանություններն ու տարբերություններն արտահայտում իր ցանկացած ձևով (գրում է շարադրություն, պատրաստում է ցուցադրափեղկ, պատկեր և այլն):
- Դատողություններ է անում Վրաստանի պատմա-աշխարհագրական գավառներում տարածված արարողությունների մասին: Համեմատում է նման բովանդակություն ունեցող արարողությունները և նմանություններն ու տարբերություններն արտահայտում իր ցանկացած ձևով (գրավոր, բանավոր, աղյուսակով):

Ծրագրի բովանդակությունը¹⁵

IX դասարանի պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Ստորև նտրկայացված հարցերը կազմում են այս դասարանի համար հատկացված ամբողջ բովանդակության 60%-ը):

Ընդհանուր մաս

1. Վրաստանի դիրքը (տարբեր մոտեցումներ, այդ թվում՝ քաղաքակիրթ):
2. Տերիտորիայի ձևավորումը:
3. Վրաց աշխարհագրական մտածողության զարգացումը, վրաց աշխարհագրության հիմնախնդիրները, Վրաստանն օտարների աչքերով:
4. Վրաստանի աշխարհագրական դիրքը, տարածքը, սահմանները, պատմա-աշխարհագրական գավառները:
5. Վարչա-տարածքային կարգը:

Բնական պայմանները և բնական պաշարները

6. Վրաստանի բնական պայմանները և բնակչության տնտեսական գործունեությունը:
7. Բնական պաշարներ: Հանքային պաշարներ:
8. Ռելիեֆի տեսակները և հիմնական ֆիզիկա-աշխարհագրական շրջանները:
9. Ռելիեֆի տնտեսական յուրացումը:
10. Ռելիեֆի հետ կապված տարերային երևույթները և դրանց կանխման ուղիները:
11. Սև ծովը: Նրա նշանակությունը, տնտեսական կիրառումը և պահպանումը:
12. Եղանակ, հիմնական կլիմայաստեղծ գործոնները:
13. Եղանակի հիմնական տարրերը, մթնոլորտային շրջանառությունը, եղանակի հիմնական տեսակները:
14. Եղանակի հետ կապված տարերային երևույթները:
15. Մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրները, կանխման ուղիները և պաշտպանությունը:
16. Վրաստանի ներքին ջրերը. գետեր, լճեր, ջրամբարներ, ճահիճներ, սառցադաշտեր:
17. Ջրից առաջացած տարերային աղետները. ջրհեղեղ, հեղեղում, լեռնահեղեղը և դրանք կանխելու միջոցները:
18. Վրաստանի բնահողերը և հողի պաշարները:
19. Բուսական ծածկույթը և կենդանական աշխարհը:
20. Անտառի պաշարները, նրա տնտեսական կիրառումը և պահպանումը:
21. Վրաստանի բնության պահպանումը և բնապահպանական կազմակերպությունները:
22. Պահպանված տարածքները, առանձնացման սկզբունքները և կարգերը:
23. Բնապահպանական հիմնախնդիրներ:

Բնակչությունը¹⁶ և տնտեսությունը¹⁷

24. Ժողովրդագրական անցյալը և արդիականությունը:
25. Բնակչության դինամիկան:

¹⁵ Պարտադիր չէ յուրաքանչյուր ենթագլխին (թեմային) առանձին դաս հատկացնել: Հնարավոր է, որ ուսուցիչը թեմաները միացնի, օր.՝ գյուղատնտեսությունը կապի հողի և կլիմայի հետ:

¹⁶ Հիմնվելով բնակչության մարդահամարների և ընթացիկ մարդահամարի նյութերի վրա:

¹⁷ Ժամանակակից տվյալների վրա հիմնվելով:

26. Բնակչության բնական շարժումը:
27. Բնակչության մեխանիկական շարժումը:
28. Բնակչության սեռային-տարիքային և սոցիալական կառուցվածքները:
29. Ժողովրդագրական քաղաքականությունը և նրա անցկացման ուղիները:
30. Բնակչության ազգային և կրոնական կազմը:
31. Բնակչության վերաբնակությունը և խտությունը:
32. Քաղաքաշինությունը և բնակավայրերի տեսակները:
33. Մարդասիրական զարգացման ցուցանիշը:
34. Վրաստանի տնտեսությունն այսօր:
35. Արդյունաբերության հիմնական բնագավառները:
36. Գյուղատնտեսության առաջատար բնագավառները:
37. Տրանսպորտը:
38. Ծառայության ոլորտը:
39. Զբոսաշրջության-ռեկրեացիոն պաշարները և տնտեսությունը:
40. Վրաստանի բնակչության ավանդույթները:
41. Համագործակցող երկրները և միջազգային կազմակերպությունները:

Տարածաշրջանները¹⁸

42. Թրիլիսի
43. Կախեթի
44. Ստորին Քարթլի
45. Ներքին Քարթլի
46. Մցխեթա-Մթիանեթի
47. Սամցխե -Ջավախեթի
48. Իմերեթի
49. Ռաճա-Լեչխումի, Ստորին Սվանեթի
50. Սամեգրեղո- Վերին Սվանեթի
51. Գուրիա
52. Աջարիա
53. Աբխազիա

¹⁸ Շեղատառով տրված բովանդակությունը պարտադիր չէ:

IX դասարան

Քաղաքացիական կրթություն

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Անհատական զարգացում	Կայուն զարգացում	Ինքնակառավարում և կառավարում
<p>Քաղ. IX.1. Աշակերտը կարող է վերլուծել իր անհատական հատկանիշները, ձգտումները և հնարավորությունները:</p> <p>Քաղ. IX.2. Աշակերտը կարող է սահմանել իր տեղն ու դերը հասարակության մեջ:</p> <p>Քաղ. IX.3. Աշակերտը կարող է վերլուծել արհեստավարժության դերը անհատի զարգացման համար:</p> <p>Քաղ. IX.4. Աշակերտը կարող է կազմել իր ապագա գործունեության պլանը:</p>	<p>Քաղ. IX.5. Աշակերտը կարող է, անհատի ու հասարակության նշանակությունը գիտակցելով, հետևել առողջ ապրելակերպին:</p> <p>Քաղ. IX 6. Աշակերտը կարող է համագործակցել՝ հասարակական անվտանգության հիմնական հիմնախնդիրները լուծելիս:</p> <p>Քաղ. IX.7. Աշակերտը կարող է իրար հետ կապել Վրաստանի բազմերանգության հիմնական բնութագրիչները:</p> <p>Քաղ. IX.8. Աշակերտը կարող է հետազոտել հասարակության մեջ խաղաղ համագոյակցության հիմունքները և պայմանները:</p>	<p>Քաղ. IX.9. Աշակերտը կարող է սահմանել Վրաստանի քաղաքացու սահմանադրական իրավունքները և ազատությունները, պարտականությունները և պատասխանատվությունները:</p> <p>Քաղ. IX.10. Աշակերտը կարող է սահմանել Վրաստանի պետական կառավարման համակարգը:</p> <p>Քաղ. IX.11. Աշակերտը կարող է արդյունավետորեն մասնակցել դպրոցի ինքնակառավարման ժողովրդավարական գործընթացին:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Անհատական զարգացում

Քաղ. IX.1. Աշակերտը կարող է վերլուծել իր անհատական հատկանիշները, ձգտումները և հնարավորությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է, թե ինչ է անհրաժեշտ մարդուն գոյությունը պահպանելու համար և դրանք համապատասխանեցնում է իր ցանկություններին: Թվարկում է մարդու պահանջները և ցանկությունները բավարարելու ուղիները:
- Թվարկում է մարդու զգացմունքները, հույզերը, հատկանիշները և դրական-բացասական տեսանկյունից խմբավորում դրանք:
- Տարբերում է մարդու բնածին և ձեռքբերովի հատկությունները, որոնք անհրաժեշտ են հասարակության մեջ լիարժեք ապրելու համար:
- Ընտրում է իր համար ընդունելի անհատական հատկանիշները և արտահայտում ինքնազարգացման ուղիները:
- Կառավարում է սեփական ուժեղ զգացմունքները (*օրինակ՝ հիացմունքը, ստրեսը, ագրեսիան և այլն*):
- Պարզաբանում է, թե ինչ է մարդկային արժանապատվությունը, կյանքից ու գեղարվեստական գրականությունից բերում է օրինակներ արժանապատվությունը ոտնահարելու ու այն հարգելու մասին:
- Բանավեճի ժամանակ հարգում է մարդու արժանապատվությունը (*օրինակ, հակառակ կարծիքը լուր լսում է մինչև վերջ, առանց հույզվելու, առանց անձնական հատկանիշների մասին գրուցելու, պաշտպանում է սեփական դիրքորոշումը կամ հակադրվում է ուրիշի կարծիքին և այլն*):
- Համադասարանցիների հետ խաղում է այնպիսի իրավիճակ, երբ ոտնահարվում է մարդու արժանապատվությունը կամ ազատությունը: Արտահայտում և հիմնավորում է իր կարծիքը (*օրինակ՝ երբ է զգում, որ ուրիշներից ոչ լավն է և ոչ էլ վատը, երբ է զգում, որ արժանապատվորեն է վարվում*):
- Դատողություններ է անում իմպուլսիվ վարմունքի («ուզում եմ») և կամային վարմունքի («անհրաժեշտ է») միջև եղած տարբերությունների մասին, բերում է կոնկրետ օրինակներ և դրանց միջև կատարում հիմնավորված ընտրություն: Մեկնաբանում է այն դեպքերը, երբ անհատը որևէ վարմունքի համար իր վրա է վերցնում պատասխանատվությունը և, երբ չի վարվում այդպես, փաստարկներով պաշտպանում է դրանցից որևէ մեկը:
- Գնահատում է արժեքների վրա հիմնված անհատական ընտրության նշանակությունը հասարակության զարգացման համար:

Քաղ. IX.2. Աշակերտը կարող է սահմանել իր տեղն ու դերը հասարակության մեջ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բարոյականությունը, կարգապահությունը և քաղաքավարությունը կապում է մարդու և հասարակության բարեկեցության հետ, վերլուծում դրանց դերն ու նշանակությունը հասարակության զարգացման / գործունակության համար:

- Վերլուծում է հասարակության մեջ վարվելաձևի շարժառիթը (*օրինակ, պատժվելու վախը, պարզևը (շահը), ուրիշներին դուրգալը (հարմարվողականությունը), օրինապահությունը, խղճի թելադրանքը և այլն*):
- Տարբերակում է բարոյական ընտրությունը և վարմունքը հասարակության ճնշմամբ կատարված ընտրությունից և վարմունքից:
- Դատողություններ է անում ընտանիքի, որպես հասարակության հիմնական արժեքի և մարդու հիմնական շրջակա միջավայրի մասին: Ընդգծում է ընտանիքի կառուցվածքը և նրա անդամների գործառույթները: Վերլուծում է պատասխանատվությունների բաշխման հարցը ընտանիքում և դատողություններ է անում իր պատասխանատվության մասին:
- Նկարագրում է իր դերը, ֆունկցիաները, իրավունքները, պարտականությունները և պարտավորությունները, որպես դասարանական և դպրոցի համայնքի անդամ:
- Համապատասխան իր հնարավորությունների ու շահերի, ակտիվորեն և մտածված կերպով մասնակցում է դպրոցի և դասարանի կյանքին (*օրինակ, դպրոցական մրցույթներին և գիտաժողովներին, դասարանի կամ դպրոցի խնամքին ու տնօրինությանը, բարեկարգման աշխատանքին, աշակերտների ինքնակառավարման հետ կառուցողական համագործակցությանը, դպրոցական թիմերում կամ նրանց աջակցողների ակումբներին և այլն*):
- Պահպանում է դասարանում, դպրոցում և հասարակության մեջ գոյություն ունեցող ընդհանուր կանոնները և հիմնավորում հասարակական նորմերի հարգման կարևորությունը:
- Դատողություններ է անում մարդու և հասարակության փոխկապակցվածության մասին, տարբերում է անհատի և հանրության շահերը:

Քաղ. IX.3. Աշակերտը կարող է վերլուծել արհեստավարժության դերը անհատի զարգացման համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է փոքրիկ խմբերում մարդու պահանջմունքների աճի մասին տարբեր տեսությունների քննարկմանը: Դասարանին ծանոթացնում է խմբի անվանած և, ըստ նշանակության դասավորված, մարդու պահանջմունքների ցանկը: Հիմնավորում է խմբի հետ համաձայնեցված դիրքորոշումը:
- Թվարկում է, իր կարծիքով, մի քանի հաջողակ հոչակավոր մարդու, քննարկում նրանց հաջողության անհատական պատճառները և դրանցից առանձնացնում մասնագիտականը:
- Թվարկում է մարդու արհեստավարժության բնութագրիչները և իրար հետ կապում մարդու բնածին և ձեռքբերովի հատկանիշները:
- Արհեստավարժության բնութագրիչները խմբավորում է ըստ անհատական հատկանիշների և արտաքին գործոնների:
- Խմբավորում է մարդու արհեստավարժության անհատական բնութագրիչները՝ ըստ գիտելիքների, ունակությունների և աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի:
- Հիմնավորում է պատասխանատվության զգացման կապն ու դերը արհեստավարժության համար:

- Դատողություն է անում, թե ինչ ազդեցություն է ունենում մարդու արհեստավարժությունը հասարակության մեջ նրա վիճակի ու ճանաչման վրա:

Քաղ. IX.4. Աշակերտը կարող է կազմել իր ապագա գործունեության պլանը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է իր նպատակները (*օրինակ, լինեմ կրթված, հարուստ, առողջ, գեղեցիկ, առանց գործի, ապրեմ անվտանգ և այլն*), որոնք կապված են կարիերայի հետ: Դատողություններ է անում դրանց իրականության և ձեռքբերման ուղիների մասին: Նպատակներն իրականացնելու ուղիները կապում է համապատասխան պարտականությունների հետ:
- Սեփական հնարավորությունների և նպատակների վրա հիմնվելով՝ անվանում է աշխատանքային այն բնագավառը, որի հետ ենթադրաբար կապում է իր ապագա գործունեությունը:
- Դասարանում հայտնաբերում է այնպիսի համախոհների, որոնց հետ հավաքում է տեղեկություն ապագա մասնագիտության մասին և, այն քննարկելուց հետո, հայտ է ներկայացնում «Իմ ապագա մասնագիտությունը» թեմայով փոքրիկ նախագծի համար:
- Ուսուցչի աջակցությամբ, համադասարանցիների խմբի հետ, սահմանում է այն ուղիները, որոնք պետք է օգնեն նրան մասնագիտությունն ընտրելիս, որը նկատի ունի տեղեկատվության որոնման և վերլուծության աստիճանները, ժամկետներ, կիրառվելիք մեթոդների (*օրինակ, հարցաքննում, հարցազրույց, ծանոթություն տեղում և այլն*) սահմանումը:
- Ուսուցչի և համախոհ համադասարանցիների հետ, քննարկում է միջնակարգ աստիճանում ուսուցանվող կամ ընտրական առարկաները, համագործակցում է համապատասխան մանկավարժների հետ և պարզաբանում դրանց նշանակությունը: Առանձնացնում է այն առարկաները, որոնք օգնում են նշված մասնագիտության տիրապետման գործում:
- Միջնակարգ աստիճանում կամ ընտրական առարկաներից առանձնացնում է իրեն հետաքրքիր և անհրաժեշտ առարկաները, հիմնավորում է իր ընտրությունը:
- Իր հնարավորությունների և ձեռքբերումների վերլուծության հիման վրա, գրում է շարադրություն «Ինչպես եմ պատկերացնում իմ ապագա կարիերան» (նշված նպատակները և դրանց հասնելու ուղիները, անխուսափելի ու ցանկալի երևույթները, նրանց մտահոգման համապատասխանությունը հասարակության շահերին), շարադրությունը ներկայացնում է համադասարանցիներին:

Ուղղություն. Կայուն զարգացում

Քաղ. IX.5. Աշակերտը կարող է, անհատի ու հասարակության նշանակությունը գիտակցելով, հետևել առողջ ապրելակերպին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբերում է առողջ և անառողջ սնունդը, դատողություններ է անում մարդու (հասարակության) բարեկեցության և կայուն զարգացման համար առողջ սննդի նշանակության մասին:
- Դատողություններ է անում և հիմնավորում օրվա ապրելակարգի (սովորել-հանգստանալու) կարևորությունը մարդու առողջության և հասարակության բարեկեցության համար:
- Նկարագրում է ծխախոտի օգտագործման հետ կապված ռիսկերը և հիմնավորում մարդու առողջության և բարեկեցության վրա դրա վնասակար ազդեցությունը:
- Պարզաբանում է, թե ինչ է նշանակում ալկոհոլի հիվանդագին օգտագործում, դատողություններ է անում համապատասխան ռիսկերի մասին և հիմնավորում մարդու /հասարակության բարօրության վրա ալկոհոլի վնասակար ազդեցությունը:
- Պարզաբանում է, թե ինչ է նշանակում անլեզալ թմրանյութեր, դատողություններ է անում տարբեր թմրամիջոցների չարաշահման հետ կապված ընդհանուր և յուրահատուկ ռիսկերի մասին:
- Պաշտպանում է առողջ ապրելակերպի տարրական կանոնները, բացառելով (սահմանափակելով) ծխախոտը, ալկոհոլը, թմրանյութերի օգտագործումը և մոլախաղերին մասնակցելը:
- Պահպանում է առողջության համար անվտանգ շրջակա միջավայրի պահպանման դպրոցական կանոնները և օրենքի պահանջները:
- Դատողություններ է անում մարդու/հասարակության բարօրության համար առողջ շրջակա միջավայրի կարևորության մասին: Նկարագրում է, թե առողջ շրջակա միջավայրին ինչպիսի գործողություններն են վտանգ հասցնում:
- Հաշվի առնելով հասակակիցների կարիքները, շահերը և իրավունքները՝ համագործակցում է նրանց հետ:
- Շարադրություն է գրում սոցիալական հիվանդություններ (*օրինակ, ալկոհոլիզմի, թմրամոլության, ՉԻԱՀ-ի, թոքախտի և այլն*) ունեցող մարդկանց նկատմամբ հասարակության մյուս անդամների վերաբերմունքի մասին, որտեղ փաստարկում է իր դիրքորոշումը իր կողմից նկարագրված հարաբերությունների արդարացիության մասին:

Քաղ. IX 6. Աշակերտը կարող է համագործակցել հասարակական անվտանգության հիմնական հիմնախնդիրները լուծելիս:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մարդու որևէ պահանջին համապատասխանեցնում է մարդու որոշակի իրավունք (*օրինակ, սնունդը՝ կյանքի, աշխատանքի և այլ իրավունքներ, հարաբերությունները՝ կյանքի, խոսքի, աշխատանքի, անվտանգ շրջակա միջավայրի և այլ ազատություններ և այլն*) և փաստարկում է իր պատասխանի ճշտությունը:
- Իրեն ծանոթ սոցիալական միջավայրի *օրինակով (ընտանիք, հարևանական, դասարան, դպրոց, ընկերական, թաղամաս)* առանձնացնում է այն գործոնները (*օրինակ, ընդհանուր բարոյական արժեքներ, հանգամանքներ և այլն*), որոնք նրանց մեկը մյուսից կախման մեջ են դնում: Օրինակներ է բերում գեղարվեստական գրականությունից և պատմությունից:

- Համադասարանցիների խմբի հետ կազմում է դասարանի կամ դպրոցի անվտանգ միջավայրի ապահովման համար անհրաժեշտ իրերի ու աշխատանքների ցուցակը, որոնցից ընտրում է մի քանիսը, որոնք խումբը կարող է ձեռք բերել և իրականացնել առանց ուրիշների օգնության, կիսվում է իր ընտրությամբ համադասարանցիների հետ և հիմնավորում է այն՝ սահմանափակումների և այլընտրանքների քննարկումով:
- Դատողություններ է անում առանց բռնի ուժի փոխհարաբերությունների մասին, որպես հոգեկան առողջության ցուցանիշի:
- Համերաշխություն ու կարեկցանք է արտահայտում այն մարդկանց նկատմամբ, որոնց բռնության վտանգ է սպառնում:
- Մասնակցում է դպրոցական բանավեճին՝ «Ի՞նչ կպատահի, եթե բոլորն ունենան միայն իրավունքներ և չունենան պարտականություններ: Անհրաժեշտ է արդյոք պատասխանատվությունը և ինչի՞ համար»:
- Բացատրում է, թե ինչու է պարտավոր հարգել օրենքը: Անվանում է այն վտանգները, որոնք հետևում են անօրինական գործողություններին:
- Գրում է շարադրություն «Ինչի՞ց է կախված մեր բարօրությունը» թեմայով, որտեղ տարբեր առարկաներից (օր., պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, բնագիտություն և այլն) ստացած տեղեկությունները և վիճակագրական վերլուծության մեթոդները կիրառելով, փաստարկում է սեփական դիրքորոշումը:
- Վերլուծում է մարդու իրավունքները, որպես վարքի ստանդարտների մշակման և համաձայնեցման հիմք՝ տարբեր մասշտաբի հասարակություններում (*օրինակ, ընտանիք, դպրոց, մարզական ակումբ, համայնք, երկիր և այլն*):
- Համադասարանցիների խմբի հետ, հետազոտում է այն վտանգները, որոնք հետևում են դեռահասի կողմից ծխախոտի, ակոհոլի և թմրանյութերի օգտագործմանը, քննարկում է համապատասխան վիճակագրական տվյալները Վրաստանի, հարևան երկրների և աշխարհի համար: Վերլուծության հիման վրա, անվանում է արդյունավետ կանխարգելիչ միջոցառումներ, որոնք հնարավոր է օգտագործել սեփական բնակավայրում:
- Թվարկում է հասարակական անվտանգությունը վճռող գործոնները զինված հակամարտության պայմաններում: Ձևակերպում է պատերազմող կողմերի պարտավորությունները:

Քաղ. IX.7. Աշակերտը կարող է իրար հետ կապել Վրաստանի բազմերանգության հիմնական բնութագրիչները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է հասարակության բազմերանգության բնութագրիչ նշանները, որոնք տարածվում են Վրաստանի բնակչության վրա:
- Սեփական դպրոցի կամ բնակավայրի օրինակով կազմում է հասարակական բազմերանգության գծապատկերը:
- Միմյանց հետ կապում է մարդկային արժանապատվության, հավասարության և հասարակության բազմերանգության նշանները:
- Ըստ տարբեր նշանների (*օրինակ, ազգային, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, կրոնական և այլն*), դատողություններ է անում Վրաստանի բնակչությունը մեծամասնության և փոքրամասնության բաժանելու սկզբունքի մասին:

- Վրաստանի բնակչության օրինակով, ներկայացնում է այն խմբերին, որոնք միավորված են ըստ բազմերանգության մի քանի նշանի (*օրինակ՝ էթնիկական, լեզվական և կրոնական կամ սոցիալական, սեռային և տարիքային*):
- Ընտրում է Վրաստանի մի որևէ տարածաշրջան, բնութագրում է նրա բնակչությանը, ըստ բազմերանգության հատկանիշների, և անվանում գոյություն ունեցող բազմերանգության պատմա-աշխարհագրական պատճառները:

Քաղ. IX.8. Աշակերտը կարող է հետազոտել հասարակության մեջ խաղաղ համագոյակցության հիմունքները և պայմանները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համադասարանցիների հետ, սեփական հետազոտությունների հիման վրա, ընտրում և խաղում է մի որևէ կոնֆլիկտային իրավիճակ: Քննարկում է այն կարգավորելու հնարավոր ուղիները (*օրինակ, շահի դիրքերից՝ պայմանավորվելով, օրենքի դիրքերից՝ դատարան և այլն*): Ընտրում է տրված դեպքի համար ամենից ավելի արդյունավետը և հիմնավորում իր կարծիքը:
- Համադասարանցիների հետ ստեղծում է խաղաղ միջավայրում ամենօրյա վարքի ուղեցույց փաստաթուղթ (*օրինակ, բուկլետ, պլակատ, հուշանվեր*) և ներկայացնում դպրոցի ինքնակառավարման մարմիններին:
- Ըստ շահավետության, համեմատում է հայրենի երկրում տարածված ավանդական և ժամանակակից տնտեսական աշխատանքները: Դատողություններ է անում տնտեսական ոլորտում փոփոխություններ առաջացնող պատճառների մասին:
- Հասարակության իրավական պայմանները կապում է խաղաղ համագոյակցության հիմունքների հետ:
- Իր դպրոցի, բնակավայրի կամ երկրի օրինակով, թվարկում է հարցերը, որոնք լուծելու համար, իր կարծիքով, կարևոր է հաշվի առնել մեծամասնության կարծիքը (*օրինակ, հանրաքվե, պլեբիսցիտ, հարցում, ընտրություններ և այլն*):
- Դատողություններ է անում այն մասին, թե իր դասարանում, արդյոք, ժողովրդավարական միջավայր գոյություն ունի (*օրինակ, արդյոք կա՞ հավասարության, փոխադարձ հարգանքի, համագործակցության միջավայր, կարո՞ղ է արդյոք բանավեճի կամ քննարկման ժամանակ, ցանկացած աշակերտ ազատ արտահայտել սեփական կարծիքը*):
- Քննարկում է Վրաստանի բնակչության բազմերանգությունը, որպես հասարակության խաղաղ համագոյակցության և հանդուրժողականության հիմք:

Ուղղություն. Ինքնակառավարում և կառավարում

Քաղ. IX.9. Աշակերտը կարող է սահմանել Վրաստանի քաղաքացու սահմանադրական իրավունքները և ազատությունները, պարտականությունները և պատասխանատվությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկարագրում Վրաստանի քաղաքացիության հիմունքները և պայմանները:

- Համեմատում է Վրաստանի քաղաքացիների սահմանադրական իրավունքները և ազատությունները Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթների հետ:
- Դատողություններ է անում Վրաստանում քաղաքացիների իրավահավասարության երաշխիքների մասին:
- Որոշում է տարիքային ժամանակահատվածը, որից հետո նշում է Վրաստանի քաղաքացու հիմնական իրավունքները, պարտականությունները և համապատասխան պատասխանատվությունները:
- Տարբերում է Վրաստանի անչափահաս և չափահաս քաղաքացիների իրավական վիճակների նմանություններն ու տարբերությունները:
- Խմբավորում է իր օրինական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունները, ըստ իրավական ոլորտների (քաղաքացիական, վարչական, քրեական և այլն):
- Վրաստանի քաղաքացու իրավունքները և պարտականությունները խմբավորում է ըստ դրանց իրականացման պայմանների (*օրինակ, բավական է քաղաքացու կամքը, բավական է հասարակական համաձայնությունը, անհրաժեշտ է պետական գործողություն*):

Քաղ. IX.10. Աշակերտը կարող է սահմանել Վրաստանի պետական կառավարման համակարգը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություն է անում կենտրոնական ու տեղական կառավարությունների միջև տարբերությունների մասին:
- Համադասարանցիների հետ խմբավորում է պետության տարբեր ճյուղերը (*օրենսդիր, գործադիր և դատական*) և տարբերում դրանց գործառույթները:
- Ընտրում է պետական որևէ մարմին և այն կապում պետության համապատասխան ճյուղի հետ: Քննարկում է այդ մարմնի ֆունկցիաները և առնչությունը պետության այլ մարմինների հետ:
- Կազմում է իր բնակավայրում լուծման կարիք ունեցող հարցերի ցուցակը և, համապատասխանաբար, անվանում է պետության այն ներկայացուցչին, որին պետք է դիմել առաջին հերթին: Փաստարկում է սեփական եզրակացությունը (ըստ ճյուղերի և մակարդակի (ատյանի)):
- Համադասարանցիների խմբի հետ ընտրում է որևէ պետական մարմին (*օրինակ, շրջանային վարչություն / քաղաքապետարան, խորհրդարան, դատարան, նախարարություն և այլն*) և մասնակցում համապատասխան կեղծակերպած խաղին՝ «Աշխատանքային մեկ օրը»:
- Քննարկում է որևէ պետական մարմնի (*օրինակ, խորհրդարան, նախագահ, քաղաքապետ, ինքնակառավարման մարմին, դատավոր և այլն*) ընտրության օրենքները, համեմատում է Վրաստանի և այլ երկրների օրինակները: Դրանցից առանձնացնում է, իր կարծիքով, առավել արդարացի օրենքները:
- Համադասարանցիների խմբի հետ գտնում է տեղեկություններ ընտրովի որևէ պաշտոնի կամ մարմնի (*օր.՝ դպրոցի տնօրեն, պատգամավոր, քաղաքապետ և այլն*) մասին և մոդելավորված ընտրություններում կատարում իրեն հատկացված դերը (օրինակ, ընտրող, թեկնածու, աջակցող, դիտորդ, լրագրող, իրավապահ կամ այլն): Իրար հետ համեմատում է ենթադրված և ստացած արդյունքները, ինչի հիման վրա

համադասարանցիների հետ գնահատում է յուրաքանչյուր մասնակցի դերը (գործառույթը):

- Թվարկում է պետության ժողովրդավարական սկզբունքները (*օրինակ, պետության բաժանումը և ներկայացուցչականությունը, բազմակուսակցությունը, խոսքի ազատությունը և այլն*), և ըստ դրանցից յուրաքանչյուրի, բնութագրում Վրաստանի պետության կառավարումը: Համեմատում է ժողովրդավարական մի որևէ պետության հետ: Վերլուծման հիման վրա, եզրակացություն է անում, թե որ կառավարումն է ավելի ժողովրդավարական:

Քաղ. IX.11. Աշակերտը կարող է արդյունավետորեն մասնակցել դպրոցի ինքնակառավարման ժողովրդավարական գործընթացին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է, իր կարծիքով, դասարանի (կամ դպրոցի) համար հրատապ այն հարցերը, որոնց լուծմանն ինքը ցանկանում է մասնակցել և համադասարանցիներին (դպրոցի վարչակազմին կամ դասղեկին) ներկայացնում է այդ հարցերը կարգավորելու իր պլանը:
- Համադասարանցիներին հիշեցնում է 7-րդ դասարանում մշակած դպրոցական սահմանադրության բովանդակությունը: Ծանոթացնում է այդ փաստաթղթում փոփոխություններ ու լրացումներ անելու նախագծին: Սեփական կարծիքը հիմնավորելիս՝ պահպանում է կանոնակարգը:
- Բանավոր կամ գրավոր ներկայացնում է համադասարանցիների հետ պատրաստած ժողովրդավարական դասարանի/դպրոցի մոդելը: Սեփական կարծիքը հաստատելու համար՝ բերում է փաստարկներ:
- Իր դպրոցի ինքնակառավարման օրինակով, քննարկում է աշակերտների դերը ժողովրդավարության կառուցման մեջ:
- Հիմնավորում է որակյալ կրթության ստանալու գործում աշակերտների, ծնողների, ուսուցիչների և դպրոցի տնօրինության համագործակցության դերը:
- Համադասարանցիների խմբի հետ քննարկում է դպրոցի ինքնակառավարման մարմինների գործունեությունը և դրանց արդյունքները: Վերլուծում է քննարկման արդյունքները և գրում երաշխավորագրեր դպրոցական կյանքը բարելավելու մասին, որոնք համապատասխան ձևով ներկայացնում է համապատասխան իրավասու անձի կամ մարմնի:

Ծրագրի բովանդակությունը

IX դասարանի պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանի համար նախատեսված ամբողջ բովանդակության 60%-ը):

Անհատական զարգացում

1. Պահանջներ և հնարավորություններ:
2. Արհեստավարժությունը և անհատի զարգացումը:
3. Ապագա պլանների նախանշումը:
4. Շուկան և մրցակցությունը:
5. Աշխատանքային շուկան և միտումները:
6. Հակամարտության զարգացման և կարգավորման ուղիները:
7. Մարդու իրավունքների բարոյական հիմունքները և պատմությունը:

Կայուն զարգացում

8. Իրավական աշխարհը և խաղաղ համագոյակցությունը:
9. Հասարակական անվտանգությունը և նրա գործոնները:
10. Անվտանգ և առողջ միջավայրը. դպրոցում, բնակավայրում և երկրում:
11. Իրավունքը և բարոյականությունը:
12. Բնակչության սոցիալական կազմը:
13. Բազմերանգ Վրաստանը և բազմերանգ երկիրը:
14. Ազատ հասարակությունը և ընտրությունը:
15. Ներդրում, շահույթ, վճարումներ:
16. Արդարացիություն, օրինաչափություն և իրավակարգ:
17. Բյուջե՝ առաջնություններ, պարտավորությունների և հնարավորությունների համաձայնեցված բաժանում:

Ինքնակառավարումը և կառավարումը

18. Ժողովրդավարության հիմունքները և նրանց դերն ու նշանակությունը հասարակության կյանքում:
19. Ժողովրդավարությունը Վրաստանում:
20. Վրաստանի Սահմանադրությունը՝ պետության կազմակերպումը, կառավարումը և Վրաստանի քաղաքացու բնութագրիչները:
21. Ընտանիք, դպրոց և այլ հասարակական համակարգերի ինքնակառավարումը:
22. Դպրոցի ինքնակառավարումը՝ կառուցվածքը, գործառույթները և աշակերտների հնարավորությունները:
23. Քաղաքացու մասնակցությունը ժողովրդավարական գործընթացին:

- 24. Ժողովրդավարական կառավարման սկզբունքները և մոդելները:
- 25. Պետության բաժանումը և կառավարման մակարդակները:

Գլուխ XXXVIII

Առարկայական իրազեկություններ միջնակարգ աստիճանում

X դասարան

Պատմություն (Պատմության գիտության ներածություն)

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Ժամանակ և տարածություն	Պատմական մեկնաբանություն և հետազոտում	Հաղորդակցություն
<p>Պատմ.X. 1. Աշակերտը կարող է պատմության ժամանակագրության և պարբերացման հարցերի շուրջ վերլուծական դատողություններ անել:</p>	<p>Պատմ.X. 2. Աշակերտը կարող է դատողություններ անել պատմության օժանդակ բնագավառների մասին և սահմանել դրանց յուրահատկությունները:</p> <p>Պատմ.X.3. Աշակերտը կարող է դատողություններ անել տարբեր դարաշրջաններում պատմական մտածողության զարգացման գործընթացի մասին:</p> <p>Պատմ.X.4. Աշակերտը կարող է վերլուծել և գնահատել պատմական երևույթների տարբեր մեկնաբանությունները:</p> <p>Պատմ.X.5. Աշակերտը կարող է դասակարգել պատմական աղբյուրները:</p> <p>Պատմ.X.6. Աշակերտը կարող է վերլուծել առաջնային և երկրորդային աղբյուրները:</p> <p>Պատմ.X.7. Աշակերտը կարող է պլանավորել և անցկացնել պատմական հետազոտություն:</p>	<p>Պատմ.X.8. Աշակերտը կարող է գրել պատմական շարադրություն:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները:

Ուղղություն. Ժամանակ և տարածություն

Պատմ. X. 1. Աշակերտը կարող է պատմության ժամանակագրության և պարբերացման հարցերի շուրջ վերլուծական դատողություններ անել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում թվարկության տարբեր համակարգերի, դրանց առաջացման պատմության և պատճառների մասին, համեմատում է թվարկության հին համակարգերը ժամանակակից համընդհանուր տարածված մոդելների հետ: Դատողություններ է անում վրացական թվարկության համակարգի մասին:
- Ճանաչում է օրացույցի տարբեր համակարգերը, դրանք համեմատում աշխարհում համընդհանուր ճանաչում գտած օրացույցի հետ:
- Ճանաչում է պատմության պարբերացման հիմնական հին և ժամանակակից մոդելները, դատողություններ է անում դրանց մասին:
- Ճանաչում է Վրաստանի պատմության պարբերացման հին և ժամանակակից մոդելները: Դրանք համեմատում է աշխարհում այսօր ճանաչված պատմության պարբերացման հետ:

Ուղղություն. Պատմական մեկնաբանություն և հետազոտում

Պատմ. X. 2. Աշակերտը կարող է դատողություններ անել պատմության օժանդակ բնագավառների մասին և սահմանել դրանց յուրահատկությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է պատմության օժանդակ բնագավառները, ճանաչում է դրանց յուրահատկությունները, առանձնացնում է ուսումնասիրվող գլխավոր օբյեկտները:
- Պատմական գործընթացը հնարավոր լիակատարությամբ վերականգնելու և ըմբռնելու նպատակով՝ դատողություններ է անում պատմական բնագավառների տեղի և նշանակության մասին:
- Դատողություններ է անում հնագիտական հայտնագործությունների արդյունքների մասին, իր ընտրած մի որևէ նշանակալից հնագիտական հայտնագործության մասին (*օրինակ, Եվրասիայի հնագույն մարդը Դմանխիում, Տրոյայի պեղումները*):
- Արտադասարանական ակտիվությունների միջոցով (թանգարանական նմուշների հետ ծանոթություն, դաշտային աշխատանքի հետևանքով ձեռք բերած ազգագրական իրի հետ ծանոթացում), դատողություններ է անում ազգագրական /ազգագրության նյութերի նշանակության մասին: Ձեռք բերած նյութի հիման վրա, դատողություններ է անում կենցաղի հիմնական բնութագրիչների մասին և ավանդական նիստուկացի հիմնական տարբերը համեմատում ժամանակակից կենցաղի հետ: Վրաստանի՝ իր ընտրած որևէ պատմա-ազգագրական երկրամասի ավանդական կենցաղի մասին անում է շնորհանդես: Կիրառելով թանգարանային հիմնադրամները և տեխնոլոգիական միջոցները, որոնում է վրացական մետաղադրամների և թղթադրամների հիմնական նմուշները և համեմատում

այլ երկրի դրամի նմուշների հետ: Դատողություններ է անում դրամագիտության և բռնիստիկայի նշանակության մասին:

- Գիտի հին վրացական չափագիտական համակարգը: Այն համեմատում է այլ երկրներում տարածված հին և ժամանակակից չափաբանական համակարգերի հետ:
- Սահմանում է պատմական աշխարհագրության նշանակությունը, գիտի պատմական քարտեզագրության հիմնական փուլերը, այդ թվում վրաց քարտեզագրության զարգացման պատմությունը *(օրինակ, դատողություններ է անում Վախուշտի Բագրատիոնիի քարտեզագրական ժառանգության մասին և համեմատում նրա քարտեզագրքերն իր ժամանակի համաաշխարհային քարտեզագրական նվաճումների հետ):*

Պատմ.X.3. Աշակերտը կարող է դատողություններ անել տարբեր դարաշրջաններում պատմական մտածողության զարգացման գործընթացի մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գիտի պատմական մտածողության զարգացման հիմնական փուլերը:
- Տարբերում է պատմական գրականության զարգացման հիմնական *(Անտիկ, Միջին դարերի, Վերածննդի...)* փուլերը:
- Դատողություններ է անում տարբեր դարաշրջանների պատմաբանների մասին, որոնք կարևոր դեր են խաղացնել պատմության, որպես գիտության զարգացման գործում:
- Գիտի Միջին դարերի և ժամանակակից վրաց պատմաբաններին, դատողություններ է անում նրանց պատմական ժառանգության մասին *(օրինակ, Վախուշտի Բագրատիոնի և Բվանե Ջավախիշվիլի):* Դատողություններ է անում ամենանշանավոր վրաց պատմական ժողովածուի «Քարթլիի կյանքի» մասին:
- Դատողություններ է անում պատմական տարբեր դպրոցների առաջացման սահմանված գործոնների մասին և համեմատում է այս դպրոցների ներկայացուցիչների հիմնական հայացքները: Արտահայտում է իր կարծիքն այն մասին, թե պատմական միջավայրը և դարաշրջանի արժեքները որքանով են պայմանավորված տարբեր ժամանակների պատմաբանների հայացքներով:
- Դատողություններ է անում պատմական տարբեր դարաշրջաններում պատմության տարբեր նշանակման *(պատմությունը, որպես քարոզչություն, պատմությունը և բարոյագիտությունը, պատմությունը և աստվածաբանությունը)* մասին:

Պատմ.X.4. Աշակերտը կարող է վերլուծել և գնահատել պատմական երևույթների տարբեր մեկնաբանությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համեմատում է երկու աղբյուր, որոնք կոնկրետ պատմական երևույթի մասին տալիս են տարբեր տեղեկատվություն, կամ տալիս են պատմական երևույթի կամ անհատի տարբեր գնահատական *(օրինակ, Հուստինիանոս կայսեր գնահատականը ըստ Պրոկոֆի Կեսարացու պաշտոնական և գաղտնի պատմության կամ Լաշա Գիորգիի գնահատականը ըստ Լաշայի ժամանակների մատենագրի և ժամանակագիրների ստեղծագործությունների):* Դատողություններ է անում այն գործոնների մասին, որոնցով

պայմանավորված են կոնկրետ երևույթի մասին գոյություն ունեցող տարբեր մեկնաբանությունները:

- Համեմատում է պատմական տարբեր երևույթի (անհատի) մասին գոյություն ունեցող (երկու կամ երեք) պատմաբանների տարբեր կարծիքները, քննադատաբար գնահատում դրանք և ձևակերպում իր կարծիքներն այդ պատմական երևույթի (անհատի) վերաբերյալ:
- Դատողություններ է անում պատմական մեկնաբանության հիպոթետիկ բնույթի մասին և գիտակցում, որ ցանկացած պատմական մեկնաբանություն, հնարավոր է, որ գնահատվի նոր նյութի որոնման (հրապարակման) դեպքում:
- Տարբերում է պատմական փաստը պատմական մեկնաբանությունից:

Պատմ.X.5. Աշակերտը կարող է դասակարգել պատմական աղբյուրները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատմական աղբյուրները խմբավորում է ըստ տեսակների:
- Իրարից տարբերում է պատմական սկզբնաղբյուրները և փաստական նյութը:
- Ըմբռնում է ազգագրության և հնագիտական տվյալների, որպես պատմական աղբյուրի, նշանակությունը:
- Ըմբռնում է լեզվաբանական տվյալների, որպես պատմական աղբյուրի նշանակությունը:
- Բանահյուսական նյութի մասին խոսում է որպես պատմական աղբյուրի մասին:

Պատմ.X.6. Աշակերտը կարող է վերլուծել առաջնային և երկրորդային աղբյուրները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում առաջնային և երկրորդային աղբյուրների մասին:
- Պատմական աղբյուրի հեղինակի նկատմամբ արտահայտում է իր կարծիքը և քննադատաբար գնահատում, թե որքանով հուսալի է այն *(օրինակ, հետազոտում է, հեղինակը եղել է արդյոք իրադարձության ականատես, ինչ աղբյուրներից է նա օգտվել: Ազդում էր արդյոք գրաքննությունը աղբյուրի հեղինակի վրա):*
- Սահմանում է պատմական աղբյուրի ստեղծման նպատակը՝ հեղինակի դրդապատճառը *(օրինակ, նկատի է առնում աղբյուրի հեղինակի անձնական փոխհարաբերությունը պատմական անձի հետ, օտարերկրացիների նկատմամբ նրա վերաբերմունքը, նրա դարաշրջանի հասարակական միջավայրը, արժեքներն ու մտածելակերպը):*
- Պատմական փաստի ստեղծման տարեթվի և տեղի մասին ունի տեղեկատվություն: Աղբյուրները գնահատելիս՝ նկատի է առնում, թե ժամանակի և տեղի տեսակետից, որքանով է այն հեռացած նրանում հաղորդված պատմական իրադարձություններից:
- Տարբերում է այն տեղեկատվությունը, որի հաղորդումը աղբյուրի հեղինակի առաջնային նպատակն է աղբյուրում գոյություն ունեցող բոլոր այլ տեղեկություններից *(օրինակ, Յակոբ Խուցեսիի «Շուշանիկի նահատակությունում» հեղինակի նպատակն է նկարագրել քրիստոնեությանը նվիրված անձնուրաց թագուհու կյանքը, բայց մենք, միաժամանակ, տեղեկություններ ենք ձեռք բերում V դարի II կեսի Քարթլիի քաղաքական, սոցիալական և կուլտուրական իրավիճակի մասին):*
- Առաջնային աղբյուրների վրա աջխատելիս՝ նկատի է առնում պատմական իրադարձության մասնակիցների տարբեր արժեքները, շահերը, հայացքները, շարժառիթները և մարդկային այլ գործոնները:

- Պատմական աղբյուրների վրա աշխատելիս՝ վերհանում է պատճառա-հետևանքային կապերը:
- Պատմական աղբյուրից ստացած տեղեկատվությունը խմբավորում է ըստ հասարակական կյանքի տարբեր ոլորտների (*քաղաքականություն, տնտեսություն, մշակույթ, կրոն, սոցիալական հարաբերություններ*):
- Ըմբռնում է պատմական դարաշրջանը. ա) ըմբռնում է իրեն հետաքրքրող դարաշրջանում գոյություն ունեցող արժեքները, հայացքները և հնարավորությունները: Նկարագրում է, թե ինչպես էին ընկալում այն ժամանակաշրջանի մարդիկ իրենց դարաշրջանը: բ) Ձգտում է հենց սկզբից խուսափել անցած դարաշրջանի միայն այսօրվա տեսանկյունից գնահատումից:

Պատմ.X.7. Աշակերտը կարող է պլանավորել և անցկացնել պատմական հետազոտություն:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ, ընտրում է իրեն հետաքրքրող պատմական հարցի ուսումնասիրությունը (աշակերտի ընտրությունը կարող է պայմանավորել պատմական մի որևէ աշխատության, պատմական գրականության, կինոնկարների, ճարտարապետական հուշարձանների, թանգարանային ցուցադրումների հետ ծանոթանալը կամ ժամանակակից որևէ իրադարձություններով հետաքրքրվելը):
- Ապագա հետազոտության թեման կոնկրետացնելու նպատակով՝ ընտրված պատմական հարցի շուրջ ուսումնասիրում է մեկ կամ երկու ընդհանուր բնույթի հոդված (*օրինակ, հոդված վրացական խորհրդային հանրազիտարանից*):
- Սահմանում է, թե ինչ տեսակի հետազոտություն է մտադիր անցկացնել՝ հիմնավորում է, թե իր հետազոտությունը հիմնված է միայն երկրորդային աղբյուրների վրա, թե իրեն հարկավոր կլինեն կիրառել նաև ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային աղբյուրները:
- Կազմում է «աշխատանքային» մատենագիտություն (*օրինակ, ա) ըստ հանրազիտարանի վերջում նշված գրքերի, բ) ուսուցչի անվանած գրքի ծանոթագրություններում կամ օգտագործված գրականության ցանկում փնտրում կամ ընտրում է երկու կամ երեք հետազոտություն*):
- Աշակերտը գրադարանում քարտարանի միջոցով գտնում է անհրաժեշտ գրականությունը և սահմանում, թե այս կամ այն գիրքը կամ հոդվածը անհրաժեշտ են արդյոք ապագա հետազոտության համար (*օրինակ, գրքի ներածությանը, առաջաբանին, ցանկի գլուխներին, ենթագրություններին ծանոթացնելու միջոցով*):
- Ելնելով հետազոտման նպատակներից՝ գտնում և կիրառում է տեղեկատվություն վիզուալ, աուդիո/տեսա, կինո նյութի և ինտերնետ-ռեսուրսի, ինչպես նաև գրական աղբյուրների միջոցով (*լուսանկարներ, պատկերներ, որմնանկարներ, ճարտարապետական կառույցներ, վեպեր, չափածո և դրամատիկական ստեղծագործություններ, բանահյուսական, հանրաճանաչ ու դասական երաժշտություն*):
- Հետազոտման գործընթացում կիրառում է տարբեր տեսակի գծապատկերներ ինչպես պատմական աղբյուրից գտնված տեղեկատվության պարզեցման, այնպես էլ պատկերազարդման նպատակով:
- Հետազոտության արդյունքները ցույց է տալիս ուսուցչին և նկատի առնում նրա դիտողությունները:

Ուղղություն. Հաղորդակցություն

Պատմ. X.8. Աշակերտը կարող է գրել պատմական շարադրություն:

Արդյունքն ակնառու է, թե աշակերտը.

- Պատմական շարադրություն գրելու նպատակով ընտրում է իր համար հետաքրքիր հարցը և հետզհետե կոնկրետացնում այն:
- Ընտրված հարցի մասին նախապես հետազոտություն անցկացնելուց հետո, սահմանում է թեմայի գլխավոր գաղափարը՝ թեզիսը, և այն ձևակերպում նախադասության տեսքով:¹⁹
- Սահմանում է շարադրության նպատակը, այսինքն՝ այն, թե ինչ նշանակություն ունի շարադրությունը՝ ինչպես պատմական հարցին ընթերցողի տեղեկացված լինելու (կամ պատմական հարցը պարզաբանելու, բացատրելու) հետ, այնպես էլ՝ պատմական հիմնախնդրի սեփական տեսակետի/փաստարկի ճշտության մեջ ընթերցողին համոզելու հետ:
- Սահմանում է, թե ով կլինի նրա գրած շարադրության ընթերցողը (*օրինակ, համադասարանցիները, ուսուցիչը թե՛ օլիմպիական հանձնաժողովը*): Այդ նպատակով պատասխանում է հետևյալ հարցերին՝ «նախապես ինչ գիտի ապագա ընթերցողը թեմայում քննարկված պատմական հարցի մասին», «ինչ գիտելիքներ պետք է տա ընթերցողին իմ շարադրությունը», «ի՞նչ եմ ցանկանում, որ ընթերցողը տեսնի նորովի», «ինչպե՞ս պետք է կազմեմ շարադրությունը, որ իմ գաղափարները հասկանալի դառնան կոնկրետ ընթերցողին»:
- Կազմում է շարադրությունը գրելու պլան, որը նկատի ունի՝ ա) թեման կազմելիս առավել կարևոր գաղափարները մի խմբում դասավորելը, իսկ համեմատաբար պակաս կարևորները՝ երկրորդ խմբում և այլն, բ) հետևյալ տիպի ուրվագծի կազմումը.

<p><i>Շարադրության թեզիսը (նախադասության տեսքով)</i></p>	<p><i>Օր., 1920-21 թվականներին Անդրկովկասյան երկրների անկախության կորուստը պայմանավորեցին արտաքին քաղաքական գործոնները:</i></p>
<p><i>Առաջին գլխավոր գաղափարը</i> <i>ա) Առաջին գլխավոր գաղափարի հետ կապված առաջին օժանդակ գաղափարը</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ <i>Պատճառ կամ օրինակ</i> ▪ <i>Պատճառ կամ օրինակ</i> <p><i>բ) Առաջին գլխավոր գաղափարի հետ կապված երկրորդ օժանդակ գաղափարը</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ <i>Պատճառ կամ օրինակ</i> ▪ <i>Պատճառ կամ օրինակ</i> 	<p><i>Օր., Ռուսաստանի հեղափոխությունը:</i></p> <p><i>Բոլշևիկների իշխանություն գալը:</i></p> <p><i>I համաշխարհային պատերազմի հետևանքները:</i></p>

¹⁹ Հետազոտման վաղ փուլում, այսպես կոչված, աշխատանքային թեզիսը հետազոտման հետագա փուլում կարելի է կատարելագործել:

<i>Երկրորդ գլխավոր գաղափարը</i>	<i>Առաջին համաշխարհային պատերազմը և Փարիզի խաղաղության կոնֆերանսը:</i>

- Ուսուցչին (դասղեկին, համադասարանցիներին) ներկայացնում է շարադրության սևագիր տարբերակը:²⁰
- Պատմական շարադրություն գրելու գործընթացում, սահմանում է շարադրության լեզվական կողմը (գրելը) (ենթադրյալ ընթերցողին նկատի առնելով, սահմանում է, թե ինչ բարդության պետք է լինի աշխատության լեզուն, այն պատկերավոր պետք է լինի արդյոք և այլն): Խուսափում է մասնագիտական տերմինները ոչ տեղին կիրառելուց և կլիշեներ օգտագործելուց: Մեջբերումներ անելիս, դարձվածքներ կամ ուրիշի կարծիք օգտագործելիս, անպայման նշում է աղբյուրը:
- Կիրառում և հաջորդաբար պահպանում է մատնանշված ոճը, թեմային կցված օգտագործած գրականության ցանկը, համարակալումը է էջերը:
- Սևագիր տարբերակը վերջացնելուց որոշ ժամանակ անց, մշակելու նպատակով, նորից անդրադառնում է դրան. ա) շարադրությունը երկրորդ անգամ կարդալիս, փորձում է իր աշխատությանը նայել ապագա ընթերցողի աչքերով, բ) երկրորդ անգամ կարդալիս, ստուգում է, թե որքանով լավ է կազմված աշխատությունը, համապատասխանում է արդյոք սևագիր տարբերակը նախապես կազմված պլանին, լավ է ամփոփված շարադրությունը, թե՛ ոչ, տրամաբանական կապի մեջ են արդյոք շարադրության բոլոր մասերը թեզիսի հետ, փաստարկների տարբեր մասերի միջև կան արդյոք բացթողումներ, կան արդյոք բովանդակության ու դարձվածների կրկնություններ:
- Երկրորդ անգամ (կամ երրորդ տարբերակը) գրելուց հետո, խմբագրում է շարադրությունը:
- Շարադրություն վերջնական տարբերակը ներկայացնելուց առաջ, մեկ անգամ ևս կարդում է խմբագրված տարբերակը:

Ծրագրի բովանդակությունը

X դասարանի համար պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանի համար նախատեսված ամբողջ բովանդակության 80%-ը):

1. Մեր պատմություն.

Պատմության առարկան (ի՞նչ է սովորեցնում Պատմությունը): Մասնագիտությունը՝ պատմաբան:

2. Պատմության ժամանակագրությունը

²⁰ Շարադրությունը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝ շարադրության գլխավոր հիմնախնդրի համառոտ տեսությունը և այդ հիմնախնդրի նկատմամբ, թեզիսի տեսքով, սեփական կարծիքի արտահայտումը: Հիմնական մաս - սեփական դիրքորոշումը բացատրելու կամ հաստատելու համար փաստարկներ ու օրինակների բերել: Եզրակացություն՝ թեմայի հիմնական մասում արտահայտված փաստարկների և հայացքների ամփոփում:

- ա) Օրացույց (Արևելյան և Արևմտյան օրացույցներ (Հուլիոսյան, Գրիգորյանական, Մուսուլմանական, Օմար-Իսայամի)
- բ) Թվարկության համակարգեր (դարաշրջան, ժամանակագրություն, հիջրա):

3. Պատմության պարբերացումը.

- ա) Պատմության պարբերացման ակունքներում:
- բ) Պարբերացման Պտղեմեոսի համակարգը:
- գ) Համաշխարհային պատմության եռագագաթ բաժանումը:
- դ) Մարքսիզմի և պատմության պարբերացումը:
- ե) Պատմության պարբերացումը ըստ քաղաքակրթության:
- զ) Վրաստանի պատմության պարբերացումը:

4. Պատմությունը և պատմության ոլորտները (վրաց և օտար նյութերի հիման վրա):

- 1) Աղբյուրագիտություն (ի՞նչ է պատմական աղբյուրը): Պատմական աղբյուրների դասակարգումը: Հետազոտման մեթոդաբանությունը (անցյալի վերականգնումը պատմական աղբյուրների միջոցով): Աղբյուրներ՝ փաստական և սկզբնական:
- 2) Հնագիտություն:
- 3) Ազգագրական (ազգագրություն):
- 4) Պատմական աշխարհագրություն (պատմական քարտեզագրություն):
- 5) Դրամագիտությունը և բոնիտիկան:
- 6) Զինանիշագիտությունը և ծագումնաբանությունը:
- 7) Պատմությունը և ինֆորմատիկան:

5. Պատմական գիտությունների պատմություն (Պատմագրություն):

- ա) Հին հունական պատմագրություն. Հերոդոտոս, Թուկիդիդես, Քսենոֆոն: Պոլիբիոս – առաջին համաշխարհային պատմության ստեղծման փորձը: Ստրաբոն՝ պատմության և աշխարհագրության համադրություն:
- բ) Հռոմեական պատմագրությունը. Հուլիոս Կեսար, Տիտուս Լիվիոս, Պլուտարքոս և Սվետոնիոս՝ կենսագրական ստեղծագործություններ: Ամիանես Մարցելինես:
- գ) Բյուզանդական պատմագրությունը. Էվսեբի Կեսարացի՝ «Եկեղեցական պատմություն» և Գելասի Կեսարացի: Պրոկոպի Կեսարացի և Ազաթիա Մքրլաստիկոս: Կոնստանտինե Պորֆիրոգենետի՝ թագակիր պատմիչ, Աննա Կոմնինա, Միքայել Պանարետոս:
- դ) Հայ պատմագրությունը. Միջնադարյան հայ պատմագրությունը:
- ե) Վրաց պատմագրությունը. Ի՞նչ է «Քարթլիս ցխովրեբան» («Քարթլի կյանքը»), հին և նոր շարքի «Քարթլի կյանքը»: Վախուշտի Բագրատիոնի: Ուշ միջնադարի վրաց պատմաբանները (Փարսադան Գորգիջանիձե, Պապուսա Օրբելիանի, Օման Խերխետլիձե): Վրաց պատմագրությունը XIX-XX դարերում:
- զ) **Միջին դարերի և Վերածննդի դարաշրջանի պատմական միտքը.** Միջին դարերի արևմտաեվրոպական պատմագրությունը (Գրիգոլ Տուրելի, Բեդա Պատիվդեբուլի, Էյնհարդ...): Արաբ և պարսիկ պատմաբանները (Իբն Խալկունի, Տաբար, Ալ-Փարիկ): Լորենցո Վալա, Մաքյավելի: Ֆրենսիս Բեկոն, Ժան Բոդեն:
- է) **Հին ճանապարհորդների գրառումները.** Վրաց ճանապարհորդները (Չախրուխաձե, Ռափիել Դանիբեգաշվիլի): Պլանո Կարպին, Մարկո Պոլո, Իբն-Բատտուտա: Կաստել, Շարդեն, Գյուլդենշտենդ:
- ը) **Լուսավորության դարաշրջանի պատմական միտքը.** Զամբատիստա Վիկո, Վոլտեր, Մոնտեսքյե, Իում:

թ) Պատմական միտքը XIX դարում. Թեոդոր Մոմզենի՝ պատմաբան, Նոբելյան մրցանակի դափնեկիր, Լեոպոլդ Ֆոն Ռանկե, Իպոլիտ Տեն, պոզիտիվիստները:

ժ) Պատմական միտքը XX դարում. Բենեդիկտ Կրոչե՝ պատմության տեսաբան: Ռոբին Կոլինգվուդ՝ «Պատմության գաղափարը»: Անալների դպրոցը:

6. Ինչպե՞ս ենք սովորում Պատմությունը:

ա) Առաջնային և երկրորդային աղբյուրներ:

բ) Գրավոր աղբյուրների քննադատումը/մեկնաբանումը:

7. Ինչպե՞ս է գրվում պատմական շարադրությունը. Ուսումնասիրվող թեմայի ընտրությունը և թեմայի վրա աշխատելու գործընթացը, պատմական երկի կառուցվածքը, ինչպե՞ս է գրվում պատմական աշխատությունը (աշխատության լեզուն և ձևավորումը, գրադարանից օգտվելը և գրքի վրա աշխատանքի պլանավորումը):

X դասարան

Աշխարհագրություն (Համաշխարհային աշխարհագրություն)

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյուքներն ըստ ուղղությունների

Ժամանակ և տարածություն	Շրջակա միջավայրը և տնտեսությունը	Շրջակա միջավայրը և սոցիալական համակարգերը
------------------------	----------------------------------	---

<p>Աշխ. X.1. Աշակերտը կարող է քաղաքական քարտեզի ձևավորումը կապել աշխարհում ընթացող նշանակալից գործընթացների հետ:</p>	<p>Աշխ. X.2. Աշակերտը կարող է վերլուծել երկրի տեղն աշխարհում, ըստ մի շարք սոցիալական և տնտեսական պարամետրերի:</p> <p>Աշխ. X.3. Աշակերտը կարող է պետությունները դասակարգելու հիման վրա, վերլուծել դրանց զարգացման հեռանկարները:</p> <p>Աշխ. X.4. Աշակերտը կարող է, ըստ տարբեր բնութագրիչների, համեմատել պետությունները և դատողություններ անել նմանությունների ու տարբերությունների մասին:</p>	<p>Աշխ. X.5. Աշակերտը կարող է ուսումնասիրել աշխարհի բնակչության վերաբնակեցման յուրահատկությունները և վերլուծել ժողովրդագրական իրավիճակը:</p> <p>Աշխ. X.6. Աշակերտը կարող է վերլուծել տարածքային և աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը հասարակության զարգացման վրա:</p>
---	---	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները:

Ուղղություն. Ժամանակ և տարածություն

Աշխ. X.1. Աշակերտը կարող է քաղաքական քարտեզի ձևավորումը կապել աշխարհում ընթացող նշանակալից գործընթացների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանձնացնում է աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման հիմնական փուլերը, դատողություններ է անում քաղաքական քարտեզի վրա արտահայտված քանակական և որակական փոփոխությունների մասին: Արդյունքներն արտահայտում է իր ցանկացած ձևով:
- Խմբային աշխատանք կատարելիս՝ վերլուծում է հայթայթած տեղեկատվությունը՝ աշխարհում XX դարի 90-ական թվականներին ընթացող գործընթացների մասին, և դա կապում ժամանակակից քաղաքական քարտեզի ձևավորման հետ: Պատճառա-հետևանքային կապերն արտահայտում է ցանկացած ձևով:
- Ըստ դարաշրջանների, աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխությունները նշում է ուրվագծային քարտեզի վրա և կազմում թեմատիկ քարտեզագիրք:

Ուղղություն. Շրջակա միջավայրը և տնտեսությունը

Աշխ. X.2. Աշակերտը կարող է վերլուծել երկրի տեղն աշխարհում, ըստ մի շարք սոցիալական և տնտեսական պարամետրերի:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում և խմբավորում է երկրների զարգացմանը խոչընդոտող և նպաստող (աշխարհագրական դիրք, սոցիալական, տնտեսական և քաղաքական) գործոնները: Վերլուծում է նշված գործոնների ազդեցությունը երկրների զարգացման վրա և արտահայտում իր վերաբերմունքը:
- Մշակում է երկրի զարգացման մակարդակի ցուցանիշի սեփական չափանիշները և հիմնավորում իր նկատառումները:
- Ուշադիր զննում է երկրների հյուսիս -հարավ ստորաբաժանման (տնտեսական զարգացման մակարդակը ցույց տվող) քարտեզը և, ըստ աշխարհամասերի ու զարգացման մակարդակի, խմբավորում երկրներն աղյուսակում:
- Կազմում և իրար հետ համեմատում է այն պաշարների ցուցակը, որոնք կիրառվում են հարուստ և աղքատ երկրների տնտեսություններում: Դատողություններ է անում պաշարների և տնտեսական զարգացման մակարդակների միջև գոյություն ունեցող կապերի մասին:
- Ըստ ներքին ամբողջական արտադրանքի և մարդասիրական զարգացման դասիչի, համեմատում է երկրների ցուցանիշները: Դրանցից յուրաքանչյուրի լիարժեքության ու թերությունների մասին արտահայտում է իր կարծիքը:

Աշխ.Ց.3. Աշակերտը կարող է պետությունները դասակարգելու հիման վրա, վերլուծել դրանց զարգացման հեռանկարները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է տարածաշրջանային բաժանման սկզբունքը:
- Ծանոթանում է մի քանի տարբեր տարածաշրջանների քարտեզների և դատողություններ է անում դրանց բաժանման սկզբունքի նպատակային կիրառության մասին:
- Ըստ նրանց բնորոշ բնական պայմանների (բնահատուկ լանդշաֆտներ և այլն), համեմատում է յուրաքանչյուր խմբում միավորված երկրները: Տարբեր ձևերով ներկայացնում է իր նկատառումները:
- Քարտեզներում և աշխարհագրական այլ միջոցներում տրված տեղեկատվության հիման վրա, բնութագրում և համեմատում է, ըստ ՄԱԿ-ի դասակարգման, յուրաքանչյուր խմբում միավորված երկրների տնտեսության առաջատար բնագավառները:
- Ըստ բնական պայմանների, բնական պաշարների, տնտեսության բնագավառների, բնակչության և զարգացման հեռանկարների, համեմատում է տարածաշրջանները: Արտահայտում է իր կարծիքներն այդ խմբերի միջև գոյություն ունեցող հնարավոր կապերի մասին:
- Արտահայտում է կարծիքներ և, խմբային աշխատանք կատարելիս, հիմնավորում տարբեր երկրների կայուն զարգացման համար բնակչության, պաշարների և ավանդույթների խելամիտ կիրառության նշանակությունը:

Աշխ.Ց.4. Աշակերտը կարող է, ըստ տարբեր բնութագրիչների, համեմատել պետությունները և դատողություններ անել նմանությունների ու տարբերությունների մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Քարտեզի և այլ դիտողականության օգնությամբ, հետազոտում է երկրների բնական պայմանները: Բերում է համանմանություններ այլ երկրներից (օրինակ, արևադարձային անտառներ, անապատներ, տայգա և այլն):

- Վերլուծում է բնակչության վիճակագրական տվյալները (քարտեզներ, աղյուսակներ, գծապատկերներ, ուրվագծեր և այլն), դատողություններ է անում այլ երկրների համանման տվյալների մասին և արդյունքները պատկերում տարբեր ձևաչափով:
- Ուսումնասիրում է ուսուցանվող երկրի ավանդույթների առաջացման աշխարհագրական և պատմա-մշակութային յուրահատկությունները: Համեմատում է տարբեր երկրները և ենթադրություն անում այն մասին, թե ինչպես կարելի է ավանդույթների բազմաբնույթությունն օգտագործել երկրի զարգացման համար:
- Տնտեսական գործունեության մասնաճյուղային կառուցվածքի հիման վրա, ըստ զարգացման փուլերի (հողագործական, արդյունաբերական, էտարդյունաբերական), խմբավորում է երկրները:
- Արտահանման և ներմուծման տվյալների հիման վրա, դատողություններ է անում երկրի պաշարների և տնտեսության մասնագիտացված ճյուղերի մասին: Ըստ վերոհիշյալ ցուցանիշների, համեմատում է երկրները:
- Վերլուծում է երկրում գոյություն ունեցող հիմնախնդիրները (մարդկային և բնական պաշարներ, սոցիալ-տնտեսական, քաղաքական և բնապահպանական): Ենթադրություն է անում գոյություն ունեցող հիմնախնդիրները հաջողությամբ լուծելու մասին:
- Վերլուծում է տեքստային տեղեկատվությունը և աշխարհագրական տարբեր միջոցները ու սահմանում, թե ինչպես էր փոխվում ընտրված երկրի դերը աշխարհի ֆոնի վրա: Ենթադրություն է անում երկրի ապագա հեռանկարների մասին (սոցիալ-տնտեսական և ռազմա-քաղաքական ներուժ):

Ուղղություն. Շրջակա միջավայրը և սոցիալական համակարգերը

Աշխ. X.5. Աշակերտը կարող է ուսումնասիրել աշխարհի բնակչության վերաբնակեցման յուրահատկությունները և վերլուծել ժողովրդագրական իրավիճակը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Աշխարհի բնակչության ռասայական և ազգագրական կառուցվածքի աշխարհագրական յուրահատկությունների հիման վրա, կազմում է համապատասխան քարտեզ:
- Վիճակագրական տեղեկատվության հիման վրա, ըստ առաջացման ժամանակի, միևնույն հավատն ունեցող երկրների թվի և բնակչության քանակի (մարդաշատության) խմբավորում է հիմնական կրոնները: Արդյունքները պատկերում է ցանկացած ձևով (աղյուսակ, քարտեզ և այլն):
- Վիճակագրական տեղեկատվության վերլուծման հիման վրա, խմբավորում է երկրները՝ ըստ տարբեր սոցիալ-ժողովրդագրական չափանիշների (կյանքի տևողության, ծնելիության, առողջապահության և կրթության մակարդակի):
- Վիճակագրական տեղեկատվության և ժողովրդագրական համապատասխան ցուցանիշների վերլուծության հիման վրա համեմատում է ժողովրդագրական անցման փուլերը: Աղյուսակում խմբավորում է տարբեր փուլերում գտնվող երկրները:
- Դատողություններ է անում ժողովրդագրական քաղաքականության նշանակության մասին: Խմբային աշխատանք կատարելիս՝ մշակում է ժողովրդագրական քաղաքականության գնահատման չափանիշները, համեմատում և վերլուծում է տարբեր

երկրներում իրականացված ժողովրդագրական քաղաքականության արդյունքները (հաջողակ և անհաջող):

- Վերլուծում է աշխարհի բնակչության աճի կանխատեսումը և նրա տարածաշրջանային յուրահատկությունները: Համեմատում է աշխարհի բնակչության ապագայի սցենարները և արդյունքն արտահայտում իր ցանկացած ձևով:

Աշխ. X.6. Աշակերտը կարող է վերլուծել տարածքային և աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը հասարակության զարգացման վրա:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բնութագրում է աշխարհագրական դիրքի մակարդակները (տարածաշրջանային, աշխարհամասային, ծովափնյա, զոնալ, հարևանություն և փոխհարաբերություններ զարգացած և զարգացող երկրների միջև): Ըստ նշված տարբեր ցուցանիշների, տարբեր երկրները խմբավորում է աղյուսակում:
- Բերում է օրինակներ և համեմատում տարբեր երկրները ըստ կառավարման ձևի և տարածքային կարգի:
- Դատողություններ է անում աշխարհի տարածաշրջանային տարբերակվածության մասին և համեմատում տարածաշրջանները, ըստ պատմամշակութային և աշխարհաքաղաքական նշանների:
- Խմբային աշխատանք կատարելիս՝ վերլուծում է աշխարհաքաղաքականության կարևոր գործոնները (տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և ռազմական քաղաքականությունը) և, ըստ նշված չափանիշների, խմբավորում երկրները ըստ աշխարհաքաղաքական կուրսի:
- Վերլուծում է նշանակալից միջազգային ռազմա-քաղաքական, ֆինանսական և տնտեսական կազմակերպությունների դերը նրանցում անդամագրված երկրների զարգացման համար, երկրների պատկանելությունը հիմնական կազմակերպություններին: Դատողություններ է անում դրանց ընդլայնման հեռանկարների մասին և ստեղծում համապատասխան քարտեզներ:

Ծրագրի բովանդակությունը

X դասարանի պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանի համար հատկացված ամբողջ բովանդակության 60%-ը):

Աշխարհի քաղաքական քարտեզը: Քաղաքական քարտեզի ձևավորման փուլերը:²¹

- 1-ին փուլ – Հին ժամանակաշրջան:
- 2-րդ փուլ – Միջին դարերի ժամանակաշրջան:
- 3-րդ փուլ – Նոր ժամանակաշրջան:
- 4-րդ փուլ – Նորագույն ժամանակաշրջան:
- 5-րդ փուլ – Արդի ժամանակաշրջան:

Քաղաքների տիպերը.

6. Երկրներն ըստ տարածքային մեծության:
7. Երկրներն ըստ բնակչության քանակի:
8. Երկրներն ըստ աշխարհագրական դիրքի:
9. Երկրներն ըստ բնական պաշարների:

Աշխարհի ժողովրդագրական իրավիճակը:

10. Ռասաներ, ազգագրական և կրոնական կառուցվածքներ:
11. Ժողովրդագրական անցման տեսությունը:
12. Ժողովրդագրական քաղաքականությունը:

Քաղաքական աշխարհագրությունը և աշխարհաքաղաքականությունը:

13. Երկրներն ըստ վարչա-տարածքային կարգի:
14. Երկրներն ըստ կառավարման ձևի:
15. Երկրներն ըստ արտաքին քաղաքական կուրսի (ռազմական միավորումները և չեզոք երկրները):
16. Նշանակալից միջազգային ռազմա-քաղաքական, տնտեսական-ֆինանսական, մարդասիրական և մարզական կազմակերպությունները:
17. ՄԱԿ (Յունիսեֆ, Եվրախորհուրդ):
18. ՆԱՏՕ:
19. Եվրամիություն, Եվրախորհուրդ:
20. ԱՊՄ
21. Համաշխարհային առևտրական կազմակերպություն:
22. ՕՊԷԿ
23. Կարմիր խաչ:
24. Օլիմպիական կոմիտե:
25. Երկրներն ըստ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի (մարդասիրական զարգացման դասիչ):
26. Զարգացած և զարգացող երկրներ (հյուսիսային և հարավային բաժանում):

²¹ Շեղ տառատեսակով տրված բովանդակությունը պարտադիր չէ:

Երկրների տիպերը ըստ տարածաշրջանային բաժանման:²²

27. Հյուսիսային Ամերիկա (ԱՄՆ):
28. Հարավային Ամերիկա (Բրազիլիա, Չիլի):
29. Եվրոպա (Գերմանիա, Միացյալ Թագավորություններ):
30. Ասիա (Չինաստան, Հնդկաստան):
31. Ավստրալիա և Օվկիանիա (Ավստրալիա):
32. Աֆրիկա (Հարավաֆրիկյան Հանրապետություն):

²² Անհրաժեշտ է յուրաքանչյուր խմբի ընդհանուր բնութագրություն (ընդհանուր տեսություն) և ըստ յուրաքանչյուր չափանիշի ոչ պակաս մի երկրի բնութագրում:

X դասարան

Քաղաքացիական կրթություն

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Անհատական զարգացում	Կայուն զարգացում	Ինքնակառավարում և կառավարում
<p>Քաղ.X.1. Աշակերտը կարող է ինքնահաստատվել հասարակության մեջ:</p> <p>Քաղ.X.2. Աշակերտը կարող է վերլուծել մարդկային արժանապատվության էությունը:</p> <p>Քաղ.X.3. Աշակերտը կարող է կապել ազատ անհատի և ակտիվ քաղաքացու հատկանիշները:</p> <p>Քաղ.X.4. Աշակերտը կարող է քննադատաբար գնահատել իր ապագա գործունեության պլանը:</p>	<p>Քաղ.X.5. Աշակերտը կարող է սոցիալական հիմնախնդիրների լուծմանը գիտակցված մասնակցել և համագործակցել:</p> <p>Քաղ.X.6. Աշակերտը կարող է վերլուծել բազմերանգ հասարակությունում արդարացի հարաբերություններ ապահովելու միջոցները:</p> <p>Քաղ.X.7. Աշակերտը կարող է ուսումնասիրել քաղաքացիական հասարակության հիմնական հիմունքները:</p> <p>Քաղ. X 8. Աշակերտը կարող է ուսումնասիրել Վրաստանի կայուն զարգացման հնարավորությունները:</p>	<p>Քաղ. X 9. Աշակերտը կարող է վերլուծել Վրաստանի պետական կառավարման համակարգի զարգացման գործընթացը:</p> <p>Քաղ.X.10. Աշակերտը կարող է ուսումնասիրել և կիրառել Վրաստանի քաղաքացու հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցելու հնարավորությունները:</p> <p>Քաղ.X.11. Աշակերտը կարող է վերլուծել քաղաքացիների դերը երկրի ժողովրդավարության մեջ:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները:

Ուղղություն. Անհատական զարգացում

Քաղ.X.1. Աշակերտը կարող է ինքնահաստատվել հասարակության մեջ:
Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սահմանում է հասարակական այնպիսի խումբ, որին ինքը պատկանում է և գնահատում, թե որքանով են համապատասխանում նրա ձգտումներն ու շահերը խմբի հետաքրքրություններին և ձգտումներին:
- Սեփական փորձի հիման վրա, դատողություններ է անում անցյալում կատարված և ներկայումս ընթացող նշանակալից իրադարձությունների մասին, կապում է դրանք իրար հետ և վերլուծում, թե որքանով է ներգործում անցյալում ձեռք բերած հաջողությունը կամ անհաջողությունը ներկայիս արդյունքների վրա, գնահատում է իր դերն այդ իրադարձություններում:

Քաղ.X.2. Աշակերտը կարող է վերլուծել մարդկային արժանապատվության էությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պարզաբանում է մարդկային արժանապատվության էությունը:
- Սոցիալ-մշակութային տարբեր միջավայրերում քննարկում է մարդու արժանապատվության չափանիշները և առանձնացնում համակողմանի նմանությունները:
- Դատողություններ է անում տարբեր հասարակարգերում մարդկային արժանապատվությունը հարգելու գործոնների մասին:
- Դատողություններ է անում զինված հակամարտության զոհերի արժանապատվությունը հարգելու հնարավորությունների մասին:

Քաղ.X.3. Աշակերտը կարող է կապել ազատ անհատի և ակտիվ քաղաքացու հատկանիշները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանձնացնում է անհատի ազատությունների և քաղաքացու ակտիվության համանման նշանները:
- Կապում է մարդու իրավունքները և ազատությունները Վրաստանի քաղաքացիների պարտականությունների հետ:
- Դատողություններ է անում հասարակության մեջ ազատ անհատի ակտիվ քաղաքացիության համար պարտադիր պայմանների մասին:

Քաղ.X.4. Աշակերտը կարող է քննադատաբար գնահատել իր ապագա գործունեության պլանը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սահմանում է ենթադրվող գործողությունները, որոնց իրագործումը ինքն է պլանավորում, որակավորում է դրանք ըստ կարևորության:
- Համադասարանցիների հետ գրում է ապագայի ընդհանուր նպատակները, կարող է, ինչպես ըստ ցուցակի, այնպես էլ ըստ ժամկետի, իրարից սահմանագծել իրագործելիք նպատակները: Դատողություններ է անում դրանց իրատեսության և նպատակներին հասնելու ուղիների մասին:
- Սեփական հնարավորությունների և նպատակների վերլուծման հիման վրա, անվանում է հասարակական կյանքի այն ոլորտը, որի հետ ենթադրաբար կապում է իր գործունեությունը: Դասարանում հայտնաբերում է համախոհներ, որոնց հետ

հավաքում է տեղեկատվություն այդ ոլորտի մասին և այն ուսումնասիրելուց հետո, սահմանում է իր ապագա ենթադրյալ գործունեությունը:

Ուղղություն. Կայուն զարգացում

Քաղ. X.5. Աշակերտը կարող է սոցիալական հիմնախնդիրների լուծմանը գիտակցված մասնակցել և համագործակցել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Իր բնակավայրում առանձնացնում է սոցիալական տարբեր փոքրամասնությունների (*օրինակ, միայնակ ծերեր, հաշմանդամներ, անապաստան երեխաներ, գաղթականներ և այլն*): Դատողություններ է անում այդ մարդկանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի յուրահատկությունների մասին:
- Առանձնացնում է Վրաստանում, իր կարծիքով, ամենաանապահով սոցիալական խմբերը և դատողություններ անում հասարակության կողմից դրանց օգնություն ցուցաբերելու հնարավորությունների մասին: Հիմնավորում է իր կարծիքները:
- Համադասարանցիների հետ քննարկում է, թե ինչ ներդրում կարող է անել նա իր բնակավայրում օրվա առողջ ապրելակերպի գաղափարը ժողովրդականացնելու գործում: Կազմում է պլան և դպրոցի ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցնելով, իրականացնում տեղեկատվական-կրթական քարոզարշավ:
- Համադասարանցիների հետ մեկտեղ, ընտրում է հասարակական այն խումբը, որին իր կարծիքով, անհրաժեշտ կլինի հանրության աջակցությունը, բացահայտում է այս խմբի ընդհանուր նպատակներն ու խնդիրները, համադասարանցիների հետ պլանավորում է այս հասարակական խմբին (կամ կոնկրետ ներկայացուցչին) օգնելու միջոցառումներ և դպրոցական ինքնակառավարման աջակցությամբ, համագործակցում է տեղական իշխանությունների հետ՝ ընտրված խմբին օգնելու նպատակով:
- Մասնակցում է «Ի՞նչ կարող ենք մենք ավելացնել դպրոցում» թեմայով դպրոցական բանավեճին, որի նպատակն է ճշտել դպրոցի կարիքները և համադասարանցիների համապատասխան հնարավորությունները: Հաշվի է առնում նախորդ տարի անցկացված համանման աշխատանքի արդյունքները և մշակում իր սեփական գործողությունների պլանը, որը համաձայնեցնում է համադասարանցիների հետ: Պլանավորած ակտիվություններում (օրինակ, դպրոցի գրադարանի կամ մարզադահլիճի համալրում, ցածր դասարանցիների էքսկուրսիաների ժամանակ ուսուցիչներին օգնություն, դպրոցի և նրա շրջակայքի բարեկարգում և այլն) կատարում է իրեն հատկացված աշխատանքը:

Քաղ. X.6. Աշակերտը կարող է վերլուծել բազմերանգ հասարակությունում արդարացի հարաբերություններ ապահովելու միջոցները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բնութագրում է հասարակության մեջ արդարացի փոխհարաբերությունների պայմանները և կապում բազմերանգության նշանները:

- Հավասարության սկզբունքը կապում է փոխհարաբերությունների արդարացիության նորմերի հետ:
- Բացատրում է, թե անհատն ինչու է պարտավոր պահպանել օրենքը, նկարագրում և գնահատում այն ռիսկերը, որոնք հետևում են անօրինական գործողություններին:
- Համադասարանցիների հետ, սեփական հետազոտությունների հիման վրա, ընտրում և խաղում է կոնֆլիկտային մի որևէ իրավիճակ, քննարկում է այն կարգավորելու հնարավոր ուղիները (*օրինակ՝ շահերի դիրքից, կանոնների դիրքից*), ընտրում է տրված դեպքի համար ամենաարդյունավետը, հիմնավորում է իր կարծիքը:
- Իր դասարանի օրինակով (*իր և համադասարանցիների շահերը վերլուծելուց հետո*) դատողություններ է անում մարդու անհատական և հասարակական շահերի մասին: Առանձնացնում է այն ընդհանուր շահերը, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել հասարակական համաձայնության համար:
- Ընտրում է որևէ երկիր պատմական անցյալից կամ ժամանակակից իրականությունից և նկարագրում նրա սոցիալական կառուցվածքը: Քննարկում է սոցիալական տարբեր խմբերի իրավական վիճակը, փոխհարաբերությունները և յուրաքանչյուրի դերը հասարակական-քաղաքական կյանքում, վերլուծության արդյունքները ծանոթացնում է դասընկերներին:
- Մասնակցում է «Ինչո՞ւ են երեխաները խախտում օրենքը» թեմայով բանավեճին: Դատողություններ է անում անչափահաս հանցագործների իրավունքների և նրանց պաշտպանության օրենսդրական տարբերակների մասին: Գրում է շարադրություն «Ի՞նչ խորհուրդ կտայի իմ հասակակցին»:
- Դատողություններ է անում տարբեր տեսակի (*օրինակ՝ գողություն, թմրանյութերի տարածում, սպանություն, կոռուպցիա, խտրականություն, խարդախություն, բռնություն, մարդկանց առևտուր՝ թրաֆիքինգ, և այլն*) հանցագործություններ առաջացնող պատճառների և դրանց նվազեցման ուղիների մասին:
- Մասնակցում է դասարանական բանավեճի՝ «Ունի՞ արդյոք մեր հասարակությունը օրինականության մշակույթ» թեմայով, գնահատում է հասարակության վերաբերմունքն այս խնդրի նկատմամբ իր թաղամասում (կամ երկրում), դատողություններ է անում քաղաքացիների, օրենսդիր և իրավապահ մարմինների փոխադարձ կապի մասին, գրում է դասարանում կայացած բանավեճի արձանագրություն կամ հաշվետվություն:
- Մասնակցում է բանավեճի «Ո՞ր օրենքներն են ավելի հզոր՝ գրված, թե չգրված», իր դիրքորոշումը հիմնավորում է կոնկրետ օրինակների (ժամանակակից իրականություն, գրականություն կամ պատմություն) քննարկումով և գնահատման ժամանակ նույնականացնում է չափանիշները, որոնց հիմնվում է ինքը:
- Դատողություններ է անում, թե ինչպես կվարվի իր իրավունքների խախտման դեպքում և բացատրում է, թե ինչու է պետք հաշվի նստել այլոց ազատությունների հետ, ձեր իրավունքների պաշտպանության ժամանակ:

Քաղ.X.7. Աշակերտը կարող է ուսումնասիրել քաղաքացիական հասարակության հիմնական հիմունքները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է «Ի՞նչ է նշանակում քաղաքացիական հասարակություն» թեմայով բանավեճին: Արտահայտում է իր կարծիքը Վրաստանում գոյություն ունեցող

քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների դերի մասին: Զուգահեռներ է անցկացնում այլ երկրների հետ:

- Իր բնակավայրում (տարածաշրջանում) ընտրում է հասարակական մի որևէ կազմակերպություն և նրա մասին գտնում տեղեկատվություն: Դատողություններ է անում այդ կազմակերպության ստեղծման պատճառների ու նպատակների մասին:
- Անվանում է մարդու իրավունքների ոտնահարման տեսանկյունից ամենանշանակալից հասարակական իրադարձությունը Վրաստանում, ծանոթանում է դրա հետ կապված հրապարակված նյութին, ձեռք բերված տեղեկատվության հիման վրա գրում է ռեֆերատ: Մատնանշում է, թե ինչ իրավունքներ են խախտվել և, եթե չխախտվեին այդ իրավունքները, ապա ի՞նչ արդյունքի կհասներ հասարակությունը:

Քաղ. X 8. Աշակերտը կարող է ուսումնասիրել Վրաստանի կայուն զարգացման հնարավորությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Իր բնակավայրի օրինակով թվարկում է մարդկանց տարբեր գործունեություններ, որոնք եկամուտ ստանալու համար են իրականացվում, և խմբավորում է դրանք, ըստ ապրանքների արտադրության և ծառայությունների ոլորտի, յուրաքանչյուր գործունեության համապատասխանեցնում է օգտագործած միջոցների տեսակները (*օրինակ՝ բնական, մարդկային, կապիտալ*):
- Համադասարանցիների խմբի հետ ընտրում է և գրում մի քանի օրենք և սահմանադրական դրույթ, որոնց պահպանումն ապահովում է հասարակական կարգը և անվտանգ ապրելու պայմանները հասարակության *համար (օրինակ՝ դպրոց, ընտանիք, թաղամաս, քաղաք և այլն)*: Մասնակցում է բանավեճի օրենքի գերակայության և օրինականության ապահովման մասին:
- Հավաքում է և վերլուծում տեղեկատվություն մարդու, այսպես կոչված, բնական վիճակի մասին, գեղարվեստական գրականության կամ պատմական աղբյուրների օրինակով նկարագրում է այնպիսի հասարակության մոդել, որտեղ «Մարդը մարդու համար գալի է» և համեմատում է որևէ կենսասոցիումի ապրելակերպի հետ, վերլուծության հիման վրա սահմանում է և հիմնավորում որևէ հասարակությունում (*օրինակ, դպրոց, թաղամաս, գյուղ, ձեռնարկություն, երկիր և այլն*) համաձայնության հասնելու պայմանները:
- Մասնակցում է քննարկումների «Ո՞ր օրենքներն են ավելի գորեղ՝ գրված, թե չգրված»: Իր դիրքորոշումը հիմնավորում է կոնկրետ օրինակների (Ժամանակակից իրականությունից, գեղարվեստական գրականությունից կամ պատմությունից) քննարկմամբ և գնահատման ժամանակ ընդգծում է այն չափանիշները, որոնց նա հիմնվում է:
- Դատողություն է անում, թե ինչպես կվարվի իր իրավունքների խախտման դեպքում և բացատրում է, թե ինչու է պետք հաշվի առնել այլոց ազատությունները, սեփական իրավունքների պաշտպանության ժամանակ:
- Դատողություն է անում տարբեր սոցիալական միջավայրերի (*օրինակ, ընկերներ, հարևաններ, մասնագիտական և հասարակական միավորումներ*) ձևավորումը և կայունությունը սահմանող գործոնների մասին (*օրինակ, ընդհանուր արժեքներ, շահեր, հատկանիշներ, պայմաններ, ձգտումներ և այլն*), դատում

է այն հատկությունների մասին, որոնք բնորոշ են Վրաստանին, զուգահեռներ է անցկացնում այլ երկրների հետ:

Ուղղություն. Կառավարում և ինքնակառավարում

Քաղ. X 9. Աշակերտը կարող է վերլուծել Վրաստանի պետական կառավարման համակարգի զարգացման գործընթացը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Որևէ իրավապահ պետական մարմնի (*օր., ոստիկանություն, դատական համակարգ, ժողովրդական պաշտպան, կամ այլ*) կամ հասարակական կազմակերպության օրինակով, քննարկում է նրանց լիազորությունները, նշանակումը (կամ նպատակները) և գործունեությունը հասարակական կարգի պահպանման մեջ, գնահատում է առկա փորձի թերի և հաջողակ կողմերը:
- Ժամանակի սանդղակի վրա նշում է Վրաստանի պետական կառավարման զարգացման համար մի քանի (3-5) նշանակալի իրադարձություն: Դատում է յուրաքանչյուր իրադարձության հետևանքների մասին, զուգահեռներ է անցկացնում նույն ժամանակահատվածի այլ երկրների հետ (օրինակ, հարևան երկրներ, Եվրոպա, Մերձավոր Արևելք, Արևելյան Ասիա կամ Ամերիկա):
- Դատում է Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետության և առաջին Սահմանադրության կարևորության մասին ժամանակակից վրացական պետության համար, անվանում է սահմանադրական իրավահաջորդությունը հավաստող փաստերը և վերլուծում փոփոխությունները (*օրինակ՝ պետական կարգ, կառավարում, ընտրական համակարգ և այլն*), բացահայտում է իր վերաբերմունքը տեղի ունեցած փոփոխությունների նկատմամբ:
- Վրաստանի գործող Սահմանադրության քննարկման ժամանակ դատողություն է անում նրա նախապայմանների և արդյունքների մասին, սեփական կարծիքները գրում է աղյուսակի ձևով:
- Հիմնավորում է ինքնակառավարման զարգացման կարևորությունը վրացական պետության համար:
- Արտահայտում է սեփական պատկերացումները պետության ժողովրդավարության և ինքնավարության վերաբերյալ: Ընտրում է Վրաստանի նման (բնակչության թվով) որևէ պետություն և այն համեմատում Վրաստանի հետ, ըստ այս երկու նշանների, ընդգծում է նմանությունները և տարբերությունները:
- Ուսումնասիրում է Վրաստանի պետական կառավարման ժամանակակից համակարգը (կառուցվածքը, նրա մասերի գործառույթները և փոխադարձ կապը), համեմատում է Վրաստանում նախկինում գոյություն ունեցած կառավարման համակարգերը՝ ժողովրդավարության և օրենքի գերակայության առումով, աշխատանքի արդյունքները քննարկման է ներկայացնում դասընկերներին:

Քաղ.X.10. Աշակերտը կարող է ուսումնասիրել և կիրառել Վրաստանի քաղաքացու հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցելու հնարավորությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ժամանակի գծի վրա նշում է այն փուլերը, երբ ձեռք է բերել իր համար կարևոր իրավունքը և ունեցել առանձնահատուկ պարտականություն, նույն գծի վրա նշում է այն փուլերը, երբ նա տարբեր (լրացուցիչ կամ ընդլայնված) իրավունքներ և պարտականություններ է ունեցել (օրինակ՝ կառավարման, ընտրություններին մասնակցելու, ընտանիք կազմելու, զինվորական ծառայություն և այլն), գրում է ակնարկ՝ «Իմ իրավունքներն ու պարտականությունները»:
- Ընտրում է վերջին ժամանակների հակամարտություններից որևէ մեկը (*օրինակ, իրենց սեփական փորձից, դասարանական միջադեպ, լրատվամիջոցների միջոցով բարձրաձայնած կամ ուրիշներ*), դասընկերների խմբի հետ մեկտեղ քննարկում է այն, սահմանում է հակամարտությունը որ խմբին է պատկանում (*արժեքների, տեղեկատվական, փոխվերաբերմունքի, ինստիտուցիոնալ, շահերի*), առանձնացնում է հակամարտության կողմերի գործողությունները, խմբի հետ քննարկում է նրա պատճառներն ու կարգավորման ուղիները:
- Դատողություններ է անում հասակակիցների համար ակտիվ հարցերի մասին (բարեկամություն, ծնողների հետ հարաբերություններ, մասնագիտության ընտրություն և այլն), սահմանազատում է այս հարցի հետ կապված տարբեր դիրքորոշումների ուժեղ և թույլ կողմերը:
- Մասնակցում է դպրոցի զարգացման հետ (*օրինակ՝ ուսման որակ, տեխնիկական սարքավորումներ, եկամուտների աճ, մասնակցություն ազգային և միջազգային նախագծերի և այլն*) կապված դասարանական բանավեճի կամ դպրոցի ինքնակառավարման համապատասխան մարմնի քննարկման, կոնկրետ արտահայտում է և պաշտպանում իր դիրքորոշումը:
- Ընտրում է իր կամ որևէ հասարակական խմբի համար հրատապ խնդիր (*օրինակ՝ կրթություն ստանալ, զբաղվածություն, մարդու իրավունքների ոտնահարում, քաղաքացիական վեճեր, հարկային կոնֆլիկտ, սոցիալական ապահովություն, առողջապահության և շրջակա միջավայրի պաշտպանություն, քաղաքական կամ կրոնական խտրականության և այլն*), ձեռք է բերում տեղեկատվություն, որի վերլուծության հիման վրա գրում է կոնկրետ խնդրի լուծման պլան (հնարավոր է մի քանի տարբերակ)՝ կողմերի իրավունքների ու օրինական գործունեության նախատեսմամբ, սահմանում է իր դերը խնդրի լուծման մեջ, իր շուրջը հավաքում է համախոհների և գործում պլանի համաձայն, գնահատում է իր մասնակցության արդյունավետությունը ու հետևանքները տեղեկացնում դասընկերներին:
- Ընտրում է որոշակի կոնֆլիկտային իրավիճակ քաղաքացիների կյանքից (սոցիալական, տնտեսական կամ քաղաքական), ուսումնասիրում է ստեղծված իրավիճակը և կողմերի շահերը: Համադասարանցիների հետ խաղարկում է տվյալ իրավիճակը և դրա լուծման այլընտրանքային տարբերակներ, դատողություն է անում այս ուղիների դրական և բացասական կողմերի մասին և ընկերների հետ նախանշում է հակամարտության իրավական կարգավորման ծրագիր:

Քաղ.X.11. Աշակերտը կարող է վերլուծել քաղաքացիների դերը երկրի ժողովրդավարության մեջ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատում է ժողովրդավարության սաղմնավորման և զարգացման մասին, համեմատում է Վրաստանի և որևէ այլ երկրների օրինակներ:
- Ուսուցչի և համադասարանցիների հետ կազմում է իրավունքների և պարտականությունների ցուցակը, որն ուսումնական տարվա ընթացքում իրենց համար ձեռք է բերում պարտադիր բնույթ:
- Դատողություն է անում Վրաստանի Սահմանադրությամբ շնորհված իրավունքների ու պարտականությունների և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով շնորհված իրավունքների ու պարտականությունների մասին և համեմատում է դրանք:
- Վրաստանի կամ այլ երկրի պատմությունից անվանում է իրադարձություններ, երբ պետական կառավարման մեջ փոփոխություններ տեղի ունեցան հասարակության ազդեցությամբ, գնահատում է այդ իրադարձությունների արդյունքները ժողովրդավարության կառուցման մեջ առաջընթացի (կամ հետընթացի) տեսանկյունից:
- Բնութագրում է ժողովրդավարության հիմնական սկզբունքները և դրանց հետ կապում մարդու իրավունքները և պարտականությունները, իր կարծիքը հաստատում է իրեն հայտնի միջազգային փաստաթղթերի դրույթների միջոցով (*ինչպես օրինակ՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիան, Երեխաների իրավունքների պաշտպանության կոնվենցիան և այլն*):
- Վրաստանի Սահմանադրության մեջ գտնում է հոդվածներ, որոնք վերաբերում են Վրաստանի քաղաքացիների ընտրական իրավունքներին, դրանց վերլուծության հիման վրա դատողություն է անում ժողովրդավարական և արդար ընտրությունների սկզբունքներին նրանց համապատասխանության մասին (*օրինակ՝ համընդհանուր լինելը, ուղղակիությունը, քվեարկության գաղտնիությունը, հավասարությունը*), իր դպրոցի, բնակավայրի կամ տարածաշրջանի օրինակով գնահատում է տարբեր ընտրական համակարգերը (օր.՝ մեծամասնական, համամասնական և այլն)՝ քաղաքացիների իրավունքների պաշտպանության տեսանկյունից:
- Ընտրում է կարևոր իրադարձություն հասարակական-քաղաքական կյանքից և համադասարանցիների խմբի հետ քննարկում է այս իրադարձության մեջ մարդկանց մասնակցելու պատճառաբանությունը, հնարավորությունները և աստիճանը, համապատասխան իրավական փաստաթղթերի վերլուծության հիման վրա գրում է երաշխավորություններ հասարակության մասնակցության խրախուսման համար:
- Ծանոթանում է և ընկերների հետ քննարկում դպրոցի հոգաբարձուների խորհրդի և տնօրինության որոշումները՝ կապված ուսուցման գործընթացի հետ, վերլուծում է, թե որքանով են իրենց դպրոցում նախատեսված հասարակական շահերը (*օրինակ՝ աշակերտների ինքնակառավարման մարմինների, ուսուցիչների, ծնողների, թաղամասի բնակիչների և այլն*) և համադասարանցիների խմբի հետ գրում տարեկան հաշվետվության նախագիծ՝ դպրոցի զարգացման մեջ դպրոցի հասարակության մասնակցության մասին:

Օրագրի բովանդակությունը

Ճ դասարանի պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Մտորն ներկայացված հարցերը կազմում են այս դասարանին հատկացված ամբողջ բովանդակության 60%-ը):

Անձնական զարգացում

1. Ինքնագնահատում, նպատակառոտ դրվածություն և նվաճում
2. Սեփական կյանքի կառավարում և գնահատում
3. Անձնական ազատություն և քաղաքացիական
4. Մարդկային և անձնական արժանապատվություն
5. Կրթություն և ստանալու և մասնագիտական պատրաստման հնարավորություններ
6. Աշխատանքի իրավունքներ սեփական երկրում և նրա սահմաններից դուրս
7. Չափահասություն` նոր հնարավորություններ և պարտականություններ

Կայուն զարգացում

1. Ընտանեկան պարտականություններ և պատասխանատվություն
2. Հավասարություն և արդարություն` չափումները, հիմունքները, պաշտպանական մեխանիզմները
3. Սոցիալական պաշտպանություն և դրամեխանիզմները
4. Հիմնախնդրի կառավարում / վճռում
5. Հակամարտությունները բազմերանգ հասարակության մեջ և դրանց լուծումը
6. Չսահմանափակված և սահմանափակված հարաբերություններ
7. Համագործակցություն և մրցակցություն

Ինքնակառավարում և կառավարում

1. Հասարակական կարծիք, հանրային որոշումները և դրանց ընդունման ձևերը
2. Մասնակցության մշակույթ` հնարավորությունները, ձևերը և մեխանիզմները
3. Թափանցիկություն ու հրապարակայնություն
4. Հասարակական պատվեր և պետական պարտավորություններ
5. Մարդու իրավունքների պաշտպանության միջոցներ` ազատ, արդարացի դատարան և իրավապահներ
6. Քաղաքացի և քաղաքացիական ծառայող` պարտականությունների բաշխում
7. Ազատ քաղաքացիական հասարակության հիմունքները
8. Ինքնակառավարման հիմունքները և զարգացումը
9. Վրաստանի պետական կառավարման զարգացումը

**XI դասարան
Պատմություն**

Զափոքոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Շրջակա միջավայրը և տնտեսությունը	Պետական կառավարումը և քաղաքականությունը	Մարդը և հասարակությունը	Կրոնը և մշակույթը
<p>Պատմ. XI.1. Աշակերտը կարող է դատողություններ անել համաշխարհային գործընթացներում տնտեսական գործոնի նշանակության մասին:</p> <p>Պատմ. XI.2. Աշակերտը կարող է վերլուծել պաշարների և տնտեսության փոխազդեցությունը:</p>	<p>Պատմ. XI.3. Աշակերտը կարող է վերլուծել պետության էությունը և նշանակությունը:</p> <p>Պատմ. XI.4. Աշակերտը կարող է վերլուծել կառավարման կառուցվածքների ձևավորումը և ժամանակի ընթացքում փոփոխականությունը:</p> <p>Պատմ. XI.5. Աշակերտը կարող է հետազոտել Վրաստանի և աշխարհի ներքին և արտաքին քաղաքականության հանգուցային հարցերը:</p>	<p>Պատմ. XI.6. Աշակերտը կարող է ուսումնասիրել սոցիալական կառուցվածքների փոխհարաբերությունները:</p>	<p>Պատմ. XI.7. Աշակերտը կարող է վերլուծել այս կամ այն երկրի նյութական և հոգևոր մշակույթի վրա կրոնի ազդեցությունը:</p> <p>Պատմ. XI.8. Աշակերտը կարող է հետազոտել տարբեր մշակույթների փոխազդեցության հարցերը:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և ստուգիչներն ըստ ուղղությունների

Ուղղություն. Շրջակա միջավայրը և տնտեսությունը

Պատմ. XI.1. Աշակերտը կարող է դատողություններ անել համաշխարհային գործընթացներում տնտեսական գործոնի նշանակության մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է տնտեսական փոփոխարաբերությունների երկու ձև և դրանք համեմատում իրար հետ (*օրինակ, միջնադարյան արհեստանոցն ու XVIII դարի մանուֆակտուրան*):
- Ընտրում է տնտեսական փոփոխարաբերությունների որևէ ձև և համեմատում Վրաստանում և որևէ այլ երկրում դրա ձևավորումն ու զարգացումը (*օրինակ, ֆեոդալական տնտեսությունը Վրաստանում և Արևմտյան Եվրոպայում*):
- Դատողություններ է անում, թե ինչ ազդեցություն է ունենում այս կամ այն պետության ու ժողովրդի տնտեսական զարգացման վրա աշխարհագրական միջավայրը, բնակչության քանակը և խտությունը:

- Ընտրում է տարբեր դարաշրջաններում տեղի ունեցած երկու գաղթի գործընթաց և համեմատում դրանց պատճառներն ու հետևանքները:
- Գրում է շարադրություն, որտեղ դատողությունն է անում մի որևէ կոնֆլիկտի (պատերազմի) տնտեսական նախադրյալների և արդյունքների մասին:
- Ընտրում է երկու կայսրություն և համեմատում դրանց տնտեսական քաղաքականությունը՝ ծայրամասերում և գաղութներում (*օրինակ, Բուսանիայի ու Անգլիայի քաղաքականությունն իրենց գաղութներում*):
- Ծանոթ է այս կամ այն դարաշրջանի տնտեսական տեսություններին և արտահայտում է իր կարծիքն այն մասին, թե ներգործո՞ւմ են արդյոք դրանք այս կամ այն երկրի/տարածաշրջանի զարգացման վրա,:

Պատմ. XI.2. Աշակերտը կարող է վերլուծել պաշարների և տնտեսության փոխազդեցությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում այն մասին, թե ինչ ազդեցություն են թողնում բնական և մարդաբանական փոփոխությունները տնտեսության զարգացման վրա (*օրինակ, սառչելը, ռոտզման գործոնի նշանակությունը Հին Արևելքի քաղաքակրթություններում*):
- Ընտրում է որևէ դարաշրջան և դատողություններ անում տեխնոլոգիական փոփոխությունների և տնտեսության զարգացման փոխազդեցությունների մասին:
- Ընտրում է որևէ պետություն և դատողություններ անում, թե ինչ ազդեցություն ունի այդ երկրի տնտեսական գերակայությունների համար այն հումքը, որը արդյունահանվում է նրա տարածքում:

Ուղղություն. Պետական կառավարումը և քաղաքականությունը

Պատմ. XI.3. Աշակերտը կարող է վերլուծել պետության էությունը և նշանակությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում պետության բնութագրիչների մասին:
- Ըստ տեսակների խմբավորում է տարբեր դարաշրջանների պետությունները, համեմատում դրանք իրար հետ:
- Համեմատում է պետության սոցիալական կազմակերպությունների տարբեր ձևերը: Դատողություններ է անում դրանց դրական և բացասական կողմերի մասին:

Պատմ. XI .4. Աշակերտը կարող է վերլուծել կառավարման կառուցվածքների ձևավորումը և ժամանակի ընթացքում փոփոխականությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում այն մասին, թե ինչն է առաջացնում պետական կառավարման կառուցվածքներում փոփոխությունների անհրաժեշտություն:
- Արտահայտում է իր կարծիքն այն մասին, թե ինչու է կառավարման այս կամ այն ձևը բնորոշ այս կամ այն դարաշրջանին:

- Վրաստանի տարբեր ժամանակաշրջաններում գոյություն ունեցած կառավարման կառուցվածքները համեմատում է տարբեր երկրներում համապատասխան ժամանակների կառավարման կառուցվածքների հետ:
- Ընտրում է երկու հեղափոխություն և համեմատում դրանք առաջացնող պատճառները:

Պատմ. XI.5. Աշակերտը կարող է հետազոտել Վրաստանի և աշխարհի ներքին և արտաքին քաղաքականության հանգուցային հարցերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է որևէ պետություն և խմբավորում ինչ-որ դարաշրջանում նրա միավորումը կամ անկումը պայմանավորող արտաքին և ներքին գործոնները:
- Ընտրում է որևէ դարաշրջան և համեմատում տարբեր պետությունների հետաքրքրությունը Վրաստանի նկատմամբ:
- Գրում է շարադրություն աշխարհում զարգացած կարևորագույն պատմական իրադարձության մասին, որը նույնպես ազդեցություն է գործել վրաց պետության (պետությունների) հետագա զարգացման վրա:
- Համադասարանցիների խմբի հետ ընտրում է քաղաքական որևէ գործիչ և դատողություններ անում նրա ընտրած արտաքին ու ներքին քաղաքական կուրսի հետևանքների մասին (*օրինակ, Հերակլ II-ի կողմից Գեորգիևսկի տրակտատի կնքումը*):
- Ընտրում է որևէ կոնկրետ դարաշրջան, առանձնացնում այն ժամանակաշրջանի համաշխարհային պետության (պետությունների) շահերը: Սահմանում է վրաց պետության (պետությունների) տեղը և դերը՝ կապված այդ կոնկրետ դարաշրջանի հետ:

Ուղղություն. Մարդը և հասարակությունը

Պատմ. XI.6. Աշակերտը կարող է ուսումնասիրել սոցիալական կառուցվածքների փոխհարաբերությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անհատի նյութական ու սոցիալական իրավիճակների միջև փոխհարաբերությունների մասին իր կարծիքն է արտահայտում:
- Մինչև դարաշրջանի երկու կամ երեք երկրների սոցիալական կառուցվածքները համեմատում է, նշում դրանց միջև եղած նմանություններն ու տարբերությունները:
- Խմբավորում է հասարակության սոցիալական տարբեր շերտերի ներկայացուցիչներին և դատողություններ անում նրանց իրավունքների և պարտականությունների մասին:
- Համեմատում է հողագործությամբ ու անասնապահությամբ զբաղվող ժողովուրդներին կամ լեռնային ու հարթավայրային կառուցվածքները և գտնում նրանց միջև նմանությունները և տարբերությունները:

Ուղղություն. Կրոնը և մշակույթը

Պատմ. XI.7. Աշակերտը կարող է վերլուծել այս կամ այն երկրի նյութական և հոգևոր մշակույթի վրա կրոնի ազդեցությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Համեմատում է Վրաստանի և այլ երկրների նախաքրիստոնեական կրոնական պատկերացումները և արվեստի ու կենցաղի վրա դրանց ազդեցությունը:
- Դատողություններ է անում միաստվածային կրոնների միջև եղած հիմնական նմանությունների և տարբերությունների մասին:
- Գիտակցում է աշխարհի միաստվածային կրոնների ընդերքում գոյություն ունեցող դոգմատիկ տարբերությունները:
- Դասարանական վեճի ժամանակ դատողություններ է անում, թե քրիստոնեությունն ինչ ազդեցություն է թողել վրաց ժողովրդի արվեստի ու կենցաղի վրա:
- Դատողություններ է անում, թե տարբեր դարաշրջաններում և երկրներում ինչպես էին փոխվում փոխհարաբերությունները աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև և ինչպես են ազդել այդ փոփոխությունները երկրի մշակութային զարգացման վրա:

Պատմ. XI.8. Աշակերտը կարող է հետազոտել տարբեր մշակույթների փոխազդեցության հարցերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում և բերում պատմական օրինակներ, երբ այս կամ այն ժողովրդի մշակույթը դրական կամ բացասական ազդեցություն է թողել այլ երկրի պատմա-մշակութային իրականության վրա (*օրինակ, արաբները և իսլամացիները, մոնղոլները և Ռուսաստանը*):
- Անհատական կամ խմբային աշխատանք կատարելիս՝ անվանում է վրաց արվեստի այն կոթողները (*օրինակ, գրականության, կերպարվեստի*), որոնց վրա նկատվում է մեկ այլ մշակույթի ազդեցությունը: Հիմնավորում է իր ընտրությունը:
- Ընտրում է վրացական պաշտամունքային ու ազգային նշանակության հուշարձաններ և գուգահեռներ անցկացնում համանման նշանակություն ունեցող այլ երկրների հուշարձանների ճարտարապետությունների միջև:
- Համեմատում է տարբեր դարաշրջանների քաղաքաշինության կենտրոնները (*օրինակ, հռոմեական դարաշրջանի քաղաքը և միջին դարերի քաղաքը*):
- Միջնադարյան Վրաստանի որևէ քաղաք համեմատում է արևելյան կամ եվրոպական քաղաքներից մեկի հետ և դատողություններ անում նրա ճարտարապետության ու կենցաղի վրա տարբեր մշակույթների ազդեցության մասին:
- Դասարանական բանավեճի ժամանակ դատողություններ է անում եվրոպական և արևելյան մշակույթների փոխհարաբերությունների և նրանցից յուրաքանչյուրի՝ վրաց ժողովրդի արվեստի ու կենցաղի վրա ունեցած ազդեցության մասին:

Ծրագրի բովանդակությունը

XI դասարանի պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանին հատկացված ամբողջ բովանդակության 80%-ը):

1. Հնագույն մարդը.

- ա) Տեսություններ մարդու առաջացման մասին (կրեացիոն և էվոլյուցիոն)
- բ) Հնագույն մարդը (զարգացման մարդաբանական աստիճանները, Դմանխիի հայտնագործությունը և նրա նշանակությունը):

2. Նախնադարյան հասարակությունը:

- ա) Մոցիալական կառուցվածքներ. ազգ, համայնք (առաջնորդի դերը և գործառույթը, ստորակարգության սկզբունքը, աշխատանքային ֆունկցիաները ազգում և համայնքում): Նախնադարյան կրոնը և արվեստը: «Մոցիալ-տնտեսական» համակարգը:
- բ) Նախնադարյան հասարակության զարգացման փուլերն աշխարհում և Վրաստանում:

3. Պետության առաջացումը:

- ա) Տեսություններ պետության առաջացման մասին:
- բ) Պետության հիմնական բնութագրիչները. գիր, կառավարման համակարգ և այլն:
- գ) Ի՞նչ է քաղաքակրթությունը՝ Եգիպտոս, Շումեր, Բաբելոն:
- դ) Ասորեստանը, իսթերը, Ուրարտուն: Հնագույն վրացական պետական միավորումները հին արևելյան դարաշրջանում:

4. Ցամաքային կայսրությունը – Աքեմենյանների Պարսկաստանը մ.թ.ա. VI-IV դ.դ. (նվաճումները, փոխհարաբերությունները փոքրասիական հունական քաղաքների և Հունաստանի միջև: Փոխհարաբերությունները Էգրիսիի հետ, Հարավ-Արևմտյան վրացական տոհմերը Պարսկաստանի կազմում, զրադաշտություն):

5. Ծովային-քաղաքային քաղաքակրթությունները.

- ա) Փյունիկային քաղաք-պետությունները և գաղութատիրությունը:
- բ) Հունական պոլիսները, պետական կառավարման ձևերը:
- գ) Հունական մեծ գաղութատիրությունը և նրա հետևանքները մերձսևծովյա տարածքում, հունական մշակույթի տարածման ոլորտը:
- դ) Հույն-պարսկական պատերազմները:
- ե) Աթենքի Միությունը՝ առաջին ծովային «կայսրությունը» ստեղծելու փորձը:
- զ) Պելոպոնեսի պատերազմները:
- է) Էգրիսի և Անտիկ Հունաստանը:

6. Ալեքսանդր Մակեդոնացին և հելլենական դարաշրջանը:

- ա) Ալեքսանդր Մակեդոնացու կայսրությունը, հելլենիզացում և հելլենական պետությունները:
- բ) Վրացական պետությունները և հելլենական աշխարհը:

7. Հռոմ:

- ա) Հռոմի առաջացումը: Հռոմեական հասարակությունը, պետական կարգը՝ թագավորություն (հանրապետություն):
- բ) Հռոմեական նվաճումները (Պունիկյան պատերազմները, պատերազմը սելևեկյանների հետ, Միհրդատյան պատերազմները և Վրաստանը): Հանրապետության անկումը:

8. Հռոմը կայսրության դարաշրջանում.

- ա) Պրինցիպատ և դոմինատ – Հռոմի տնտեսությունը, մշակույթը, հասարակական փոխհարաբերությունները. Կարակալայի հրովարտակը (Էդիկտը):

բ) Հռոմի կայսրությունը և Վրաստանը, Հռոմի հարաբերությունները Պարթևական պետության և Սասանյան Պարսկաստանի հետ:

9. Ժողովուրդների մեծ վերաբնակեցումը.

ա) Հռոմը և «Բարբարոսական աշխարհը», փոփոխություններ Եվրոպայում և Մերձավոր Արևելքում IV-VI դարերում (գերմանական ցեղային միավորումները, հոներ: Հռոմի անկումը, Եվրոպայի քաղաքական քարտեզը):

բ) Արևելյան Հռոմի կայսրությունը՝ Բյուզանդիա:

10. Քրիստոնեությունը որպես համաշխարհային կրոն. Կատակոմբյան եկեղեցուց մինչև Միլանի հրովարտականները: Քարոզչության հետևանքները Հռոմի կայսրությունում, և դրսում, «հրաշքի» ֆենոմենը քրիստոնեացման ժամանակ (ֆրանկներ, Քարթլի, Հայաստան և այլն): Ավգուստին Երանելին և կապադովկացի հայրերը: Վրացական եկեղեցական ժողովները և Վրաստանը:

11. Հին ախոյանները նոր իրականության մեջ՝ քրիստոնյա Բյուզանդիան և զրադաշտական Պարսկաստանը V-VI դարերում:

ա) Պարսկաստանի և Բյուզանդիայի պայքարը Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում V դարում:

բ) Հուստինիանոս I (Հռոմը վերականգնելու փորձերը Արևմուտքում և կայսերական հին հավակնությունները Արևելքում (փոխհարաբերությունները Խոսրով Անուշիրվանի հետ, խոշոր պատերազմական ժամանակները Էզրիսիում):

գ) Հուստինիանոսի «իրավունքը» (նրա ազդեցությունը և մասշտաբները), մշակույթը և Վերածնունդը:

12. Միջին դարերի եվրոպական քաղաքակրթության ձևավորումը (քաղաքական պատմության համատեքստում):

ա) Պապիզմ

բ) Եվրոպական ֆեոդալիզմը, քաղաքները միջին դարերում: Կոմունան Եվրոպայում:

գ) Ֆեոդալիզմը Վրաստանում:

13. Պայքար առաջնության համար՝ քրիստոնեական աշխարհում, միջին դարերում:

ա) Հերակլ կայսրը և նրա դարաշրջանը, նրա արշավանքները Արևելքում և Վրաստանում, արտաքին քաղաքական կողմնորոշման հարցը Հարավային Կովկասի երկրներում:

բ) Սրբապատկերների դեմ կռիվները և դրա քաղաքական-կրոնական հետևանքները Արևելքում և Արևմուտքում:

գ) translacio imperii – Միացյալ Արևմտյան Եվրոպան Կառլոս Մեծի կայսերական թագի ներքո, հակադրություն Հռոմի Պապի և Կոստանդնուպոլսի պատրիարքի միջև: Մակեդոնյան տոհմը և Վրաստանը, եկեղեցական պառակտումը և Վրաստանը, վրաց թագավորների արտաքին քաղաքական ձգտումները:

14. Արաբները – Իսլամի առաջացումը, շիաները և սունիները, օմայանները և աբասյանները, արաբները Եվրոպայում, Արաբոբան Վրաստանում, Արաբական մշակույթը:

15. Թուրք-սելջուկները – սելջուկյան պետության ստեղծումը, նվաճումներ, Մանասկերտի ճակատամարտը, թուրք-սելջուկները և Վրաստանը:

16. Խաչակրաց դարաշրջանը – խաչակրաց աշրավանքների պատճառները, իրադարձությունների ժամանակագրությունը, ասպետական շքանշաններ, արդյունքները, խաչակիրները և Վրաստանը:

17. Մոնղոլների նվաճումները և նրա արդյունքները, մոնղոլները Վրաստանում:

18. Նոր իրականությունը Միջին դարերում.

ա) «Համալսարանական ժամանակաշրջանը» Եվրոպայում և Արևելքում (այդ թվում նաև Վրաստանում), եվրոպական և արևելյան փիլիսոփայական միտքը, գիտությունը, գրականությունը: Վրաց մշակույթի «Ոսկե դարը»:

- բ) Դասային-ներկայացուցչական մարմիններ. ազատությունների մեծ հրովարտակից մինչև խորհրդարան (գերագույն նահանգներ, կորտեսներ, լանդստագներ և այլն, դասային-ներկայացուցչական մարմինների ստեղծման փորձ Վրաստանում):
- 19. Վերածննդի դարաշրջանը** – Բյուզանդիայի անկումը և Վերածննդի սկիզբը Իտալիայում, Վերածննդի և մարդասիրության բնութագրիչները, Վերածննդի եվրոպական կենտրոնները:
- 20. Կոստանդնուպոլսի անկումը.**
- ա) Օսմանյան պետության ստեղծումը և առաջին նվաճումները:
 - բ) Կաթոլիկական Եվրոպան և Բյուզանդիան: Բյուզանդիայի անկման նշանակությունը Եվրոպայի և Վրաստանի համար (կուլտուրական, տնտեսական և քաղաքական տեսանկյուններ): Հակաթուրքական կռաւիցիան և Վրաստանը:
- 21. Աշխարհագրական խոշոր հայտնագործություններ:**
- ա) Հաղորդակցության նոր ուղիների և աշխարհամասերի հայտնագործումը:
 - բ) Մինչկոլումբոսյան Ամերիկան:
 - գ) Գաղութատիրական դարաշրջանի սկիզբը:
 - դ) Աշխարհագրական խոշոր հայտնագործությունների նշանակությունը Վրաստանի համար:
- 22. Բարեփոխումներ և հակաբարեփոխություններ:**
- ա) Բարեփոխումների պատճառները, Մարտին Լյութեր, կաթոլիկական միասնական տարածքի քայքայումը:
 - բ) Կառլ V-ի գործունեության երկու ուղղությունները:
 - գ) Անգլիկանյան եկեղեցի, լյութերականություն, կալվինիզմ: Եկեղեցական պատերազմները Եվրոպայում: Ճիզվիտների օրդենը և կաթոլիկության ռենովացիան, կաթոլիկ քարոզիչները Վրաստանում:
- 23. Վրաստանը և նրա հարևանները XVI-XVIII դարերում:**
- ա) Պայքար օսմանյան զավթողականության դեմ Եվրոպայում:
 - բ) Ռուսաստանի հայտնվելը համաշխարհային ասպարեզում և Ռեչ-Պոսպոլիտան:
 - գ) Պարսկաստանի և Թուրքիայի շահերը Անդրկովկասում և Վրաստանի հարցը:
- 24. Հոլանդիայի և Անգլիայի հեղափոխությունները.**
- ա) Ֆեոդալական փոխհարաբերությունների քայքայումը: Հոլանդիայի հեղափոխությունը և նրա նշանակությունը:
 - բ) Անգլիայի առաջադիմելու հիմունքները XVI-XVII դարերում: Անգլիայի հեղափոխության նախապայմանները, ընթացքը: Կրոմվելի պրոտեկտորատը:
- 25. Նոր աշխարհամասում նոր պետություն – ԱՄՆ:**
- ա) Ամերիկայի գաղութատիրությունը:
 - բ) «Անկախության հռչակագիրը»՝ Թոմաս Ջեֆերսոն:
 - գ) ԱՄՆ-ի ստեղծումը:
- 26. Մայրցամաքային Եվրոպան մինչև Ֆրանսիայի հեղափոխությունը.**
- ա) Աբսոլյուտիզմ. Ռիշելյե, Մազարինի, Լուի XIV
 - բ) Աբսոլյուտիզմի ժամանակաշրջանի տնտեսական գաղափարները. Մերկանտելիստները (շահամուլները) և ֆիզիոկրատները:
 - գ) Վախտանգ VI-ը և նրա դարաշրջանի մշակույթը:
 - դ) Պետրոս Առաջինի բարեփոխումները:
 - ե) Յոթամյա պատերազմը Եվրոպայում:
 - զ) Վրաստանի արտաքին կողմնորոշման հարցը, Գեորգիևսկի տրակտատը:
- 27. Ֆրանսիայի մեծ հեղափոխությունը.**
- ա) Լուսավորականություն, լուսավորականության ժամանակների գաղափարների ազդեցությունը Վրաստանի վրա:

- բ) Ֆրանսիայի հեղափոխության նախապայմանները, ընթացքը:
- գ) 18 Բրյուսելի հեղաշրջումը:

Անհրաժեշտ դիտողականությունը՝ թեմատիկ պատմական քարտեզներ:

XI դասարան

Աշխարհագրություն (Գլոբալ աշխարհագրություն)

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Ժամանակ և տարածություն	Շրջակա միջավայրը և տնտեսությունը	Շրջակա միջավայրը և սոցիալական համակարգերը
<p>Աշխ. XI.1. Աշակերտը կարող է տարածա-ժամանակային տեսակետից բնութագրել գլոբալիզացիայի գործընթացները:</p>	<p>Աշխ. XI.2. Աշակերտը կարող է վերլուծել սոցիալ-տնտեսական բնույթի գլոբալ հիմնախնդիրները:</p> <p>Աշխ. XI.3. Աշակերտը կարող է դատողություններ անել բնական և մարդաբանական բնույթի գլոբալ հիմնախնդիրների մասին:</p>	<p>Աշխ. XI.4. Աշակերտը կարող է քաղաքական բնույթի գլոբալ հիմնախնդիրների շուրջ դատողություններ անել:</p> <p>Աշխ. XI.5. Աշակերտը կարող է դատողություններ անել գլոբալիզացիայի սոցիալ-մշակութային տեսակետների շուրջ:</p> <p>Աշխ. XI.6. Աշակերտը կարող է գիտակցել տեղային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով մշակված կոորդինացված քաղաքականության անհրաժեշտությունը հիմնախնդիրները լուծելիս:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները:

Ուղղություն. Ժամանակ և տարածություն

Աշխ. XI.1. Աշակերտը կարող է տարածա-ժամանակային տեսակետից բնութագրել գլոբալիզացիայի գործընթացները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբերում է «գլոբալիզացիա» և «գլոսալիզացիա» տերմինները:
- Վերլուծում է գլոբալիզացիայի դասիչի չափման մեթոդը (ԿՕՖ-ի (KOF) դասիչի, Աթ Կերնեի (AT Kearney) ինդիկատորները) և դատողություններ անում դրանցից

յուրաքանչյուրի (քաղաքական գլոբալիզացիա, տնտեսական գլոբալիզացիա, սոցիալական գլոբալիզացիա, անհատական կոնտակտներ, տեղեկատվական կապեր, մշակութային նորույթ) տարածական բաժանման մասին:

- Դատողություններ է անում գլոբալիզացիայի դասիչների հաշվման մեթոդների լիարժեքության մասին և գործնական կիրառության հնարավորությունների մասին:
- Վերլուծում է պետությունների տարածա-ժամանակային մերձեցման համար տրանսպորտի և հաղորդակցության զարգացման դերը:
- Կազմում է իր համար արդիական հիմնախնդիրների տարածա-ժամանակային յուրահատկությունները: Սահմանում է «գլոբալ» հասկացությունը և մշակում այդ հիմնախնդիրին կարգավիճակ շնորհելու չափանիշները:
- Ենթադրություն է անում գլոբալ հիմնախնդիրների միջև պատճառա-հետևանքային կապերի մասին և կազմում համապատասխան ուրվագիծ:
- Մշակում է գլոբալ հիմնախնդիրների ցանկը և համեմատում գոյություն ունեցածները: Վերլուծում է հիմնախնդիրների ծագման և փոխակերպման (ստեղծում, լարում, կարգավորում, փոխարինում) պատճառները:
- Գլոբալ հիմնախնդիրների ցանկից առանձնացնում է Վրաստանի համար ամենից ավելի արդիական հիմնախնդիրները: Սահմանում է դրանց փոխակերպումը տարածության և ժամանակի մեջ: Կազմում է հիմնախնդրի հաջորդականությունը արտահայտող ուրվապատկեր:

Ուղղություն. Շրջակա միջավայրը և տնտեսությունը

Աշխ. XI.2. Աշակերտը կարող է վերլուծել սոցիալ-տնտեսական բնույթի գլոբալ հիմնախնդիրները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերլուծում է ֆինանսական հոսքերի մասշտաբները ժամանակակից աշխարհում: Դատողություններ է անում միջազգային ֆինանսական կազմակերպությունների և անդրազգային միավորումների գործողության մասշտաբների մասին:
- Դատողություններ է անում միջազգային դոնորների և կազմակերպությունների կողմից տրամադրված օգնությունների և փոխառությունների մասին:
- Կարծիքներ է արտահայտում այն մասին, թե սոցիալական և տնտեսական ինչ օգուտ կարող են բերել սպառազինության վրա տնտեսված ծախսերը:
- Ամրապնդում է տրամաբանական կապերը սոցիալ-տնտեսական բնույթի գլոբալ հիմնախնդիրների միջև (օրինակ, միջազգային աշխատանքային գաղթ և դրամական առաքումներ (ռեմիտանսներ) և դատողություններ է անում դրանց մասշտաբների մասին:
- Քարտեզների և այլ աղբյուրների հիման վրա, վերլուծում է մթերքների ու հումքի անհավասարաչափ բաժանումը: Ենթադրություն է անում հիմնախնդիրը տեղային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներով լուծելու հնարավոր ուղիների մասին:
- Ծանոթանում է հազարամյա զարգացման նպատակներին (MDG), ընտրում է դրանցից որևէ մեկը և բնութագրում հիմնախնդրի արդիականությունը: Ծանոթանում է ՄԱԿ-ի ծրագրերին, որոնք նպատակաուղղված են դրանց լուծմանը:
- Ընտրում է զարգացման տարբեր աստիճաններում գտնվող երկրներ: Համեմատում է, թե որքանով սուր են ծառայած դրանցից յուրաքանչյուրում գլոբալ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և որքանով են տարբերվում հիմնախնդիրներին հակազդելու ուղիները:

- Վերլուծում է հետամնացության պարամետրերը հաղթահարելուն ուղղված միջոցառումները և կազմում է աշխարհի տարածաշրջանների կանխատեսական (ապագայի) «սոցիալ-տնտեսական զարգացման» քարտեզը:

Աշխ. XI.3. Աշակերտը կարող է դատողություններ անել բնական և մարդաբանական բնույթի գլոբալ հիմնախնդիրների մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերլուծում է մարդու գործունեության հետևանքով ստեղծված շրջակա միջավայրի պահպանության գլոբալ հիմնախնդիրները պատմական անցյալից մինչև այսօր: Ենթադրություն է անում դրանց հնարավոր զարգացման մասին:
- Կիրառելով աշխարհագրական տարբեր միջոցներ՝ վերլուծում է մթնոլորտին, ջրոլորտի, այդ թվում համաշխարհային օվկիանոսի, կենսոլորտի յուրացման հիմնական ուղղությունները:
- Ընտրում է մի որևէ բաղադրամասի յուրացման հետ կապված գլոբալ հիմնախնդիր, դատողություններ է անում դրա անվտանգ յուրացման շուրջ և արդյունքներն արտահայտում ցանկացած ձևով:
- Պատկերագրողումներ և այլ աղբյուրներ կիրառելով՝ ամրապնդում է կապերը գլոբալ աշխարհաբնապահպանական հիմնախնդիրների և տնտեսության այն բնագավառների միջև, որոնք տվյալ հիմնախնդրի պատճառ են դարձել: Կիրառում է թեմատիկ քարտեզներ և կազմում աշխարհաբնապահպանական հիմնախնդիրների հայտնաբերման մենթալ քարտեզ:
- Մասնակցում է «Արտադրության ընդլայնումը և բնապահպանական հաշվեկշռի պահպանումը» թեմայով մտքերի փոխանակությանը:
- Խմբային աշխատանք կատարելիս՝ ընտրում է մի որևէ գլոբալ աշխարհաբնապահպանական հիմնախնդիր, առանձնացնում դրա կարգավորման մի քանի կարևոր միջոցառում և ստեղծում հիմնախնդրի զարգացման սցենարներ: Արդյունքներն արտահայտում է իր ցանկացած ձևով (գծագիր, ուրվապատկեր և այլն):
- Տարվա ընթացքում տարբեր աղբյուրներից (գիտական գրականություն, պարբերական հրատարակություններ, տեղեկատվական միջոցներ), հավաքում է տեղեկատվություն բնական և տեխնաժին աղետների մասին²³: Դասավորում է դրանք քարտեզի և ժամանակի ժամանակագրական սանդղակի վրա: Արդյունքները վերլուծում է և ներկայացնում համադասարանցիներին:

Ուղղություն. Շրջակա միջավայրը և սոցիալական համակարգերը

Աշխ. XI.4. Աշակերտը կարող է քաղաքական բնույթի գլոբալ հիմնախնդիրների շուրջ դատողություններ անել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

²³ Ուսուցիչը տարվա սկզբին տալիս է հանձնարարություններ՝ կապված տրված հարցի հետ և տարվա ընթացքում անցկացնում դիտարկում:

- Վերլուծում է քաղաքական բնույթի գլոբալ հիմնախնդիրների առաջացումը, զարգացումը և տարածաչափական յուրահատկությունները: Տվյալ հարցի հետ կապված արտահայտում է իր վերաբերմունքը:
- Ձեռք բերած տեղեկատվության հիման վրա (վիճակագրական տվյալներ, լրատվամիջոցներ), վերլուծում է աշխարհի պետությունների ռազմա-քաղաքական ներուժը և կարծիք հայտնում այն մասին, թե յուրաքանչյուր քաղաքացի ու պետություն ինչ ներդրում կարող են ունենալ խաղաղության և զինաթափման գործում:
- Ընտրում և ծանոթանում է (տեղեկատվական միջոցներից) զինաթափման և խաղաղության պահպանման գործում մի որևէ երկրի կողմից կատարված կոնկրետ քայլերին և մշակում է իրադարձությունների զարգացման հնարավոր կանխատեսումը (ուրվապատկեր, սցենար):
- Վեր է հանում պատերազմների, էթնոհակամարտությունների և ահաբեկչության առաջացման, հայտնաբերման ձևերի ու տարածաշրջանային յուրահատկությունների միջև պատճառա-հետևանքային կապը:
- Գտնում է տեղեկատվություն և, տեղեկատվության հիման վրա, ծանոթանում համաշխարհային նշանակության ահաբեկչական կազմակերպությունների և դրանց գործողության ոլորտների հետ:
- Ձեռք բերած տեղեկատվության հիման վրա կազմում է «թեժ կետերի» քարտեզ աշխարհում և Վրաստանում գոյություն ունեցող էթնոկոնֆլիկտների և հայտնի ահաբեկչությունների մասին:

Աշխ. XI.5. Աշակերտը կարող է դատողություններ անել գլոբալիզացիայի սոցիալ-մշակութային տեսակետների շուրջ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ծանոթացնում է մշակութային դիֆուզիայի աշխարհում գոյություն ունեցող տարբեր դրսևորումների և դատողություններ անում «գլոբալ մշակույթի» բնութագրիչների մասին՝ երաժշտություն, հեռուստատեսություն, սպորտ, տուրիզմ:
- Դատողություններ է անում ժամանակակից աշխարհում ուրբանային լանդշաֆտների հոմաձիհնության մասին:
- Դատողություններ է անում մշակույթի գլոբալ դիֆուզիայի հայեցակետերի մասին՝ լեզու, զբոսաշրջություն, խոհանոց, լրատվամիջոցներ, գլոբալ բրենդինգ (օրինակ, Մակդոնալդս, Կոկա-կոլա) և կապում տեղական մշակույթի դերի նվազման հետ:
- Ծանոթանում է հակագլոբալիստների գաղափարներին և դատողություններ է անում «Գլոբալիզացիան ազգայնականության դեմ» թեմայով:
- Դատողություններ է անում գլոբալիզացիայի դրական և բացասական գործոնների մասին:

Աշխ. XI.6. Աշակերտը կարող է գիտակցել տեղային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներով մշակված կոորդինացված քաղաքականության անհրաժեշտությունը հիմնախնդիրները լուծելիս:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում բնակչության (ընտանիքի, համայնքի, երկրի, տարածաշրջանի և աշխարհի) կյանքի կարգ ու կանոնի, շրջակա միջավայրի պահպանության գիտակցության, կրթության և տեղական օրենսդրության պատճառահետևանքային կապերի մասին: Արտահայտում է իր վերաբերմունքը կայուն զարգացման համար դրա նշանակության մասին:
- Գտնում է տեղեկատվություն և վերլուծում միջազգային կազմակերպությունների նշանակության հարցը գլոբալ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, եզրակացություններ է անում՝ կապված նրանց կողմից գլոբալ հիմնախնդիրներին հակազդելու և կարգավորելու հետ:
- Ծանոթանում է, գլոբալ հիմնախնդիրների հետ կապված, Վրաստանի ստորագրած համաձայնագրերին և պարտավորություններին: Կազմում է հարցարան և անցկացնում սոցիալական հարցում նշված գործընթացին հասարակության և անհատների տեղեկացվածության և այդ գործընթացի մեջ ներգրավելու նպատակով:
- Գտնում է տեղեկատվություն՝ Վրաստանում կամ որևէ այլ երկրում, գլոբալ հիմնախնդիրների հետ կապված՝ իրագործված կամ իրագործելի կոնվենցիայի կամ պարտավորության մասին:
- Ծանոթանում են միջազգային բնապահպանական տարելիցներին և դասարանի հետ ընտրում իրենց համար հետաքրքիրը և պատրաստում համապատասխան միջոցառումները (բաց դաս, ցուցահանդես, գիտաժողով և այլն):
- Դատողություններ է անում, թե գլոբալ հիմնախնդիրների կարգավորման գործում ինչ դեր են կատարում միջազգային ջանքերը և որքանով նշանակալից են դրանք մարդկության կայուն զարգացման հեռանկարի համար: Արդյունքները ներկայացնում է ցանկացած ձևով:

Ծրագրի բովանդակությունը

XI դասարանի պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Մտորն ներկայացված հարցերը կազմում են այս դասարանի համար հատկացված ամբողջ բովանդակության 60%-ը):

Ներածություն

1. Գլոբալիզացիա:
2. Գլոբալիզացիայի դասիչը:
3. Գլոբալ հիմնախնդիրները և դրանց առաջացման պատճառները:
4. Գլոբալ հիմնախնդիրների փոխադարձ կապը:
5. Մարդկությունը և կայուն զարգացման հեռանկարը:
6. *Վրաստանը և գլոբալ հիմնախնդիրների հետ կապված համաձայնագրերը:*²⁴

Քաղաքական բնույթի գլոբալ հիմնախնդիրները

7. Առաջացման պատճառները:
8. Պատերազմներ:
9. Համաշխարհային նշանակության հակամարտությունները:
10. Ահաբեկչությունը:
11. Ահաբեկչական կազմակերպությունները:
12. Քաղաքական բնույթի հիմնախնդիրները լուծելու ուղիները (խաղաղության համար պայքար և զինաթափում):

Սոցիալ-տնտեսական բնույթի հիմնախնդիրները և բնութագրիչները

13. Գլոբալ հիմնախնդիրները և միջազգային կազմակերպությունները:
14. Գլոբալ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները:
15. Ֆինանսական հոսքերը:
16. Գլոբալ-ժողովրդագրական հիմնախնդիրները:
17. Աշխատանքային գաղթը և դրամական առաքումները:
18. Մթերքի հիմնախնդիրը: Բնական պաշարների անհավասար բաշխումը:
19. Կյանքի մակարդակը և որակը:
20. Գլոբալ-սոցիալական և էթնոմշակութային հիմնախնդիրները:
21. Մշակութային իմպերիալիզմը և մշակութային դիֆուզիան:
22. Գլոբալիզմի դեմ պայքարը:
23. Զարգացած և զարգացող երկրների գլոբալ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները:
24. Սոցիալ-տնտեսական բնույթի հիմնախնդիրների լուծման ուղիները:
25. Միջազգային բնապահպանական տարելիցները:
26. *Հազարամյակի զարգացման նպատակները (MDG):*

Բնական և մարդաբանական հիմնախնդիրները

²⁴ Շեղ տառատեսակով տրված բովանդակությունը պարտադիր չէ:

27. Բնական միջավայրը և դրա հետ կապված հիմնախնդիրները:
28. Շրջակա միջավայրի յուրացման հիմնախնդիրները. մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ:
29. *Համաշխարհային օվկիանոսը և նրա հիմնախնդիրները:*
30. Գլոբալ աշխարհաբնապահպանական հիմնախնդիրները – ճգնաժամային տարածաշրջանները:
31. Տեխնիկական առաջընթացը և գլոբալ հիմնախնդիրների առաջացումը:
32. Գլոբալ բնույթի բնական և մարդաբանական հիմնախնդիրների լուծման ուղիները:
33. *Լեռնային տարածքների հետ կապված հիմնախնդիրները:*
34. Ծովափնյա շերտի յուրացման և պահպանման հիմնախնդիրները:

**XII դասարան
Պատմություն**

Զափոքոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Շրջակա միջավայրը և տնտեսությունը	Պետական կառավարումը և քաղաքականությունը	Մարդը և հասարակությունը	Մշակույթը և կրոնը
<p>Պատմ. XII.1. Աշակերտը կարող է վերլուծել XIX և XX դարերում աշխարհում և Վրաստանում տեղի ունեցած նշանավոր տնտեսական փոփոխությունները:</p> <p>Պատմ. XII. 2. Աշակերտը կարող է վերլուծել տնտեսության զարգացման նշանակությունը:</p>	<p>Պատմ. XII.3. Աշակերտը կարող է վերլուծել XIX և XX դարերում կառավարման կառուցվածքներում տեղի ունեցած փոփոխությունները:</p> <p>Պատմ. XII.4. Աշակերտը կարող է քննարկել քաղաքական պատմության հարցերը, սահմանել համաշխարհային գործընթացում Վրաստանի տեղը:</p>	<p>Պատմ. XII.5. Աշակերտը կարող է հետազոտել XIX և XX դարերում սոցիալական կառուցվածքների փոփոխարարությունները:</p> <p>Պատմ. XII.6. Աշակերտը կարող է դատողություններ անել հասարակության գիտակցության վրա նոր և նորագույն պատմության ժամանակաշրջանում ձևավորված սոցիալական կառուցվածքների ներգործության մասին:</p>	<p>Պատմ. XII.7. Աշակերտը կարող է դատողություններ անել կրոնի նշանակության մասին կամ գնահատել XIX և XX դարերում նրա ազդեցությունը աշխարհի և Վրաստանի վրա:</p> <p>Պատմ. XII.8. Աշակերտը կարող է ուսումնասիրել տարբեր մշակույթների փոփոխարարությունները:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչներն ըստ ուղղությունների

Ուղղություն. Շրջակա միջավայրը և տնտեսությունը

Պատմ. XII.1. Աշակերտը կարող է վերլուծել XIX և XX դարերում աշխարհում և Վրաստանում տեղի ունեցած նշանավոր տնտեսական փոփոխությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում տնտեսության զարգացման վրա առաջընթացի նշանակության մասին:
- Գրում է շարադրություն, որտեղ դատողություններ է անում որևէ հակամարտության (պատերազմի) տնտեսական նախապայմանների և արդյունքների մասին:
- Դատողություններ է անում գաղթի գործընթացների պատճառների և հետևանքների մասին: Ընտրում է տարբեր դարաշրջաններում կատարված երկու գաղթի գործընթաց և համեմատում դրանց պատճառներն ու հետևանքները:

- Մի երկու օրինակով, գրավոր դատողություններ է անում, թե երկրի տնտեսական հարաբերությունների զարգացման գործում ինչպես էր փոխվում պետության դերը:
- Գիտի տնտեսության հիմնական տեսությունները և զրուցում է նրանց նշանակության մասին:
- Դատողություններ է անում աշխարհում և Վրաստանում քաղաքի և գյուղի տեսակարար կշռի մասին:
- Սեփական երկրի (շրջանի, քաղաքի, գյուղի) օրինակով, դատողություններ է անում տնտեսական զարգացման և ժողովրդագրական հիմնախնդիրների փոխադարձ կապի մասին: Զուգահեռներ է անցկացնում տարբեր երկրների միջև:
- Դատողություններ է անում Վրաստանի տնտեսության ինտեգրման մասին՝ տարածաշրջանին, կայսրությանը և աշխարհի տնտեսությանը (օրինակ, Վրաստանը և Կովկասը, Վրաստանը և Խորհրդային Միությունը, Վրաստանը և աշխարհը):

Պատմ. XII. 2. Աշակերտը կարող է վերլուծել տնտեսության զարգացման նշանակությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է որևէ պետություն (տարածաշրջան) և դատողություններ անում այն մասին, թե ինչ ազդեցություն են գործում բնական և մարդաբանական փոփոխությունները տնտեսական զարգացման վրա, կիրառում է պատմական օրինակներ, ազդեցության մասշտաբներ անցած դարաշրջանից:
- Դատողություններ է անում տեխնոլոգիական փոփոխությունների և տնտեսության զարգացման փոխադարձ ազդեցության մասին:
- Դատողություններ է անում, թե ինչ ազդեցություն է թողնում բնակչության քանակը և խտությունը երկրի տնտեսական զարգացման վրա:
- Ընտրում է որևէ պետություն և դատողություններ անում, թե ինչ ազդեցություն է ունեցել (ունի) երկրի տնտեսական զարգացման հեռանկարների վրա այն հումքը, որն արդյունահանվում է իր տարածքում:

Ուղղություն. Պետական կառավարում և քաղաքականությունը

Պատմ. XII.3. Աշակերտը կարող է վերլուծել XIX և XX դարերում կառավարման կառուցվածքներում տեղի ունեցած փոփոխությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դատողություններ է անում պետական կառավարման կառուցվածքներում փոփոխությունների անհրաժեշտության հնարավոր պատճառների մասին:
- Ընտրում է որևէ երկիր և խմբային բանավեճի ժամանակ դատողություններ անում պատմականորեն նրա կառավարման կառուցվածքներում տեղի ունեցած փոփոխությունների մասին:
- Համեմատում է կենտրոնի և տարածաշրջանների փոխհարաբերությունները տարբեր երկրներում:
- Խմբային աշխատանք կատարելիս՝ համեմատում է պետական կառավարման տարբեր մոդելները (միապետական, սահմանադրական-միապետական, խորհրդարանական,

նախագահական, ինքնակալական հանրապետություն), դրանցից յուրաքանչյուրի դրական ու բացասական կողմերի մասին տալիս է իր գնահատականը:

- Ընտրում է երկու հեղափոխություն և համեմատում դրանք առաջացնող պատճառները, ընթացքը և հետևանքները:
- Խմբային աշխատանք կատարելիս՝ համեմատում է պետական կարգի տարբեր համակարգերը (միավորյալ, դաշնային, համադաշնային), տալիս է սեփական գնահատականը դրանցից յուրաքանչյուրի դրական և բացասական կողմերին: Դատողություններ է անում այն մասին, թե դրանցից որը լավ կլիներ ժամանակակից Վրաստանի համար:

Պատմ. XII.4. Աշակերտը կարող է քննարկել քաղաքական պատմության հարցերը, սահմանել համաշխարհային գործընթացում Վրաստանի տեղը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է որևէ պետություն և վերլուծում ինչ որ մի դարաշրջանում նրա միավորումը կամ մասնատումը պայմանավորող ներքին և արտաքին գործոնները (*Գերմանիա, Բուսայիա*):
- Ընտրում է պատմական որևէ համաշխարհային նշանակության իրադարձություն և գրում շարադրություն՝ Վրաստանի վրա նրա ազդեցության մասին:
- Համադասարանցիների խմբի հետ ընտրում է քաղաքական որևէ գործչի և դատողություններ անում նրա ընտրած արտաքին և ներքին քաղաքական կուրսի հետևանքների մասին (*օրինակ, Ուինստոն Չերչիլ, Օտո-ֆոն-Բիսմարկ*):
- Ընտրում է տարբեր երկրների (տարածաշրջանների) երկու գործչի քաղաքական գաղափարները, համեմատում դրանք և դատողություններ անում, թե ինչ ազդեցություն են ունեցել դրանցից յուրաքանչյուրը աշխարհի կամ տարածաշրջանի քաղաքական զարգացման վրա:
- Առանձնացնում է ժամանակակից Վրաստանի պետական շահերը և դատողություններ անում նորագույն ժամանակաշրջանի վրաց քաղաքական գործիչների կատարած քաղաքական քայլերի մասին:
- Կեղծակերպած խաղի ժամանակ ներկայացնում է գլոբալիզացիայի կողմնակիցների և հակազլոբալիստների դիրքորոշումը՝ կապված Վրաստանի քաղաքական հզորացման հետ:
- Խմբային բանավեճի ժամանակ դատողություններ է անում անջատականության մասին՝ Վրաստանում և աշխարհում, և համադասարանցիների հետ ստեղծում այդ հիմնախնդիրը լուծելու սեփական մոդելը:

Ուղղություն. Մարդը և հասարակությունը

Պատմ. XII.5. Աշակերտը կարող է հետազոտել XIX և XX դարերում սոցիալական կառուցվածքների փոխհարաբերությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արտահայտում է իր կարծիքն անհատի գույքային և սոցիալական վիճակի միջև փոխհարաբերությունների մասին:
- Համեմատում է երկու կամ երեք երկրների սոցիալական կառուցվածքները և մատնանշում նրանց նմանություններն ու տարբերությունները:
- Խմբավորում է տարբեր երկրների սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչների և դատողություններ անում նրանց սոցիալական կարգավիճակների մասին:
- Վրաստանի օրինակով, վերլուծում է քաղաքական կառուցվածքների և սոցիալական տարբեր խավերի միջև եղած փոխհարաբերությունները: Ձուգահեռներ է անցկացնում Եվրոպայի երկրների միջև:
- Ընտրում է որևէ հեղափոխություն և գրում շարադրություն կառավարման և սոցիալական կառուցվածքներում դրա հետևանքով առաջացած փոփոխությունների մասին:
- Գրում է շարադրություն, որտեղ Վրաստանի կամ որևէ այլ երկրի օրինակով, հետազոտում է երկրի մշակութային կյանքին պետության միջամտության հիմնախնդիրը:

Պատմ. XII.6. Աշակերտը կարող է դատողություններ անել հասարակության գիտակցության վրա նոր և նորագույն պատմության ժամանակաշրջանում ձևավորված սոցիալական կառուցվածքների ներգործության մասին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թվարկում է նոր և նորագույն պատմության ժամանակաշրջանում ձևավորված սոցիալական կառուցվածքները: Դատողություններ է անում դրանց միջև գոյություն ունեցող նմանությունների ու տարբերությունների մասին:
- Պարզաբանում է քաղաքական կուսակցություն հասկացությունը և գիտակցում հասարակական կյանքում նրա դերը:
- Ընտրում է հրատապ մի որևէ հիմնախնդիր (օրինակ, կրթություն ստանալը, աշխատանքի տեղավորումը, մարդու իրավունքների խախտումը, քաղաքացիական վեճը, հարկային կոնֆլիկտը, սոցիալական անվտանգությունը, առողջապահություն և շրջակա միջավայրի պահպանումը, քաղաքական կամ կրոնական խտրականությունը և այլն), գտնում է տեղեկատվություն, որի վերլուծման հիման վրա, գրում է կոնկրետ հիմնախնդիրը լուծելու պլան (հնարավոր է մի քանի տարբերակ), հաշվի առնելով կողմերի իրավունքների պաշտպանությունը և օրինական գործողությունները: Սահմանում է իր դերը հիմնախնդիրը կարգավորելու գործում, հավաքում է համախոհների և գործում պլանի համաձայն: Գնահատում է իր մասնակցության արդյունավետությունը և արդյունքները հաղորդում համադասարանցիներին:
- Քաղաքացիների կյանքից ընտրում է կոնֆլիկտային մի որևէ կոնկրետ իրավիճակ (սոցիալական, տնտեսական կամ քաղաքական), ուսումնասիրում է ստեղծված իրադրությունը, կողմերի շահերը: Համադասարանցիների հետ խաղում է նշված իրավիճակը և գտնում նրա լուծման այլընտրանքային տարբերակները: Դատողություններ է անում այդ ուղիների լավ և վատ կողմերի մասին և ընկերների հետ ներկայացնում կոնֆլիկտը արդարացիորեն լուծելու պլան:

Ուղղություն. Մշակույթը և կրոնը

Պատմ. XII.7. Աշակերտը կարող է դաստողություններ անել կրոնի նշանակության մասին կամ գնահատել XIX և XX դարերում նրա ազդեցությունը աշխարհի և Վրաստանի վրա:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դաստողություններ է անում այն մասին, թե տարբեր դարաշրջաններում և երկրներում ինչպես էր փոխվում կախվածությունը ազգային և հոգևոր իշխանությունների միջև և ինչ ազդեցություն էին գործում այդ փոփոխությունները երկրի մշակութային զարգացման վրա:
- Դաստողություններ է անում կրոնի, որպես ժամանակակից աշխարհում ինքնության միջոցներից մեկի, նշանակության մասին:

Պատմ. XII.8. Աշակերտը կարող է ուսումնասիրել տարբեր մշակույթների փոխհարաբերությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դաստողություններ է անում XIX և XX դարերի համաշխարհային մշակույթի հիմնական միտումների մասին:
- Խմբային կամ անհատական աշխատանք կատարելիս՝ անվանում է XIX-XX դարերի համաշխարհային մշակույթի կոթողները (*օրինակ, գրականության մեջ, կերպարվեստում*), խմբավորում է դրանք ըստ հաջորդականության:
- Ընտրում է որևէ արվեստագետի (օրինակ, Միխեիլ Ջավախիշվիլի, Չառլի Չապլին) և նրա կենսագրության ու ստեղծագործության հիման վրա, դասարանում դաստողություններ անում գոյություն ունեցող փոխադարձ կախվածության մասին:
- Դասարանական բանավեճի ժամանակ դաստողություններ է անում եվրոպական և արևելյան մշակույթների փոխհարաբերությունների մասին և XIX-XX դարերի վրաց մշակույթի վրա դրանցից յուրաքանչյուրի ազդեցության մասին:
- Ընտրում է արվեստի որևէ բնագավառ (*օրինակ, գրականություն, նկարչություն, կինո և այլն*) և համեմատում դրա զարգացման միտումները Վրաստանի կամ աշխարհի որևէ երկրում (*տարածաշրջանում*):

Ծրագրի բովանդակությունը

XII դասարանի պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանին հատկացված ամբողջ բովանդակության 80%-ը):

1. Նապոլեոնի դարաշրջանը և Վիեննայի կոնգրեսը:
2. Հեղափոխությունների ժամանակաշրջանը Եվրոպայում:
3. Ինպերիալիզմը և գաղութատիրությունը – Վրաստանը Ռուսաստանի կազմում (Ռուսաստանի կողմից Քարթլի-Կախեթիի և Իմերեթիի թագավորությունների գրավումը,

- ռուսական կառավարման հաստատումը Վրաստանում, ցարիզմի դեմ ապստամբությունները XIX դարի առաջին կեսին, Մ. Վորոնցովի բարեփոխումները):
4. **XIX դարի ազգային-ազատագրական շարժումների բնույթն աշխարհում – Թերեքի ջուրը խմածների պայքարը թագավորական Ռուսաստանի դեմ:**
 5. **«Արևելքի հարցը» XIX դարում. ռուս-պարսկական պատերազմները և Վրաստանը:**
 6. **Քաղաքացիական պատերազմն ԱՄՆ-ում:**
 7. **Աշխարհը XIX դարի վերջին քառորդում:**
 - ա) Ֆրանսիայի երրորդ հանրապետությունը:
 - բ) Գերմանիայի միավորումը:
 - գ) Իտալիայի միավորումը:
 - դ) Ալեքսանդր Երկրորդի բարեփոխումները Ռուսաստանի կայսրությունում:
 - ե) Քաղաքական նոր գաղափարները և Վրաստանը:
 8. **Առաջին համաշխարհային պատերազմի նախադրյալները:**
 9. **Պատերազմական գործողությունները առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում (1914-1916 թթ.):**
 10. **Հեղափոխությունները Ռուսաստանում և Բրեստի հաշտության պայմանագիրը (Վրաստանի հետ կապը):**
 11. **Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությունը (ձևավորումը, ներքին քաղաքականությունը, պայքարը միջազգային ճանաչման համար: Փոխհարաբերությունը Ռուսաստանի հետ):**
 - ա) Աշխարհի խոշոր պետությունների հակադրվելը Կովկասում:
 - բ) Բրեստի հաշտության պայմանագրից մինչև Ղարսի պայմանագիրը:
 - գ) Վրաստանի անեքսիան Ռուսաստանի կողմից:
 12. **Առաջին համաշխարհային պատերազմի վերջը, Փարիզի կոնֆերանսը (Վրաստանի հարցը), Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքները: Աշխարհի քաղաքական նոր քարտեզը:**
 13. **Ամբողջատիրությունն աշխարհում:**
 - ա) Ստալինը – Խորհրդային Միությունը (Վրաստանը Խորհրդային Միության կազմում):
 - բ) Հիտլեր, Մուսոլինի, Ֆրանկո. համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Ճապոնիան Երկրորդ համաշխարհային պատերազմի նախնական շրջանում:
 14. **Հասարակությունը և մշակույթը XX դարի առաջին կեսում (հասարակությունը և մշակույթը Վրաստանում XX դարի առաջին կեսում):**
 15. **Երկրորդ համաշխարհային պատերազմի նախնական շրջանում (Սյունիսենի գործարքը, Մոլոտով-Ռիբենտրոպի դաշնագիրը (պակտը): Գերմանիայի ագրեսիան Եվրոպայում, Իտալիան Եթովպիայում, Ճապոնիան Չինաստանում:**
 16. **Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը – Խորհրդային Միությունը Երկրորդ համաշխարհային պատերազմում, վրացիները Երկրորդ համաշխարհային պատերազմում (երկու կողմերում):**
 17. **Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքները, Նյուրնբերգի գործընթացը:**
 18. **Մարդասիրական միջազգային իրավունքի հիմունքները (զինված հակամարտությունների տուժածների պաշտպանություն, պատերազմ վարելու մեթոդների և միջոցների սահմանափակում): Նրա ձևավորման և զարգացման փուլերը:**
 19. **Աշխարհի բաժանումը երկու բանակի – սառը պատերազմի սկիզբը (Չերչիլի ելույթը Փոլտոնում, Մարշալի պլանը, Տրումենի դոկտրինան):**
 20. **ՆԱՏՕ-ն և Վարշավայի պայմանագիրը:**

21. Վրաստանը Խորհրդային Միության կազմում - ազգային շարժումը Վրաստանում XX դարի 20-70-ական թվականներին:
22. Համաշխարհային գաղութային համակարգի քայքայումը:
23. Քաղաքական ճգնաժամերը սառը պատերազմի ժամանակաշրջանում:
24. Վերակառուցումը (սլեքստրոյկան), Խորհրդային բանակի փլուզումը – անկախ Վրաստան:
25. Արդի հասարակությունը և մշակույթը. ետարդյունաբերական հասարակությունից մինչև տեղեկատվական հասարակություն:

Անհրաժեշտ դիտողականություն, թեմատիկ պատմական պլաններ:

XII դասարան

Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգություն

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների

Անհատական անվտանգության ապահովումը	Արտակարգ իրավիճակում անվտանգ վարքի հիմունքները	Անհապաղ բժշկական օգնություն
<p>Անվտ.XII.1. Աշակերտը կարող է բնութագրել մարտական միջոցներից առաջացած վտանգները:</p> <p>Անվտ.XII.2. Աշակերտը կարող է մարտական միջոցներից առաջացած վտանգների ժամանակ, կիրառել վարքի կանոնները:</p>	<p>Անվտ.XII.3. Աշակերտը կարող է բնութագրել Վրաստանի պաշտպանության և արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերը:</p> <p>Անվտ.XII.4. Աշակերտը կարող է կիրառել արտակարգ իրավիճակներում գործելու կանոնները և պաշտպանական միջոցները:</p>	<p>Անվտ.XII.5. Աշակերտը կարող է արտակարգ իրավիճակում՝ մարմնի վնասվածքներ ստանալու դեպքում, կիրառել համապատասխան անհապաղ բժշկական օգնությունը:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Անհատական անվտանգության ապահովումը

Անվտ.XII.1. Աշակերտը կարող է բնութագրել մարտական միջոցներով առաջացած վտանգները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկարագրում է Վրաստանի զինված ուժերի զենքի հիմնական համակարգերը:
- Խմբավորում է վտանգները և վնասի հնարավորությունները՝ ըստ զենքի համակարգերի:

Անվտ.XII.2. Աշակերտը կարող է մարտական միջոցներով առաջացած վտանգների ժամանակ, կիրառել վարքի կանոնները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ժամանակակից մարտական միջոցները համապատասխանեցնում է դրանցից բխող վտանգներին:
- Նկարագրում է մարտական կոնկրետ գործողությունների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները:

Ուղղություն. Արտակարգ իրավիճակում անվտանգ վարքի հիմունքները

Անվտ.XII.3. Աշակերտը կարող է բնութագրել Վրաստանի պաշտպանության և արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկարագրում է Վրաստանի պաշտպանության համակարգի և նրա աշխատանքի հիմնական սկզբունքները:
- Նկարագրում է Վրաստանում արտակարգ իրավիճակները կառավարելու համակարգը և նրա աշխատանքի հիմնական սկզբունքները:
- Բնութագրում է արտակարգ իրավիճակների կառավարման գործընթացում ռազմա-քաղաքացիական համագործակցության հիմնական տարրերը:
- Նկարագրում է արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչությանը տեղեկացնելու, տարհանելու և բնակչությանը պաշտպանելու հիմնական սկզբունքները:

Անվտ.XII.4. Աշակերտը կարող է կիրառել արտակարգ իրավիճակներում գործելու կանոնները և պաշտպանական միջոցները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բնութագրում է արտակարգ իրավիճակների ժամանակ դպրոցի գործողության պլանի սկզբունքները:
- Արտակարգ կոնկրետ իրավիճակին համապատասխան, անվանում է սեփական գործողությունները, դպրոցի պլանին համապատասխան:
- Կոնկրետ իրավիճակին համապատասխան, նկարագրում է խմբային կամ անհատական պաշտպանության միջոցների կիրառումը:

Ուղղություն. Անհապաղ բժշկական օգնություն

Անվտ.XII.5. Աշակերտը կարող է արտակարգ իրավիճակում, մարմնի վնասվածքներ ստանալու դեպքում, կիրառել համապատասխան անհապաղ բժշկական օգնությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ըստ կոնկրետ արտակարգ իրավիճակի, նկարագրում է մարդու վնասվածքների հիմնական տեսակները:
- Նկարագրում է մարդու վնասվածքների տեսակները ճանաչելու նշանները և համապատասխան անհապաղ օգնության գործողությունները:
- Կոնկրետ վնասվածքի դեպքում, պահպանում է ցուցաբերվող անհապաղ բժշկական օգնության գործողությունների հաջորդականությունը և պայմանները:

Ծրագրի բովանդակությունը

XII դասարանի պարտադիր բովանդակության հարցերի ցանկը

(Ստորև ներկայացված հարցերը կազմում են այս դասարանին հատկացված ամբողջ բովանդակության 60%-ը):

Սովորական և զանգվածային վնասվածքների մարտական միջոցները

1. Վրաստանի զինված ուժերի սպառազինման համակարգերը՝ հրազեն, պայթուցիկ նյութեր, մարտական մեքենաներ և հսկիչ համակարգերի տեսակներ, դրանց հիմնական պարամետրերը, մարտական հատկությունները և վնասվածքների հնարավորությունները:
2. Զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների ուսուցումը:
3. Ժամանակակից մարտական միջոցները և դրանց հետ կապված վտանգները:
4. Անվտանգության կանոնները, մարտական միջոցների առանց վերահսկողության գործարկման վարքի կանոնները:

Վրաստանի պաշտպանության համակարգի տեսությունը:

1. Վրաստանի պաշտպանության համակարգի և զինված ուժերի հիմնական խնդիրները. ծանոթացում կառուցվածքին և աշխատանքի սկզբունքներին, ՆԱՏՕ-ի կազմակերպությունը, խնդիրները, կառուցվածքը և դաշնակից երկրների հետ համագործակցությունը:
2. Բնակչության և տարածքի պաշտպանության հիմնական սկզբունքները և մեթոդները: Ռազմա-քաղաքացիական համագործակցություն արտակարգ իրավիճակների կառավարման գործընթացում:
3. Բնակչությանը տեղեկացնելու համակարգը, տեղահանություն, թաքստարաններ, անհատական պաշտպանության միջոցներ:
4. Արտակարգ իրավիճակի ժամանակ կրթական հաստատությունների գործողության պլանը:

Առաջին օգնությունը:

1. Առաջին օգնությունը արնահոսության ժամանակ:
2. Վերջույթի ֆիքսումը կոտրվածքի ժամանակ, անվտանգ դիրք, ողնաշարի վնասվածք, բազմաթիվ վնասվածքներ, վիրակապելու տեխնիկան:
3. Օտար մարմին վերքի մեջ: Որովայնի և կրծքավանդակի վնասվածք:
4. Տուժածի տեղափոխումը պատգարակով և առանց պատգարակի, պարանոցի ֆիքսումը: